ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ 5
2.ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 6
3.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
4.ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14
5.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ 18
6.ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ . 38
1)Սնանկության մոդելը 39
2)Սնանկության ինստիտուտը և սնանկության կանխարգելման միջոցները 46
3)Սնանկության վարույթի հարուցումը 58
4)Ֆինանսական առողջացումը 65
5)Մորատորիումը 80
6)Պարտատերերի ժողովը և խորհուրդը 98
7)Ապահովված պահանջները 106
8)Պարտապանի գույքը 113
9)Սնանկության վարույթում թույլատրելի ծախսերի շրջանակը 124
10)Ֆիզիկական անձանց սնանկությունը 127
11)Այլ սուբյեկտների սնանկությունը 135
12)Սնանկության կառավարիչները 144
13)Սնանկության վարույթի մասնակիցների շրջանակը և դատավարական ընթացակարգերը 154
14)Իրավունքի չարաշահման անթույլատրելիության սկզբունքի երաշխավորումը 163
15)Օտարերկրյա տարրի մասնակցությամբ վարույթը 165
16)Սնանկության ինստիտուտով ապահովման ենթակա շահերի քրեաիրավական պաշտպանությունը 170
7.ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ 173
8.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 174
9.ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 175
ՀԱՎԵԼՎԱԾ 176

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՍԴ – Սահմանադրական դատարան

ԲԴԽ - Բարձրագույն դատական խորհուրդ

ՎԴ – Վճռաբեկ դատարան

ՎՔԴ – Վերաքննիչ քաղաքացիական դատարան

ՍՆԴ – Սնանկության դատարան

ԱՆ – Արդարադատության նախարարություն

ԿԲ - Կենտրոնական բանկ

ՊԵԿ - Պետական եկամուտների կոմիտե

ՄԻՊ - Մարդու իրավունքների պաշտպան

ՎԶԵԲ – Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ԱԶԲ - Ասիական զարգացման բանկ

ԻԿԿ – Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն

ԱԳՄ- Արդյունաբերողների և գործարարների միություն

ՓՊ - Փաստաբանների պալատ

ԲՄ - Բանկերի միություն

ԺԿ – ժամանակավոր կառավարիչ

ՔԴՕ – ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

ՓՄՁ – Փոքր և միջին ձեռնարկատիրություններ

Օրենք – «Սնանկության մասին» օրենք

Օրենքի փոփոխություններ - «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12. 12. 2019թ. օրենք

Դիրեկտիվ - Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2019 թվականի հունիսի 20-ի 2019/1023 դիրեկտիվ

Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարություն - Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1133-Լ որոշում

Հետազոտական զեկույց - «ՀՀ սնանկության ոլորտը կարգավորող օրենսդրության վերանայում» վերտառությամբ հետազոտական զեկույցՀոդված 52. Բարձրագույն դասային աստիճաններ շնորհելու կարգը

Ռազմավարական զեկույց - «Հայաստանում սնանկության ոլորտի օրենսդրության զարգացում» վերտառությամբ ռազմավարական զեկույց

ՄԱԿ ՄԱԻՀ - Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով (UNCITRAL)

Մոդելային օրենք – 1997 թվականի ՄԱԿ ՄԱԻՀ «Անդրսահմանային սնանկության մասին» մոդելային օրենք:

1. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ

1. Հայեցակարգը մշակվել է Արդարադատության նախարարության և ԱՆ «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի համակարգմամբ՝ ԱԶԲ կողմից զարգացող երկրներում իրականացվող «Մասնավոր հատվածի և Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի օրենսդրության և քաղաքականության զարգացան մասին» տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում:
2. Տեխնիկական աջակցության նպատակներից մեկը մասնավոր հատվածին և Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերին առնչվող իրավական համակարգի զարգացումն է, որի համատեքստում հիմնական ուղղություններից մեկը սնանկության օրենսդրությունների կատարելագործումն է: Նշվածի հաշվառմամբ Տեխնիկական աջակցության բաղադրատարրերից է նաև Հայաստանի Հանրապետության սնանկության նոր օրենսգրքի նախագծման աշխատանքները:
3. ԱԶԲ-ն սնանկության նոր օրենսգրքի մշակման աշխատանքների իրականացման նպատակով ներգրավել են սնանկության ոլորտի ազգային և միջազգային փորձագետներ:

2. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

4. Հայեցակարգի հիմնական նպատակն է.
    1) վերլուծել սնանկության ոլորտում առկա իրավիճակը.
    2) բացահայտել ոլորտում առկա խնդիրները և վերհանել կարիքները.
    3) միջազգային փորձի հաշվառմամբ ներկայացնել սնանկության օրենսդրության բարեփոխման հայեցակարգային ուղղությունները և առաջարկվող լուծումները.
    4) ուրվագծել սնանկության նոր օրենսդրության կիրարկման ճանապարհային քարտեզը.
    5) համակարգային, համապարփակ և լիարժեք օրենսդրություն ապահովելու համար հանդես գալ որպես սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները ներառող մեկ միասնական օրենսդրական ակտի նախագծի մշակման հիմք:
5. Հայեցակարգը նպատակ ունի հանդես գալ նաև որպես անհրաժեշտ և արժեքավոր աղբյուր.
    6) Սնանկության օրենսգրքի ընդունման անհրաժեշտության հիմնավորման մշակման.
    7) Սնանկության օրենսգրքի կիրառման ընթացքում դրա դրույթների մեկնաբանման.
    8) գիտագործնական նյութերի մշակման համար:

3. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

6. Սնանկության ինստիտուտը տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է, որը, մի կողմից՝ կոչված է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցներն արդար բաշխելով վերջիններիս միջև, մյուս կողմից՝ օրենսդրական կարգավորումների ներդրման միջոցով փրկել գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտներին[1]: Հենց այս պատճառով էլ անվիճելի է, որ սնանկության ինստիտուտի պատշաճ կարգավորումն ու կիրառումը հանդիսանում է յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից մեկը:
7. Սնանկության համակարգի պատշաճ և արդյունավետ կարգավորումներ անհրաժեշտության վերաբերյալ բարձրաձայնվում է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Այսպես,ՄԱԿ ՄԱԻՀ մշակված «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցը սահմանում է, որ իրավական համակարգերը պետք է ապահովեն համարժեք իրավական մեխանիզմներ այն իրավիճակների կարգավորման համար, երբ պարտապանը ի վիճակի չէ մարելու պարտքերը և այլ պարտավորությունները, որոնց ժամկետը լրացել է[2]:
8. ՎԶԵԲ-ի 2021 թվականի Սնանկության արդյունավետ համակարգի հիմնական սկզբունքներում թիվ 2 սկզբունքն ընդգծում է, որ անվճարունակության ընթացակարգերը պետք է մշակվեն և իրականացվեն մի կողմից պահպանելով և առավելագույնի հասցնելով պարտատերերին հասանելի ընդհանուր արժեքը, մյուս կողմից հաշվի առնելով պարտապանի և նրա աշխատողների շահերը:
9. Մեկ այլ՝ Համաշխարհային բանկի 2015 թվականի «Անվճարունակության և պարտատերերի/պարտապանների արդյունավետ ռեժիմների սկզբունքները» հրապարակմամբ մշակվել են այն չափանիշները, որոնք կիրառվում են սնանկության մասին օրենքների արդյունավետությունը գնահատելիս, ներառյալ՝
    1) տվյալ երկրի ավելի լայն իրավական և առևտրային համակարգերում պատշաճ ինտեգրումը.
    2) ընկերության ակտիվների արժեքը առավելագույնի հասցնելու ապահովումը, որպեսզի պարտատերերի պահանջների բավարարումը ևս առավելագույնի հասնի.
    3) լուծարման արդյունավետ գործընթացի ապահովումը ոչ կենսունակ բիզնեսի համար, ինչպես նաև կենսունակ այն բիզնեսի համար, երբ լուծարումը պարտատերերի համար բերում է ավելի մեծ շահույթ.

[1] Տե՛ս ՍԴ 14.09.2021թ. թիվ ՍԴՈ-1609 որոշումը:
[2] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf:

4) կայուն հավասարակշռություն լուծարման և ֆինանսական առողջացման միջև.
5) արդարացի վերաբերմունքի ապահովումը նույն կարգավիճակում գտնվող պարտատերերի նկատմամբ.
6) սնանկության ժամանակին, արդյունավետ և անկողմնակալ լուծման ապահովումը.
7) սնանկության համակարգի ոչ պատշաճ կիրառման կանխումը.
8) առկա պարտատերերի իրավունքների ճանաչումը՝ առաջնահերթություններին համապատասխան, և
9) անդրազգային սնանկության իրավական մեխանիզմների ստեղծումը:

10. Անդրադառնալով ՀՀ-ում սնանկության ոլորտի կարգավորումների զարգացման պատմությանը՝ հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում սնանկության ոլորտը կարգավորող առաջին օրենսդրական ակտը 1995 թվականին ընդունված «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» օրենքն է, որը շուտով՝ 1996 թվականին փոխարինվել է «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» օրենքով:
11. Սնանկության ոլորտում նշանակալի հաջորդ փոփոխությունը եղել է 2003 թվականին, երբ ընդունվել է «Անվճարունակության (սնանկության) մասին» օրենքը: Այն, ի տարբերություն նախորդ երկու օրենքների, ունեցել է ավելի ծավալուն տեսք, որը պայմանավորված էր մի շարք նոր, այդ թվում՝ կեղծ և կանխամտածված սնանկության, սնանկության գործով կառավարչի գործունեության հետևանքով պատճառված վնասների հատուցման ինստիտուտների և պարզեցված ընթացակարգերի ներդրմամբ:
12. «Անվճարունակության (սնանկության) մասին» օրենքը 2006 թվականին փոխարինվել է «Սնանկության մասին» օրենքով, որը գործում է առ այսօր և այս ընթացքում ենթարկվել է մի շարք փոփոխությունների:
13. Միաժամանակ, հարկ է նկատել, որ սնանկության ոլորտում ֆինանսական կազմակերպությունների սնանկության համար գործում է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքը:
14. Ինչպես արդեն նշվեց Օրենքն ընդունումից ի վեր ենթարկվել է մի շարք փոփոխությունների և սնանկության մասին գործող օրենսդրության զարգացման շրջանակներում հատկապես հիշատակման է արժանի 2019 թվականին «Սնանկության մասին» օրենքում կատարված ծավալուն փոփոխությունները և

դրանց հիման վրա Արդարադատության նախարարի կողմից 2020 թվականին ընդունված շուրջ մեկ տասնյակ նորմատիվ իրավական ակտերը:

15. Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ներկայումս սնանկության ոլորտը շարունակում է ունենալ համապարփակ բարեփոխման անհրաժեշտություն:

16. Այս կապակցությամբ ուշագրավ են միջազգային գործընկերների աջակցությամբ իրականացված ոլորտային հետազոտությունները, որոնցից են.

    9) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի՝ սնանկության մասին օրենքի վերանայում, մշակված Դիէլէյ Փիփեր Միացյալ Թագավորության ՍՊԸ և Հովհաննիսյան և գործընկերներ ՍՊԸ կողմից.

    10) ՀՀ սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն, ֆինանսավորված Միացյալ Թագավորության Լավ Կառավարման Հիմնադրամի կողմից (**հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://moj.am/storage/uploads/0AM02.pdf**).

    11) Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր, ֆինանսավորված Միացյալ Թագավորության Լավ Կառավարման Հիմնադրամի կողմից (**հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/storage/uploads/123Road_Map_with_Action_Plan_ARM.pdf**):

17. Նշված հետազոտություններով արձանագրվել են սնանկության ոլորտի մի շարք խնդիրներ: Որպես օրինակ՝ Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագրով, ի թիվս այլնի արձանագրվել է, որ երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է ունենալ Սնանկության օրենսգիրք, որի հիման վրա սնանկության գործընթացի առանցքային ուղղությունները պետք է սահմանվեն մեկ միասնական ինքնուրույն փաստաթղթում՝ որպես ուղեցույց գործընթացի բոլոր մասնակիցների համար: Օրենսգիրքը, այդպիսով, կդառնա սնանկության բոլոր հարցերին առնչվող ունիվերսալ, համապարփակ և արդյունավետ գործող իրավական ակտ:

18. Ընդ որում, հարկ է նշել, որ ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցի համաձայն՝ չնայած նյութաիրավական հարցերի բազմազանությանը, որոնք պետք է լուծվեն սնանկության մասին օրենքներով, սնանկության համակարգն ունի նաև խիստ ընթացակարգային բնույթ: Դատավարական կանոնների ձևավորումը կարևոր նշանակություն ունի դերերը տարբեր մասնակիցների միջև բաշխելու՝ հատկապես որոշումների կայացման առումով[3]:

19. Դրանով իսկ պայմանավորված մի շարք երկրներ իրենց սնանկության համակարգը կայացնելիս, նյութաիրավական և ընթացակարգային հարցերը

[3] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf:

կարգավորել են մեկ համապարփակ ակտով, օրինակ՝ Ֆինլանդիան, Լատվիան, Գերմանիան և այլն:

20. Ողջ վերոնշյալով պայմանավորված՝ սնանկության ոլորտի համապարփակ բարեփոխման հրամայականը Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթությունների շարքում է՝ հաշվի առնելով շուկայական տնտեսության արդի միտումները և զարգացող տնտեսական հարաբերությունները:

21. Ուշագրավ է նաև այն, որ «Գործարարությամբ զբաղվելը-2019» Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն գնահատված երկրների շարքում «Սնանկության կարգավորում» ցուցիչով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցրել է 95-րդ տեղը[4]: Հայաստանի Հանրապետության զբաղեցրած դիրքը և արձանագրած ցուցանիշները արդյունք են «Գործարարությամբ զբաղվելը-2019» Համաշխարհային բանկի զեկույցի «Սնանկության կարգավորում» ցուցիչով ներկայացված որոշ հարցերի վերաբերյալ Օրենքում անհրաժեշտ կարգավորումների բացակայության կամ թերի կարգավորումների առկայության:

22. Դեռևս Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության շրջանակում նախատեսվել էին հետևյալ ռազմավարական ուղղությունները.
    1) Սնանկության կառավարիչների մասնագիտական պատրաստվածության բարձրացում, կարողությունների զարգացում.
    2) Սնանկության կառավարիչների նշանակման և փոխարինման կարգի վերանայում.
    3) Պարտապանի գույքի գույքագրման, գնահատման և աճուրդի գործընթացի հստակեցում.
    4) Ֆինանսական առողջացմանը նպաստող կայուն մեխանիզմների սահմանում.
    5) Սնանկության վարույթում դատարանի և դատավորների դերակատարման բարձրացում և կարողությունների զարգացում.
    6) Սնանկության համակարգի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում.
    7) Սնանկության վերաբերյալ ունիվերսալ օրենսդրության մշակում:

23. Ընդ որում Սնանկության օրենսգրքի շրջանակներում նախատեսվում էր, ի թիվս այլնի՝
    1) էականորեն փոխել ՀՀ սնանկության մոդելը, առանձնացնելով լուծարման և առողջացման գործընթացները՝ նախատեսել առողջացման կամ լուծարման ծրագիր հենց սկզբից,

[4] Տե՛ս https://archive.doingbusiness.org/en/data/exploreeconomies/armenia:

2) հստակեցնել սնանկության վարույթի հնարավոր բոլոր կողմերի և մասնակիցների կարգավիճակը,
3) կատարելագործել ֆիզիկական անձանց սնանկության իրավակարգավորումները,
4) կրճատել սնանկության վարույթի ժամկետները,
5) վերանայել կոռուպցիոն ռիսկեր պարունակող բոլոր ներկա կարգավորումները,
6) վերանայել սնանկության վարույթում սնանկության կառավարչի կողմից, պարտապանի սեփականության և բիզնեսի կառավարման հարցերը,
7) նախատեսել սնանկության վարույթում թույլատրելի ծախսերի համակարգ,
8) նախատեսել անդրազգային սնանկության վերաբերյալ իրավակարգավորումներ:

24. Այս համատեքստում Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում ԱՆ նախաձեռնությամբ Ազգային ժողովի կողմից արդեն իսկ ընդունվել են «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքները, դրանց հիման վրա անհրաժեշտ ենթաօրենսդրական իրավական ակտերը:

25. Վերոնշյալ ռազմավարության արդյունքում «Սնանկության մասին» օրենքում արդեն իսկ իրականացվել են մի շարք փոփոխություններ: Այնուամենայնիվ, սնանկության մասին օրենսդրությունը դեռևս ունի զգալի բարեփոխման կարիք, ինչը մի կողմից պայմանավորված է իրավական բացերի առկայությամբ, իսկ մյուս կողմից առկա կարգավորումների անկատարություններով, որոնց լուծումն ունի առանցքային նշանակություն:

26. Այսպիսով, Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարության շրջանակում ևս սնանկության ոլորտի բարեփոխումներն արտացոլվեցին որպես օրակարգային ուղղություն: Մասնավորապես, սնանկության ոլորտի օրենսդրության բարելավումը նպատակ է հետապնդում կարգավորել այն խնդիրները, որոնք չեն լուծվել արդեն իսկ կատարված բարեփոխումներով կամ որոնց անհրաժեշտությունը բացահայտվել է այդ փոփոխությունների կիրառման շրջանակներում, այդ թվում՝ սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները մեկ միասնական ակտով կարգավորելու կարևորության հաշվառմամբ:

27. Այսպես, Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը ևս, ի թիվս այլնի, որպես նպատակ նախանշում է սնանկության ոլորտի

բարեփոխումը և սնանկության ունիվերսալ օրենսդրության մշակումը՝ որպես ռազմավարական ուղղություն:

28. Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսվում է ոլորտի բարեփոխման երկու փուլ.
    12) օրենսդրական բարեփոխումների հայեցակարգի մշակում և քննարկում.
    13) հայեցակարգի հիման վրա վեր հանված կարիքների և ուրվագծված խնդիրների համատեքստում սնանկության մասին օրենսդրության մեկ միասնական իրավական ակտի նախագծի մշակում և քննարկում:
29. Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարության շրջանակում նախատեսվում է նաև մշակել, ներդնել և գործարկել «էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլը:
30. Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարության համաձայն՝ հայեցակարգի շրջանակում անհրաժեշտ է, ի թիվս այլնի, անդրադառնալ.
    1) Հայաստանում սնանկության մոդելի փոփոխությանը՝ առանձնացնելով լուծարման և առողջացման գործընթացները և նախատեսելով առողջացման կամ լուծարման ծրագրերի ներդնում հենց վարույթի սկզբից.
    2) սնանկության վարույթի հնարավոր բոլոր կողմերի և մասնակիցների կարգավիճակի հստակեցմանը.
    3) բացի ֆիզիկական անձանցից նաև մասնագիտացված կազմակերպությունների՝ որպես սնանկության կառավարիչ հանդես գալու իրավական հնարավորության նախատեսումը.
    4) ֆիզիկական անձանց սնանկության իրավակարգավորումների կատարելագործմանը.
    5) սնանկության վարույթի ժամկետների կրճատմանը.
    6) կոռուպցիոն ռիսկեր պարունակող բոլոր ներկա կարգավորումների վերանայմանը.
    7) սնանկության վարույթում սնանկության կառավարչի կողմից, պարտապանի սեփականության և բիզնեսի կառավարման հարցերի վերանայմանը.
    8) սնանկության վարույթում թույլատրելի ծախսերի համակարգի նախատեսմանը.
    9) անդրազգային սնանկության վերաբերյալ իրավակարգավորումների նախատեսմանը.
    10) առանձին սուբյեկտների համար սնանկության հատուկ ընթացակարգերի նախատեսմանը:

31. Սնանկության վարույթի վերաբերյալ համակարգային, համապարփակ և լիարժեք օրենսդրություն մշակելուն ուղղված հայեցակարգը մշակելուց և լայն քննարկում անցնելուց հետո անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ մարմինների հետ մշակել սնանկության օրենսգիրք, որը կնախատեսի սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտների սահմանումն ու կարգավորումը, ինչպես նաև հայեցակարգի շրջանակներում ուրվագծված այլ խնդիրները:
32. Ինչ վերաբերում է էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլին, նախատեսվում է վերջինիս միջոցով ապահովել դիմումների և այլ փաստաթղթերի ներկայացումը դատարանին, սնանկության կառավարչին և վարույթի մասնակիցներին, փաստաթղթերի և սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության առցանց հասանելիությունը, իրականացնել էլեկտրոնային ծանուցումներ, կազմակերպել սնանկության կառավարիչների թեկնածուների ընտրությունը, գույքի էլեկտրոնային վաճառքը, հրապարակել հաշվետվություններ, ամփոփել վիճակագրական տվյալներ:
33. Ամփոփելով՝ անվիճելի է, որ սնանկության ոլորտը կարգավորող միասնական օրենսդրական ակտը պետք է բավարար երաշխիքներ ստեղծի պարտատերերի իրավունքների պաշտպանության և նրանց խախտված իրավունքների վերականգման, պարտապանների առողջացման հնարավորությունների ապահովման, սնանկության վարույթի կանխատեսելի և համալիր կարգավորման համար, ինչպես նաև ստեղծի բարենպաստ միջավայր և պայմաններ ձեռնարկատիրական գործունեության անխոչընդոտ իրականացման համար, ինչպես Հայաստանում գործող, այնպես էլ օտարերկրյա ձեռնարկատերերի մասնակցությամբ հարաբերությունների զարգացման համար: Ընդ որում, այս և ոլորտին առնչվող մնացած այլ հարցերի համակարգային, համապարփակ և լիարժեք կարգավորմանն ուղենիշները պետք է իրենց արտացոլումը գտնեն այս հայեցակարգում, որը օրենսգրքի նախագծման անհրաժեշտ հիմք հանդիսանալուն զուգահեռ կարող է օգտագործվել որպես սնանկության օրենսգրքի ընդունման անհրաժեշտության հիմնավորում կամ դրա մաս, իսկ հետագայում լինել անհրաժեշտ և արժեքավոր աղբյուր սնանկության օրենսգրքի կիրառման ընթացքում դրա դրույթների մեկնաբանման, ինչպես նաև գիտագործնական նյութերի մշակման համար:

4. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Սնանկության ոլորտը նյութական և դատավարական բոլոր ասպեկտները ներառող մեկ միասնական ակտով կարգավորելու նպատակի սահմանումից հետո ոլորտում առկա խնդիրները և կարիքները գույքագրելու նպատակով ԱԶԲ աջակցությամբ իրականացվել են երկու համապարփակ հետազոտություններ:
35. Այսպես, ԱՆ և ԱԶԲ TA 8998-REG (ՏԱ) տեխնիկական առաջադրանքի շրջանակում փորձագետները 2020 թվականին խորհրդակցություններ են ունեցել շահագրգիռ պետական մարմինների, կազմակերպությունների և անձանց հետ: Մասնավորապես, սնանկության ոլորտում առկա օրենսդրական և գործնական խնդիրների բացահայտման նպատակով փորձագետների և ԱՆ ներկայացուցիչների կողմից համատեղ մշակվել են համապարփակ հարցումների նախագծեր, որոնք ներառել են հետևյալ հարցերը.
    1) ինչ օրենսդրական և այլ բնույթի խնդիրներ են առկա սնանկության ոլորտում, այդ թվում՝ ֆինանսական առողջացման մեխանիզմների արդյունավետ կիրառման, ինչպես նաև պարտապանի գույքի գույքագրման, գույքի գնահատման և աճուրդների կազմակերպման առումով և ինչպես կարելի է դրանք հաղթահարել.
    2) արդյոք նպատակահարմար է մինչև լուծարման վարույթը պարտապանի ընթացիկ գործունեությունը ապահովելու համար պարտատերերի որոշմամբ պարտապանի ակտիվների վաճառքի հնարավորությունը նախատեսելը, եթե այո՝ որ դեպքերում և ինչ ընթացակարգով.
    3) սնանկության վարույթում կիրառելի որ փաստաթղթերի (օրինակ՝ ֆինանսական առողջացման ծրագիր, գույքագրման ակտ և այլն) տիպային ձևերի մշակումը և օգտագործումը կնպաստի սնանկության վարույթի արդյունավետության բարձրացմանը.
    4) արդյոք առկա է սնանկության վարույթի որևէ ընթացակարգի կամ դրա շրջանակում կատարվող առանձին գործողության վերաբերյալ ուղեցույցների կամ խորհրդատվական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն, եթե այո, ապա որ.
    5) ինչ կարիքներ (ուսումնական և տեղեկատվական նյութերի, ուղեցույցների մշակում և այլն) են առկա դատավորների և սնանկության գործով կառավարիչների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու հարցում.
    6) սնանկության վարույթի որ հարցերը ունեն հրատապ հանրային իրազեկման կարիք և ինչու.

7) այլ ինչ առաջարկներ են առկա սնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առումով:

36. 2020 թվականի հոկտեմբերի 17-ին ԱՆ անունից վերոնշյալ հարցերն ուղարկվել են հետևյալ շահագրգիռ անձանց և մարմիններին.
    1) ԻԿԿ (ընդգրկում է սնանկության գործով բոլոր կառավարիչներին).
    2) ՓՊ (ընդգրկում է բոլոր փաստաբաններին).
    3) ԲՄ (ընդգրկում է բոլոր բանկերը).
    4) ԱԳՄ.
    5) Արդարադատության ակադեմիա.
    6) ՄԻՊ.
    7) ԿԲ.
    8) Էկոնոմիկայի նախարարություն.
    9) Ֆինանսների նախարարություն.
    10) ՊԵԿ.
    11) ԲԴԽ (ընդգրկում է բոլոր դատարանները):
37. Նշված խորհրդակցությունների արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են հետևյալ փաստաթղթերում.
    1) Արդարադատության նախարարության և Ասիական զարգացման բանկի TA 8998-REG (SA) տեխնիկական առաջադրանքի շրջանակում մշակված Հետազոտական զեկույց:
    2) Արդարադատության նախարարության և Ասիական զարգացման բանկի TA 8998-REG (SA) տեխնիկական առաջադրանքի շրջանակում մշակված Ռազմավարական զեկույց (**հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/storage/uploads/Policy_report_bankruptcy_ARM_1.pdf**):
38. Հետազոտությունների հաջորդ փուլը տեղի է ունեցել 2022-2023թթ. ժամանակահատվածում:
39. Մինչ խորհրդակցությունների իրականացումը միջազգային փորձագետները ԱՆ և ԱԶԲ TA 8998-REG (SA) տեխնիկական առաջադրանքի շրջանակում մշակված «ՀՀ սնանկության ոլորտը կարգավորող օրենսդրության վերանայում» վերտառությամբ ռազմավարական զեկույցի հիման վրա կազմվել են շահագրգիռ անձանց և մարմինների հետ քննարկման ենթակա հարցերի ցանկ և դրանց համատեքստը մեկնաբանող փաստաթուղթ:
40. Խորհրդակցությունների շրջանակը մասնավորապես ներառել է հետևյալ շահագրգիռներ մարմիններին և անձանց.
    1) ԲԴԽ.
    2) ՎԴ.
    3) Վերաքննիչ դատարան.

4) ՍԴ.
5) Փոխվարչապետի գրասենյակ.
6) Էկոնոմիկայի նախարարություն.
7) Ֆինանսների նախարարություն.
8) Գլխավոր դատախազություն.
9) ՊԵԿ.
10) Ոստիկանություն.
11) Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայություն.
12) ԿԲ.
13) ԲՄ.
14) Կադաստրի կոմիտե.
15) ԻԿԿ.
16) Նոտարական պալատ.
17) ՓՊ.
18) Արդարադատության ակադեմիա.
19) ՍԿ.
20) Փաստաբաններ.
21) Բանկերի ներկայացուցիչներ:

41. ԱՆ քննարկման ենթակա հարցերը մինչև խորհրդակցությունների իրականացումն ուղարկել է բոլոր շահագրգիռ պետական մարմիններին, կազմակերպություններին և անձանց:
42. Շահագրգիռ մարմինների և անձանց հետ հանդիպումները իրականացվել են նախ ազգային փորձագետների, այնուհետև նաև միջազգային փորձագետների մասնակցությամբ: Յուրաքանչյուր շահագրգիռ կողմի հետ քննարկվել է վերջինիս վերաբերելի հարցերի շրջանակը:
43. Շահագրգիռ պետական մարմինները, կազմակերպությունները և անձինք քննարկումներին մասնակցել են մեծ ակտիվությամբ, որի արդյունքները համառոտագրվել է: Բացի հանդիպումների ընթացքում հնչեցված բանավոր դիտարկումներից, ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ շահագրգիռների կողմից կներկայացվեն նաև գրավոր կարծիքներ: Այդ կապակցությամբ, հարկ է նշել, որ ստացվել են շուրջ 100 էջ գրավոր դիտարկումներ, որոնք ևս ուսումնասիրվել են սույն փաստաթղթի մշակման աշխատանքներն իրականացնելիս:
44. Վերոնշյալ խորհրդակցությունների արդյունքում ստացված դիտարկումները և առաջարկները ամփոփվել և խմբավորված ներկայացված են Հայեցակարգի 6-րդ բաժնում:

45. Ավելին, 2023 թվականի օգոստոսի 18-ին տեղի է ունեցել Սնանկության նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային ուղղությունների վերաբերյալ կլոր-սեղան քննարկում, որին մասնակցել են Հայեցակարգի 5.8-րդ կետում նշված շահագրգիռների լայն շրջանակ և ներկայացրել ոլորտի առնչությամբ իրենց դիտարկումներն ու առաջարկները: Դրանք ևս խմբավորված ներկայացված են Հայեցակարգի 6-րդ բաժնում:
46. Հարկ է նշել նաև, որ Հայեցակարգի մշակման շրջանակում ուսումնասիրվել են սնանկության ոլորտի վերաբերյալ ՍԴ շուրջ 10 և ՎԴ շուրջ 140 որոշումներ:

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

47. Սնանկության ոլորտում իրականացված շարունակական բարեփոխումները զգալի ազդեցություն են ունեցել օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի զարգացման վրա: Այս տեսանկյունից, ինչպես նշվեց, հատկապես նշանակալից են 2019 թվականին իրականացված Օրենքի փոփոխությունները, որոնք, մի կողմից, լուծել են ոլորտում կուտակված բազմաթիվ խնդիրներ, իսկ, մյուս կողմից, օրենսդրական հիմք դարձել ոլորտի ենթաօրենսդրական մակարդակում համապարփակ կարգավորումներ մշակելու և ընդունելու համար:
48. Քննարկվող համատեքստում չափազանց կարևոր է նաև դատական պրակտիկայի ունեցած ավանդը: Մասնավորապես, բազմաթիվ հարցեր իրենց լուծումն են գտել Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումներում, որոնք ուղենիշային նշանակություն ունեն ոչ միայն դատարանների, այլև սնանկության ոլորտի այլ սուբյեկտների համար:
49. Միաժամանակ, ոլորտի զարգացման համար պակաս կարևոր չէր Սնանկության՝ որպես մասնագիտացված դատարանի ստեղծումը, որը թույլ է տվել հնարավորինս միասնականացնել իրավակիրառ պրակտիկան:
50. Այդուհանդերձ, ոլորտում իրականացված հետազոտությունները վկայում են, որ սնանկության ոլորտում դեռևս առկա են օրենսդրական և գործնական բնույթի կարիքներ և դրանց առնչվող խնդիրներ, որոնց լուծումը նոր որակի վրա կբարձրացնի Հայաստանի սնանկության համակարգը՝ զգալի նպաստ բերելով գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը:

<u>Օրենսդրական բնույթի կարիքի նկարագրությունը և առնչվող խնդիրները</u>.

51. Իրականացված հետազոտությունների արդյունքները միարժեքորեն փաստում են, որ սնանկության ոլորտի օրենսդրության համապարփակ բարեփոխումը հնարավոր է միայն նոր՝ նյութական և դատավարական բոլոր հարաբերությունները կարգավորող միասնական ակտի մշակման միջոցով, քանի որ արձանագրված խնդիրների ծավալը և բնույթը հնարավոր չէ հաղթահարել Օրենքում հատվածական փոփոխությունների և լրացումների միջոցով: Ընդ որում, շահագրգիռ անձինք և մարմինները նյութական և դատավարական հարաբերությունները մեկ ակտով կարգավորելու Կառավարության նախաձեռնությունը ողջունել են նաև իրավակիրառման դյուրինության ապահովման տեսանկյունից:

52. Շարադրվածի հաշվառմամբ արձանագրված խնդիրները հանգում են հետևյալին

<u>Սնանկության ինստիտուտի վերաբերյալ.</u>

53. Անհրաժեշտ է սնանկության ինստիտուտի և գումարի գանձման ընթացակարգերի միջև սահմանների հստակ ուրվագծումը, երբ սնանկության ինստիտուտը միտված է երկու և ավելի պարտատերերի իրավունքների հավասարակշմանը և ուղղված չէ մեկ անձի պահանջի բավարարմանը: Այլ կերպ՝ սնանկության վարույթի նախաձեռնումը հնարավոր լինի միայն Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից դատական ակտի կատարման անկարողության և սնանկության դիմելու առաջարկի պարագայում:
54. Հարկ է մեթոդաբանական հիմքի վրա դնել սնանկության շեմը՝ անհրաժեշտության դեպքում տարանջատելով այն ֆիզիկական և իրավաբանական անձանց դեպքում:
55. Անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կարգավորումներ, այդ թվում՝ կանխամտածված և կեղծ սնանկության, պարտապանի հետ փոխկապակցված անձանց գույքային պատասխանատվության վերաբերյալ, որոնք կբացառեն սնանկության ինստիտուտը պարտավորությունների կատարումից խուսափելու օրինական միջոց ծառայեցնելուն, իսկ նման փորձերը կհանգեցնեն մեղավոր անձանց քաղաքացիական և այլ բնույթի պատասխանատվությունների:

<u>Ֆինանսական առողջացման վերաբերյալ.</u>

56. Ֆինանսական առողջացումների վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ, չնայած սնանկության գործերի մեծաթիվ լինելուն, այդպիսի ելքով սնանկության գործերի ավարտը խիստ սակավ է: Այս հանգամանքը, ի թիվս այլնի, պայմանավորված է որոշակի օրենսդրական խոչընդոտներով և այլ խնդիրներով: Բացի այդ, գործող օրենսդրությունը ֆինանսական առողջացման և լուծարման վարույթները, որպես կանոն, դիտարկում է հաջորդական տրամաբանությամբ՝ բացառությամբ սնանկության վտանգի վարույթի և լուծարման վարույթում պարտապանի գործունեության վերսկսման: Արդյունքում այն դեպքերում, երբ ի սկզբանե ակնհայտ է ֆինանսական առողջացման հեռանկարի բացակայությունը, սնանկության վարույթի տևողությունը անհարկի ձգձգվում է:
57. Բացի այդ, ֆինանսական առողջացման ինստիտուտի ցածր արդյունավետության հիմնական պատճառներից մեկը, ըստ էության, առողջացման համար անհրաժեշտ գրավի առարկայի օգտագործման հնարավորության հարցն է: Բանն այն է, որ, գործող օրենսդրության համաձայն, գրավի առարկան ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում կարող է օգտագործվել բացառապես ապահովված պարտատիրոջ համաձայնությամբ, մյուս կողմից՝ գրավի առարկան

մինչև ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը ապահովված պարտատիրոջ կողմից կարող է դուրս բերվել սնանկության վարույթից և իրացվել: Չնայած որպես հակակշիռ նախատեսված է համարժեք պաշտպանության ինստիտուտը, սակայն այն պրակտիկ կիրառություն չի ստանում: Հետևաբար անհրաժեշտ է ներդնել այնպիսի կարգավորումներ, որոնք մի կողմից կպաշտպանեն ապահովված պարտատիրոջ շահերը, մյուս կողմից՝ չեն ազդի ֆինանսական առողջացման արդյունավետության վրա, երբ գրավի առարկան անհրաժեշտ կլինի ֆինանսական առողջացման համար: Մյուս կողմից, սակայն, որոշակի խնդիրներ է առաջանում այն օրենսդրական կարգավորման հետևանքով, ըստ որի՝ ապահովված պարտատերերը զրկված են ֆինանսական առողջացման հարցով քվեարկելու իրավունքից: Արդյունքում պարտապանի և այլ պարտատերերի կողմից իրենց իրավունքների չարաշահման հնարավորություն է ստեղծվում՝ ի վնաս ապահովված պարտատիրոջ իրավունքների: Սա, ըստ էության հակասում է սնանկության վարույթին հայտնի այն էական սկզբունքին, ըստ որի՝ ֆինանսական առողջացման դեպքում պարտատերերը չպետք է զրկվեն նրանից, ինչ կստանային պարտապանի լուծարման դեպքում: Հետևաբար այս համատեքստում ֆինանսական առողջացման վարույթը վերանայելիս պետք է դրվի պարտապանի և բոլոր պարտատերերի շահերի առավելագույն հավասարակշռման սկզբունքը:

58. Ֆինանսական առողջացման գործընթացի ձախողման պատճառ կարող է դառնալ պարտատիրոջ կամ պարտատերերի օբյեկտիվ հիմնավորում չունեցող դեմ քվեարկությունը:

59. Մյուս խնդիրն առնչվում է գործող օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական առողջացման ծրագրերի առավելագույն ժամկետներին, որոնք նախատեսված են գործող օրենսդրությամբ, ինչը գործնականում խնդրահարույց է հատկապես երկարաժամկետ ֆինանսավորման կամ ներդրումային ծրագրերի դեպքում: Արդյունքում, կենսունակ ֆինանսական առողջացման ծրագրով պարտապանի առողջանալու իրական հնարավորությունը կարող է բաց թողնվել ծրագրի երկարաժամկետ լինելու հետևանքով: Չնայած մի կողմից սա ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանությանը՝ նրանց պահանջների հնարավորինս սեղմ ժամկետում բավարարումն ապահովելուն, սակայն մյուս կողմից պետք է հնարավորություն տրվի պարտատերերին դիտարկելու նաև երկարաժամկետ ծրագրերը՝ որպես պարտապանի լուծարման այլընտրանք: Ամեն դեպքում, գործող կարգավորումների համատեքստում հնարավորություն չկա ծրագրի ժամկետը ի սկզբանե օրենքով սահմանված առավելագույն ժամկետով սահմանելու համար: Ավելին, նույնիսկ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի երկարաձգման հեռանկարը բավարար չէ, քանի որ նախատեսվող ֆինանսավորման համար անհրաժեշտ է ավելի տևական ժամանակահատված:

60. Հստակեցման ենթակա են նաև ֆինանսական առողջացման ժամանակ կիրառվող միջոցառումների իրականացմանն ուղղված կարգավորումները: Չնայած օրենքը նման միջոցառումների ցանկ չի սահմանում և դրանց իրականացումը թողնում է առողջացման ծրագրի կարգավորմանը, սակայն անհրաժեշտ է մտածել որոշ դեպքերում այդ միջոցառումների իրականացման ընթացքի և դրանց հետևանքների վերաբերյալ օրենսդրական հստակ կարգավորումներ նախատեսելու մասին, որոնք կվերաբերեն, օրինակ, ֆինանսական առողջացման ընթացքում պարտքի նկատմամբ տոկոսների և տույժերի հաշվարկմանը, պարտավորությունների մարման ժամանակացույցի խախտման տևողության սահմանմանը և այլ հարցերի: Այլապես առկա են հայեցողական որոշումների կայացման ռիսկեր:
61. Մինչև լուծարման վարույթ սկսելը պարտապանի գույքի վաճառքը արգելող կարգավորումները նույնպես ենթակա են վերանայման, հատկապես այն դեպքերի համար, երբ գույքի վաճառքը կարող է նպաստել պարտապանի առողջացմանը և չհասցնել նրա լուծարման:
62. Ֆինանսական առողջացման գրավչությունը բարձրացնելու հիմնական գործիքներից մեկը կարող է հանդիսանալ սնանկության կառավարչի խրախուսման միջոցները: Չնայած Օրենքը նախատեսում է նման մեխանիզմներ, օրինակ՝ պարգևավճարներ ֆինանսական առողջացման հաջող ավարտի դեպքում, սակայն անհրաժեշտ է դիտարկել նաև խրախուսման այլ ձևեր:
63. Ֆինանսական առողջացման վարույթի հարուցման հնարավորությունը սահմանափակված է մինչև պարտատերերի առաջին ժողովը, այնինչ պրակտիկայում շատ հաճախ առողջացման հիմքեր առաջանում են լուծարման վարույթի ընթացքում: Այս առումով թեկուզև որոշակիորեն հարցը լուծվում է պարտապանի գործունեության վերսկսման ինստիտուտի միջոցով, սակայն դրա իրականացման կարգը, հնարավոր միջոցառումները չեն ստացել օրենսդրական ամրագրում, իսկ նախատեսված մեկամյա առավելագույն ժամկետը ակնհայտորեն անբավարար է:
64. Հստակեցման կարիք ունի ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում մորատորիումի գործողության կամ գործողությունը բացառելու հարցերի, այդ թվում՝ այդ ընթացքում պարտապանի կողմից գործարքներ կնքելու հարցերի հստակեցումը:
65. Ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքներով որևէ գույք չհայտնաբերելու դեպքում հարկ է ունենալ սնանկության գործը արագացված ռեժիմով ավարտելու հնարավորություն:
66. Օրենսդրությունը չի նախատեսում տնտեսության համար կարևոր դեր ունեցող տնտեսավարողների ֆինանսական առողջացումը պետության կողմից խթանելու կառուցակարգեր:

Պարտապանի գույքի վերաբերյալ.

67. Օրենքը նախատեսում է պարտապանի գույքի օտարման հնարավորություն այն դեպքում, երբ դրա օտարումը առավել գրավիչ կարող է լինել, երբ վաճառվում է ոչ թե առանձին գույքը, այլ բիզնես գործունեությունը, քանի որ այդ դեպքում պահպանվում է ողջ կադրային ներուժը, ինչպես նաև պայմանագրային հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ առավել ընդունելի է պարտապանի կանոնադրական կապիտալի բաժնեմասի օտարման հնարավորության ամրագրումը:
68. Պարտապանի գույքային կազմի շրջանակը բացահայտելու կարևոր գործիք է գույքագրումը, որը, սակայն, երբեմն արդյունավետ չի կիրառվում, քանի որ խոչընդոտվում է պարտապանի կողմից: Նույնիսկ այն դեպքերում, երբ գույքագրման գործընթացին ներգրավվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ապա այդ դեպքում խոչընդոտման հարցում շահագրգիռ անձինք ձեռնամուխ են լինում հարկադիր կատարողի որոշումների բողոքարկմանը:
69. Պարտապանի դրամական պահանջների հավաքման առնչությամբ առկա չեն որոշակի կարգավորումներ՝ արդյունքում պարզ չէ՝ դրանք որ դեպքում կարող են դառնալ աճուրդով իրացման ենթակա գույք, իսկ որ դեպքում պետք է հանգեցնեն դրամական հոսքի:
70. Անհրաժեշտ է վերանայել պարտապանի կողմից երրորդ անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու մեխանիզմը (պարտապանի գործարքների վիճարկումը), հատկապես օրենսդրորեն հստակեցնելով պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի մտադրությունը կամ այդ պահին կետանցված պարտավորությունների առկայությունը՝ դրա համար նախատեսելով հստակ չափանիշներ և կարևորելով նաև գործարքների վիճարկման իրավական հետևանքները, մասնավորապես՝ գործարքների անվավերության և գրանցված իրավունքների դադարման հետ կապված հարցերը: Միևնույն ժամանակ պետք է սահմանել կառավարչի և պարտապանի իրավունքները և պարտականությունները նման գործարքների վիճարկումըանհամարժեք անբարենպաստ հետևանքներ չառաջացնի նաև կառավարչի համար և վերջինս շահագրգռված լինի այդ հարցում:
71. Չնայած Օրենքը նախատեսում է մի շարք կառուցակարգեր, որոնք վերաբերում են պարտապանի գործունեությանը, սակայն կարգավորումները բավականին մակերեսային են և հնարավորություն չեն տալիս առավել մանրամասն պատկերացում կազմելու գործող ընթացակարգերի մասին, օրինակ՝ հստակեցված չեն այն հարցերը, թե ինչպես է իրականացվում գույքի կառավարումը և տնօրինումը:

72. Գույքի գնահատմանն առնչվող կարգավորումների վերաբերյալ բարձրացված էական խնդիրը վերաբերում է գույքի գնահատման համար հստակ ժամկետների բացակայությանը: Արդյունքում առկա է իրավիճակ, երբ գույքի գնահատմանն ուղղված հիմնական կարգավորումների բացակայության պայմաններում կարող են խախտվել պարտապանի և պարտատերերի շահերը, քանի որ գույքի պատշաճ գնահատումից են կախված գույքի վաճառքի դեպքում դրա ճակատագիրը և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունները: Բացի այդ, պետք է ապահովվի օրգանական կապը գույքագրման և գույքի գնահատման միջև: Մյուս կողմից, Օրենքը թեև նախատեսում է կառավարչի կողմից ինքնուրույն (առանց գնահատողի) գնահատման հնարավորությունը, սակայն չի նախատեսում այն իրականացնելու կարգը, մեխանիզմները, մեթոդները և այլն:
73. Սնանկության վարույթում աճուրդների հիմնական խնդիրներից մեկը գույքի վաճառքի գինն է, ինչը մշտապես չարաշահումների տեղիք է տալիս և' ի վնաս պարտապանի, և' ի վնաս պարտատերերի: Չնայած Օրենքում կատարված վերջին փոփոխություններով կանխվեց այն պրակտիկան, երբ մի քանի աճուրդների ընթացքում առաջին աճուրդի ժամանակ ձևավորված մեկնարկային գինն էականորեն իջեցվում էր, սակայն դեռևս առկա են աճուրդի գնի սահմանման, այդ թվում՝ մեկնարկային գնից ավելի բարձր գին առաջարկելու դեպքերում չարաշահումներ թույլ տալու ռիսկեր:
74. Չնայած այն հանգամանքին, որ Օրենքը սահմանել է աճուրդն էլեկտրոնային եղանակով իրականացնելու պահանջ, սակայն մինչև աճուրդի էլեկտրոնային համակարգի ներդրումն այն իրականացվում է դասական եղանակով, ինչը շատ դեպքերում պահանջում է, որ կառավարիչը աճուրդի պատշաճ կազմակերպման իրավական գործիքներ ունենա, երբ, օրինակ, աճուրդի մասնակիցները խոչընդոտում են աճուրդի ընթացքը: Բացի այդ, կարևորվում է նաև այնպիսի կարգավորումների նախատեսումը, որպեսզի հնարավոր լինի գույքը աճուրդում հաղթողին հանձնել «մաքուր» վիճակում՝ բացառելու համար այդ գույքի նկատմամբ այլ անձանց առկա կամ հնարավոր ազդեցություններից, ինչը տարածված երևույթ է հայաստանյան իրականության մեջ:
75. Աճուրդների արդյունավետությունը կախված է նաև նրանից, թե որքան ճկուն են դրանք՝ փուլերով և տարբեր պարբերականությամբ իրականացվելու դեպքերում, հատկապես երբ խոսքը գնում է մեծաքանակ գույքերի վաճառքի մասին:
76. Անհրաժեշտ է հստակ կարգավորումներ նախատեսել աճուրդի ընդհատման պահի և դեպքերի առումով:
77. Անհրաժեշտ է վերանայել մինչև լուծարման վարույթ սկսելը պարտապանի գույքի վաճառքի կառուցակարգերը, հստակեցնել այն դեպքերը և չափանիշները, որոնց պարագայում պարտատերերը հնարավորություն կունենան որոշում կայացնելու գույքը մինչև պարտապանի լուծարումը վաճառելու մասին, հատկապես այն

դեպքերում, երբ պարտապանը ունի գործող բիզնես, ընկերության ակտիվները գերազանցում են պարտավորությունների (պահանջների) չափը և գույքի իրացումը թույլ կտա բավարարել բոլոր պահանջները, ինչի արդյունքում չեն կիրառվի ոչ ֆինանսական առողջացման և ոչ էլ լուծարման բարդ ընթացակարգերը: Օրինակ՝ մինչև լուծարման վարույթ սկսելը պարտապանի ակտիվների վաճառքը կարող է նախատեսվել այն դեպքում, երբ այդ գույքը ակնհայտորեն չի կարող օգտագործվել ֆինանսական առողջացման շրջանակներում, օրինակ՝ փչացող, արագ արժեզրկվող կամ պահպանության համար անհամաչափ ծախսեր պահանջող ակտիվները. աճուրդների արդյունավետությունը կախված է նաև նրանից, թե ինչպիսի երաշխիքներ են սահմանվում աճուրդում հաղթած անձի իրավունքների պաշտպանության առումով: Ուստի այս համատեքստում կարևորվում է այնպիսի մեխանիզմների ներդրումը, որով կբացառվեն իրավունքի չարաշահումները աճուրդի արդյունքում կնքված գործարքների վիճարկման մասով: Հարկ է հստակեցնել նաև նման դեպքերում դատական վերահսկողության սահմանները՝ նկատի ունենալով, որ նման գործարքներին նախորդում է այդ իրացումը թույլատրելու մասին դատարանի որոշումը:

78. Գույքի վաճառքի կանոնակարգումների վերանայմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է հստակեցնել նաև վաճառքի արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների, դրանց ճիշտ հաշվարկման և բավարարման հետ կապված հարցերը՝ միաժամանակ ապահովելով, որ դրա արդյունքում չխախտվեն նաև մյուս պարտատերերի շահերը:

79. Հստակեցված չէ ինքնակամ շինությունների առկայության դեպքում դրանց օրինականացման հարցի առնչությամբ կառավարչի գործողությունների շրջանակը:

<u>Պահանջների վերաբերյալ.</u>

80. Սնանկության վարույթի ընթացքը ուղղակիորեն կախվածության մեջ է գտնվում պահանջների առկայությունից և չափից: Թեկուզև օրենսդրությունից ընդհանուր առմամբ հետևում է, որ խոսքը դրամական պահանջների մասին է, այնուամենայնիվ չի կարելի բացառել պարտապանի նկատմամբ ոչ դրամական պահանջների առկայությունը, որոնք կարող են ունենալ նաև դրամական արտահայտություն: Այսպես, օրինակ՝ վաճառված ապրանքի երաշխիքային սպասարկման պարտավորությունը կամ որոշակի շինության կառուցման պարտավորությունը: Արդյունքում պարզ չէ նման դեպքերում պարտավորության չափի որոշման կանոնները:

81. Պահանջների հաստատումը ենթադրում է համապատասխան դիմումի առկայություն, որը պետք է տրվի սնանկության մասին հայտարարության

հրապարակումից հետո մեկ ամսվա ընթացքում, իսկ դրանից հետո ներկայացված պարտավորությունները առանց ժամկետի բացթողումը հարգելի համարվելու դիտվում են ստորադաս չապահովված պահանջներ: Արդյունքում քննարկման ենթակա է առանձին շահերին առնչվող, օրինակ՝ աշխատողների պահանջների համար պահանջի ներկայացման նպատակահարմարության հարցը: Բացի այդ, որոշ պահանջներ առաջանում են պահանջների հաստատումից հետո, ուստի այդ դեպքերում քննարկման կարիք ունի միջնորդության ներկայացման անհրաժեշտությունը:

82. Պարտապանի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձինք ևս համարվում են պարտատերեր, սակայն գործնականում նրանք նման պահանջների գրանցման գործընթացին չեն մասնակցում: Ավելին, մինչև լուծարման վարույթի ավարտը պարզ չէ նրանց պահանջի չափը:

83. Պահանջների իրավաչափությունը ստուգելու դատարանի պարտականությունը օրենսդիրը կապել է միայն որևէ սուբյեկտի կողմից ներկայացված առարկության հետ: Այնինչ, անկախ նման առարկությունից, դատարանը պետք է կրի նման պարտականություն:

84. Աշխատողների պահանջների բավարարման համար անհրաժեշտ է քննարկել համապատասխան երաշխիքային ֆոնդերի հիմնման հարցը, ինչը բխում է նաև Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից:

85. Սնանկության վարույթի արդյունքում առաջացող դատական ծախսերի և վարույթին մասնակցող անձանց միջև այլ գործերով առաջացած դատական ծախսերի հատուցման հերթերի հետ կապված հարցերը ենթակա են հստակեցման:

86. Թեկուզև պահանջների ներկայացման համար Օրենքը սահմանել է որոշակի ժամկետ, սակայն բացասական հետևանքներ նախատեսել է միայն չապահովված պահանջների չներկայացման համար: Այլ կերպ՝ գրավով ապահովված պարտատիրոջ կողմից պահանջների չներկայացումը չունի ուղղակի օրենսդրական հետևանք:

87. Ապահովված պահանջներ են դիտարկվում գրավով, երաշխավորությամբ և երաշխիքով ապահովված պահանջները, սակայն պարզ չէ երաշխավորությամբ և երաշխիքով պահանջների ապահովված կարգավիճակ տալու նպատակը, քանի որ վարույթի շրջանակում այդ պարտավորություններով պարտապանների գույքը ուղղակիորեն չի ներառվում պարտապանի գույքի շրջանակում, ինչպես գրավի դեպքում է: Մյուս կողմից, պարզ չէ սնանկության վարույթի ավարտի դեպքում երաշխավորից գումարի բռնագանձման հեռանկարները:

88. Օրենսդրությամբ անհրաժեշտ է հստակեցնել գրավատուների, երաշխավորների և երաշխիք տված անձանց դերը՝ որպես սնանկության վարույթի մասնակիցներ և հատուկ կարգավորումներ նախատեսել նրանց իրավական, դատավարական

կարգավիճակը ընդգծելու, սնանկության վարույթում նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանելու համար: Մյուս կողմից, անհրաժեշտ է վերանայել նաև սնանկության վարույթի ընթացքում երաշխավորների նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկման նպատակահարմարությունը:

89. Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել և մանրամասնել նաև գրավի առարկան ապահովված պարտատիրոջ կողմից ի սեփականություն ընդունելու գործընթացը՝ այդ գործընթացի ժամկետների, պայմանների, գույքի գնի (արժեքի), դրանից բխող՝ կառավարչի վարձատրության վճարման հարցերի շուրջ: Բացի այդ, ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների արդյունավետ բաշխման նպատակով պետք է հստակեցվեն գույքի պահպանման, իրացման ծախսերի և վարչական ծախսերի հատուցման կարգը և հերթականությունը:

90. Որոշ դեպքերում անհրաժեշտ է տարանջատում մտցնել ապահովված իրավունքի բնույթ ունեցող սահմանափակումների և ապահովված իրավունքների միջև և կարգավորել նաև դրանց փոխհարաբերակցությունը, օրինակ՝ կարող է արդյոք հարկային մարմնի կողմից մինչև սնանկության վարույթի հարուցումը հարկատուի գույքի կիրառված արգելանքը կարող է դիտարկվել ապահովված պահանջ՝ արգելադրված գումարի չափով, եթե այո, ապա ինչ կարգավորումներ են կիրառելի այդ դեպքի նկատմամբ:

91. Կարգավորման է ենթակա նաև սնանկության վարույթի ընթացքում ապահովված իրավունքի առարկաների օգտագործման, այդ թվում՝ դրանից ստացվող եկամուտների, օրինակ՝ վարձավճարների, տնօրինման հետ կապված հարցերը:

92. Անորոշ են արտարժույթով պահանջների հաստատման հետ կապված հարցերը:

93. Սնանկության վարույթի ավարտով պարտավորությունների չազատման դեպքերի առնչությամբ հստակեցված չէ դրանց իրացման համար հավելյալ պահանջների առկայությունը և դրանց պահպանման կարգը, ինչպես օրինակ՝ պարտատիրոջ կողմից իր կամքից անկախ պատճառներով չներկայացված պահանջը հետագայում հայցի միջոցով ներկայացնելիս ինչպես է հիմնավորվում և գնահատվում նման անհնարինությունը:

<u>Մորատորիումի վերաբերյալ.</u>

94. Մորատորիումի ինստիտուտը, միտված լինելով ապահովել ֆինանսական առողջացման համար պարտապանի գույքային դրության պահպանումը, պետք է ունենա ժամեկտային սահմանափակում: Այլ կերպ ասած՝ այն բոլոր դեպքերում, երբ սպառվում է ֆինանսական առողջացման գործընթացի մեկնարկի հնարավորությունը, մորատորիումը չպետք է սահմանափակի պարտատերերի պահանջների վրա հաշվեգրվելիք գումարներին:

95. Մորատորիումի շրջանակներում անհրաժեշտ է ճկուն կարգավորումներ այն առումով, որպեսզի հնարավոր չլինի չարաշահումներ թույլ տալ և սնանկության վարույթի շրջանցմամբ բավարարում տալ պարտատերերին՝ խախտելով մյուս պարտատերերի շահերը: Ավելին, շատ դեպքերում սնանկության վարույթը շրջանցում և պարտապանի պարտավորությունները կատարվում են վարույթի մասնակից չհանդիսացող երրորդ անձանց կողմից, ինչի արդյունքում նույնպես խախտվում են պարտատերերի շահերը:
96. Լուծված չէ մորատորիումի գործողության արդյունքում այլ դատական գործերի վարույթը կարճելու դեպքում պետական տուրքի վերադարձման հարցը:

<u>Պարտատերերի ժողովի և խորհրդի վերաբերյալ.</u>

97. Վերանայման են ենթակա պարտատերերի ժողովում քվեարկության, որոշումների կայացման հետ կապված հարցերը, որպեսզի ժողովում լսելի և որոշիչ լինի տարբեր դասերի պարտատերերի ձայնը (ձայների կշիռը), այլ ոչ միայն պարտատերերի թիվը: Անհրաժեշտ է նաև սահմանել մեխանիզմներ, որոնք կստիպեն պարտատերերին մասնակցելու ժողովի նիստերին, այլ ոչ խոչընդոտելու դրանց անցկացումը իրենց բացակայությամբ: Բացի այդ, պետք է վերանայվեն նաև պարտատերերի առաջին ժողովին ներկայացած պարտատերերի իրավունքները այլ պարտատերերի համեմատությամբ, այդ թվում՝ քվեարկության իրավունք ձեռք բերելու առումով: Քննարկման են ենթակա նաև պարտատերերի խորհուրդի ձևավորման կարգի փոփոխությունները՝ դրա կազմում նաև ապահովված պարտատերերի ներառման նպատակով:
98. Անհրաժեշտ է հստակեցնել պարտատերերի ժողովի որոշումների բողոքարկման հիմքերը և կարգը, որը կարող է լինել սնանկության վարույթում որպես ինքնուրույն հարց կամ որպես առանձին քաղաքացիական գործ:
99. Հարկ է քննարկել ֆիկցիայի ուժով պարտատերերի ժողովի և խորհրդի որոշումների ընդունված համարվելու մեխանիզների ներդրման հարցը այն բոլոր դեպքերում, երբ այդ մարմինները չեն հրավիրվում կամ որոշակի ժամանակահատվածում որոշում չեն կայացնում:

<u>Սնանկության կառավարիչների վերաբերյալ.</u>

100. Անհրաժեշտ է հստակեցնել սնանկության կառավարչի սնանկության վարույթում և հարակից դատավարություններում կարգավիճակները՝ հիմքում ունենալով նրա գործառութային կողմը, որը մի դեպքում կողմերից որևէ մեկի ի պաշտոնե ներկայացուցիչն է, իսկ մյուս դեպքում հանդես է գալիս իր անունից:
101. Չնայած այն հանգամանքին, որ կառավարիչների թեկնածուների վիճակահանությունն այժմ ավելի կանոնակարգված է և զերծ միջամտության ռիսկերից, սակայն ընդհանուր առմամբ վերանայման է ենթակա

կառավարիչների ընտրության և նշանակման գործող ընթացակարգը: Այստեղ պետք է ներդնել այնպիսի լուծումներ, որ մի կողմից չխախտվեն պարտատերերի և պարտապանի շահերը, մյուս կողմից՝ բացառվի պարտատիրոջից կամ պարտապանից սնանկության գործով կառավարչի կախվածության ցանկացած ռիսկ առաջացնող կարգավորումները: Որպես պայման կարող է դրվել օբյեկտիվ հիմքերով կառավարիչների վարկանիշավորումը: Այս համատեքստում վերանայման ենթակա է նաև սնանկության կառավարչի լիազորությունները դադարեցնելու հիմքերի վերանայման հարցը:

102. Առանձին պարտապանների սնանկության վարույթը ենթադրում է լայն նյութական և մարդկային ռեսուրսների ներգրավմամբ կառավարչի ներգրավում, որի ինստիտուցիոնալ լուծում կարող է լինել իրավաբանական անձանց կառավարչի որակավորման նախատեսումը:

103. Կառավարիչների վարձատրության մասով վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում մի շարք դեպքերում նվազեցվել են կառավարիչների վարձատրության տոկոսադրույքները, սահմանվել են պարգևավճարներ գործը արագ ավարտելու համար և մի շարք դեպքերում հստակեցվել են կառավարչի վարձատրություն ստանալու ընթացակարգերը: Սակայն այս համատեքստում դեռևս առկա են չլուծված խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, վարձատրությունը հաշվարկելիս գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների բավարարման համար նախատեսված գումարըհաշվարկելը, վարձատրության հաշվարկման հիմքը միջանկյալ բաշխման ծրագրի դեպքում և վարույթի մասնակից չհանդիսացող անձանց միջոցով պարտքի մարումն իրականացնելիս կառավարչի վարձատրության հարցերը:

104. Լուծված չէ երրորդ անձ գրավատուի կողմից գրավի դադարեցման համար վճարվող գումարի, ինչպես նաև երաշխավորից և երաշխիք տված անձից կառավարչի գործողությունների արդյունքում պարտատերերի պահանջները բավարարելիս կառավարչի վարձատրության հարցերը:

105. Ժամանակավոր կառավարչի վարձատրության առկա մոդելը վիճահարույց է թվում, քանի որ այն սահմանում է կայուն ամսական վարձատրություն այն դեպքում, երբ ժամանակավոր կառավարիչը ունի էականորեն նվազ անելիքներ:

106. Բացի այդ, պարտապանի գույքի բացակայության կամ դրա 50 հազար դրամից ցածր արժեք ունենալու հիմքով սնանկության վարույթի ավարտը օրենքը դիտարկում է հիմք պետական բյուջեից հատուցում ստանալու համար, որի իրականացման կարգը ներկայումս բացակայում է և այդ առումով անհրաժեշտ է օրենքում նախատեսել Կառավարության կողմից այս կարգի սահմանման ենթակա լինելու մասին լիազորող նորմ: Ընդ որում, հարկ է այս մոտեցումը քննարկել նաև ժամանակավոր կառավարչի առնչությամբ:

107. Սնանկության կառավարչի վարձատրության չափերը, որոնք պայմանավորված են պահանջների բավարարման առավելագույն շեմերով, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության պայմաններում իմաստազրկվել են, քանի որ հիմք է ընդունվում ոչ թե ընդհանրապես բոլոր բավարարումների չափը, այլ յուրաքանչյուր միջանկյալ բաշխման ծրագրի դեպքում պահանջների բավարարման չափը՝ ստեղծելով նաև անվերահսկելի հայեցողության հնարավորություն ի վնաս պարտատերերի և պարտապանի:
108. Քննարկման ենթակա է կառավարչի կողմից իրականացվող և պետական տուրքով գանձվող այլ գործողությունների, օրինակ՝ հարցումների դեպքում պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելու, ինչպես նաև կամավոր սնանկության դիմում ներկայացնելիս գույքի բացակայության դեպքում գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների իրականացմանն այլընտրանքային եղանակների ներդրման հարցը:
109. Քննարկման ենթակա է սնանկության կառավարչի քվազիվարչական մարմնի նախատեսման հարցը, որը թույլ կտա նրա գործողությունների և անգործության մասով որոշակիացնել ակնկալվող վարքագիծը և բողոքարկման ռեժիմը՝ միևնույն ժամանակ նրա վրա դնելով գործընթացի հիմնական պատասխանատուի, իսկ դատարանի վրա վեճերի և բարդ հարցերի դեպքում դատական վերահսկողության բեռը:
110. Անհրաժեշտ է հստակեցնել վարչական ծախսերի շրջանակը կամ սահմանել դրա որոշման չափանիշները:
111. Հարկ է քննարկել օտարերկրյա սնանկության կառավարիչների հավատարմագրման ինստիտուտ ներդնելու հարցը:
112. Կամավոր սնանկության դիմումը բավարարելու համար որպես տվյալների արժանահավատության պայման կարող է լինել ժամանակավոր կառավարչի կողմից ներկայացված եզրակացությունը:
113. Հարկ է ամրապնդել սնանկության կառավարչի և վարույթով պաշտպանվող շահերի դեմ անօրինական ոտնձգությունների դեմ քրեաիրավական գործիքակազմը:

<u>Ֆիզիկական անձի սնանկությունը.</u>

114. Ընդհանուր առմամբ, ֆիզիկական անձանց սնանկության ինստիտուտը ենթակա է վերանայման և առավել մանրամասն ինստիտուցիոնալ կարգավորման, ի տարբերություն ներկայիս կարգավորումների, երբ ֆիզիկական անձանց սնանկության վարույթը հիմնականում կարգավորվում է իրավաբանական անձանց սնանկության վերաբերյալ կանոններով և միայն որոշ հարցերի մասով նախատեսվում են առանձնահատկություններ:

115. Հստակեցված չեն սնանկության վարույթում աշխատավարձի բռնագանձման կարգի, չափի և ժամկետների հետ կապված հարցերը:

<u>Հարկային խնդիրների վերաբերյալ.</u>

116. Սնանկության վարույթի ընթացքում առաջացող հարկային հարցերը առնչվում են սնանկության վարույթից դուրս բերված ապահովված իրավունքի առարկայի իրացման դեպքում ապահովված պարտավորությունների նկատմամբ տույժերի և տոկոսների և բխող հարկային պարտավորությունների հաշվարկմանը,մինչև պարտապանի գործունեության կասեցումը ընկած ժամանակահատվածի համար հարկային հաշվետվություններ ներկայացնելու սուբյեկտների հստակեցմանը, պահանջների բավարարման հերթերում աշխատանքային պայմանագրերից բխող եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների բավարարման հերթի հստակեցմանը, ինչպես նաևաշխատանքային և հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումից եկամտային հարկի և սոցիալական վճարի գծով պարտավորությունների առաջացմանը:

<u>Դատավարական խնդիրների վերաբերյալ.</u>

117. Սնանկության վարույթը օրենսդրությամբ հատուկ կանոնները նախատեսված չլինելու պարագայում իրականացվում է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ, որը ոչ միշտ է համապատասխանում իրավահարաբերության բնույթին կամ առհասարակ ունենում լուծումներ այդ իրավիճակի համար: Այս առումով առաջնային լուծում պահանջող հարցերից է ծանուցումների իրականացման, այդ թվում՝ դատավարական փաստաթղթերի հանձնման հարցը, որը ներհատուկ է Հայաստանում քննվող բոլոր տեսակի դատական գործերին: Սնանկության վարույթի դեպքում խնդիրը առավել քան սուր է, քանի որ սնանկության վարույթի արդյունավետությունը կախված է վարույթի բոլոր մասնակիցների պատշաճ տեղեկացվածությունից և գործընթացում ակտիվ ներգրավվածությունից և գործի քննության սեղմ ժամկետներից: Այս առումով անհրաժեշտ է վերանայել այն կարգավորումները, որոնք հնարավորություն չեն տալիս դատավարության մասնակիցներին հաղորդակցությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ միաժամանակ ներդնելով նաև էլեկտրոնային ծանուցումների պատշաճ մեխանիզմներ:

118. Սնանկության վարույթում կիրառվող արտադատական ընթացակարգերից գործող օրենքը նախատեսում է հաշտության համաձայնության կնքումը: Այս ինստիտուտը լիարժեք վերանայման և ընդլայնման կարիք ունի, քանի որ նաև միջազգային պրակտիկայում սնանկության վարույթից դուրս արտադատական ընթացակարգերը խիստ ողջունելի են: Այս համատեքստում պետք է վերանայվեն

նաև հաշտության համաձայնություն կնքելու ժամկետը, ինչպես նաև սահմանել կառուցակարգեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ սնանկության վտանգի առջև կանգնած պարտապանի հետ արտադատական կարգով համաձայնություն կնքելու համար: Պետք է քննարկել նաև վերադաս դատական ատյաններում նման կառուցակարգերի կիրառման հնարավորությունը: Այս խնդիրը վերաբերում է նաև հաշտարարության ինստիտուտի կիրառելիությանը:

119. Սնանկության վարույթի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ներդնել նաև վարույթի մասնակիցների կողմից իրենց դատավարական իրավունքների չարաշահումները կանխելու գործուն մեխանիզմներ: Խոսքը գնում է հատկապես այն դեպքերի մասին, երբ սնանկության վարույթի մեկնարկին պարտապանի անվճարունակության հիմքում ընկած պարտավորությունը և դրա անվիճելի լինելը կասկածի տակ դնելու նպատակով հարուցվում են սնանկության գործին հարակից այլ քաղաքացիական գործեր, ինչը արհեստականորեն ազդում է սնանկության գործի քննության վրա: Չարաշահման տեղիք կարող է տալ նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված պարտավորությունները և նույնաբնույթ, սակայն դատական ակտով չհաստատված պարտավորությունները միևնույն հերթում դիտարկելը:

120. Հստակեցման են ենթակա նաև վարույթի մասնակիցների՝ պարտապանի, պարտատերերի, պարտապանի մասնակիցների, երրորդ անձանց, պետական իրավասու մարմինների և այլ սուբյեկտների դատավարական իրավունքները և պարտականությունները, հնարավոր դատավարական կարգավիճակը, այդ թվում՝ այն հարցը, թե որ պահից է յուրաքանչյուր սուբյեկտի մոտ առաջանում նման իրավունքներ և պարտականություններ: Զգայուն է նաև պարտապանի և սնանկության գործով կառավարչի պարտապանի անունից հանդես գալու իրավիճակներում այս սուբյեկտների իրավունքների և պարտականությունների տարանջատման անհրաժեշտությունը: Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել նաև սնանկության կառավարչի գործողությունների և անգործության դեմ պարտապանի բողոքարկման իրավունքի և մնացած դեպքերում հայցի հարուցման իրավունքի դեպքերը և կանոնները:

121. Հարկ է վերանայել սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի դասակարգումը՝ հստակեցնելով դրանցից յուրաքանչյուրի եզրափակիչ կամ ոչ այդպիսին լինելու հանգամանքը:

122. Վերոնշյալի համատեքստում պետք է հստակեցնել նաև, թե սնանկության գործով որ դատական ակտերն են ենթակա բողոքարկման՝ մշակելով չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի որոշել ակտերի շրջանակը՝ ելնելով դրանց բնույթից ու նշանակությունից: Ըստ այդմ՝ պետք է հստակեցվեն նաև

սնանկության վարույթի մի շարք դատական ակտերի, օրինակ՝ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշման բնույթը:

123. Կարևոր է նաև սնանկության գործով կառավարիչների գործողությունների անհիմն բողոքարկումները կանխելու հարցը: Դատական ակտերի բողոքարկման մասով պետք է գնահատել նաև վերաքննիչ դատարանին տրված այն լիազորության արդյունավետությունը, ըստ որի՝ վերաքննիչ դատարանը հնարավորություն ունի կասեցնելու բողոքարկվող դատական ակտի կատարումը:

124. Դատավարական ժամկետների առումով անհրաժեշտ է օրենքով սահմանել սնանկության վարույթում տեղի ունեցող մի շարք գործընթացների, գործողությունների իրականացման ժամկետները, խոսքը հատկապես վերաբերում է պարտատերերի վերջնական ցուցակի հաստատման, ինչպես գործն ավարտելու մասին կառավարչի միջնորդությունների քննության ժամկետներին: Անհրաժեշտ է վերանայել նաև սնանկության վարույթում դատավարական ժամկետների հաշվարկման կարգը՝ այն համապատասխանեցնելով գործող քաղաքացիադատավարական լուծումներին:

125. Սնանկության մասին օրենսդրությունը չի կարգավորում նաև պարտապանի մահվան դեպքում սնանկության վարույթի հետագա ընթացքի, ժառանգության ընդունման և սնանկության վարույթի վրա պարտապանի մահվան հետևանքների հետ կապված հարցերը: Այստեղ ուշադրության են արժանի նաև պարտապանի մահվան դեպքում ժառանգման և վերջինիս սնանկության հարաբերակցության խնդիրները, հատկապես երբ խոսքը վերաբերում է պարտապանի գույքակազմին:

126. Նման խնդիր առաջանում է նաև իրավաբանական անձի միակ հիմնադիր (մասնակից) և միաժամանակ գործադիր մարմին (տնօրեն) հանդիսացող անձի մահվան դեպքում: Տվյալ պարագայում տնօրենին փոխարինող անձի հստակեցումը կարևոր է սնանկության վարույթին պարտապանի մասնակցությունն ապահովելու առումով:

127. Ընդհանուր կանոնի համաձայն՝ դիմումները և միջնորդությունները դատարան ներկայացնելիս պետք է կցվեն դրանց օրինակը կողմերի ուղարկելու վերաբերյալ ապացույցներ: Այնինչ, առանձին գործողություններ, ինչպիսիք են արգելանքի կիրառումը կամ ՊԵԿ կողմից ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու միջնորդությունների ուղարկումը կարող է էականորեն վնաս պատճառել նման գործողությունների արդյունավետ իրականացմանը:

128. Քննարկման ենթակա է նաև դատական ակտերի իրավական որոշակիությունը (res judicata) ապահովելուն ուղղված կարգավորումներ նախատեսելը՝ հաշվի առնելով այն, որ անձին սնանկ ճանաչելուց հետո սնանկ ճանաչելու վճռի հիմքում դրված հանգամանքները գործնականում վիճարկելը ազդում է սնանկության վարույթի վրա:

129. Առհասարակ կարգավորված չեն սնանկության կառավարչի կողմից դատական կարգով լուծում պահանջող հարցերի (տեղեկատվության պահանջ, արգելանքի, այդ թվում՝ քրեական վարույթով դրված, վերացում և այլն) քննության ընթացակարգը:
130. Առանձին քաղաքացիական գործերի շրջանակից օրենսդրորեն բացառվել են կառավարչի կողմից հարուցվող հայցերը, որը արդարացված չի թվում: Մյուս կողմից պարզ չէ առանձին քաղաքացիական գործի նյութերի և սնանկության վարույթի կամ այլ առանձին քաղաքացիական գործի նյութերի իրավական կապի, որպես ապացույց հետազոտման և գնահատման հարցերը:
131. Վեճերի առիթ է ստեղծում քաղաքացիական դատավարությունում նախատեսված նախնական դատական նիստի և ապացուցման կանոնների կիրառումը սնանկության վարույթի առանձին փուլերում:
132. Լուծված չէ սնանկ ճանաչելու վճռի բեկանման, այդ թվում՝ նոր երևան եկած և նոր հանգամանքների հիմքով վերանայման դեպքում, մինչ այդ իրականացված գործողությունների և կայացված դատական ակտերի ճակատագիրը:
133. Անհրաժեշտ է ստեղծել բավարար իրավական հիմքեր սնանկության վարույթը էլեկտրոնային հարթակներով իրականացնելու համար:
134. Ներկայումս սնանկության վարույթում նախատեսված է միայն առանձին պահանջների քննության կասեցման մասով իրավակարգավորումներ, որը վերահաստատվել է նաև ՍԴ 23. 09. 2021թ. թիվ ՍԴՈ-1610 որոշմամբ: Այնինչ ակնհայտ է, որ քաղաքացիական գործի վարույթի կասեցման ինստիտուտը ունի ավելի ընդգրկուն բովանդակություն և ըստ այդմ հարկ է դիտարկել սնանկության վարույթի առանձին փուլերում կասեցման ինստիտուտի կիրառելիության հարցը՝ նկատի ունենալով նաև սնանկության վարույթի բնականոն ընթացքը չխոչընդոտելու անհրաժեշտությունը:
135. Օրենսդրորեն հստակեցված չէ արբիտրաժային համաձայնության ազդեցությունը սնանկ ճանաչելու համար դատարան դիմելու հարցում:
136. Կարգավորված չէ օտարերկրյա տարրի մասնակցությամբ սնանկության վարույթի իրականացման հետ կապված հարաբերությունները:
137. Որևէ անդրադարձ չկա անդրազգային սնանկության հետ կապված հարցերին:

<u>Սնանկության օրենսդրության ինստիտուցիոնալ բացերի վերաբերյալ</u>

138. Սնանկության օրենսդրությունը, կարգավորելով իրավաբանական անձանց սնանկության գործընթացը, որևէ տարբերակում չի դնում այնպիսի իրավաբանական անձանց առնչությամբ, ինչպիսիք են ՓՄՁ-ները, արդյունաբերական և այլ չափանիշներով սոցիալ-տնտեսական կարևորություն ունեցող կազմակերպությունները և այլն:

Գործնական բնույթի կարիքի նկարագրությունը և առնչվող խնդիրները.

139. Սնանկության ինստիտուտի արդյունավետությունը և դրա նկատմամբ հանրային վստահությունը կախվածության մեջ են ոչ միայն օրենսդրական կարգավորումների որակից, այլև շահագրգիռ սուբյեկտների ինստիտուցիոնալ կարողությունների և իրավագիտակցության մակարդակից: Այսպես.

Փաստաթղթերի տիպային ձևերի մշակման վերաբերյալ.

140. Առկա է սնանկության վարույթում կիրառվող բոլոր փաստաթղթերի տիպային ձևերը մշակելու և էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելու հրատապ անհրաժեշտություն: Դրանց շարքում հատկապես հիշատակման են արժանի հետևյալ փաստաթղթերը.

- ֆինանսական առողջացման ծրագիր,
- գույքագրման ակտ,
- գնահատման ակտ,
- պահանջների նախնական ցուցակ,
- պարտատերերի ժողովի որոշում և արձանագրություն,
- միջանկյալ բաշխման ծրագիր,
- սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հաշվետվություններ,
- աճուրդի արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

Սնանկության վարույթի ընթացակարգերի կապակցությամբ ուղեցույցների մշակման վերաբերյալ.

141. Սնանկության վարույթում մի շարք ընթացակարգեր կամ առանձին գործողություններ ունեն մեթոդական ուղեցույցների միջոցով առավել մատչելի և որոշակի դարձվելու կարիք: Այս տեսանկյունից առաջնահերթ են ներքոնշյալ գործընթացների վերաբերյալ ուղեցույցների մշակումը և հրապարակումը.

- Պարտապանի գույքի գույքագրում, որն, ի թիվս այլ հարցերի, կսահմանի թե ինչպես սկսել գույքագրումը, որ գույքն է ենթակա գույքագրման, ինչ գործիքների և որ մարմինների միջոցով պետք է իրականացվի պարտապանի գույքի հայտնաբերումը, ինչպես նաև երբ է անհրաժեշտ իրականացնել պարտապանի գույքի հետախուզում:
- Պարտատերերի ժողովի անցկացում, որը կսահմանի պարտատերերի ժողովի գումարման և անցկացման հետ կապված գործողությունների հաջորդականությունը:
- Պարտապանի գույքի վաճառքը, որը կանդրադառնա պարտապանի գույքի իրացման եղանակների ընտրության, դրանցից յուրաքանչյուրի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև պարտապանին

ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքի իրացման հետ կապված հարցերին:

- Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն, որը կսահմանի ֆինանսական վիճակի վերլուծության համար անհրաժեշտ նյութերի շրջանակը, դրանց ծագման աղբյուրները և ձեռքբերման կարգը, վերլուծության իրականացման անհրաժեշտ մեթոդիկան, այդ թվում՝ կանխամտածված և կեղծ սնանկությունների բացահայտման հետ կապված հարցերը:

<u>Սնանկության ոլորտում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու հարցում առկա կարիքների վերաբերյալ.</u>

142. Մասնագիտական գիտելիքներ ձեռքբերելու և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու առումով կարևորվում են հետևյալ խնդիրների լուծումը.

1) Սնանկության ոլորտին վերաբերող իրավաբանական և ոչ իրավաբանական բնույթ կրող դասընթացների (օրինակ՝ ֆինանսական վիճակի վերլուծության, հարկային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ) և առարկայական ծրագրերի (ինչպես առկա, այնպես էլ հեռավար) մշակումը և վերամշակումը:
2) Վերապատրաստումների առավել թիրախային թեմաներով և արդյունավետ ձևաչափերով իրականացումը:
3) Ուսումնական և վերապատրաստման գործընթացի համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութերի (մեկնաբանություններ՝ ըստ օրենքի հոդվածների, ձեռնարկներ, ուղեցույցներ, դիդակտիկ նյութեր և այլն) մշակումը:
4) Իրավակիրառ պրակտիկայում առավել խնդրահարույց իրավիճակները հաղթահարելու համար մտավոր սեփականության, պայմանագրերի անվավերության և արտասահմանում գտնվող պարտապանի գույքի իրացման հիմնախնդիրների վերաբերյալ գիտագործնական նյութերի մշակումը:
5) Սնանկության ոլորտի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումների շտեմարանի ստեղծումը և պարբերաբար թարմացումը:
6) Շահագրգիռ անձանց (սնանկության գործով կառավարիչներ, դատավորներ, փաստաբաններ և այլք) մասնակցությամբ որոշակի պարբերականությամբ աշխատանքային հանդիպում-քննարկումների իրականացումը:
7) Սնանկության գործով կառավարիչների և դատավորների սնանկության ինստիտուտի զարգացած ավանդույթներ ունեցող պետությունների

գործընկերների միջև փորձի փոխանակման նպատակով փոխադարձ այցերի կազմակերպումը:

<u>Հանրային իրազեկման միջոցառումների վերաբերյալ.</u>

143. Հանրային իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացումը ենթադրում է սնանկության ինստիտուտի վերաբերյալ տեղեկատվական տարատեսակ միջոցներով (տեսանյութեր, հեռուստահաղորդումներ, որոշակի գործընթացներում, օրինակ՝ վարկավորման ժամանակ, ծանուցման թերթիկների տրամադրում և այլն) պարբերաբար բնութ կրող իրազեկման աշխատանքների իրականացում, որն, ի թիվս այլնի, պետք է վերաբերի.
    - սնանկության ինստիտուտի էությանը, այդ թվում՝ սնանկ ճանաչելու հիմքերին և կարգին, ինչպես նաև սնանկության վարույթի հետևանքով պարտավորություններից ազատման հնարավորություններին,
    - կանխամտածված և կեղծ սնանկություններին, ինչպես նաև սնանկության ոլորտում հանցագործություն դիտարկվող այլ արարքներին,
    - ֆինանսական առողջացման և մորատորիումի ինստիտուտներին,
    - ֆիզիկական անձի աշխատավարձի բռնագանձման հնարավորությանը,
    - սնանկության վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների շրջանակին և լիազորություններին:

<u>Գործնական այլ խնդիրների վերաբերյալ.</u>

144. Սնանկության հետևանքների ժամանակին կիրառման, սնանկության գործի թափանցիկության, կառավարչի գործունեության արդյունավետության և հաշվետվողականության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ներդնել սնանկության վարույթների համար էլեկտրոնային արդարադատության հարթակը, որն, ի թիվս մի շարք գործառույթների,
    - կապահովվի անձի սնանկության մասին տեղեկատվության փոխանակումը համապատասխան անձանց և մարմիններին, այդ թվում՝ մյուս դատարաններին և Կենտրոնական բանկին.
    - սնանկության գործով կառավարիչը արագ և ամբողջական հասանելիություն կունենա անհրաժեշտ տեղեկատվական բազաներին, այդ թվում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տվյալներին:

145. Պարտապանի տրանսպորտային միջոցների հետախուզումը արդյունավետ դարձնելու նպատակով կարևոր է ճանապարհային ոստիկանությանը այնպիսի տեսախցիկներով ապահովումը, որոնք թույլ կտան երթևեկության ժամանակ նույնականացնել հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցը և համապատասխան տեղեկատվությունը փոխանցել իրավասու մարմնին:
146. Սնանկության ինստիտուտը անբարեխիղճ սուբյեկտների համար պարտավորություններից ազատման միջոց չծառայեցնելու համար անհրաժեշտ է խթանել կանխամտածված և կեղծ սնանկությունների բացահայտման դեպքերը, որտեղ զգալի դեր ունեն առաջին հերթին սնանկության գործով կառավարիչները և քրեական հետապնդման մարմինները:

6. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

147. Հետազոտությունների արդյունքում վերհանված կարիքների և արձանագրված խնդիրների հիման վրա առանձնացվել են հայեցակարգային այն ուղղությունները որոնց վրա պետք է հիմնվի Սնանկության օրենսգիրքը:
148. Սնանկության օրենսգրքի հայեցակարգային ուղղությունները քննարկելիս մեթոդաբանական տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե սնանկության համակարգի ինչպիսի մոդելի վրա է հիմնվելու Սնանկության օրենսգիրքը, քանի որ այն կանխորոշելու է մի շարք ինստիտուտների բովանդակությունը և առանձնահատկությունները, այդ թվում՝ ֆինանսական առողջացման կամ լուծարման միջև ընտրության առաջնահերթությունը:
149. Միևնույն ժամանակ, կարևոր է ընդգծել, որ Օրենքի մի շարք ինստիտուտներ և առանձին կարգավորումներ արդեն իսկ ապացուցել են իրենց կենսունակությունը: Այդ իսկ պատճառով Սնանկության օրենսգրքի մշակման փուլում հարկ է խոսել ոչ թե դրանցից հրաժարվելու, այլ կատարելագործելու մասին, եթե, իհարկե, նման հրաժարումը պայմանավորված չէ ընտրվելիք սնանկության մոդելով: Հետևաբար հաշվի առնելով հայեցակարգի էությունը՝ հայեցակարգային ուղղությունների շրջանակում անդրադարձ կկատարվի միայն նոր ինստիտուտներին կամ այն ուղղություններին, որոնք ենթակա են կատարելագործման, իսկ առանձին օրենսդրական փոփոխությունների հարցեր այս փուլում չեն քննարկվի:
150. Սնանկության օրենսգրքի մշակման աշխատանքներում ուղենիշային է հակակոռուպցիոն քաղաքականության պահանջների պահպանումը, որը ենթադրում է կոռուպցիոն դրսևորումների հնարավորություն ընձեռող և նպաստող գործոնների բացահայտում, ինչպես նաև կոռուպցիոն գործոնների վերացմանը կամ դրանց նվազագույնի հասցմանն ուղղված աշխատանքների օժանդակում: Ըստ այդմ հայեցակարգային ուղղությունների իրացումը պահանջելու է հստակ, մատչելի և կանխատեսելի կարգավորումների մշակում, այդ թվում՝ առկա իրավական բացերի, առկա ինստիտուտների թերի կարգավորումների, որոշակի գործողությունների իրականացման ժամկետների բացակայության, հայեցողական լիազորությունների կարգավորումը և կատարելագործումը, ինչպես նաև դրանց իրականացման օրենսդրական հստակ ելակետերի ամրագրում, որն ըստ էության կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերի առկայությունը:
151. Շարադրվածի հաշվառմամբ ստորև ներկայացվում են հայեցակարգային ուղղությունները և առաջարկվող լուծումները.

1) Սնանկության մոդելը

152. Սնանկության մասին օրենսդրությունը շուկայական տնտեսության պայմաններում միտված է երկու հիմնական գործառույթի իրականացմանը՝ ֆինանսական դժվարության մեջ գտնվող ընկերության առողջացմանը նպաստելուն, իսկ դրա չկայացման դեպքում, ընկերության պարտատերերի պարտավորությունների բավարարում ապահովելով, ընկերության լուծարումը իրագործելուն:

153. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են սնանկության հետևյալ մոդելները.

1) պարտապանի համար բարենպաստ մոդել.

2) պարտատիրոջ համար բարենպաստ մոդել.

3) խառը մոդել:

154. **Պարտապանի համար բարենպաստ մոդելի** հիմնական նպատակն է ապահովել ֆինանսական դժվարություններ ունեցող ընկերությունների ֆինանսական առողջացումը՝ բարձրացնելով ընկերության ակտիվների ընդհանուր արժեքը: Ըստ այդմ դրա բնորոշ հատկանիշներից են.

- **լուծարման փոխարեն ֆինանսական առողջացման նախապատվությունը.**
- **պարտապանի դեմ այլ դատական վարույթների կասեցումը.**
- **ընկերության տնօրինության կառավարման շարունակականությունը.**
- **նոր ֆինանսավորման պաշտպանությունը[5].**
- **քվեարկության այնպիսի մեխանիզմների ամրագրումը, որոնք պարտատերերին կապում են ֆինանսական առողջացման պայմանների հետ[6]: Երբ ընկերությունն գտնվում է ֆինանսական առողջացման մեջ, որոշ պարտատերեր կարող են հրաժարվել առաջարկվող պայմաններին համաձայնվելուց՝ հուսալով, որ նրանք կարող են առավել բարենպաստ պայմաններում հայտնվել, կամ ճնշում գործադրել պարտապանի կամ այլ շահագրգիռ կողմերի վրա: Այս վարքագիծը կարող է ձախողել ֆինանսական առողջացման ջանքերը, որոնք բխում են շահագրգիռ կողմերի մեծամասնության շահերից: Այս խնդրի դեմ պայքարելու համար իրավական համակարգերը մշակել են տարբեր մեխանիզմներ**

[5] Նոր ֆինանսավորման պաշտպանությունը վերաբերում է իրավական երաշխիքներին, որոնք տրված են վարկատուներին, ովքեր նոր կամ պարտապանի տիրապետության տակ ֆինանսավորում են տրամադրում սնանկ ընկերությանը: Նման պաշտպանությունները շատ կարևոր են, քանի որ առանց դրանց վարկատուները կարող են չցանկանալ լրացուցիչ վարկ տրամադրել մի ընկերության, որն արդեն ֆինանսական դժվարությունների մեջ է: Իշպես օրինակ նոր վարկատուի՝ մարման գծում գործող պարտատերերից առաջ անցնելը (Primed Liens):

[6] Տե՛ս «The_insolvency_review_sixth_edition_ireland_chapter_by_julie_murphy_oconnor.Pdf¦», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.matheson.com/docs/default-source/practice-area-attachments/corporate-restructuring-and-insolvency/the_insolvency_review_sixth_edition_ireland_chapter_by_julie_murphy_oconnor.pdf?sfvrsn=9b704023_2:

(ինչպես օրինակ ԱՄՆ-ում գործող քվեարկության մեխանիզմը և դատարանի կողմից ծրագիրը հաստատելու հնարավորությունը cram-down-ի միջոցով), որոնք կարող են կապել պարտատերերին վերակազմավորման պայմաններին, եթե առկա են հատուկ պայմաններ:

155. Ընկերության պարտապանի համար բարենպաստ մոդելի պարագայում պարտապանը պահպանում է կարգավիճակն ու իրավասությունները վերակազմակերպման ընթացքում: Ինչպես օրինակ ԱՄՆ Սնանկության օրենսգրքի 1107 (ա) մասը նախատեսում է, որ պարտապանը ով պահպանել է վերահսկողությունը բիզնեսի նկատմամբ 11-րդ գլխի համաձայն վերակազմակերպման ենթարկվելու ընթացքում ունի հոգաբարձուի իրավունքներ, լիազորություններ և պարտականություններ, ներառյալ փաստաբաններ և այլ մասնագետներ ներգրավելու իրավունք[7]: Իսկ հոգաբարձուն Գլուխ 7-ով նախատեսված լուծարման գործընթացի դեպքերում բացի Օրենսգրքի 704–րդ մասով նախատեսված պարտականությունների Օրենսգրքի 323 (ա) մասի համաձայն՝ ունի դատարանում որպես հայցվոր և պատասխանող հանդես գալու իրավունք: Նշվածից բխում է, որ վերակազմակերպման պարագայում, երբ բիզնեսը վերահսկվում է պարտապանի կողմից, վերջինիս տնօրինությունը պահպանում է այս իրավասությունները՝ ներառյալ դատարանում ընկերության անունից հանդես գալու իրավունքը:

156. **Պարտատիրոջ համար բարենպաստ մոդելի** հիմնական նպատակն է լուծարել ֆինանսական դժվարություն ունեցող ընկերությունը՝ արդյունավետ օգտագործելով և օպտիմալ բաշխելով ակտիվները: Ըստ այդմ դրա բնորոշ հատկանիշներից են.

- **գործող ղեկավարության փոխարինումը սնանկության կառավարչով կամ լուծարային կառավարչով.**
- **պարտապանի դեմ այլ վարույթների կասեցման բացակայությունը (ինչպես օրինակ պարտքերի հավաքագրման կամ պարտապանի դեմ այլ իրավական գործողություններ ձեռնարկելու).**
- **որոշակի գործողություններ, ինչպիսիք են ապահովված պարտատերերի կողմից ակտիվների բռնագանձումը, կարող են շարունակվել, նույնիսկ եթե ընկերությունը գտնվում է սնանկության գործընթացի մեջ.**
- **համապատասխանություն բացարձակ առաջնահերթության կանոնին, որը սահմանում է պարտատերերի վճարման հաջորդականությունը պարտապանի լուծարման դեպքում (նախ**

[7] Տե՛ս «11 U.S. Code § 1107 - Rights, Powers, and Duties of Debtor in Possession' (LII / Legal Information Institute), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.law.cornell.edu/uscode/text/11/1107:

վճարվում են երաշխավորված պարտատերերը, այնուհետև՝ չապահովված պարտատերերը, իսկ հետո՝ բաժնետերերը):

157. Այս տարրերը պարտապանի լուծարումը դարձնում են առավել հավանական: Նման մոդելի պարագայում ֆինանսական առողջացումը գործնականում դառնում է անհնար առանց պարտատիրոջ աջակցության[8]: Պարտատերերի համար բարենպաստ մոդելի կողմակիցները պնդում են, որ այս մոդելն ունի այնպիսի առավելություններ, ինչպիսիք են փոխառության ավելի ցածր ծախսերի խրախուսումը, կապիտալի ավելի կայուն շուկաները և ակտիվների օպտիմալ բաշխումը:

158. Վերջերս Գերմանիան բավականին կտրուկ փոփոխություն կատարեց խիստ պարտատերերի համար բարենպաստ մոդելից դեպի պարտապանների համար բարենպաստ մոդելի: Հարվարդի իրավաբանական դպրոցի սնանկության հարթակը (HLS Bankruptcy Roundtable) այս կապակցությամբ հոդված հրապարակեց «Canipek, Kind and Wende», համաձայն որի՝ նախկին գերմանական սնանկության մոդելը նպաստում էր անվճարունակ ընկերության լուծարմանը և նրա ակտիվների վաճառքին: Սնանկության դեպքում ընկերության գոյություն ունեցող կառավարման համակարգը պետք է փոխարինվեր սնանկության կառավարչով, որը գործնականում հաճախ սահմանափակ կառավարման հմտություններով և լուծարմանն ուղղված վերաբերմունք ունեցող սուբյեկտ է: Սնանկության դիմում ներկայացրած բոլոր ընկերությունների 99 տոկոսը լուծարվել է, ընդ որում կեսից ավելին դա արել է հայտի ներկայացման օրվանից երեք ամսվա ընթացքում: Բարեփոխված սնանկության օրենքը ընդգրկել է պարտապանների համար հարմար բարենպաստ բազմաթիվ տարրեր, ներառյալ՝ եռամսյա ժամկետով պարտատերերի կողմից պարտապանի նկատմամբ որոշակի գործողությունների ժամանակավորապես կասեցում, երաշխավորված պարտատերերի կողմից ապահովված ակտիվները իրացնելուն ուղղված գործողությունների արգելք: Մասնավորապես, դատարանը կարող է դադարեցնել պարտատերերի պահանջների կատարման և գրավի իրացման գործողությունները մինչև երեք ամիս, պայմանով, որ պարտապանը ներկայացնի ֆինանսական առողջացման համապարփակ ծրագիր: Այն դեպքում, երբ ծրագիրը հաստատվում է պարտատերերի կողմից, սակայն դատարանի հաստատումը դեռևս առկա չէ, դատարանը կարող է դադարեցնել պահանջի կատարման և գրավի իրացման գործողությունները մինչև ութ ամիս[9]:

---

[8] Տե՛ս «The insolvency review¦, sixth edition, Ireland chapter by Julie Murphy Oconnor», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.matheson.com/docs/default-source/practice-area-attachments/corporate-restructuring-and-insolvency/the_insolvency_review_sixth_edition_ireland_chapter_by_julie_murphy_oconnor.pdf?sfvrsn=9b704023_2:

[9] Տե՛ս "Restructuring and Insolvency in Germany: Overview" (*Practical Law*), հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://uk.practicallaw.thomsonreuters.com/2-501-6976?transitionType=Default&contextData=(sc.Default):

159. Գերմանիայում իրականացված բարեփոխումը զգալի ազդեցություն ունեցավ բազմաթիվ նյութական ակտիվներ ունեցող ընկերությունների վրա, որոնք սկսեցին ավելի շատ ֆինանսական ռիսկեր ձեռնարկել՝ շահութաբերությունը բարձրացնելու համար: Հոդվածի համաձայն՝ «Մեր արդյունքները ցույց են տալիս, որ պարտատերերի ավելի թույլ իրավունքները խրախուսում են ընկերություններին վերացնել պաշտպանական մեխանիզմները, որոնք նախկինում ստեղծվել էին լուծարմանն ուղղված սնանկության դրույթների շուրջ պայմանագրեր կնքելու համար:»[10]: Այս էմպիրիկ հետազոտությունն առաջարկում է, որ պարտատերերի համար բարենպաստ մոդելը չի ապահովում կանխատեսված օգուտները:

160. Պետք է ընդգծել սակայն, որ տարածված է նաև մեկ այլ տեսակետ, ըստ որի՝ «Canipek, Kind and Wende» ուսումնասիրությունը փոքր-ինչ կենտրոնացած է Գերմանիայում նոր բարեփոխման համեմատության վրա մինչ այդ գործող մոդելի հետ, ինչը բաց է թողնում հնարավորությունը, որ կարող են լինել այս ծայրահեղ մոդելների (պարտատերերի և պարտապանների համար բարենպաստ) հատկանիշների համակցությամբ մոդել, որոնք ապահովում են օպտիմալ հավասարակշռություն:

161. Պարտատերերի և պարտապանների համար բարենպաստ մոդելների տարրերի համակցությամբ **խառը մոդելին** բնորոշ հատկանիշներից են.

- **վարույթը սկսելուց հետո պարտատերերը չեն կարող անմիջապես պարտապանի դեմ դատական գործողություններ ձեռնարկել.**
- **պարտապանը պահպանում է վերահսկողությունը իր ակտիվների և գործառնությունների նկատմամբ.**
- **պարտապանը ստանում է բացառիկ ժամկետ՝ ծրագիր առաջարկելու, թե ինչպես են մարելու իրենց պարտքերը.**
- **եթե որոշ պարտատերեր համաձայն չեն ծրագրի հետ, այն դեռ կարող է կիրառվել նրանց վրա, բայց միայն այն դեպքում, եթե ծրագիրը երաշխավորի, որ ավելի բարձր առաջնահերթություն ունեցող պարտատերերը վճարվեն մյուսներից առաջ:**

162. Շատ երկրներ սնանկության մասին իրենց օրենքներում ընդունել են խառը մոդելի մոտեցման տարրեր, այդ թվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Միացյալ Թագավորությունը, Կանադան, Ավստրալիան և մի շարք եվրոպական երկրներ, ինչպիսիք են Ֆրանսիան և Նիդեռլանդները: Այս երկրներում անվճարունակության մասին օրենքները ձգտում են հավասարակշռել պարտապանների և պարտատերերի շահերը՝ հաշվի առնելով կենսունակ

[10] Տե՛ս Canipek, Aras, Axel Kind and Sabine Wend, The Effect of Creditor Rights on Capital Structure, Investment, Profitability, and Risk: Evidence from a Natural Experiment, March 2018, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://ssrn.com/abstract=3121980:

բիզնեսի ֆինանսական առողջացման անհրաժեշտությունը՝ միաժամանակ ապահովելով, որ պարտատերերը կարողանան հնարավորինս վերականգնել իրենց պարտքը:

163. Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության սնանկության մոդելը ներկայումս խառը մոդելն է՝ պարտատիրոջ համար բարենպաստ մոդելին յուրահատուկ տարրերի գերակայությամբ, ինչպիսիք են՝ ընկերության ղեկավարության ավտոմատ փոխարինումը սնանկության կառավարչով, ապահովված պարտատերերի կողմից ակտիվների բռնագանձման հնարավորություն: Հայաստանի Հանրապետությունում սնանկության օրենսդրությունը և դրա կիրառման պրակտիկան ցույց են տալիս, որ սնանկության օրենսդրությունը հիմնականում միտված է ընկերության լուծարումն ապահովելուն, քանի որ օրենսդրական գործիքները չեն նպաստում ֆինանսական առողջացմանը և դրա կիրառման դեպքերը քիչ են:

164. Այս առումով ուշագրավ է, որ ՍԴ-ն 23.09.2021թ. ՍԴՈ-1610 որոշմամբ ընդգծել է, որ սնանկության ինստիտուտի առջև դրված հիմնարար նպատակներից մեկը պարտատերերի և պարտապանի շահերի հավասարակշռված պաշտպանությունն է: Մասնավորապես տվյալ որոշմամբ ՍԴ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.
«Սնանկության մասին» օրենքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սնանկության վարույթը միմյանց հաջորդող բազմափուլ համակարգ է, որի կառուցվածքային տարր հանդիսացող յուրաքանչյուր փուլի առջև օրենսդիրը դրել է կոնկրետ խնդիրներ (սնանկության դիմումի ընդունելիության փուլում՝ ստուգել դիմումի ձևին, բովանդակությանը, դատարան ներկայացվող փաստաթղթերին առաջադրված օրենսդրական պահանջներին համապատասխանությունը, սնանկ ճանաչելու հարցի լուծման փուլում՝ սնանկության հիմքերի և հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը և այլն), որը բխում է սնանկության վարույթի համընդհանուր նպատակից, այն է՝ ապահովել պարտատերերի պահանջների բավարարումը՝ երաշխավորելով պարտատերերի և պարտապանի իրավունքների պաշտպանության ողջամիտ հավասարակշռությունը:»:

165. Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ կարծում ենք՝ նպատակահարմար է Հայաստանի Հանրապետությունում պահպանել սնանկության խառը մոդելը՝ ֆինանսական առողջացման առաջնահերթությամբ:

166. Մասնավորապես՝ նշվածի շրջանակում առաջարկվում է իրականացվող օրենսդրական բարեփոխմամբ Սնանկության օրենսգրքով ներդնել այնպիսի ընթացակարգեր, ինչպիսիք են՝

1) սնանկության կառավարչի դերի և պատասխանատվության բարձրացում ֆինանսական առողջացման նախաձեռնման հարցում.

2) պարտապանի իրավունքների իրացման փոխանցում սնանկության կառավարիչներին, իսկ վերջիններիս ոչ իրավաչափ վարքագծի դեմ պարտապաններին անհրաժեշտ գործիքակազմի օժտում.
3) ֆինանսական առողջացման դեպքումընկերության տնօրինության կառավարման շարունակականության ապահովում.
4) պահանջների դասակարգման և քվեարկության այնպիսի մեխանիզմների ներդրում, որի դեպքում հնարավոր կլինի պարտատերերի որոշ խմբի անհամաձայնության դեպքում էլ հաստատել ֆինանսական առողջացման ծրագիրը և փորձել առողջացնել ընկերությունը:

167. Սույն հայեցակարգային ուղղության շրջանակում քննարկման առարկա է նաև՝ արդյոք հնարավոր կլինի նախատեսել երկու առանձին իրարից անկախ ընթացակարգեր՝ ֆինանսական առողջացում և լուծարում:

168. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ երկու առանձին իրարից անկախ ընթացակարգեր հնարավոր է նախատեսել: Ավելին, որոշ երկրներ այս հարցերը կարգավորում են տարբեր իրավական ակտերով: Օրինակ՝ Ֆինլանդիայում միաժամանակ գործում է «Սնանկության մասին» և «Ընկերությունների ֆինանսական առողջացման մասին» օրենքները, Ճապոնիայում՝ «Սնանկության մասին» և «Քաղաքացիական գործերով ֆինանսական առողջացման մասին» օրենքները:

169. Առկա է նաև միասնական կարգավորման տարբերակը, երբ որպես ընդհանուր սկզբունք, միջազգային փորձում լուծարման և ֆինանսական առողջացման վարույթները սովորաբար իրականացվում են հաջորդաբար, այսինքն՝ լուծարման վարույթը շարունակվում է միայն այն դեպքում, եթե ֆինանսական առողջացումը չի հաջողվում և ձախողվում է:

170. Սակայն որոշ դեպքերում վերոնշյալ մոտեցումները միավորվում են և սահմանվում է որոշակի սկզբնական շրջան (սովորաբար այն կոչվում է «դիտարկման ժամանակաշրջան», որը միասնական օրենքների առկա օրինակներում կարող է տևել մինչև երեք ամիս), որի շրջանակում ֆինանսական առողջացման և լուծարման վարույթների միջև ընտրությունը կատարվում է միայն այն բանից հետո, երբ գնահատվում է պարտապանի ֆինանսական վիճակը և որոշում կայացվում, թե արդյոք ֆինանսական առողջացումը իրականում հնարավոր է: Այս մոտեցման առաջարկած հիմնական առավելություններն են նրա ընթացակարգային պարզությունը, ճկունությունը և հնարավոր ծախսերի արդյունավետությունը: Միասնական վարույթը կարող է նաև խրախուսել ֆինանսական դժվարությունների բախված պարտապանների վարույթին վաղաժամ դիմելը՝ այդպիսով մեծացնելով հաջող ֆինանսական առողջացման հնարավորությունները:

171. Մասնավորապես՝ ինչպես օրինակ ԱՄՆ-ում, պարտապանները կարող են ուղղակիորեն դիմել լուծարման կամ ֆինանսական առողջացման: Այս որոշումը մեծապես կախված է պարտապանի ֆինանսական վիճակից և արդյոք համոզմունք կա, որ բիզնեսը կարող է փրկվել վերակազմակերպման միջոցով: Եթե վերակազմակերպումը հնարավոր չէ, կամ եթե դա չի հանգեցնում պարտատերերի համար արժեքի բարձրացման, ապա պարտապան ընկերությունը կարող է լուծարվել: Լուծարման գործընթացի վերահսկումը պարտապանի ղեկավարությունից, փոխանցում է Միացյալ Նահանգների հոգաբարձուի կողմից նշանակված կամ պարտատերերի կողմից ընտրված հոգաբարձուին[11]: Վերականգնման և լուծարման միջև ընտրությունը մեծապես կախված է պարտապանի ֆինանսական վիճակից և կենսունակությունից՝ առանց հաջորդական գործընթաց անցնելու իրավական պարտավորության: Այնուամենայնիվ, կա ընդհանուր միտում՝ խթանելու ընկերությունների վերակազմավորումը, երբ դրանք կենսունակ են[12]:

172. Ինչպես արդեն նշվել է սնանկության մոդելի քննարկման շրջանակում առաջնահերթությունը միշտ պետք է տալ ֆինանսական առողջացմանը:

173. Սակայն այն դեպքերում, երբ սնանկության կառավարիչը պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքում կազմում է եզրակացություն, որ պարտապանի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար, սնանկ պարտապանը կարող է միանգամից լուծարվել:

174. Միանգամից լուծարման վարույթի հարուցման մեկ այլ տարբերակ կարող է քննարկվել այն դեպքը, երբ պարտապանը ինքն է ներկայացնում սնանկության դիմում, ինչը ենթադրում է, որ վերջինս արդեն իսկ հրաժարվել է օգտվել սնանկության վտանգի նպատակով դիմում ներկայացնելու հնարավորությունից և ցանկանում է լուծարվել:

175. Այդուհանդերձ կարևոր է, որ սնանկության մոդելներն ունենան ճկունություն, որպեսզի անհրաժեշտության դեպքում ֆինանսական առողջացումից անցում կատարվի լուծարման գործընթացին: Կարևոր է նաև, որ լուծարման վարույթում գտնվող ձեռնարկությունը հնարավորություն ունենա որոշակի հանգամանքներում անցնելու առողջացման վարույթ՝ ստանալով ֆինանսական առողջացման հնարավորություն: Երկու ուղղություններով էլ նման ճկունությունը ապահովում է, որ պարտապանի կարգավիճակին առավել հարմար եղանակը հնարավոր լինի օգտագործել և օգնի խուսափել սնանկության ռեժիմի շրջանակներում առաջարկվող պաշտպանության չարաշահումներից:

---

[11] Տե՛ս U.S. Dep't of Just. US Trustee Programme, առավել մանրամասն հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.justice.gov/ust:

[12] Տե՛ս «Building a Restructuring Hub: Lessons from Singapore» (n 1):

176. Այսպիսով, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության ներկայիս մեկ ուղու մոդելի՝ առաջարկվում է Սնանկության օրենսգրքով սահմանել երկու ուղիների զուգահեռ կիրառումը, այն է՝ մի կողմից լուծարման, մյուս կողմից՝ առողջացման համար առանձին ընթացակարգային ուղիներ՝ նախատեսելով հստակ մեխանիզմներ, որ եթե առողջացումը հնարավոր չէ կամ դրան հասնելու փորձերը ձախողվում են, ապա վարույթն արագ և արդյունավետ եղանակով անցում է կատարում դեպի լուծարման վարույթ:

177. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **պահպանել սնանկության խառը մոդելը, ինչը հնարավորություն կտա օգտվել պարտապանի և պարտատիրոջ համար բարենպաստ երկու մոդելների հիմնական նպատակներից՝ առաջնահերթություն տալով և խթանելով ֆինանսական առողջացումը.**
2) **սնանկության վարույթում հստակեցնել սնանկության կառավարչի դերը՝ըստ այդմ զարգացնելով մասնագիտական որակավորումը և կարողությունները.**
3) **հստակեցնել սնանկ ճանաչված պարտապանի դատավարական գործունակությունը՝ այդ թվում դրա առանձնահատկություններըառողջացման և լուծարման փուլերում՝ պարտապանին օժտելով սնանկության կառավարչի ոչ իրավաչափ վարքագծի դեմ անհրաժեշտ գործիքակազմով.**
4) **օրենսդրությամբ սահմանել անմիջապես լուծարման վարույթ հարուցելու հստակ դեպքեր.**
5) **նախատեսել ֆինանսական առողջացման և լուծարման վարույթներից մեկից մյուսին անցում կատարելու ճկուն հնարավորություն:**

2) Սնանկության ինստիտուտը և սնանկության կանխարգելման միջոցները

178. Սնանկության ինստիտուտը և սնանկության հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերի մշակումը և ապահովումը պետության տնտեսական կայունության երաշխիքներից է: Այն յուրօրինակ տնտեսահիրավական գործիք է, որը կատարում է նաև տնտեսվարող սուբյեկտների՝ առևտրային իրավահարաբերություններում պատշաճ վարքագիծն ապահովող գործառույթ:

179. Սնանկության ինստիտուտի էությունը բացահայտվում է դրա հետապնդած նպատակների միջոցով: Թեև օրենսդիրը սնանկության ինստիտուտի նպատակները ուղղակիորեն չի ամրագրել, սակայն Օրենքի համակարգային վերլուծությունից բխում է, որ սնանկության ինստիտուտի նպատակը նախ և առաջ անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող

պարտապանիֆինանսական առողջացումն է, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պարտապանի լուծարումը և նրա գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարումը կամ պարտավորություններից ազատումը:

180. Սնանկության ինստիտուտի նպատակներից էլ բխում է, որ սնանկության վարույթի շրջանակում առկա է մասնակիցների բազմաթվություն, ինչը ենթադրում է նրանց միջև հակադիր շահերի առկայություն, որը դրսևորվում է ոչ միայն պարտապանի և պարտատիրոջ, այլև պարտատերերի միջև հարաբերություններում, քանի որ պարտապանի ֆինանսական վիճակը, որպես կանոն, բացառում է նրանց բոլոր պահանջների ամբողջությամբ բավարարումը: Այլ կերպ ասած՝ սնանկության վարույթում գործում է «պատերազմ՝ բոլորը բոլորի դեմ» (լատիներեն՝ bellum omnium contra omnes) սկզբունքը[13]:

181. Այնինչ պարտապանները գործնականում սնանկության ինստիտուտը հաճախ օգտագործում են ոչ թե ըստ հիմնական նպատակի, այլ շահադիտական մղումներով ծառայեցնում են որպես պարտավորություններից ազատվելու միջոց՝ հաշվի առնելով իրավական բացերը և ոչ հստակ կարգավորումները: Ասվածի վառ օրինակ է իրավակիրառ պրակտիայում ֆիզիկական անձի աշխատավարձը ոչ բռնագանձելի դիտարկելը:

182. Գործնականում հանդիպող մեկ այլ դրսևորում է սնանկության վարույթի անհարկի նախաձեռնումը սնանկության ինստիտուտի շրջանակում կիրառվող մորատորիումից օգուտներ քաղելու համար, երբ սնանկության վարույթի պայմաններում կիրառվում է պարտավորությունների տույժի և տուգանքի սառեցում: Նման պայմաններում, չարաշահման դեպքերը կանխելու նպատակով այն դեպքում, երբ փաստարկվում է սնանկության վարույթի անհիմն լինելը անհրաժեշտ է բռնագանձել նաև չգանձված տույժերը և տուգանքները:

183. Քիչ չեն նաև դեպքերը, երբ պարտապանի անվճարունակության հիմքերը ծագում կամ ուղեկցվում են բնականոն տնտեսավարման հետ չկապված և ոչ իրավաչափ բնույթ կրող գործողություններով՝ այլ կերպ ասած կանխամտածված եղանակով:

184. Հարկ է նշել, որ վերոնշյալ չարաշահումների կանխարգելման և դրանց դեմ պայքարի համատեքստում կարևոր է սնանկության կանխարգելիչ արդյունավետ կառուցակարգերի առկայությունը, որոնք ձեռնարկվում են մինչև սնանկության վարույթի հարուցումը և կոչված են կանխելու պարտապանի անվճարունակության հատկանիշների ի հայտ գալը կամ վերացնելու դրանք:

185. Ընդհանուր առմամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սնանկությունը կանխելու համար կիրառվում են տարբեր մեխանիզմներ՝ սկսած բուն բիզնեսի նկատմամբ խիստ վերահսկողության իրականացումից մինչև ոչ

[13] Տե՛ս Фролов И.В., Банкротство как административно-правовой механизм регулирования экономических конфликтов: Монография. Новосибирск, 2010, էջ 79:

ֆորմալ ընթացակարգերը, այդ թվում՝ պարտապանի և պարտատիրոջ միջև բանակցությունների իրականացումը:

186. Այսպիսով, այս հայեցակարգային ուղղության շրջանակում առաջարկվում է քննարկման առարկա դարձնել հետևյալ կանխարգելիչ միջոցները.
    1) սնանկության վտանգի վարույթը.
    2) ոչ ֆորմալ ընթացակարգերի, օրինակ՝ հաշտարարության կամ բանակցությունների խթանումը և դատարանի կողմից մինչև սնանկ ճանաչելը հաշտարարության մղելը.
    3) չարամիտ սնանկությունների, մասնավորապես՝ կանխամտածված և կեղծ սնանկության դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգերի առկայությունը.
    4) սնանկության դիմում ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց պարտապանի պարտավորությունների համար գույքային համապարտ պատասխանատվություն կրելու ինստիտուտը:

Սնանկության վտանգի վարույթի կապակցությամբ.

187. Սնանկության վտանգի վարույթը սնանկության կանխարգելման կարևոր միջոցներից է, քանի որ այն, ըստ էության, հնարավորություն է տալիս հնարավորինս վաղ միջամտել ֆինանսական դժվարություն ունեցող պարտապանի գործունեությանը և վերակազմավորել այն:

188. Խոսելով ֆինանսական առողջացման մասին՝ որպես անվճարունակության (սնանկության) գործընթացի կարևոր բաղադրատարրի, պետք է նշել, որ այժմ իրավական համակարգերը զարգանում են կանխարգելիչ ֆինանսական առողջացման մեխանիզմների (preventive restructuring) ներդրման ճանապարհով:

189. Այս առումով կարևոր է Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2019 թվականի հունիսի 20-ի 2019/1023 դիրեկտիվը[14], որը ԵՄ երկրներից պահանջվում է ունենալ կանխարգելիչ ֆինանսական առողջացման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան անվճարունակության ռիսկի ներքո գտնվող պարտապաններին՝ վերակազմավորելու և փրկելու բիզնեսը:

190. Համաձայն Դիրեկտիվի՝ պարտատերերի գործողությունների դադարեցման սկզբնական տևողությունը չպետք է գերազանցի չորս ամիսը, սակայն կարող է երկարաձգվել՝ 12 ամիսը չգերազանցող ընդհանուր տևողությամբ: Դադարեցումը կարող է չեղարկվել.
    - եթե այն այլևս չի ծառայում իր նպատակին.
    - պարտապանի կամ սնանկության կառավարչի պահանջով.

[14] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://eur-lex.europa.eu/eli/dir/2019/1023/oj: Դիրեկտիվով սահմանված կարգավորումների վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ տե՛ս INSOL Europe Guidance Note on the Implementation of Preventive Restructuring Frameworks under EU Directive 2019/1023 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.insol-europe.org/download/documents/1918):

- եթե դրսևորվել է անարդար վերաբերմունք պարտատերերի նկատմամբ.
- եթե հանգեցնում է պարտատիրոջ անվճարունակության[15]:

191. Սնանկության վտանգի վարույթի վերաբերյալ կարգավորումները նախատեսված են Օրենքի 2.1-ին գլխով: Սակայն հարկ է նշել, որ այս ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում խթանման կարիք ունի: Նման պայմաններում կարծում ենք՝ նպատակահարմար է նախատեսել որոշակի գույքային պատասխանատվություն պարտապանի ղեկավար կազմի համար այն դեպքերի համար, երբ կան սնանկության վտանգի հատկանիշներ, սակայն վերջիններս համապատասխան դիմում չեն ներկայացնում:

Ոչ ֆորմալ ընթացակարգերի, օրինակ՝ հաշտարարության կամ բանակցությունների խթանումը և դատարանի կողմից մինչև սնանկ ճանաչելը հաշտարարության մղելու կապակցությամբ.

192. Սնանկության կանխարգելման միջոցներից վերջին տարիներին առավել մեծ տարածում է ստանում ոչ ֆորմալ ընթացակարգերի կիրառումը, որը տեղի է ունենում պարտապանի և վերջինիս պարտատերերի միջև հաշտարարության կամ բանակցությունների միջոցով և կարող է ուղեկցվել սնանկության կառավարչի աջակցությամբ, մինչև սնանկության վարույթի պաշտոնական սկիզբը: Սա սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, երբ պարտապանի և միայն մեկ կամ երբեմն մի քանի պարտատերերի միջև պարտքի փոխզիջումը կարող է ամբողջությամբ լուծել ֆինանսական դժվարությունը: Դա կարող է լինել, օրինակ՝ պարտապանի պարտատիրոջ կամ հարկային մարմնին ունեցած պարտավորությունների առնչությամբ: Եթե ֆինանսական դժվարությունը կարող է լուծվել առանց պաշտոնական գործընթացի, ապա այն առավել գերադասելի է, քանի որ այդ դեպքում բիզնեսը խուսափում է ծախսերից և հնարավոր վնասներից:

193. Համապատասխանաբար, կարևոր է Սնանկության օրենսգրքում ներառել դրույթներ, որոնք կխրախուսեն և կհեշտացնեն մասնավոր բանակցություններն ու հաշտարարությունը:

194. Այն հիմնարար էական սկզբունքները, որոնք ներկայումս ողջ աշխարհում արտացոլում են առաջադեմ ոչ ֆորմալ գործընթացները, հանգում են այսպես կոչված «Լոնդոնյան մոտեցմանը»: Նշված մոտեցումն առաջին անգամ մշակվել է Անգլիայի բանկի կողմից 1970-ական թվականներին՝ որպես սնանկության վարույթում բանկերին առավել ակտիվ դերի վերապահման ծրագրի մաս, որը պետք է իրականացվեր կենսունակության գնահատման և առողջացման միջոցով,

[15] Տե՛ս «DIRECTIVE (EU) 2019/ 1023 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL - of 20 June 2019 - on Preventive Restructuring Frameworks, on Discharge of Debt and Disqualifications, and on Measures to Increase the Efficiency of Procedures Concerning Restructuring, Insolvency and Discharge of Debt, and Amending Directive (EU) 2017/ 1132 (Directive on Restructuring and Insolvency)», հոդվածներ 4–6:

երբ դա անհրաժեշտ էր առողջացման հավանականության մեծացման և վարկի ընդհանուր դրությունը բարելավելու նպատակով: Լոնդոնյան մոտեցման հիմնական սկզբունքները համակարգված բանակցությունների միջոցով ծախսերի նվազեցումը և կենսունակ կազմակերպությունների լուծարումից խուսափելն էին:

195. Վերակազմակերպման, սնանկության և սնանկության մասնագետների միջազգային ասոցիացիայի (INSOL) (այսուհետ նաև՝ ԻՆՍՕԼ-խմբ.) ԻՆՍՕԼ սկզբունքները ոչ պաշտոնական փորձնական գործընթացների լավագույն փորձին հաղորդակից դարձնելու նպատակով ներառում են հետևյալ հիմնարար սկզբունքները.

- բոլոր պարտատերերի շահերը հավասարակշվում են նրանց կողմից ֆինանսական դժվարությունների մեջ գտնվող պարտապանին տրված արձագանքին համապատասխան.
- բոլոր պարտատերերը պետք է համաձայն լինեն պարտքի բռնագանձման ժամանակահատվածին, որպեսզի կարողանան պատշաճ գնահատել պարտապանի ֆինանսական դրությունը և ուսումնասիրել կարգավորման հնարավորությունը, պարտատերերի խմբում շահերի բախումը պետք է վեր հանվի ժամանակին և պատշաճ լուծում ստանա.
- պետք է ստեղծվեն արհեստավարժ խորհրդատուների ներգրավմամբ պարտատերերի մեկ կամ մի քանի կոմիտեներ՝ վեճի կարգավորման հնարավորությունն ուսումնասիրելու և խթանելու նպատակով.
- պարտապանը պետք է իր ակտիվների, պարտավորությունների, բիզնեսի և հեռանկարների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությանը հասանելիություն տա պարտատերերին և արհեստավարժ խորհրդատուներին՝ իր ֆինանսական դրությունը պատշաճ գնահատելու և ցանկացած առաջարկ պարտատերերին ներկայացնելու նպատակով և
- ցանկացած նոր տրամադրված ֆինանսավորմանը պետք է շնորհվի գերակա կարգավիճակ.
- այս գործընթացներին անդրադարձ է կատարվում նաև Համաշխարհային բանկի 2015 թվականի «Անվճարունակության և պարտատերերի/պարտապանների արդյունավետ ռեժիմների սկզբունքները» փաստաթղթում: Համաշխարհային բանկի սկզբունքների Բ4 առաջարկով սահմանվում է, որ «ոչ պաշտոնական վարույթը կարող է ավելի լավ աշխատել, եթե այն հնարավորություն տա պարտատերերին և պարտապանները օգտագործել ոչ ֆորմալ մեթոդներ, ինչպիսիք են կամավոր բանակցությունները կամ համաձայնությունները կամ վեճերի ոչ պաշտոնական լուծումը»:

196. Վերջերս մի շարք երկրներ ներդրել են դատարանի որոշմամբ մորատորիումներ՝ ի աջակցություն ոչ պաշտոնական ֆինանսական առողջացման շուրջ բանակցությունների նման փորձերի: Նման օրենսդրական աջակցությունը, որը տրամադրվում է որպես երկրի անվճարունակության իրավական կառուցվածքի մաս, պետք է համարվի էական և ներառվել է առաջարկվող Սնանկության օրենսգրքում:

197. Ոչ ֆորմալ գործընթացների խթանման վերաբերյալ առկա են մի շարք մոտեցումներ: Դատավարական նոր կանոնների ներդրումը ներպետական իրավական համակարգում կարող է աջակցել նման գործընթացների կիրառմանը սնանկության գործերով՝ դատարաններին տալով իրավասություն՝ կողմերին պարտադրելու հաշտարարություն սնանկության գործընթացի ցանկացած փուլում: Նման կանոնները ներկայումս շատ սահմանափակ են համաշխարհային մասշտաբով, ընդ որում Ամերիկայի Միացյալ Նահանգները նշանակալի բացառություն է: Ամերիկայի Միացյալ Նահանգների սնանկության 90 դատարաններից 40-ն այժմ կանոնակարգով սնանկության գործով դատավորին թույլատրում է որոշում կայացնել վեճի կողմերին հաշտության համաձայնություն փորձելու ուղղությամբ: Դելավերի սնանկության դատարանում 2004 թվականից գործում է դատավարության ընթացքում պարտադիր հաշտարարության ծրագիրը: Սնանկության ամերիկյան ինստիտուտը նաև 2015 թվականի փետրվարին հրապարակեց իր «Սնանկության տեղական կանոնները հաշտության համաձայնության համար» որպես աղբյուր սնանկության դատարանների համար՝ ընդունելու կամ վերանայելու տեղական սնանկության կանոնները հաշտության համաձայնության վերաբերյալ[16]:

198. Ողջ վերոգրյալի կապակցությամբ կարծում ենք՝ Սնանկության օրենսգրքով անհրաժեշտ է նախատեսել դատարանի կողմից հաշտարարության և բանակցությունների խթանմանն ուղղված մոտեցումներ:

199. Ինչ վերաբերում է բանակցությունների խթանմանը, որպես խթանման օրինակ կարող է դիտարկվել բանակցությունների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պայմաններում պետական տուրքի նվազեցման դեպքը, երբ նվազեցված մասի վճարման պարտավորությունը դրվի մյուս կողմի վրա:

200. Հաշտարարության դեպքում արդեն պաշտոնական գործընթացի մեկնարկից հետո որպես հաշտարարության խթանման գործիք կարող է դիտարկվել այնպիսի պայմանների սահմանումը, որոնց դեպքում կգործի պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ՝ դիմում ներկայացնելիս պահանջելով նշել հաշտարարությամբ լուծելու ուղղությամբ կատարված գործողությունները:

---

[16] Տե՛ս https://www.nortonrosefulbright.com/-/media/files/nrf/nrfweb/knowledge-pdfs/international-restructuring-newswire---q4-2023.pdf?revision=5c27f448-7ca5-4d7f-98d8-9de10b9670b2&revision=5250023527747387904, էջ 20:

Չարամիտ սնանկությունների, մասնավորապես՝ կանխամտածված և կեղծ սնանկության դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգերի առկայության կապակցությամբ.

201. Խորհրդակցությունների ընթացքում բազմիցս բարձրացվել էր այն հարցը, որ անհրաժեշտ է խթանել կանխամտածված և կեղծ սնանկությունների բացահայտման դեպքերը և բացառել սնանկության ինստիտուտը պարտավորությունների կատարումից խուսափելու, այդ թվում՝ «ֆենիքսիզմի»[17] հասնելու օրինական միջոց ծառայեցնելուն:
202. Նման պայմաններում այս ոլորտում համակարգային բարեփոխումների համատեքստում առաջնային խնդիրներից է չարամիտ սնանկությունների մասնավորապես՝ կանխամտածված և կեղծ սնանկության դեմ պայքարի համար կառուցակարգերի առկայությունը:
203. Անդրադառնալով կանխամտածված սնանկության էությանը՝ հարկ է նշել, որ այն դրսևորվում է նրանում, որ շահագրգիռ անձը ձեռնարկում է ֆինանսապես առողջ պարտապանի սնանկության հատկանիշների առաջացմանն ուղղված միջոցառումներ՝ նպատակ ունենալով ստեղծել պարտապանի գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարման անհնարինություն: Ընդ որում, պարտապանի դիտավորյալ սնանկացումը վնաս է պատճառում ոչ միայն պարտատերերին, այլև պետությանը և պարտապանի աշխատողներին[18]:
204. Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանխամտածված սնանկության դեպքերի թիվը վերջին մի քանի տարիների ընթացքում եղել է շուրջ մեկ տասնյակ այն դեպքում, երբ սնանկության գործերի թիվը 2016 թվականից առ այսօր տարեկան կտրվածքով գերազանցում է տասը հազարը[19]:
205. Այսպես, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որի 288-րդ հոդվածը սահմանում է՝ կանխամտածված սնանկությունը ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի, իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի անունից օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալու կամ նրան պարտադիր կատարման ենթակա ցուցում տալու կամ որոշումը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը

[17] Ֆենիքսիզմ - իրավիճակ, երբ անվճարունակ բիզնեսի ակտիվները ձեռք են բերվում (հաճախ դրանց լրիվ արժեքից ցածր) նրա նախկին տնօրենների (կամ փոխկապակցված այլ անձանց) կողմից, որոնք այնուհետև ստեղծում են նոր ընկերություն, որը ներգրավված է նույն կամ նմանատիպ բիզնեսում, առավել մանրամասն տե՛ս https://commonslibrary.parliament.uk/research-briefings/cbp-8291/:

[18] Տե՛ս Жилкин М.Г., Земцова А.В. К вопросу о приминении норм об уголовной ответственности за криминальные банкротства // Общество и право, 2017, №4 (62), էջ 35:

[19] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://court.am/hy/statistic:

կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձի շահերից ելնելով, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

206. «Կանխամտածված սնանկություն» հանցակազմը (մինչև ՀՀ քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելն օրենսգրքի գործող խմբագրությամբ հոդված 193) որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Հիմնական նորամուծությունը կապված է «սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով» ձևակերպման հետ, որը միտված է քննարկվող քրեաիրավական նորմի որոշակիության ապահովմանը:

207. ՀՀ քրեական նոր օրենսգրքի կարևոր նորամուծություն է նաև այն, որ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է խրախուսական նորմը, համաձայն որի՝ հոդվածով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասը և հաշվարկված տույժերը:

208. Այդուհանդերձ հանցակազմի նոր խմբագրությունը, ինչպես և նախկինը, հստակ չեն սահմանում քննարկվող հանցագործության սուբյեկտի հատկանիշները, ինչը գործնականում կարող է հանգեցնել խնդիրների:

209. Անդրադառնալով քաղաքացիաիրավական բովանդակությանը՝ հարկ է նկատել, որ Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտապանը սնանկ է ճանաչվել պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալին տիրապետող կամ նրան կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի մեղքով (ուղղակի կամ անուղղակի գործողություններով պարտապանի գործունեությունն ուղղորդելը և այլն (կանխամտածված սնանկություն), ապա պարտապան իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ այդ անձինք կրում են համապարտ պատասխանատվություն պարտապանի պարտավորություններով՝ վերջինիս գույքի անբավարարության դեպքում:

210. Պարտապանի կանխամտածված սնանկության համար պատասխանատու անձինք պարտապանի պարտավորություններով կրում են համապարտ պատասխանատվություն, եթե պարտապանի գույքն անբավարար է:

211. Մեղավոր անձի պատասխանատվության ծագման համար պարտապանի գույքի անբավարարության պայմանի ամրագրումը բավականին վիճահարույց է թվում: Այս մոտեցումը ամենից առաջ պայմանավորված է այն իրողությամբ, որ պարտապանի գույքի բավարարության կամ անբավարարության հարցի պարզումը ենթադրում է Օրենքով նախատեսված ծավալուն ու տևական գործողությունների կատարում, որպիսի պայմաններում մեղավոր անձանց հաշվին պարտատերերի պահանջների բավարարման ձգձգումը չունի որևէ ողջամիտ հիմնավորում: Բացի այդ, միայն պարտապանի գույքի անբավարարության դեպքում մեղավոր անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվության ծագման պայմանը հակասում է սնանկության վարույթի էությանը, որը կոչված է պաշտպանելու ոչ միայն պարտատերերի, այլև պարտապանի շահերը: Ընդ որում, չպետք է մոռացության մատնել այն իրողությունը, որ կանխամտածված սնանկությունը միջոց է առերևույթ օրինական ճանապարհով պարտապանի գույքային կազմից դուրս բերված գույքի նկատմամբ քողարկված ձևով սեփականության իրավունքը պահպանելու և այդ գույքի նկատմամբ պարտատերերի պահանջները չեզոքացնելու համար: Հետևաբար հենց այս առումով ևս մեղավոր անձինք պետք է պարտապանի հետ կրեն անվերապահ համապարտ պատասխանատվություն՝ անկախ գույքի անբավարար լինելուց:

212. Ընդ որում հստակեցման ենթակա է նաև համապարտ պատասխանատվության կիրառման քայլեր ձեռնարկող սուբյեկտը, որը պետք է լինի սնանկության կառավարիչը:

213. Սնանկության հետ կապված հակահիրավական արարքների թվում առանձնակի նշանակություն ունի նաև կեղծ սնանկությունը, որը արտահայտվում է շահագրգիռ անձի կողմից սնանկության մասին կեղծ հայտարարության տարածմամբ՝ պարտատերերին մոլորության մեջ գցելու և համապատասխան ակտիվներ քողարկելու նպատակով[20]:

214. Կեղծ սնանկության հատկանիշների առկայության հարցը պարզելիս առաջնային է հաշվի առնել, որ վերջինիս կանխամտածված սնանկությունից տարբերակող էական հանգամանքը այն է, որ կանխամտածված սնանկության դեպքում՝ ընկերությունը իրապես չունի պարտավորությունների մարման հնարավորություն: Մինչդեռ կեղծ սնանկության դեպքում՝ ընկերությունը առանց սնանկ ճանաչվելու համար անհրաժեշտ իրավական պայմանների առկայության սնանկության դիմում է ներկայացնում դատարան:

[20] Տե՛ս «Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում» գիտագործնական ձեռնարկ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://aoj.am/storage/library/academy-publications/qugDe3iw2QjvLx9Iau303LFHEAPXBXmBziVO0kis.pdf?fbclid=IwAR2LXhduxdA0EncM0JLwtRJI6aIPHkt_7IP-obJ0udb032S_6KV-IdBRrOw, էջ 38:

215. Մինչև ՀՀ քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելն օրենսգրքի գործող խմբագրությամբ 194-րդ հոդվածով սահմանված էր «կեղծ սնանկության» հանցակազմը, համաձայն որի՝ կեղծ սնանկությունը՝ պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սնանկության հատկանիշների բացակայության պայմաններում սեփական սնանկության ճանաչման մասին հայցադիմում ներկայացնելը՝ պարտատերերին մոլորեցնելու և նրանց պահանջների բավարարման հետաձգում, տարաժամկետում, նվազեցում, սառեցում կամ մորատորիում ստանալու, հավասարապես նաև պարտքերի չվճարման նպատակով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս:

216. Այնուամենայնիվ, «կեղծ սնանկության» հանցակազմը նոր քրեական օրենսգրքով չի նախատեսվել, իսկ նման արարք կատարելու պարագայում՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության փաստաթղթերը կեղծելու, խաբեությամբ, վստահությունը չարաշահելու կամ այլ ապօրինի եղանակով գույքային վնաս պատճառելու և, կախված գործի փաստական հանգամանքներից՝ այլ հանցակազմերով:

217. Չնայած դրան՝ Օրենքը շարունակում է կիրառել «կեղծ կամ կանխամտածված սնանկություն» եզրույթները: Մասնավորապես՝ Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում կառավարիչը պարտավոր է անհապաղ հաղորդում ներկայացնել իրավասու մարմիններ: Այս առումով Օրենքով ևս անհրաժեշտ է հստակեցնել «կեղծ սնանկության» եզրույթը և հետևանքները:

218. Այս առումով հարկ է նկատել, որ հասկանալի չէ օրենսդրի մոտեցումը, քանի որ «կեղծ սնանկության» նպատակը «պարտատերերին մոլորեցնելը և նրանց պահանջների բավարարման հետաձգում, տարաժամկետում, նվազեցում, սառեցում կամ մորատորիում ստանալը, հավասարապես նաև պարտքերի չվճարելն է», մինչդեռ «փաստաթղթերը կեղծելու, խաբեությամբ, վստահությունը չարաշահելու կամ այլ ապօրինի եղանակով գույքային վնաս պատճառելու» հանցակազմերը որևէ կերպ բավարար չեն լուծել այն խնդիրները, որոնք դրսևորվում են կեղծ սնանկության շրջանակում: Ընդ որում քննարկման առարկա է նաև դատարանի կողմից կամավոր սնանկության դիմումը մերժելու և վճիռը ուժի մեջ մտնելու դեպքում «կեղծ սնանկության» հանցակազմի քննարկման հարցը:

219. Անհրաժեշտ է նաև կեղծ սնանկության համար նախատեսել նաև գույքային հետևանք մորատորիումի ընթացքում չհաշվեգրված տույժերի և տուգանքների բռնագանձման ձևով:

220. Հարկ է նկատել, որ այս ինստիտուտների դեմ պատշաճ կառուցակարգերի սահմանումն օրակարգային է մի շարք երկրներ համար: Այսպես Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմված «Լիտվայի Հանրապետություն. տեխնիկական աջակցության հաշվետվություն անվճարունակության ռեժիմի բարեփոխման առաջարկների վերաբերյալ» հաշվետվության համաձայն սահմանվել են մի շարք հայեցակարգային ուղղություններ, այդ թվում.

1) Կեղծ և կանխամտածված սնանկության հստակ սահմանման ներառումը սնանկության մասին օրենքում.
2) Ինստիտուցիոնալ կառուցվածքի տեսանկյունից պետք է մշակվի մեխանիզմ, որը կնպաստի սնանկության գործով կառավարչի և նման դեպքերի հետաքննության համար պատասխանատու ոստիկանության և դատախազության գործակալների միջև ավելի լավ և ժամանակին համակարգմանը, որպեսզի վերջիններս կարողանան մասնակցել հետաքննության գործընթացին, երբ կեղծիքի վերաբերյալ ապացույցներ ի հայտ գան.
3) Նոր համակարգ մշակելիս, որը վերացնում է Լիտվայում կեղծ սնանկության ոլորտում հայտնաբերված թերությունները, պետք է նաև ուշադրություն դարձնել հանցավոր վարքի պատժի և պարտապանին, սեփականատերերին, տնօրեններին, ծառայողներին կամ երրորդ կողմերին ժամանակին սնանկության դիմում ներկայացնելուց զերծ պահելու միջև ճիշտ հավասարակշռություն գտնելուն[21]:

Սնանկության դիմում ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց պարտապանի պարտավորությունների համար գույքային համապարտ պատասխանատվություն կրելու ինստիտուտի կապակցությամբ.

221. Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը Օրենքի 5-րդ հոդվածում նշված անձանց կողմից նույն հոդվածում սահմանված դեպքերում և ժամկետում չներկայացնելու դեպքում դիմում ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք պարտատերերի առջև սուբսիդիար պատասխանատվություն են կրում պարտապանի այն պարտավորությունների համար, որոնք առաջացել են Օրենքի 5-րդ հոդվածի երրորդ մասում սահմանված ժամկետը լրանալուց հետո:

222. Սուբսիդիար պատասխանատվության սահմանումը միայն սահմանված ժամկետը լրանալուց հետո առաջացած պարտավորությունների համար ակնհայտ

[21] Տե՛ս https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2016/12/31/Republic-of-Lithuania-Technical-Assistance-Report-on-Proposals-for-Reforming-the-Insolvency-25340:

անբավարար է և չի ապահովում համարժեք պատասխանատվություն սնանկության հատկանիշների մասին իմացող ղեկավար կազմի անգործության համար:

223. Հարկ է նկատել, որ սնանկության վտանգի վարույթի, ինչպես նաև կամավոր սնանկության հատկանիշների առկայության դեպքում անհրաժեշտ է սահմանել գույքային համապարտ պատասխանատվության վերաբերյալ հստակ կարգավորումներ, որոնք կբացառեն սնանկության ինստիտուտը պարտավորությունների կատարումից խուսափելու օրինական միջոց ծառայեցնելուն, իսկ նման փորձերը կհանգեցնեն մեղավոր անձանց քաղաքացիական և այլ բնույթի պատասխանատվությունների: Օրինակ՝ կամավոր սնանկության դեպքում պետք է առավել հստակեցնել պատասխանատու ղեկավարների սուբսիդիար պատասխանատվության հարցը այն դեպքերի համար, երբ առկա են սնանկության հատկանիշներ, սակայն համապատասխան դիմում չի ներկայացվում:

224. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **նախատեսել սնանկության ինստիտուտը իրավաչափ նպատակներին համարժեք ծառայեցնելու անհրաժեշտ և բավարար երաշխիքներ՝ բացառելով այն պարտավորության կատարումից ազատելու միջոց դիտարկելու, այդ թվում՝ աշխատավարձի բռնագանձելիության ապահովմամբ, և այլ անձանց վնաս պատճառելու հնարավորության իրացումը.**
2) **սնանկության վտանգի վարույթի, ինչպես նաև կամավոր սնանկության հատկանիշների առկայության դեպքում սահմանել նման հարցում դատարան դիմելու իրավասություն ունեցող անձանց գույքային համապարտ պատասխանատվություն.**
3) **խթանել սնանկության կանխման ոչ ֆորմալ ընթացակարգերը՝ մինչև սնանկության վարույթի հարուցումը հաշտարարությունը և բանակցությունների իրականացումը և դրանց օբյեկտիվ պատճառներով անարդյունք իրականացումը դիտարկել որպես պետական տուրքի նվազեցման հիմք.**
4) **սահմանել դատարանի համար պարտադիր հաշտարարության նշանակման դեպքեր և չափանիշներ.**
5) **կանխամտածված սնանկության դեպքում մեղավոր անձանց համար սահմանել համապարտ պատասխանատվություն՝ անկախ պարտապանի գույքի անբավարարության հանգամանքից, ինչպես նաև հստակեցնել այդ պատասխանատվության կիրառման ընթացակարգը.**

6) **քրեական օրենսդրությամբ հստակեցնել կանխամտածված սնանկության սուբյեկտի հատկանիշները, ինչպես նաև սահմանել «կեղծ սնանկություն» հանցակազմը.**
7) **կեղծ սնանկության համար նախատեսել գույքային հետևանք մորատորիումի ընթացքում չհաշվեգրված տույժերի և տուգանքների բռնագանձման ձևով:**

3) Սնանկության վարույթի հարուցումը

225. Սնանկության վարույթի հարուցման հետ կապված խնդիրներին անդրադառնալու նպատակով նախ հստակեցնենք «անվճարունակություն» և «սնանկություն» ինստիտուտները: Օրենքի վերլուծությունը վկայում է, որ այն տարբերակում է անվճարունակության երկու ձև.
    1) հաշվեկշռային (բացասական հաշվեկշռի դեպքում).
    2) փաստացի, որը ենթադրում է այնպիսի վիճակ, երբ պարտապանն ի վիճակի չէ պարտատերերի օրինական պահանջներն ամբողջովին բավարարել:
226. Մասնավորապես, օրենսդիրը որպես պարտապանի անվճարունակության հիմք սահմանում է պարտապանի պարտավորությունների՝ պարտապանի ակտիվները գերազանցելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն): Անվճարունակության այս երկու տարատեսակները միմյանցից տարանջատված են, և պարտապանին սնանկ ճանաչելու համար Օրենքը չի առաջադրում անվճարունակության այդ երկու տարատեսակների զուգահեռ, միաժամանակյա առկայության պահանջ:
227. Այսպիսով, անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն:
228. Ի տարբերություն անվճարունակության, սնանկությունը ունի ավելի լայն բովանդակություն: Խոսքն այն մասին է, որ անձի սնանկությունը ենթադրում է պետության իրավասու մարմնի՝ դատարանի կողմից անձի անվճարունակության փաստի ճանաչում: Այլ կերպ ասած՝ անձի անվճարունակությունը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է նրա սնանկությունը ճանաչելու համար, և նա այդպիսին է դառնում միայն օրենքով սահմանված ընթացակարգի արդյունքում ընդունված դատական ակտի դեպքում:
229. Իր հերթին սնանկությունը ևս դասակարգվում է երկու տեսակի.
    1) հարկադիր.
    2) կամավոր:
230. Անդրադառնալով սնանկ ճանաչելու հատկանիշներին՝ հարկ է նկատել, որ օրենսդիրը յուրաքանչյուր սնանկության տեսակի համար նախատեսել է սնանկ

ճանաչելու ինքնուրույն փաստակազմ: Ընդ որում, դրանք խարսխվում են այն տրամաբանության վրա, որ վկայեն անձի անվճարունակության մասին[22]:

231. Անդրադառնալով «փաստացի անվճարունակության» շեմին՝ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

232. Հիշատակված բոլոր պայմանները ընդհանրացված կերպով ներառվում է «փաստացի անվճարունակություն» հասկացության մեջ, որին բնութագրական են հետևյալ հատկանիշները.
    - Պարտապանի վճարային (դրամական) պարտավորության առկայությունը
    - Պարտավորության կետանցը՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող չափով
    - Պարտավորության 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանցը
    - Կետանցի շարունակվելը սնանկ ճանաչելու մասին վճռի կայացման պահին
    - Պարտավորության անվիճելիությունը:

233. Ընդ որում հարկ է նկատել, որ նշված շեմը փոփոխվել է «Սնանկության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 18.09.2020 թ. ՀՕ-445-Ն օրենքով, որի շրջանակում շուրջ շեմը բարձրացվել է շուրջ 3 անգամ (հինգ հարյուր հազար, մեկ միլիոն, երկու միլիոն ՀՀ դրամ), մինչդեռ օրենսդրական բարեփոխումների կատարման անհրաժեշտության հիմնավորումից պարզ չէ ինչ մեթոդաբանությամբ է հաշվարկվել շեմը կամ ինչ գործոններ են դրվել նման փոփոխության հիմքում:

234. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրները պետք է հաշվի առնեն և ներկայացնել այն տնտեսական գործոնները, որոնք հիմք են հանդիսացել սնանկության շեմը սահմանելիս: Այն կարող է ներառել կյանքի արժեքի, միջին եկամտի մակարդակի, գնաճի, փոփոխուն ծախսերի և այլ համապատասխան ֆինանսական ցուցանիշների դիտարկումը:

235. Օրինակ, Անգլիայում ընկերությունը համարվում անվճարունակ, եթե պարտատերը որին ընկերությունը պարտք է ավելի քան 750 ֆունտ ստեռլինգ, ընկերությանը ներկայացրել է սահմանված ձևով գրավոր պահանջ գումարը վճարելու մասին, և ընկերությունը երեք շաբաթվա ընթացքում չի վճարել այդ գումարը: Եթե ընկերությունը չի վճարում անվիճելի համարվող ժամկետանց

[22] Տե՛ս ՍԴ 25.02.2008թ. թիվ ՍԴՈ-735 որոշումը:

պարտքը, դա ինքնին բավարար ապացույց է փաստացի անվճարունակության մասին, նույնիսկ եթե ընկերությունը հիմնավոր ապացույցներ ունի առ այն որ իր ակտիվները գերազանցում են իր պարտավորությունները (հաշվեկշռային վճարունակություն):Մինչդեռ օրինակ, Ավստրալիայում սնանկության շեմը 2021 թվականին բարձրացվեց մինչև 10,000 ԱՄՆ դոլար:Կառավարությունը բարձրացրել է ֆիզիկական անձանց սնանկության դիմումի ներկայացման շեմ՝ կրկնապատկելով «պարտքերի պաշտպանությունը» ֆինանսական դժվարություններ ունեցող ավստրալացիների համար: Սնանկ ճանաչվելու շեմը բարձրացվեց դրամի համապատասխանաբար փոփոխվող արժեքի, անձնական պարտքի մակարդակի բարձրացման, փոքր պարտքերի դեպքում սնանկացման գործողությունները չխրախուսելու և COVID-19 համաճարակին արձագանքելու անհրաժեշտությամբ[23]:

236. 2022 թվականի հունիսի 21-ին ԱՄՆ նախագահ Բայդենը ստորագրեց «Սնանկության շեմի ճշգրտման և տեխնիկական ուղղումների մասին» օրենքը (Pub. L. No. 117-151 (S. 3823)), որով սնանկության դիմումում պարտքերի սահմանաչափը ժամանակավորապես բարձրացվել է: Փոփոխությունները նախատեսվել են որպես «Կորոնավիրուսային օգնության, մեղմացման և տնտեսական անվտանգության մասին» ակտի (CARES Act) մի մաս: Փոփոխությունների իրականացման խթաններից են ռեկորդային բարձր գնաճը, աճող տոկոսադրույքները և ռեցեսիայի նկատմամբ վախերը: Քանի որ երկիրը առերեսվում է բազում տնտեսական դժվարությունների հետ, ավելի ու ավելի քիչ բիզնեսներ պետք է կարողանան դիմել սնանկության համար[24]:

237. Համաշխարհային բանկի կողմից սահմանած սկզբունքների համաձայն՝ օրենքում պետք է հստակորեն սահմանվեն սնանկության չափանիշները և կանխավարկածները: Սնանկության վարույթ սկսելու նախընտրելի թեստը պետք է լինի պարտապանի՝ պարտքերը կատարման վերջնաժամկետին դրանք մարելու անկարողությունը, թեև անվճարունակություն կարող է լինել նաև այն դեպքում, երբ պարտապանի պարտավորությունները գերազանցում են նրա ակտիվների արժեքը, պայմանով, որ ակտիվները և պարտավորությունները գնահատվում են արդար շուկայական արժեքով:

238. Կարող է կիրառվել մեկ կամ մի քանի չափորոշիչ, թեև այն դեպքում, երբ ընդունվում է միայն մեկը, այն պետք է հիմնված լինի պարտապանի՝ ժամկետանց պարտքերը վճարելու անկարողության վրա[25]:

---

[23] Տե՛ս Personal Insolvency Discussion Paper 2023, Attorney-General's Department:

[24] Տե՛ս https://content.next.westlaw.com/practical-law/document/I04913309f23e11ec9f24ec7b211d8087/The_Bankruptcy-Threshold-Adjustment-and-Technical-Corrections-Act-Increases-the-Debt-Threshold-for-Small_____Businesses-under-the-SBRA-and-Wage-Earners-in-Chapter 13?viewType=FullText&transitionType=Default&contextData=(sc.Default):

[25] Տե՛ս https://documents1.worldbank.org/curated/en/518861467086038847/pdf/106399-WP-REVISED-PUBLIC-ICR-Principle-Final-Hyperlinks-revised-Latest.pdf:

239. Այսպիսով վերանայման ենթակա է սնանկության շեմը: Սահմանվող շեմը պետք է հաշվարկվիհստակ մեթոդաբանությամբ և գործոններով, օրինակ՝ միջին եկամտի մակարդակը, գնաճը, փոփոխուն ծախսերը և այլ համապատասխան ֆինանսական ցուցանիշները:
240. Մյուս կարևոր հարցը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար շեմի տարանջատման անհրաժեշտությունն է:
241. Ուշագրավ է որոշ երկրների փորձը: Այսպես, Չեխիայի Հանրապետությունում պարտապանն անվճարունակ է, եթե առկա են հետևյալ բոլոր պայմանները.
    - պարտապանը ունի բազմաթիվ պարտատերեր.
    - պարտապանն ունի 30 օրից ավելի ժամկետանց դրամական պարտավորություններ.
    - ի վիճակի չէ կատարել այդ պարտավորությունները:
242. Պարտապանները համարվում են անվճարունակ, հատկապես, եթե նրանք դադարել են մարել իրենց պարտքերի զգալի մասը կամ չեն մարել այդպիսի պարտավորությունները ժամկետանց լինելուց հետո ավելի քան երեք ամիս, կամ եթե պարտապանի նկատմամբ սահմանված դրամական պահանջներից որևէ մեկը չի կարող բավարարվել հարկադրմամբ կամ արգելանքով:
243. Տնտեսվարող սուբյեկտ հանդիսացող պարտապանը նույնպես անվճարունակ է, եթե ունի բազմաթիվ պարտատերեր և պարտավորությունների գումարը գերազանցում է իր ակտիվների արժեքը[26]:
244. Լեհաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ պարտապանը անվճարունակ է, եթե նա չի կարողանում կատարել իր ֆինանսական պարտավորությունները, երբ դրանք լրացել են: Համարվում է, որ պարտապանը չի կարող կատարել իր ֆինանսական պարտավորությունները, եթե դրանք ժամկետանց են ավելի քան երեք ամիս: Պարտապանը, որը իրավաբանական անձ է անվճարունակ է նաև, երբ նրա ֆինանսական պարտավորությունները գերազանցում են իր ակտիվների արժեքը, և այդ վիճակը շարունակվում է ավելի քան 24 ամիս[27]:
245. ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցը սնանկության հատկանիշների մշակման համատեքստում բարձրացնում է այն հիմնական հարցը, արդյոք օրենքը պետք է տարբերակի ֆիզիկական անձ պարտապաններին իրավաբանական անձանցից, որոնցից յուրաքանչյուրը կառաջացնի ոչ միայն քաղաքականության տարբեր նկատառումներ, այլև սոցիալական և այլ վերաբերմունքի վերաբերյալ նկատառումներ[28]:

---

[26] Տե՛ս https://e-justice.europa.eu/447/EN/insolvencybankruptcy?CZECHIA&member=1#tocHeader1:
[27] Տե՛ս https://e-justice.europa.eu/447/EN/insolvencybankruptcy?POLAND&member=1
[28] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, էջ 38:

246. Պետությունները տարբեր մոտեցումներ են որդեգրում սնանկության մասին իրենց օրենքների կիրառման շրջանակը սահմանելիս: Սնանկության մասին որոշ օրենքներ կիրառվում են բոլոր պարտապանների նկատմամբ՝ որոշակի հստակ բացառություններով: Մյուս պետությունները տարբերակում են ֆիզիկական անձանց և իրավաբանական անձ պարտապաններին և յուրաքանչյուրի համար նախատեսում անվճարունակության վերաբերյալ տարբեր օրենքներ:Մեկ այլ մոտեցմամբ տարբերակումը կատարվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև տնտեսական (կամ սպառողական) գործունեության մեջ նրանց ներգրավվածության հիման վրա: Որոշ օրենքներ ներառում են նաև տարբեր ընթացակարգեր՝ հիմնված պարտքի մակարդակի վրա, և մի շարք պետություններ մշակել են անվճարունակության հատուկ ռեժիմներ տնտեսության տարբեր ոլորտների, մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտի համար:
247. Անհատական կամ անձնական պարտքերի և անվճարունակության նկատմամբ կիրառվող քաղաքականությունը հաճախ պահանջում է այնպիսի վերաբերմունք, որն այնքան էլ տեղին չէ տնտեսական գործունեությամբ զբաղվող պարտապանների համար: Առևտրային հատվածում անվճարունակության նկատմամբ կիրառվող քաղաքականությունը, ընդհանուր առմամբ սահմանափակված է տնտեսական և առևտրային նկատառումներով: Մասնավորապես հաշվի է առնվումայն կարևոր դերը, որ բիզնեսը խաղում է տնտեսության մեջ. տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության պահպանման և խրախուսման անհրաժեշտությունը և վարկերի տրամադրումը խրախուսելու և պարտատերերին պաշտպանելու անհրաժեշտությունը[29]:
248. Այսպիսով միջազգային կազմակերպությունների զեկույցների համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ ըստ էության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սնանկության շեմերը սահմանելիս պետությունները ազատ են և պետք է հաշվի առնեն իրենց երկրի իրավական առանձնահատկությունները:
249. Ինչպես տեսնում ենք, քննարկման առարկա դարձված երկրները հիմնականում նախատեսում են տարբերակված մոտեցում, որը առաջարկվում է կիրառել նաև Հայաստանի Հանրապետությունում:
250. Հարկ է նշել, որ օրենսդիրը Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանել է, որ վերոնշյալ վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

[29] Տե՛ս նույն տեղում:

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

251. Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որ գործնականում սնանկության ինստիտուտը հաճախ վերածվում է դատական ակտի կատարման գործընթացի՝ խաթարելով տնտեսական անվտանգությունը և փաստացի փոխարինելով հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը:

252. Մինչդեռ այս մոտեցումն անընդունելի է, և սնանկության ինստիտուտը պետք է կիրառվի բացառապես այն դեպքերում, երբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից կատարողական վարույթի արդյունքում անհնար է կատարման ենթակա ակտի կատարումը կամ նման առաջարկ է ներկայացվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից:

253. Սույն հայեցակարգի շրջանակում վերանայման ենթակա հաջորդ հարցը կամավոր սնանկության դեպքում ներկայացվող փաստաթղթերը ցանկն է:

254. Օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող առանձնահատուկ պահանջներ կամավոր սնանկության և սնանկության վտանգի դեպքում: Նման դեպքերում պարտապանի կողմից դիմում ներկայացնելու պարագայում դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկը՝ համաձայն վերջին գույքագրման արդյունքների (դրա առկայության դեպքում), ներառյալ՝ կապիտալ և ֆինանսական ներդրումները, հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները և նշված կազմին չպատկանող այլ միջոցները.

2) պարտապանի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը և չափը: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները.

3) պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները.
4) եթե պարտապանը տնտեսական ընկերակցություն է, ապա մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և պետական գրանցման տվյալները.
5) պարտապանի հայտարարությունը՝ ֆինանսական առողջացման մտադրության մասին.
6) տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների մասին.
7) կամավոր սնանկության կամ սնանկության վտանգի մասին դատարան ներկայացվող դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին ապացույցները.
8) սնանկության վտանգի դիմումի դեպքում՝ Օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիրը:

255. Գործող կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում կարծում ենք քննարկման առարկա է կամավոր սնանկության դեպքում կից ներկայացվող փաստաթղթերի պահանջների պարզեցման հարցը, քանի որ վերոնշյալ պայմաններում գործնականում ըստ էության դժվարեցնում և անհարկի ծանրաբեռնում են գործընթացը: Ավելին, շատ դեպքերում վերոնշյալ փաստաթղթերի ներկայացումը ծախսատար է և պահանջում է մի շարք հարցումների իրականացում, որը բնականաբար հնարավոր չէ իրականացնելու, քանի որ դիմում ներկայացնում է արդեն իսկ ֆինանսական դժվարություն ունեցող սուբյեկտը:

256. Հետևաբար, վերոշարադրյալի փոխարեն առաջարկվում է սահմանափակվել սնանկության վարույթի տեսանկյունից էական տվյալներ պարունակող պարտապանի ստորագրված հայտարարությամբ, որի հավաստիության և ամբողջականության համար կսահմանվի քրեական պատասխանատվություն:

257. **Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ առաջարկում ենք.**
1) տարանջատել սնանկության շեմը ֆիզիկական և իրավաբանական անձ պարտապանների համար՝ դրանցից յուրաքանչյուրի հիմքում դնելով հստակ մեթոդաբանություն.
2) սնանկության ինստիտուտի և կատարման ենթակա ակտի հարկադիր կատարման ընթացակարգերի միջև նախատեսել սահմանների հստակ ուրվագծում՝ սնանկության ինստիտուտը թույլատրելի համարելով միայն այն դեպքում, երբ կատարման ենթակա ակտի կատարումն անարդյունավետ է կամ անհնար.
3) ֆիզիկական անձ պարտապանի կամավոր սնանկության դեպքում պարզեցնել դիմում ներկայացնելու գործընթացը՝ պարտապանի գույքային վիճակի վերաբերյալ տվյալների ներկայացումը

սահմանափակելով պարտապանի ստորագրված հայտարարությամբ և սահմանելով քրեական պատասխանատվություն դրա կեղծ կամ ոչ ամբողջական լինելու համար:

4) Ֆինանսական առողջացումը

258. Ֆինանսական առողջացման գործընթացները նախատեսված են պարտապանին սնանկությունից փրկելու կամ կենսունակ բիզնեսի վերականգնման, այդ թվում՝ վերակազմակերպման համար: Դրա վերջնական նպատակն է պարտապանին թույլ տալ հաղթահարել ֆինանսական դժվարությունները և վերսկսել կամ շարունակել իր բիզնեսի գոյությունը այս կամ այն ձևով[30]:
259. Ֆինանսական առողջացման ընթացակարգերը նախատեսված են նաև պարտապանին նման հնարավորություն ընձեռելիս միաժամանակ անդրադառնալ նաև վերջինիս ֆինանսական վիճակին և անհրաժեշտության դեպքում ապահովել հնարավորություն վերակառուցելու պարտքերը և առևտրային կապերը պարտատերերի հետ[31]:
260. Անգլիայում և Ուելսում կառավարումը/administration/ գործընթաց է, որի միջոցով ընկերությունը դրվում է որակավորված կառավարչի հսկողության տակ: Ֆինանսական կառավարման հիմնական առանձնահատկությունը մորատորիումն է: Ի տարբերություն լուծարման մորատորիումի, կառավարման փուլի մորատորիումը կարող է նաև կանխել ապահովված պարտատերերի կողմից պահանջների ներկայացումը: Կառավարման փուլում Կառավարիչը օրենքով պարտավոր է հետապնդել հետևյալ նպատակներից մեկը.
    - ընկերության փրկությունը որպես շարունակական գործունեություն, որի ձախողման դեպքում
    - ավելի լավ արդյունք ընդհանուր առմամբ պարտատերերի համար, քան հնարավոր կլիներ, եթե ընկերությունը գնար լուծարման, որի ձախողման դեպքում.
    - գույքի իրացում, որը հնարավորություն կտա բաշխում կատարել ապահովված (կամ արտոնյալ) պարտատերերին, բայց առանց անհարկի վնաս հասցնելու ընկերության պարտատերերի շահերին:
261. Այս նպատակներից մեկին հասնելու համար նրանց օգնելու համար կառավարիչն ունի ավելի լայն լիազորություններ քան տրված է լուծարային կառավարչին, մասնավորապես նրա իրավասու է վարելու ընկերության բիզնեսը և, անհրաժեշտության դեպքում, վաճառելու բիզնեսն ու ակտիվները: Կառավարիչը պարտավոր է առաջարկություններ կազմել՝ ներկայացնելու ընկերության

[30]Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, էջ 27:
[31] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, էջ 27:

պարտատերերի հաստատմանը, ընդ որում պարտատերերի որոշումը կայացվելու է ադմինիստրատորի նշանակումից տասը շաբաթվա ընթացքում: Կառավարումն ի սկզբանե չի համարվում ընկերության կյանքի վերջնական գործընթաց, այլ պարզապես քայլ դեպի որևէ այլ (ցանկալի է վճարունակության) արդյունք կամ գործընթաց: Կախված նրանից, թե ինչ առաջարկներ կընդունվեն, ընկերությունը կարող է ժամանակին վերադառնալ իր ղեկավարության վերահսկողությանը (օրինակ, կամավոր պայմանավորվածությունի սխեմայի կամ վերակազմավորման ծրագրի միջոցով) կամ լուծարվել (եթե, օրինակ բիզնեսը վաճառվել է կամ կամավոր պայմանավորվածության փորձը, կամ վերակազմավորման ծրագիրը չի հաջողել): Ադմինիստրատորը կարող է նաև դատարանի թույլտվությամբ կատարել բաշխումներ անապահոված ինչպես նաև չապահովված պարտատերերին, եթե կան բավարար իրացումներ, որոնցից բաշխումը հնարավոր է անել նախքան ընկերության լուծարման նախաձեռնում: Թեև կառավարման առաջնային նպատակը մնում է ընկերության փրկությունը, գործնականում գործընթացն առավել հաճախ հանգեցնում է բիզնեսի վաճառքի: Ընկերության համար այս փուլում բիզնեսը շարունակելու հնարավորությունը, մինչ վաճառքը բանակցվում է, շատ ավելի ճկուն է, քան լուծարման ժամանակ, և, հետևաբար, վաճառքը կարող է ապահովվել ավելի լավ պայմաններով: Նաև սովորական է, որ կառավարիչը նախապես բանակցված վաճառքի մեջ է մտնում իր նշանակումից գրեթե անմիջապես հետո ՝ գործընթաց կոչվում է նախապես բանակցված կառավարում/pre-packaged administration/:

262. Այստեղ կառավարման անցնելու կարևոր նախապայման է ընկերության՝ պարտքը մարելու անկարողությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կառավարում նախաձեռնողը լողացող վճարի իրավունք (սա ապահովված իրավունքի տեսակ է, որով պարտքն ապահովված է ոչ թե կոնկրետ գույքից հատուցում ստանալու իրավունքով, այլ ընկերության՝ որոշակի տեսակ գույքից հատուցում ստանալու իրավունքով և այս տեսակ ապահովված իրավունք ունեցողների համար առավել բարենպաստ ռեժիմ է սահմանված): Ընկերությունը կարող է նացնել կառավարման վարույթի մի քանի եղանակներով՝ (1) դատարանի որոշմամբ՝ Ընկերության, Ընկերության տնօրենի, պարտատերերի պահանջով, (2) Ընկերության կամ ընկերության տնօրինության որոշմամբ՝ դատարանին նեկայնելով այդ մասին ծանուցում. (3) Լողացող վճարի իրավունք ունեցող պարտատերերի կողմից՝ դատարանին ուղղված ծանուցմամբ, որին կցվում է հայտարարություն առ այն որ ապահովման միջոցը անիրագործելի է դարձել:

263. Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Անգիալում և Ուելսում սնակության վարույթից (որի շրջանակներում իրականացվում են կառավարման և լուծարման փուլերը), դուրս գոյություն ունեն այլ ընթացակարգեր որոնց թվին են դասսվում նաև Ընկերությունների կամավոր պայմանավորվածություններն ու

Վերակազմավորումը/restructuring/: Վերակազմավորման ծրագիրը կարող է կիրառվել ոչ միայն ընկերության և նրա պարտատերերի կամ նրանց որևէ դասի, այլ նաև ընկերության և անդամների կամ նրանց ցանկացած դասի միջև: Վերակազմավորման ծրագիրը կարող է նաև պարտավորեցնել ինչպես ապահովված, այնպես էլ չապահովված պարտատերերին: Որպեսզի պարտատերերի կամ անդամների մի դասը հաստատի պլանը, այդ պարտատերերի կամ անդամների արժեքի առնվազն 75%-ը պետք է կողմ քվեարկի: Նույնիսկ այն դեպքում, երբ պարտատերերի կամ անդամների մի խումբ կողմ չի քվեարկել, կա հաստատման հնարավորություն Cross-class cram-down-ի միջոցով, որով ծրագիրը կարող է դատարանի հայեցողությամբ պարտադրվել պարտատերերի կամ անդամների նկատմամբ, որոնք կողմ չեն քվեարկում, պայմանով, որ ծրագրի համաձայն վերջիններս ավելի վատ վիճակում չեն հայտնվի, քան Վերակազմավորման ծրագրի ամենահավանական այլընտրանքի դեպքում. և առնվազն մեկ դաս, որն իրական տնտեսական շահագրգռվածություն ունի համապատասխան այլընտրանքի նկատմամբ, կողմ է քվեարկել: Cross-class cram-down-ի առկայությունը ամենամեծ տարբերությունն է Վերակազմավորման ծրագրի և Ընկերությունների կամավոր պայմանավորվածությունների սխեմայի միջև, և սա է այն հատկանիշը, որն Վերակազմավորման ծրագրի դարձնում է հզոր այլընտրանք:

264. Ընկերությունը և նրա շահառուները կարող են նախընտրել վերակազմավորումը հետևյալ պատճառներով.

- Վերակազմավորումը, հավանաբար, ավելի մեծ արժեք կպահպանի պարտատերերի և բաժնետերերի համար, քան սնանկության պաշտոնական գործընթացը.
- Վերակազմավորումը թույլ է տալիս ընկերությանը և նրա շահագրգիռ կողմերին համաձայնեցնել գրեթե ցանկացած պայմանավորվածություն, որը նրանք ցանկանում են, և, հետևաբար, այն ավելի ճկուն է, քան սնանկության պաշտոնական գործընթացը.
- Կոնսենսուսային վերակազմավորումը չի պահանջում ոչ դատարանի, ոչ էլ սնանկության կառավարչի անձի ներգրավումը, և, հետևաբար, կարող է լինել ավելի քիչ ծախսատար և ավելի արագ իրագործելի.
- Վերակազմավորումն ավելի քիչ հավանական է, որ առաջացնի դժվարություններ ընկերության պայմանագրերի կամ լիցենզիաների մասվ, որոնք նրան անհրաժեշտ են իր բիզնեսն իրականացնելու համար.
- Վերակազմավորումը մասնավոր պայմանավորվածություն է, որն ավելի քիչ հրապարակայնություն ունի պաշտոնական սնանկության գործընթացը. և

- Ղեկավարությունը սովորաբար նախընտրում է այնպիսի ուղի, որը շրջանցում է ընկերության տնօրենի՝ պաշտոնական անվճարունակության գործընթացի մեջ մտնելը:

265. Օրենքի ընդհանուր վերլուծությունից կարելի է բխեցնել ֆինանսական առողջացման վարույթի հետևյալ հիմնական տարրերը կամ փուլերը.
    1) ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակության և նախատեսվելիք միջոցառումների շրջանակի որոշում,
    2) ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումը, քվեարկությունը և հաստատում,
    3) ֆինանսական առողջացման ծրագրի իրագործում և վերահսկողություն դրա նկատմամբ,
    4) ֆինանսական առողջացման վարույթով պարտապանի առողջացում կամ նրա ուղղորդում դեպի լուծարման վարույթ:

266. Արձանագրված խնդիրների վերաբերյալ միջազգային և օտարերկրյա փորձի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները հանգում են հետևյալին:

267. Նախ, անդրադառնալով լուծարման և առողջացման գործընթացների հարաբերակցությանը և դրանց որպես երկու առանձին իրարից անկախ ընթացակարգեր նախատեսելու հնարավորությանը, հարկ է նշել, որ նման կառուցակարգը հիմնականում գործում է այն դեպքում, երբ խոսքը գնում է պաշտոնական սնանկության վարույթից դուրս կանխարգելիչ ֆինանսական առողջացման ընթացակարգի մասին, ինչպես օրինակ՝ Գերմանիայում, որտեղ ֆինանսական առողջացման ծրագիրը նախատեսված է ծառայելու որպես հիմնական գործիք պարտապանի պարտքերը վաղ փուլում և պաշտոնական սնանկության վարույթներից դուրս նվազեցնելու համար[32] (Համանման ընթացակարգ նախատեսված է ԵՄ Կանխարգելիչ վերակազմակերպման մասին դիրեկտիվով)[33]:

---

[32] Պարտապանը կարող է ծանուցել վերակազմակերպող դատարանին վերակազմավորման վարույթ հարուցելու իր մտադրության մասին: Տեղեկացնելու համար պարտապանը պետք է ներկայացնի վերակազմավորման ծրագրի նախագիծ (կամ եթե դա հնարավոր չէ այդ փուլում, վերակազմավորման հայեցակարգ) և այն պարտատերերի, բաժնետերերի կամ ներդրողի հետ բանակցությունների կարգավիճակի բացատրություն, որոնց վրա ծրագիրն ազդում է: Վերակազմավորման ծրագիրը պետք է հաստատվի յուրաքանչյուր գործող խմբի 75%-ի կողմից: Եթե մեկ կամ մի քանի դասերում չստացվի անհրաժեշտ մեծամասնությունը, որոշակի հանգամանքներում վերակազմավորման ծրագիրը դեռևս կարող է հաստատվել (cross-class cram-down): Վերակազմավորման ծրագրի ընթացակարգը հնարավոր է միայն պարտապանի տնօրինության կառավարման միջոցով: Վերակազմավորման դատարանը կարող է դադարեցնել պարտատերերի պահանջների կատարման և գրավի իրացման գործողությունները մինչև երեք ամիս, պայմանով, որ պարտապանը ներկայացրել է վերակազմավորման համապարփակ և համահունչ պլանավորում: Այն դեպքում, երբ վերակազմավորման ծրագիրը հաստատվել է պարտատերերի կողմից, սակայն պահանջվող դատարանի հաստատումը դեռևս ընթացքում է, վերակազմավորող դատարանը կարող է դադարեցնել պահանջի կատարման և գրավի իրացման գործողությունները մինչև ութ ամիս: Վերակազմավորման ծրագրի ընթացակարգը առևտրային կողմերին թույլ չի տալիս խզել իրենց պայմանագրերը պարտապանի հետ: Վերակազմավորման ծրագրի ընթացքը կարող է ավարտվել մի քանի ամսվա ընթացքում:

[33] Տե՛ս "Restructuring and Insolvency in Germany: Overview" (n 10):

268. Թեև այս վարույթների առանձնացումը տեսականորեն և գործնականում հնարավոր է, այնուամենայնիվ միջազգային փորձագետները ավելի նախընտրելի են համարում առավել ճկուն միասնական վարույթի ներդրումը, ինչը թույլ կտա առանց խոչընդոտների և ձգձգումների մի վարույթից անցնել մյուսի: Որպես օրինակ կարող է նշվել ԱՄՆ-ում գործող կառուցակարգը, երբ չնայած պարտապանները կարող են ուղղակիորեն դիմել լուծարման կամ ֆինանսական առողջացման վարույթ սկսելու համար, այնուամենայնիվ, օրենսդրությունը հնարավորություն է տալիս մեկ վարույթից անցնել մյուսին[34]:

269. Հետևաբար, կարևոր է, որ ֆինանսական առողջացման ռեժիմը ունենա ճկունություն, որպեսզի անհրաժեշտության դեպքում առողջացման վարույթից անցում կատարվի լուծարման վարույթի, և հակառակը, լուծարման վարույթում գտնվող պարտապանը պետք է հնարավորություն ունենա որոշակի հանգամանքներում անցնելու առողջացման վարույթի: Երկու ուղղություններով էլ նման ճկունությունը ապահովում է, որ պարտապանի կարգավիճակին առավել հարմար եղանակը հնարավոր լինի օգտագործել և խուսափել չարաշահումներից[35]:

270. Թեև լուծարման վարույթից առողջացման վարույթ անցնելու դեպքերը հազվադեպ են, այնուամենայնիվ նման կառուցակարգի նախատեսումը կարող է արդյունավետ լինել, եթե պարզ դառնա, որ կոնկրետ դեպքում ֆինանսական առողջացման վարույթն ավելի շահավետ է, քան լուծարման վարույթը, իսկ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը ավելի մեծ է: Նման հնարավորություն նախատեսված է, օրինակ, ԱՄՆ սնանկության օրենսգրքով, ըստ որի՝ պարտապանը, կառավարիչը կամ պարտատերը կարող են պահանջել նման անցումը, սակայն որոշակի պայմաններ պետք է պահպանվեն, և անցումը պետք է հաստատվի դատարանի կողմից:[36]

271. Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման առնչությամբ անհրաժեշտ է դիտարկել երկու կարևոր հարց՝ ծրագիրը ներկայացնելու համար նախընտրելի փուլը, և կողմը կամ կողմերը, որոնք կարող են ներկայացնել ծրագիր:

272. Նշված հարցերի վերաբերյալ կարող են կիրառվել մի շարք տարբեր մոտեցումներ: Ընդ որում, Օրենքում որդեգրվել է այն մոտեցումը, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներկայացվի մինչև պարտատերերի առաջին ժողովը (ծրագրի ներկայացման ժամկետը ևս 30 օրով երկարաձգելու հնարավորության նախատեսմամբ), և որպես ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու համար լիազորված սուբյեկտներ

---

[34] Տե՛ս U.S. Dep't of Just. US Trustee Programme, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.justice.gov/ust:

[35] Տե՛ս Norton Rose Fulbright Australia, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ 17 հուլիսի 2023, 25-26:

[36] Տե՛ս "11 U.S. Code § 706 - Conversion" (*LII / Legal Information Institute*), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.law.cornell.edu/uscode/text/11/706:

սահմանվել են պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, ինչպես նաև պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք:

273. Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման ժամկետը սերտորեն կապված է ֆինանսական առողջացման վարույթի նպատակի հետ: Որոշ օրենքներ, օրինակ, նախատեսում են, որ ծրագիրը պետք է բանակցվի և ներկայացվի ֆինանսական առողջացման վարույթն սկսելուց հետո, որի դեպքում հնարավորություն է ստեղծվում խորհրդակցություններ և բանակցություններ վարել ընդունելի ծրագրի տարբերակի շուրջ: Միաժամանակ պետք է դիտարկել մորատորիումի գործողության ազդեցությունը, քանի որ այն կարող է օգտագործվել պարտապանների կողմից, ովքեր մտադիր չեն ֆինանսապես առողջանալու և ձգտում են ստանալ միայն օգուտներ[37]:

274. Այնուամենայնիվ, թեև ժամկետների սահմանումը կարող է օգտակար լինել՝ ապահովելու համար, որ ֆինանսական առողջացման գործընթացն ընթանա առանց խոչընդոտների և ձգձգումների՝ վերջնաժամկետի սահմանումը կարող է չափազանց անճկուն լինել և կամայական սահմանափակումների հանգեցնել: Այդ դեպքում կարող է դիտարկվել դատարանի կողմից ժամկետի երկարաձգման հնարավորության նախատեսումը, պայմանով, որ այդ ժամկետը չի կարող անվերջ երկարաձգվել: Ընդ որում, նշված դեպքում կողմը պետք է դատարանին բավարար հիմնավորումներ ներկայացնի երկարաձգման անհրաժեշտության վերաբերյալ[38]:

275. Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի որոշումը ևս կախված է օրենքով որդեգրվող սնանկության մոդելի ընտրությունից և ֆինանսական առողջացման վարույթի բնույթից, այդ թվում՝ վարույթում կառավարչի, պարտապանի և պարտատերերի դերից: Օրինակ, մի շարք դեպքերում սնանկության վարույթի մասնակիցների համար սահմանվում է պարտականություն՝ համագործակցել, բանակցություններ վարել և ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագրի միասնական տարբերակ: Այնուամենայնիվ, որպես ընդունված գերակայող տարբերակ դիտարկվում է վարույթի բոլոր մասնակիցներին առանձին ծրագիր ներկայացնելու հնարավորության ընձեռնումը՝ միաժամանակ հստակ սահմանելով գործընթացի ընթացակարգերը,

[37] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 7:
[38] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 15:

սահմանափակումները, ժամկետներին վերաբերող և այլ ընթացակարգային դրույթները[39]:

276. Օրինակ, ԱՄՆ-ում ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման առավել երկար ժամկետներ են նախատեսված ի համեմատ Հայաստանում գործող ժամկետների: Մասնավորապես, սնանկության պաշտոնական հայտարարությունից հետո առաջին 120 օրվա ընթացքում միայն պարտապանը կարող է առաջարկել վերակառուցման ծրագիր: Որոշակի պայմանների բավարարման դեպքում կառավարիչը, պարտատերերի կոմիտեն, բաժնային արժեթղթերի սեփականատերերի կոմիտեն, պարտատերը, բաժնային արժեթղթերի սեփականատերը կամ հավատարմագրային կառավարիչը նույնպես կարող են ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր:

277. Միջազգային լավագույն փորձից բխում է, որ օրենքը պետք է ունենա ֆինանսական առողջացման ծրագրերի բովանդակության վերաբերյալ որոշ պահանջներ: Վարույթին առնչվող մի շարք էական հարցեր չպետք է թողնվեն հայեցողական որոշումների կայացմանը, ինչպես օրինակ ծրագրի պայմանների ցանկացած էական խախտման դեպքում իրականացվելիք գործողությունների շրջանակը, ծրագրի կատարման և պարտապանի ընթացիկ գործունեության համար պատասխանատու անձինք:

278. Ծրագրի բովանդակությունը կախված է նաև այն հարցից, թե պարտատերերի ինչ խումբ են մասնակցում քննարկմանն ու հաստատմանը, այսինքն՝ արդյոք ծրագիրը ազդելու է նաև ապահովված պարտատերերի վրա, կամ արդյոք կա դատարանի կողմից ծրագրի հաստատման պահանջ: Շատ օրենքներ անդրադառնում են միայն ծրագրի ընդհանուր չափանիշներին, ինչպես ծրագրին ներկայացվող պահանջները: Մի շարք դեպքերում էլ օրենքով հստակ սահմանվում են մանրամասն պահանջները:

279. Որպես առավել նախընտրելի տարբերակ սահմանվում է օրենքում ծրագրի նվազագույն բովանդակության նախատեսումը՝ կենտրոնանալով ծրագրի հիմնական նպատակների և իրականացման ընթացակարգերի վրա[40]:

280. Մեկ այլ հարց է ֆինանսական առողջացման ծրագրի քննարկմանն ու ընդունմանը պարտատերերի մասնակցությունը և կազմը: Որպեսզի առողջացման ծրագիրը իրականացվի, այն պետք է քննարկվի և ընդունվի պարտատերերի կողմից, որոնց իրավունքներին և շահերին այն կարող է անդրադառնալ:

281. Ընդ որում, նախքան ծրագիրը պարտատերերին ներկայացնելը, եթե ընտրվում է սնանկության կառավարչի կողմից վերահսկողությամբ առողջացման մոդելը, սնանկության կառավարչից պահանջվում է ձեռնամուխ լինել ծրագրի քննարկմանը, պարտատերերի և շահերի բախման հնարավորության

[39] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 8:
[40] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 20:

բացահայտմանը, որպեսզի որոշվի՝ արդյոք այն պետք է առաջարկվի պարտատերերին: Դրանով պայմանավորված՝ սնանկության կառավարիչը պարտավոր է ողջամտորեն ուսումնասիրել առաջարկվող ծրագիրը, որպեսզի կարծիք ձևավորի հետևյալի վերաբերյալ.

- հավանականությունը, որ ծրագիրը կարող է իրականացվել.
- պարտատերերը ծրագրի շրջանակներում առավել լավ արդյունք կստանան, քան լուծարման դեպքում:

282. Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման վերաբերյալ սնանկության մասին օրենքներում առկա են տարբեր մոտեցումներ: Կոնկրետ մոտեցման ընտրության համար անհրաժեշտ է դիտարկել մի շարք տարբեր հարցեր, ինչպես օրինակ, պարտատերերի շրջանակը, ովքեր կարող են քվեարկել, քվեարկությանը չմասնակցող պարտատերերի նկատմամբ վերաբերմունքը և այլն: Տվյալ դեպքում առավել առանցքային հարցերից է ապահովված պարտատերերի քվեարկությանը մասնակցության հնարավորության նախատեսումը: Ինչպիսի մոտեցում էլ կորդեգրվի նշված հարցի կապակցությամբ, պետք է հիմք ընդունվի այն առանցքային սկզբունքը, որ որպես ընդհանուր կանոն ապահովված պարտատերերը պետք է որոշեն՝ արդյոք առաջարկված ծրագիրը իրատեսական է և կհանգեցնի նրանց պահանջների առավել բավարարման, քան նրանք այլ կերպ կստանային պարտապանի լուծարումից: Այս ընդհանուր կանոնից կարող են սահմանվել որոշակի բացառություններ: Ցանկացած դեպքում անհրաժեշտ է ապահովել, որ ընդունվող կամ հաստատվող ծրագրով համապատասխան պաշտպանություն ապահովվի և բացասական ազդեցություն չնախատեսվի այն պարտատերերի իրավունքների համար, ովքեր դեմ են քվեարկել կամ չեն քվեարկել ֆինանսական առողջացման ծրագրին:

283. Ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման շրջանակներում ապահովված պարտատերերի շահերի պաշտպանությունն առաջնահերթ նշանակություն ունի, քանի որ հակառակ դեպքում այն բացասաբար կանդրադառնա բանկերի և այլ վարկատուների՝ գումար տրամադրելու պատրաստակամության վրա:

284. Ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելիս դատարանը պետք է դիտարկի արդյոք ապահոված պարտատիրոջ շահերը համարժեք պաշտպանված են: Համարժեք պաշտպանությունը նշանակում է, որ չնայած ծրագիրը տեսականորեն ազդում է ապահովված պարտատիրոջ ապահովված իրավունքների վրա, այնուամենայնիվ ապահովված պարտատերը գործնականում առավել վատ կարգավիճակում չի հայտնվի ծրագրի հաստատման դեպքում (օրինակ՝ ծրագրի շրջանակներում ապահովված պարտատիրոջ օգուտները հավասար են կամ գերազանցում են ապահովված մասի արժեքը): Այս դեպքում ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է ազդել ապահովված պարտատիրոջ վրա, եթե վերջինս կողմ է քվեարկել կամ դատարանի որոշմամբ՝

համարժեք պաշտպանության նախատեսման դեպքում: Ըստ այդմ, ապահովված պարտատիրոջ համաձայնության պահանջ չպետք է լինի ծրագիրը արդյունավետ դառնալու համար և առողջացման ծրագիրը կարող է հաստատվել միայն դատարանի կողմից: Ապահովված պարտատիրոջ համար բավարար պաշտպանվածություն նախատեսելը թույլ կտա ծրագրերն իրականացնել նույնիսկ առանց ապահովված պարտատիրոջ ակտիվ աջակցության:

285. Օրենքը նախատեսում է ապահովված պարտատերերի համարժեք պաշտպանության ինստիտուտ, ըստ որի՝ այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված է ապահովված պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի օգտագործումը, դատարանը կայացնում է վճիռ պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին, եթե ապահովված պարտատիրոջը տրամադրվել է համարժեք պաշտպանություն, որի վերաբերյալ կնքվել է պայմանագիր: Այնուամենայնիվ, գործող կարգավորումները վերանայման կարիք ունեն՝ համապատասխան որդեգրվող մոտեցման, որը կներառի լրացուցիչ ուղեցույց այն մասին, թե որն է լինելու «համարժեք պաշտպանությունը»: Ավելին, ԱՄՀ-ն առաջարկել է, որ «համարժեք պաշտպանությունը» պետք է ներառի երաշխավորված պարտատիրոջը փոխհատուցում իր երաշխիքի կիրարկման ցանկացած ուշացման, ինչպես նաև իրավունքների ցանկացած կորստի համար:

286. Անհրաժեշտ է հավասարակշռված մոտեցում գտնել ապահովված պարտատերերի կողմից ֆինանասական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցության և ֆինանսական առողջացման գործընթացի արդյունավետության ապահովման միջև, այն դեպքում, երբ ապահովված պարտատերը հնարավորություն է ստանում իրացնել ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս՝ արդյունքում անհնարին դարձնելով պարտապանի ֆինանսական առողջացումը:

287. Անդրադառնալով ձեռնպահ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած պարտատերին՝ հարկ է նշել, որ նրանց կողմից ձեռնպահ քվեարկելը կամ քվեարկությանը չմասնակցելը նախընտրելի չէ դիտարկել որպես ծրագրին դեմ քվեարկություն, քանի որ նման մոտեցումը կարող է բացասաբար անդրադառնալ ծրագրի ընդունման և այն պարտատերերի շահերի վրա, ովքեր մասնակցել և քվեարկել ծրագրի օգտին: Որպես այլընտրանք՝ շատ պետություններ որդեգրում են այն մոտեցումը, որ ծրագիրը ընդունվում է քվեարկությանը փաստացի մասնակցող պարտատերերի ձայների հիման վրա՝ այն կանխավարկածի հաշվառմամբ, որ բացակա կամ ձեռնպահ քվեարկողները ավելի քիչ հետաքրքրված են վարույթի ընթացքի նկատմամբ: Այս դեպքում կարևոր է ապահովել բոլոր պարտատերերին ծանուցումների իրականացումը, ինչպես նաև կիրառելով այնպիսի մեխանիզմներ, որոնք կհեշտացնեն և կխրախուսեն

քվեարկությանը մասնակցությունը, ինչպես օրինակ վստահված անձանց մասնակցության նախատեսումը և էլեկտրոնային միջոցների օգտագործումը[41]:

288. Այս տեսանկյունից առաջարկվում է դիտարկվել հետևյալ մոտեցումները: Երբ ծրագիրը շրջանառվում է պարտատերերի շրջանակում և պարտատերերի ժողովը հաստատում է այն պարտատերերի «անհրաժեշտ մեծամասնության» կողմից, ապա ծրագիրը համապատասխան պարտավորություններ է առաջացնում պարտապանի, պարտատերերի և ցանկացած այլ շահագրգիռ կողմի համար, բացառությամբ ապահովված պարտատերերի: Ընդ որում, անհրաժեշտ կամ որակյալ մեծամասնությունը տվյալ դեպքում դրսևորվում է թե պահանջների, և թե պարտատերերի ձայների կեսից ավելիի եղանակով: Նշված մոտեցումը կխրախուսի բոլոր պարտատերերի գործուն մասնակցությանը գործընթացին:

289. Մյուս մոտեցմամբ առաջարկվում է դիտարկել պահանջները որոշակի չափանիշների հիման վրա դասերի բաժանելու և առողջացման ծրագիրը հաստատելուց այդ դասերի քվեարկությունը հաշվի առնելու հնարավորությունը: Պահանջների դասակարգման և քվեարկության մեխանիզմների ներդրման մասով ուշագրավ է ԱՄՆ-ի փորձը, որտեղ որոշակի դասում կարող են խմբավորվել միայն այն պահանջները, որոնք էապես նման են այդ դասի այլ պահանջներին:[42]

290. Առանց որևէ դասի համաձայնության նույնպես դատարանը կարող է հաստատել առողջացման ծրագիրը «cram-down» գործընթացի միջոցով[43]: Այս կառուցակարգը կիրառվում է ԱՄՆ-ում, ինչպես նաև վերջերս ներդրվել է Մեծ Բրիտանիայի և Սինգապուրի օրենսդրությամբ: «Cram-down»[44] կառուցակարգի դեպքում, եթե պարտատերերի մի դաս ընդունում է ֆինանսական առողջացման ծրագիրը, դատարանը ծրագիրն առաջարկողի պահանջով կարող է հաստատել այն, նույնիսկ եթե մյուս դասերը մերժեն՝ ըստ էության պարտադրելով այն այդ պարտատերերին՝ պայմանով, որ.

1) պարտատերերի առնվազն մեկ դասն ընդունել է ծրագիրը,
2) ծրագիրը խտրականություն չի դնում և արդար է ծրագիրը չընդունած յուրաքանչյուր դասի համար[45]:

---

[41] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 32:

[42] Տե՛ս 11 U.S. Code § 1122 - Classification of Claims or Interests' (*LII / Legal Information Institute*) հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.law.cornell.edu/uscode/text/11/1122:

[43] Տե՛ս '11 U.S. Code § 1129 - Confirmation of Plan' (*LII / Legal Information Institute*), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.law.cornell.edu/uscode/text/11/1129:

[44] Սա հազվադեպ կիրառվող իրավական մեխանիզմ է: Օրինակ՝ Միացյալ Նահանգներում 10,161 վերակազմակերպման գործից միայն 17-ը (0,16%) գործի գծով cram-down-ի կիրառմանն են դիմել, որի արդյունքում դատարանները կիրառել են այս մեխանիզմը միայն հինգ գործերով (0,04%) (Տե՛ս Simin Gao, 'Cramdown, Reorganization Bargaining and Inefficient Markets: The Cases of the United States and China' (2021) 30 International Insolvency Review S5):

[45] Տե՛ս '11 U.S. Code § 1129 - Confirmation of Plan' (n 19):

291. Ապահովված պարտատիրոջ համար այս կանոնը գործում է պայմանով, որ պարտատերը պահպանում է իր գրավը և ստանում է իր ապահովված պահանջին համարժեք գումար: Այսինքն՝ ապահովված պարտատերերն իրավունք ունեն մերժելու ֆինանսական առողջացման ծրագիրը, սակայն դա ինքնաբերաբար չի խանգարում դատական կարգով ծրագրի հաստատմանը[46]:

292. Անհրաժեշտ է դիտարկել նաև պետության, որպես պարտատեր ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու իրավունքի նախատեսման հնարավորությունը: Կառավարությունը, ինչպես ցանկացած այլ պարտատեր կամ բաժնային արժեթղթերի սեփականատեր, պետք է իրավունք ունենա գնահատելու առաջարկվող ծրագիրը և որոշելու, թե արդյոք այն համապատասխանում է իր շահերին և իրավական պահանջներին: Մի շարք երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն,[47] Գերմանիան[48], Կանադան[49] կառավարությունները հանդես են գալիս որպես պարտատեր՝ ծրագրի օգտին քվեարկելու իրավունքով: ԱՄՆ-ում, եթե կառավարությունը սնանկության գործով պարտատեր է կամ ունի բաժնային արժեթուղթ, ապա Գանձապետարանի քարտուղարին իրավունք է տրվում ընդունել կամ մերժել ֆինանսական առողջացման ծրագիրը ԱՄՆ կառավարության անունից: Այս դրույթը սահմանում է կառավարության բացառիկ դերը նման վարույթներում, որտեղ նա կարող է լինել սնանկության գործի ելքով էական շահեր ունեցող շահագրգիռ կողմ: Ծրագիրն ընդունելու կամ մերժելու Գանձապետարանի քարտուղարի որոշումը հիմնված է մի շարք գործոնների վրա, ներառյալ ծրագրի հնարավոր ազդեցությունը կառավարության և ավելի լայն հանրային շահերի վրա[50]:

293. Այս կապակցությամբ, ոչ բոլոր պետություններն են պահանջում դատարանից հաստատել պարտատերերի ժողովի կողմից ընդունված/հաստատված ծրագիրը, քանի որ պարտատերերի անհրաժեշտ մեծամասնության կողմից ծրագրի ընդունումը կամ հաստատումն այն ամենն է, ինչ պահանջվում է ծրագրի ուժի մեջ մտնելու համար, և դատարանի կրկնակի հաստատման պահանջը բացակայում է օրենքում: Այնուամենայնիվ, դատարանի դերը ամբողջությամբ չի վերանում, քանի որ դատարանը դեռևս դերակատարություն կունենա ծրագրի վերանայման հարցում, կամ երբ պարտատերերի խմբի կամ կառավարչի կամ պարտապանի կողմից կներկայացվի բողոք ընդունված ծրագրի վերաբերյալ[51]: Միաժամանակ

---

[46] Տե՛ս ibid b)(2)(A).

[47] Տե՛ս նույն տեղում:

[48] Տե՛ս 'Insolvency Code (Insolvenzordnung – InsO)' arts 217–269 հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_inso/englisch_inso.html#p0103:

[49] Տե՛ս Legislative Services Branch, 'Consolidated Federal Laws of Canada, Bankruptcy and Insolvency Act' (27 April 2023) հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/b-3/fulltext.html:

[50] Տե՛ս '11 U.S. Code § 1126 - Acceptance of Plan' (n 21):

[51] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 56:

պետք է նշել, որ մի շարք օրենքներ էլ, ինչպես ՀՀ-ում գործող Օրենքը, նախատեսում են դատարանի կողմից ծրագրի պարտադիր հաստատման պահանջ, որպեսզի ծրագիրն ուժի մեջ մտնի և պարտադիր դառնա կողմերի համար:

294. Օրենքում պետք է ապահովվի և պաշտպանվի կողմերի բողոքարկման հնարավորությունը: Ցանկացած պարտատեր կամ այլ շահագրգիռ կողմ, որը տուժել է ֆինանսական առողջացման գործընթացի ընթացքում կայացված որոշումներից, պետք է իրավունք ունենա բողոքարկելու այդ որոշումներն ու գործողությունները վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատարանին՝ պարզելու, թե արդյոք գործընթացը ընթանում է իրավական կարգավորումներին համապատասխան:

295. Որոշ օրենքներ նախատեսում են, որ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատվելուց հետո արգելվում է կողմերին դիմել դատարան՝ պարտապանի լուծարման պահանջով (բացառությամբ այն դեպքերի, երբ ծրագիրը վաղաժամկետ դադարեցնելու պահանջ է ներկայացվում), սկսել կամ շարունակել պարտապանի դեմ դատական կամ կատարողական վարույթ՝ առանց դատարանի հաստատման: Որոշ օրենքներ նախատեսում են նաև, որ երբ ծրագիրը հաստատվում է պարտատերերի կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դատարանի կողմից, պարտապանի սնանկության գույքը վերադառնում է վերջինիս հսկողությանը՝ ծրագրի կատարումն պատշաճ ապահովելու համար (եթե ծրագրով այլ բան նախատեսված չէ)[52]:

296. Հարկ է նշել, որ վերոնշյալ դեպքերում, ընդհանուր առմամբ, վերահսկողության չորս այլընտրանքային մոտեցում կա: Դրանք են.

1) **Պարտապանի տիրապետման վարույթ,** որտեղ ընկերության կառավարման մարմինները շարունակում են իրականացնել բիզնեսի կառավարումը մինչև առողջացման ծրագրի կազմումը, որը պետք է ներկայացվի պարտատերերին: Ծրագրի մշակման ընթացքում պարտապանը կարող է անկախ վերահսկողության օբյեկտ լինել կամ չլինել: Ճապոնիայում քաղաքացիական առողջացման ռեժիմը այս մոտեցումն է որդեգրել, որտեղ շատ դեպքերում պարտապանը դատարանի կամ նրա կողմից նշանակված կառավարչի վերահսկողության ներքո է.

2) **Սնանկության գործով կառավարչի տիրապետման վարույթ,** երբ երրորդ կողմը՝ կառավարիչը, նշանակվում է ընկերությունը ղեկավարելու, առաջարկություններ ներկայացնելու և ֆինանսական առողջացումը հեշտացնելու համար: Առողջացման այս ձևը ընկած է ընդհանուր իրավունքի երկրների վարչական ռեժիմների հիմքում,

[52] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 64

ինչպիսիք են Ավստրալիան և Միացյալ Թագավորությունը, ինչպես նաև դատական կառավարման վարույթը Սինգապուրում և Մալազիայում: Ընկերության վերահսկողությունից տնօրեններին հեռացնելու դեպքում, մշտական դատական վերահսկողության կարիքն առավել քիչ է զգացվում: Այնուամենայնիվ, դատարանը որոշակի դերակատարում ունի մի շարք հարցերի և վեճերի լուծման դեպքերում.

3) **Պարտատիրոջ կողմից վարույթի վարումը,** երբ պարտատերերը (հիմնականում բանկերը կամ այլ վարկատուները) ֆինանսական առողջացման գործընթացն իրականացնում են կամ ընկերության կողմից նշանակված երրորդ անձ կառավարչի օգնությամբ, կամ իր գործունեությունը շարունակող ղեկավարության միջոցով: Առողջացման այս ձևը ընկած է Հարավային Կորեայի Ֆինանսական առողջացումը խթանելու մասին ակտի հիմքում, և վերջերս ներառվել է Հնդկաստանի անվճարունակության և սնանկության մասին օրենքներում.

4) **Վերահսկողությունը սնանկության գործով կառավարչի կողմից,** երբ ընկերության ղեկավարությունը շարունակում է գործել և պատասխանատու է վարույթի ընթացքում բիզնեսի համար, սակայն ենթակա է սնանկության գործով կառավարչի հսկողությանը և կորպորատիվ որոշ գործողություններ կատարելու համար պահանջվում է վերջինիս հավանությունը:

297. Նշված գործընթացի ամբողջականության նկատմամբ վստահությունը կարող է ավելի մեծ լինել, երբ անկախ սնանկության կառավարիչը, ում նկատմամբ կիրառվում է վերահսկողություն (ներառյալ կարգապահական խախտումները), վերահսկում է առողջացման վարույթը: Վերահսկողության միջավայրը կտա նաև հնարավորություն ապահովելու, որ վերջինս ունենա անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ՝ գործընթացին բնորոշ ընթացակարգերը պատշաճ իրականացնելու համար: Վերը նշված տարբերակների միջև ընտրությունը պետք է դիտարկվի նաև ռազմավարության հաջորդ ընտրության համատեքստում, այն է՝ դատարանի ներգրավվածությունն առողջացման վարույթում: Որքան քիչ է դատարանի ներգրավվածությունը, այնքան մեծ է փորձառու (և վերահսկվող) սնանկության կառավարչի դերը՝ ձեռնարկության գործունեության վերահսկողության կամ ազդեցության անհրաժեշտության տեսանկյունից՝ ապահովելու համար սնանկության վարույթի արդյունավետ իրականացումը և պարտապանի կողմից չարաշահումների բացառումը:

298. ԱՄՀ կողմից առաջարկվող նախընտրելի տարբերակն է պարտապանի կողմից ընկերության կառավարումը ամենօրյա հիմունքներով սահմանելը անկախ, դատարանի կողմից նշանակված կառավարչի սերտ վերահսկողության ներքո: Միաժամանակ, դատարանը պետք է իրավասու լինի ամբողջությամբ հեռացնել

պարտապանի ղեկավարությանը, երբ առկա են ակտիվների վատ կառավարման կամ յուրացման ապացույցներ[53]:

299. Ըստ էության, այս գործընթացում սնանկության գործով կառավարիչների դերը հանգում է օրենքի արդյունավետ և անաչառ կիրառումը ապահովելուն: Նրանք պարտավոր են հոգ տանել բոլոր շահագրգիռ կողմերի նկատմամբ և պետք է անձամբ պատասխանատվություն իրենց պարտականությունները չկատարելու համար[54]: Այն դեպքում, երբ ընտրվում է կառավարչի կողմից պարտապանի վերահսկողության մոտեցումը, ապա կառավարիչը պետք է հետևի ծրագրի իրականացման ընթացքին, պարտապանի գործողություններին և անհրաժեշտության դեպքում տրամադրի համապատասխան խորհրդատվություն, իսկ էական խախտումներ հայտնաբերելու դեպքում ծրագիրը դադարեցնելու միջնորդությամբ դիմի դատարան:

300. Ինչ վերաբերում է ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում իրականացվող գործողություններին, ապա ինչպես ծրագրի բովանդակության դեպքում, այս դեպքում էլ նախընտրելի է օրենքով նախատեսել ընդհանուր բնույթի կարգավորումներ՝ հայեցողական որոշումների կայացումից խուսափելու նպատակող, իսկ ծրագրով սահմանել առավել մանրամասն իրականացման ենթակա միջոցառումները:

301. Կարևոր է նաև ֆինանսական առողջացման ոչ ֆորմալ մեխանիզմների նախատեսումը օրենսդրությամբ: Պարտապանի և վերջինիս պարտատերերի միջև բանակցությունները արդյունավետ միջոց են պարտապանի ֆինանսական առողջացումը ապահովելու և սնանկության վարույթից խուսափելու համար: Այդ պատճառով պարտապանի և պարտատերերի միջև փոխզիջման պարզ կառուցակարգերի նախատեսումը կարող է հանգեցնել պարտապանի վճարունակության վերականգնմանը՝ առանց սնանկության պաշտոնական գործընթացի անհրաժեշտության: Ըստ այդմ, ֆինանսական առողջացման ոչ ֆորմալ մեխանիզմների դերը կարելի է բնորոշել որպես համակարգված բանակցությունների միջոցով ծախսերի նվազեցում և կենսունակ կազմակերպությունների լուծարումից խուսափելուն նպաստում:

302. **Ամփոփելով ողջ վերոգրյալը, առաջարկվում է.**

   1) **բարելավել և լավարկել ֆինանսական առողջացման գործող մոդելը՝ պահպանելով և զարգացնելով պարտապանի և բոլոր պարտատերերի շահերի առավելագույն հավասարակշռման սկզբունքը, ինչպես նաև դիտարկել պարտապանի դերը**

[53] Տե՛ս Orderly & Effective Insolvency Procedures, Key Issues, Legal Department, International Monetary Fund, 1999, Debtor Control:

[54] Տե՛ս նույն տեղում. , The Liquidator and the Administrator: Liability:

ֆինանսական առողջացման գործընթացում բարձրացնելու հնարավորությունը.

2) սահմանել ակտիվների, պարտավորությունների, բիզնեսի և գործունեության հեռանկարների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը պարտատերերին և կառավարչին որոշակի պարբերականությամբ հասանելի դարձնելու պարտապանի պարտականությունը՝ վերջինիսֆինանսական դրությունը պատշաճ գնահատելու նպատակով.

3) նախատեսել ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակությանը և իրականացման ենթակա միջոցառումների ընդհանուր չափանիշներն ու պահանջները՝ բացառելով կամայական որոշումների կամ գործողությունների իրականացման հնարավորությունը,

4) վերանայել ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման ժամանակահատվածը և այդ ժամանակահատվածում ծրագրի ներկայացման հերթականությունն ըստ սուբյեկտների.

5) նախատեսել ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկության հնարավորություն բոլոր պարտատերերի, այդ թվում՝ ապահովված պարտատերերի համար.

6) սահմանել ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկության որակյալ կամ անհրաժեշտ մեծամասնությամբ ընդունվելու համար մեխանիզմներ.

7) բացառիկ դեպքերում սահմանել պարտատերերի կամքին հակառակ ֆինանսական առողջացման հաստատման հնարավորություն (cram-dawn).

8) նախատեսել գրավի առարկայի արտադատական իրացման մորատորիում և համարժեք պաշտպանության երաշխիքով գրավառուի կամքին հակառակ գույքի օգտագործման հնարավորություն, եթե առանց դրա հնարավոր չէ ֆինանսական առողջացումը.

9) ֆինանսական առողջացման գրավչությունը բարձրացնելու նպատակով ընդլայնել սնանկության կառավարչի խրախուսման միջոցները.

10) դիտարկել նաև սնանկության վարույթից դուրս ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման հնարավորությունը, ներառելով դրա ինչպես կամավոր, այնպես պարտադիր՝cram down–իմիջոցովհաստատման հնարավորությունները:

5) Մորատորիումը

303. Պարտապանի համար բարենպաստ ընթացակարգերի շրջանակում է ներառվում պարտապանի դեմ վարույթների կասեցումը (դադարեցումը) կամ մորատորիումը:Սնանկության մասին շատ օրենքներ ներառում են սնանկության գույքի արժեքը պաշտպանելու վերոնշյալ մեխանիզմը, որը ոչ միայն խոչընդոտում է պարտատերերին լուծարման կամ ֆինանսական առողջացման վարույթի որոշ կամ ամբողջ ժամանակահատվածում իրավական միջոցների գործադրմամբ իրենց իրավունքները իրացնելու կամ պարտապանի գույքի հնարավոր նվազեցում թույլ տալու ուղղությամբ գործողություններ սկսելուն, այլ նաև կասեցնում է արդեն իսկ իրականացվող գործողությունները պարտապանի դեմ:

304. Ընդ որում, լուծարման և առողջացման վարույթների ընթացքում մորատորիումի գործողությունը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ և նշանակություն՝ պայմանավորված հետապնդվող նպատակներից: Եթե լուծարման վարույթի նպատակն է պարտապանի գույքի իրացման միջոցով պարտատերերի պահանջների հնարավորինս արագ բավարարումը, որի դեպքում մորատորիումը կարող է ապահովել լուծարման վարույթի արդար և կանոնավոր կառավարումը, լուծարվող ակտիվների արժեքը առավելագույնի հասցնելը, ապա ֆինանսական առողջացման վարույթում մորատորիումի կիրառումը հեշտացնում է բիզնեսի շարունակական գործունեությունը և հնարավորություն է տալիս պարտապանին պատշաճ կազմակերպել իր գործերը: Երկու դեպքում էլ մորատորիումի կիրառումը թույլ է տալիս նաև սնանկության կառավարչին գնահատել պարտապանի դրությունը՝ մեծացնելով պարտապանի և պարտատերերի շահերին չհակասող առավելագույն արդյունքի հասնելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ֆինանսական առողջացման վարույթի նպատակը, այդ փուլում մորատորիումի ազդեցությունն ավելի մեծ է և, հետևաբար, ավելի կարևոր, քան լուծարման ժամանակ և կարող է կարևոր խթան հանդիսանալ պարտապաններին խրախուսելու ֆինանսական առողջացման վարույթ սկսելու համար[55]:

305. Որոշ պետություններ որդեգրում են այն մոտեցումը, որ մորատորիումի արդյունավետությունն ապահովելու համար այն պետք է լինի շատ լայն՝ կիրառվելով պարտապանի և նրա ակտիվների դեմ ուղղված բոլոր միջոցառումների և վարույթների նկատմամբ՝ լինեն վարչական, դատական կամ արտադատական, ինչպես նաև զսպելով պարտապանին որոշակի գործողություններ ձեռնարկել իր ակտիվների, չապահովված և ապահովված

[55]Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություններ 27-28:

պարտատերերին՝ իրենց իրավունքների իրականացումից, ինչպես նաև պետության կողմից առաջնահերթ իրավունքների իրականացումից[56]:

306. Սնանկության մասին այլ օրենքներ թույլ են տալիս սկսել կամ շարունակել դատական վարույթը (առանց դատարանի հատուկ թույլտվության պահանջի), սակայն մորատորիումի կիրառումը խոչընդոտում է դատական ակտերից բխող ցանկացած որոշման կատարումը: Սնանկության մասին որոշ օրենքներ սահմանափակում են իրականացվող գործողությունների շրջանակը, և նախատեսում, որ կարող են սկսվել կամ շարունակվել միայն կոնկրետ գործողություններ, ինչպես օրինակ, աշխատողի հայցերը պարտապանի դեմ՝ սակայն կրկին վարույթից բխող ցանկացած կատարողական գործողության դադարեցմամբ[57]:

307. ԱՄՀ-ն նշում է, որ դատավարության ընթացքում բոլոր ակտիվները, որոնց նկատմամբ լուծարային կառավարիչը հսկողություն է իրականացնում, պետք է պաշտպանված լինեն չապահովված պարտատերերի՝ գույքի/ակտիվների դեմ գործողությունների իրականացումից: Թեև մորատորիումի շրջանակը կարող է տարբեր լինել ըստ երկրների օրենսդրությունների, այն պետք է նվազագույնը բացառի չապահովված պարտատերերի կողմից ակտիվներ բռնագանձելը, վաճառելը կամ տիրապետելը որպես իրենց պահանջների կատարման միջոց, կամ պարտավորությունները մարելու նպատակով դատական վարույթ հարուցելը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախընտրելի է ապահովված պարտատերերի համար մորատորիումի գործողությունը տարածել սահմանափակ ժամկետով, առաջարկվում է հատուկ անդրադարձ կատարել և կարգավորել ապահովված պարտատերերի նկատմամբ կիրառվող սահմանափակումների շրջանակը[58]:

308. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ևս սահմանում է պարտապանի գույքի կազմի նվազեցումը բացառող ինստիտուտներ, որոնցից է մորատորիումը կամ պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը, որը կիրառվում է օրենքի ուժով: Օրենքի համաձայն՝ մորատորիումի գործողությունը դրսևորվում է երկու եղանակով և փուլերով՝ մինչև սնանկ ճանաչելու մասին վճռի կայացումը և դրանից հետո, ինչով էլ պայմանավորված տարբերվում են գործող սահմանափակումները: Միաժամանակ, օրենսդիրը, այլ գերակա շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով, սահմանել է մորատորիումի գործողությունից բացառության դեպքեր, ինչպես նաև պարտապանի, պարտատիրոջ կամ սնանկության կառավարչի կողմից ներկայացված դիմումի

[56]Տ՛ես նույն տեղում, պարբերություն 30:
[57]Տե՛ս նույն տեղում, պարբերություն 34:
[58] Տե՛ս Orderly & Effective Insolvency Procedures, Key Issues, Legal Department, International Monetary Fund, 1999, Consequences of Commencement: Establishing and Protecting the Estate - Protecting the Estate

հիման վրա դատարանի որոշմամբ մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրման հնարավորությունը: Կարևոր է ընդգծել նաև, որ մորատորիումի գործողությունը շարունակվում է մինչև տվյալ սնանկության գործի ավարտը:

309. Այնուամենայնիվ, գործող իրավակարգավորումները կիրառման ընթացքում որոշակի խնդիրներ են ի հայտ բերել, ինչպես օրինակ, մորատորիումի գործողությունը առանց ժամկետային սահմանափակման, գործողությունից սահմանվող բացառությունների շրջանակը: Հնարավոր լուծումների տարբերակների բացահայտման համար կարևոր է միջազգային ու օտարերկրյա փորձի ուսումնասիրությունը:

310. Նախ հարկ է անդրադառնալ այն հարցին, թե ինչ եղանակով պետք է կիրառվի մորատորիումը՝ վարույթի հարուցման փաստով պայմանավորված ավտոմատ՝ օրենքի ուժով, թե հայեցողական կամ թույլտվությունների մեխանիզմի միջոցով՝ դատարան կամ սնանկության կառավարիչ: ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցում արձանագրվում է, որ այս հարցի վերաբերյալ որոշման վրա կարող են ազդել մի շարք էական հանգամանքներ, ինչպիսիք են տեղական մշակույթը և սովորույթները, դատական համակարգի մատչելիությունը և այլն: Մորատորումի հայեցողական հիմունքներով կիրառումը կարող է թույլ տալ, որ այն հարմարեցվի կոնկրետ գործի կարիքներին և խուսափել անհարկի դիմումների ներկայացումից ու ապահովված պարտատերերի կողմից անհարկի միջամտությունից: Այս մոտեցումը, սակայն, կարող է հանգեցնել անհարկի ձգձգումների՝ մինչև դատարանի կողմից համապատասխան որոշման կայացումը, ինչը կարող է վատթարացնել պարտապանի գույքի դրությունն ու նվազեցնել արժեքը: Բացի այդ, այս մոտեցումը չի ստեղծում կանխատեսելի իրավիճակ այն պարտատերերի և երրորդ անձանց համար, որոնց նկատմամբ ի վերջո կարող է կիրառվել մորատորիումը[59]:

311. Այլընտրանքային մոտեցումը, որը նվազագույնի է հասցնում մորատորումի կիրառման մեկնարկի ուշացումները, օգնում է առավելագույնի հասցնել ակտիվների արժեքը և երաշխավորում է սնանկության վարույթի կանոնակարգվածությունը, թափանցիկությունն ու կանխատեսելիությունը: Այն կարող է նախատեսել, որ որոշակի գործողությունների համար մորատորիումի կիրառման ավտոմատ մեկնարկի հիմք է սնանկության վարույթի հարուցումը, այսինքն՝ գործում է օրենքի ուժով, միաժամանակ նախատեսել այլ

[59] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 41:

գործողությունների համար մորատորիումի կիրառման հնարավորություն դատարանի որոշումների միջոցով[60]:

312. Հաջորդ հարցի վերաբերյալ, թե ինչ ժամկետով պետք է կիրառվի մորատորիումը ֆինանսական առողջացման կամ լուծարման վարույթների ընթացքում, հիմնականում առկա է երկու մոտեցում: Առաջինի համաձայն՝ մորատորիումը կիրառվում է վարույթ սկսելու մասին դիմումը ներկայացնելու պահից, իսկ երկրորդի դեպքում՝ վարույթն հարուցելու պահից՝ միաժամանակ նախատեսելով ժամանակավոր միջոցներ՝ դիմումից մինչև հարուցում ընկած ժամանակահատվածը ևս ընդգրկելու համար: Ցանկացած տարբերակի ընտրության դեպքում կարևոր է, որ օրենքը անդրադառնա այն ճշգրիտ ժամանակի հարցին, երբ մորատորիումը կսկսի գործել և դրա վերաբերյալ պարունակի հստակ կանոններ[61]:

313. Չապահովված պարտատերերի ներգրավվածությամբ լուծարման վարույթի դեպքում մորատորիումը սովորաբար կիրառվում է մինչև ակտիվների լուծարման և վարույթի ավարտը, այնինչ ֆինանսական առողջացման դեպքում վարույթի տևողության նախընտրելի ժամկետի վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Որոշ երկրների օրենքներ նախատեսում են, որ մորատորիումի գործողությունը դադարում է, երբ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատվում և սկսում է գործել, իսկ այլ դեպքերում՝ մորատորիումը կիրառվում է մինչև ֆինանսական առողջացման ծրագրի ամբողջական իրականացումը: Միաժամանակ նշվում է, որ նշված երկրորդ տարբերակի կիրառումը կարող է անարդյունավետ լինել այն հիմքով, որ չապահովված պարտատերերի նկատմամբ պարտավորությունները պետք է կատարվեն հաստատված ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում[62]:

314. Ինչ վերաբերում է ապահովված պարտատերերին, ապա նշվում է, որ նախընտրելի է ապահովված պարտատերերի դեպքում սահմանափակել մորատորիումի գործողության ժամկետը, հատկապես ֆինանսական առողջացման վարույթի դեպքում: Սա հնարավորություն կտա գնահատել պարտապանի գույքային դրությունը, մշակել համապատասխան ֆինանսական առողջացման ծրագիր և իրականացնել այն՝ առանց ապահովված պարտատերերի կողմից այդ գործընթացի նկատմամբ խոչընդոտների: Օրինակ, անորոշություններից և ձգձգումներից խուսափելու համար, նշված դեպքում կարող է դիտարկվել մորատորիումի կիրառման համար ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման մեկնարկը՝ բացառելով հնարավոր չարաշահումները: Սա

[60]Տե՛ս նույն տեղում, պարբերություն 42, Նշված մոտեցումն ընդունված է նաև UNCITRAL-ի Մոդելային օրենքում:
[61]Տե՛ս նույն տեղում, պարբերություն 43-44:
[62] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 54:

նաև ապահովում է ապահովված պարտատերերի համար որոշակի հստակություն և կանխատեսելիություն՝ կապված նրանց իրավունքների հետագա իրացման հնարավորության, ֆինանսական առողջացման գործընթացում ներգրավվածության առումով: Այսպիսով, կարևոր է, որ օրենքի համապատասխան կարգավորումները նպաստեն վարույթի արագ և արդյունավետ առաջընթացին՝ հնարավորություն տալով նվազագույնի հասցնել ապահովված պարտատերերի նկատմամբ մորատորիումի կիրառման ժամկետը, հատկապես՝ ֆինանսական առողջացման դեպքում[63]:

315. Ինչպես նշվեց, Օրենքը նախատեսում է մորատորիումի գործողությունը մինչև սնանկության գործի ավարտը, ինչը սակայն, կարող է հանգեցնել ինչպես պարտապանի ու պարտատետերի կողմից տարաբնույթ չարաշահումների, սնանկության գույքի արժեքի նվազման կամ կորստի և այլն: Այսպես, ԱՄՆ Սնանկության չարաշահման կանխարգելման և սպառողների պաշտպանության մասին 2005 թ. օրենքը սահմանում է, որ այն դեպքում, երբ պարտապանը սնանկության դիմումը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում արդեն ճանաչվել է սնանկ, նոր սնանկության վարույթում մորատորիումը տևում է 30 օր, եթե պարտապանը չի պահանջում երկարաձգել մորատորիումի գործողության ժամկետը, իսկ այն դեպքում, երբ սնանկության դիմումը ներկայացնելու պահի դրությամբ նախորդ տարվա ընթացքում պարտապանի նկատմամբ ներկայացվել է երկու կամ ավել սնանկության դիմում, նոր սնանկության վարույթի ընթացքում մորատորիում չի կիրառվում: Հետևաբար, նման կարգավորումների դեպքում պարտապանները ստիպված են լինում խուսափել վարույթով նրանց վերապահված իրավունքների չարաշահումից:

316. Որպես օրինակ կարող է ծառայել նաև Գերմանիայի վերջին բարեփոխումը, որով դատարանը կարող է դադարեցնել պարտատերերի պահանջների կատարման և գրավի իրացման գործողությունները մինչև երեք ամիս ժամկետով, պայմանով, որ պարտապանը ներկայացրել է ֆինանսական առողջացման համապարփակ ծրագիր: Ավելին, այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատվել է պարտատերերի կողմից, սակայն այն չի հաստատվել դեռևս դատարանի կողմից, ապա դատարանը կարող է դադարեցնել պահանջի կատարման և գրավի իրացման գործողությունները մինչև ութ ամիս ժամկետով[64]:

317. Անվճարունակության մասին օրենքները տարբեր մոտեցումներ են ընդունում լուծարման վարույթում ապահովված պարտատերերի գործողությունների նկատմամբ մորատորիումի կիրառման նկատմամբ: Մի շարք դեպքերում, երբ նախատեսվում է լուծարման վարույթի ընթացքում ապահովված պարտատերերի

[63] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 56:

[64] Տե՛ս 'Restructuring and Insolvency in Germany: Overview' (*Practical Law*), հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://uk.practicallaw.thomsonreuters.com/2-501-6976?transitionType=Default&contextData=(sc.Default):

նկատմամբ մորատորիումի կիրառման հնարավորությունը, ապա ընդունված է այն մոտեցումը, որ մորատորիումը այդ դեպքում կիրառվում է միայն կարճ ժամկետով, օրինակ՝ 30 կամ 60 օր: Այս ժամկետը թույլ է տալիս անվճարունակության ներկայացուցչին ստանձնել իր պարտականությունները, իրականացնել գույքագրում և որոշել ակտիվների լուծարմանը հասնելու լավագույն միջոցները: Մեկ այլ մոտեցում է մորատորիումի կիրառման ժամկետի երկարաձգումը դատարանի որոշմամբ[65]:

318. Ըստ էության, ընդունված մոտեցումն այն է, որ եթե մորատորիումը կիրառվում է որոշակի ժամկետով, ապա օրենքը կարող է նախատեսել դրա երկարաձգման դրույթ, սակայն այս դեպքում պետք է հաշվի առնել հնարավոր ռիսկերը, ինչպես նաև սահմանել երկարաձգման առավելագույն քանակ կամ ժամկետ: Նման խնդիրներից խուսափելու համար առաջարկվում է դիտարկել օրենքով հստակ կանոնների ու երկարաձգման համար դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձանց հստակ շրջանակի նախատեսումը: Օրինակ, կարող է մորատորիումի կիրառումը երկարաձգվել միայն կառավարչի դիմումի հիման վրա, ով կներկայացնի համապատասխան հիմնավորումներ, սակայն պայմանով, որ դա չի վնասի ապահովված պարտատերերի շահերին[66]:

319. Ուղեցույցում նշվում է նաև, որ թափանցիկությունն ու կանխատեսելիությունն ապահովելու համար շատ ցանկալի է, որ օրենքը հստակ սահմանի այն գործողությունները, որոնք պետք է ներառվեն կամ բացառվեն մորատորումի շրջանակից: Բացառությունները կարող են ներառել հաշվանցման իրավունքները և ֆինանսական պայմանագրերի զուտացումը, հանրային քաղաքականության շահերը պաշտպանելուն ուղղված գործողությունները, ինչպիսիք են շրջակա միջավայրին հասցված վնասը կամ հանրային առողջությանը և անվտանգությանը վնասակար գործողությունները զսպելը, չարաշահումների կանխարգելմանն ուղղված գործողությունները, ինչպիսիք են սնանկության վարույթի օգտագործումը որպես անօրինական գործողություններից խուսափելու միջոց և գործողություններ պարտապանի դեմ անձնական վնասի կամ ընտանեկան իրավունքի պահանջների համար[67]:

320. Օրինակ, ԱՄՆ Սնանկության մասին օրենսգրքի հոդված 362 (d)-ի համաձայն՝ շահագրգիռ կողմի պահանջով, ծանուցումներից և լսումներից հետո դատարանը ազատում է հոդված 362 (a)-ով նախատեսված մորատորիումից, օրինակ՝ այն դադարեցնելով, չեղյալ հայտարարելով, փոփոխելով կամ պայմանավորելով, եթե

---

[65] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 57:

[66] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 58:

[67] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 35:

1) շահագրգիռ կողմի գույքի նկատմամբ հետաքրքրության պատշաճ պաշտպանությունը բացակայում է,
2) կասեցվում է հոդված 362 (a)-ով նախատեսված գույքի նկատմամբ կայացված ակտը, այն դեպքում, երբ պարտապանը նման գույքում բաժնեմաս չունի, և եթե այդպիսի գույքն անհրաժեշտ չէ արդյունավետ վերակազմակերպման համար: Իսկ նույն հոդվածի (g) ենթակետի համաձայն՝ այն կողմը, որը հայցում է մորատորիումից ազատվելու անհրաժեշտությունը կրում է պարտապանի համապատասխան գույքում մասնաբաժին ունենալը ապացուցելու բեռը, իսկ մորատորիումից ազատվելու անհրաժեշտության դեմ հանդես եկող կողմը կրում է մյուս բոլոր հանգամանքների ապացուցման պարտականության բեռը[68]:

321. Անդրադառնալով ապահովված պարտատերերի շահերի պաշտպանությանն ու մասնակցությանը մորատորիումի գործընթացին՝ հարկ է նշել, որ ապահովված պարտատերերի գործողությունների նկատմամբ մորատորիումի կիրառումը ավելի դժվար խնդիր է և պահանջում է մի շարք մրցակցող շահերի հավասարակշռում: Ապահովված պարտատերերին, ովքեր նախապես միջոցներ են ձեռնարկել իրենց պարտավորությունները ապահովելու համար, չպետք է հետաձգել կամ արգելել անհապաղ իրացնել իրենց իրավունքները ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ, իսկ ցանկացած միջամտություն կամ սահմանափակում անհրաժեշտ է մանրամասնությամբ ուսումնասիրել և կիրառել հավասարակշռված մոտեցումներ[69]:

322. Սնանկության մասին շատ օրենքներով ընդունվում է այն մոտեցումը, որ ապահովված պարտատերերին թույլ տալով ազատորեն իրականացնել իրենց իրավունքները ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ, կարող է խափանել սնանկության վարույթի հիմնական նպատակները, մասնավորապես ֆինանսական առողջացման հարցում: Այդ պատճառով, ապահովված պարտատերերի գործողությունները գնալով ավելի շատ են ներառվում մորատորիումի կիրառման շրջանակներում՝ որոշակի պաշտպանվածության ներքո: Սնանկության մասին օրենքները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում նաև լուծարման վարույթում ապահովված պարտատերերի գործողությունների նկատմամբ մորատորիումի կիրառման նկատմամբ: Որպես ընդհանուր սկզբունք, նշվում է, որ երբ անվճարունակության ներկայացուցչի գործառույթն է ակտիվների հավաքագրումն ու իրացումը և հավաքագրված հասույթը բաշխելը, ապահովված

[68]Տե՛ս Joseph R. Prochaska, "Prosecuting and defending the motion for relief from stay by a mortgage lender", 22 p., p. 2:

[69] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություններ 36-37:

պարտատիրոջը կարող է թույլատրվել ազատորեն իրացնել իր իրավունքները ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ՝ չազդելով լուծարման գործընթացի վրա: Այնուամենայնիվ, երբ որդեգրվում է այդ մոտեցումը, կարելի է ներդնել այնպիսի ճկուն կառուցակարգեր, որոնք կառավարչին կարող են թույլ տալ հասնել ավելի լավ արդյունքի, որը առավելագույնի կհասցնի ակտիվների արժեքը՝ ի շահ բոլոր պարտատերերի: Ընդհանուր առմամբ, այն դեպքում, երբ ապահովված պարտատերերի գործողությունների նկատմամբ կիրառվում է մորիատորիումը թե լուծարման, թե ֆինանսական առողջացման վարույթներում, ապա օրենքը կարող է սահմանել միջոցներ, որոնք կապահովեն, որ ապահովված պարտատիրոջ շահերը չնվազեն մորատորիումի կիրառման արդյունքում, որոնք կարող են վերաբերել մորատորիումի հատուկ տևողությանը, ապահովված իրավունքի առարկայի արժեքի պաշտպանությանը, տոկոսագումարների վճարմանը և մորատորիումից բացառությունների սահմանմանը[70]:

323. Ապահովված պարտատերերի շահերի պաշտպանության առումով Ուղեցույցը առաջարկում է դիտարկել տարբեր միջոցներ՝ հաշվի առնելով նաև մորատորիումի կիրառվող ժամկետը: Ընդ որում, եթե այդպիսի ժամկետը կարճ է, ապա կարող է ապահովված իրավունքի առարկայի արժեքի պաշտպանության անհրաժեշտություն չառաջանալ, իսկ հակառակ պարագայում՝ մորատորիումի դադարեցումը կարող է լինել ավելի ծախսարդյունավետ միջոց, քան ակտիվների արժեքի պաշտպանությունը, պայմանով, որ ակտիվը չի պահանջվում վարույթի արդյունավետ ավարտի համար: Ապահովված պարտատերերի շահերը կարող են պաշտպանվել նաև, ընդհանուր առմամբ, նրանց հետ բանակցելով ապահովված իրավունքի առարկայի օգտագործման և վաճառքի վերաբերյալ: Այն դեպքում, երբ տրամադրվում է համարժեք պաշտպանություն, ցանկալի է, որ օրենքը նշի այն մասին, թե ինչպես է կիրառվելու այդպիսի պաշտպանության միջոցը[71]:

324. Որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ ապահովված պարտատիրոջը կարող է թույլատրվել դիմել դատարան կամ կառավարչին՝ մորատորիումի գործողությունը ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ դադարեցնելու խնդրանքով: Այդպիսի հանգամանքները կարող են ներառել այն դեպքերը, երբ ապահովված պարտատիրոջ պահանջի արժեքը գերազանցում է ապահովված իրավունքի առարկայի արժեքը, երբ համարժեք պաշտպանության ապահովումը կարող է անիրագործելի լինել կամ չափազանց ծանրաբեռնել գույքը, երբ ապահովված իրավունքի առարկան անհրաժեշտ չէ ֆինանսական առողջացման ծրագրի արդյունավետության ապահովման կամ ձեռնարկության ընթացիկ գործունեությունը ապահովելու համար և այլն: Այդ դեպքում ապահովված իրավունքի առարկան դադարում է լինել սնանկության գույքի մաս, և

[70]Տե՛ս նույն տեղում, պարբերություններ 38-40:
[71]Տե՛ս նույն տեղում, պարբերություն 59:

ապահովված պարտատերը կարող է ազատորեն իրականացնել իր իրավունքները: Սնանկության մասին որոշ օրենքներ նշված գործընթացում կարևորում են անվճարունակության ներկայացուցչի դերակատարությունը՝ պարզելու համար մորատորիումի դադարեցման արդյունքում հնարավոր հետևանքները[72]:

325. Ինչպես նշվեց, մորատորիումի կիրառումը տարբեր երկրների օրենսդրությամբ ունենում է տարբեր դրսևորումներ, ընդունվում են տարբեր մոտեցումներ՝ կախված ձևավորված մշակույթից և սովորույթներից: Այսպես, օրինակ՝ Իսպանիայում, ընդհանուր կանոնի համաձայն, սնանկության վարույթը սկսելու պահից դատական կամ արտադատական կատարման վարույթներ չպետք է նախաձեռնվեն, սկսված վարույթներն էլ չպետք է շարունակվեն: Կանոնը սահմանում է որոշ բացառություններ՝ կապված վարչական ակտերի կատարման ընթացակարգերի և աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների հետ՝ պայմանով, որ դրանց բավարարումը չխոչընդոտի սնանկության վարույթի հետագա ընթացքին:

326. Գերմանիայում սնանկության վարույթի փաստով կիրառվող սահմանափակումներին զուգահեռ դատարանը սնանկության գործը վարույթ ընդունելուց հետո պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ պարտապանի գույքի նվազեցումը բացառելու համար: Սնանկության օրենքի 21-րդ հոդվածը նախատեսում է այս միջոցների շրջանակը: Մասնավորապես, դատարանը կարող է պարտապանի գույքի փոխանցման ընդհանուր արգելք սահմանել:

327. ԱՄՆ-ի անվճարունակության ռեժիմը ուշագրավ լուծումներ է նախատեսում. այս համակարգի կարևորագույն դրույթներից է ավտոմատ կասեցումը (մորատորիումը), որը կիրառվում է սնանկության վարույթն սկսելուց անմիջապես հետո: Սնանկության մասին միջնորդություն ներկայացնելուց անմիջապես հետո մորատորիումը կամ «ավտոմատ կասեցումը/դադարեցումը» ուժի մեջ է մտնում և կանխում է վճիռների կամ որոշումների կատարումը առանց դատարանի թույլտվության[73]:

328. Ընդ որում, «ավտոմատ դադարեցումը» ներառում է ցանկացած գործողությունների կասեցում կամ դադարեցում, որոնք սկսվել են նախքան սնանկության վերաբերյալ դիմումի ներկայացումը: Այն կողմը, որը կատարում է որևէ գործողություն՝ խախտելով «ավտոմատ դադարեցման» կանոնը, կարող է ենթարկվել պատասխանատվության: Ավտոմատ դադարեցումն ուժի մեջ է գործի քննության ողջ ընթացքում, սակայն պարտատերերը և այլ կողմերը կարող են

[72]Տե՛ս նույն տեղում, պարբերություններ 60-61:
[73] Տե՛ս US Bankruptcy Code paragraph 362(a):

միջնորդություններ ներկայացնել «դադարեցումը» վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ[74]:

329. ԱՄՆ սնանկության օրենսգիրքը նախատեսում է, որ սնանկության գործի հարուցումից հետո պարտապանը անհապաղ պաշտպանություն է ստանում իր ակտիվների և գործառնությունների իրականացման դեմ պարտատերերի գործողություններից՝ «ավտոմատ դադարեցման» ուժով: Ըստ դրա՝ պարտատերերին արգելվում է փորձել պարտապանի կանխավճարային պարտքերը գանձելու, պարտապանի ակտիվների վրա կալանք դնելու կամ այլ կերպ վերահսկողություն իրականացնել պարտապանի գույքի նկատմամբ: Օրինակ՝ «ավտոմատ դադարեցումն» արգելում է պարտապանի դեմ դատական վարույթի հարուցումը կամ շարունակությունը կամ պարտատիրոջ կողմից պարտապանի գույքը բռնագանձելու փորձը: Ընդհանրապես, «ավտոմատ կասեցումը» գործում է պարտատերերի մեծամասնության համար պարտապանի գույքի դեմ փոխհատուցման գործողություններ իրականացնելու կամ իրավական պաշտպանության միջոցներ կիրառելու մասով: «Ավտոմատ կասեցման» համար կան սահմանափակ բացառություններ, և այն կարող է փոփոխվել դատարանի կողմից՝ պատճառները հիմնավորվելու պարագայում: «Ավտոմատ կասեցումը» հնարավորություն է տալիս պարտապանին, որպեսզի հավաքագրի և գնահատի իր ողջ գույքը, առանց պարտատերերի՝ իրենց սեփական շահերը պաշտպանելու միջոցներ փնտրելու[75]: Արդյունքում, «ավտոմատ կասեցումը» թույլ է տալիս պահպանել պարտապանի ակտիվները և առավելագույնի հասցնել դրանց արժեքը և այդ ակտիվները պարտատերերին հավասար բաշխել:

330. ԱՄՆ-ում[76] ևս ապահովված պարտատերերը սնանկության վարույթի ընթացքում չեն կարող բռնագանձման պահանջ ներկայացնել և կիրառել իրենց ապահովման միջոցները և կարող են միայն վարույթի շրջանակներում ներկայացնել իրենց պահանջները: Ընդհանուր առմամբ, ապահովված պարտատերերը կարող են ազատվել «ավտոմատ դադարեցումից» այն հիմքով, որ ապահովված իրավունքի առարկայի արժեքը նվազում է, և պարտապանը չի պահպանում գույքի արժեքը, դրանով իսկ նրանց իրավունք տալով համարժեք պաշտպանություն ստանալ:

---

[74] Տե՛ս Comparison of Chapter 11, 10

[75] Տե՛ս '11 U.S. Code § 362 - Automatic Stay' (LII / Legal Information Institute) <https://www.law.cornell.edu/uscode/text/11/362> accessed 12 November 2023.

[76] Սնանկության վարույթների միջին տևողությունը՝ սկզբից մինչև վերջ, միջին կամ խոշոր ընկերությունների համար վեց տարի է: Բիզնեսի վաճառքն ամբողջությամբ ներդրողին կարող է տեղի ունենալ շատ արագ, նույնիսկ սնանկության վարույթի բացման նույն օրը, եթե դա լավ պատրաստված է եղել սնանկության նախնական վարույթի ընթացքում: Սովորաբար, ամբողջ բիզնեսի վաճառքը տեղի է ունենում սնանկության վարույթի բացումից հետո ինչ-որ պահի (օրինակ՝ երկու-երեք ամիս հետո): Բացի այդ, և հետագայում, կան այլ միջոցներ, որոնք պետք է արվեն, օրինակ՝ չմարված պահանջների հավաքագրումը (որոնք չեն վաճառվի ներդրողին):

331. Բացի այդ, առևտրային կողմերին, որպես կանոն, չի թույլատրվում խզել իրենց պայմանագրերը պարտապանի հետ և/կամ չեղյալ համարել որևէ լիցենզիա (ներառյալ մտավոր սեփականության լիցենզիաները) անվճարունակության վարույթ հարուցվելու պատճառով: Այնուամենայնիվ, առևտրային կողմերը դեռևս ունեն դադարեցման իրավունք այն դեպքերում երբ սովորական պայմաններում այդ իրավունքը կգործեր, ինչպես օրինակ պայմանագրի խախտման դեպքում կամ եթե դա համաձայնեցված է, ինչպես օրինակ պարտապանի առևտրային վատթարացման պատճառով, եթե այս պայմանը նախապես համաձայնեցված է: Մյուս կողմից, անվճարունակության կառավարիչը կարող է հրաժարվել պայմանագրի կատարումից, եթե պարտապանի կողմից ամբողջությամբ կամ մասամբ չի կատարվել պարտավորությունը սնանկության վարույթի բացման ամսաթվի դրությամբ:[77]

332. Անգլիայում մորատորիումը կիրառվում է ինչպես առողջացման, այնպես էլ լուծարման փուլերում, որոշակի տարբերությամբ, մասնավորապես լուծարման փուլում մորատորիումը չի տարածվում ապահովված պարտատերերի վրա ի տարբերություն առողջացման փուլի:Այստեղ առողջացման համար դատական կարգադրություն ստանալու մասին դիմումն առաջին անգամ դատարան ներկայացվելու պահից ընկերությունը պաշտպանված է տարբեր պարտատերերի կողմից կատարողական գործողություններից, եթե տվյալ պարտատերը չի ստանում դատարանի թույլտվությունը: Մորատորիումը շարունակվում է նաև այն բանից հետո, երբ ընկերությունը սկսում է առողջացման փուլը[78]:

333. Մեկ այլ խնդիր, որ հանդիպում է գործող կարգավորումների պարագայում, դա քրեական գործերի շրջանակում կիրառված արգելանքների, կատարողական վարույթների նկատմամբ մորատորիումի գործողության տարածման նպատակահարմարությունն է: Ըստ օրենքի, մորատորիումի գործողությունը տարածվում է արգելադրված գույքի վրա, կասեցվում կամ կարճվում են գույքի բռնագանձման կատարողական վարույթները: Նման վարույթ, օրինակ, կարող է դիտարկվել ապօրինի ծագում ունեցող գույքի և փողերի լվացման հետ կապված բռնագանձումներով կատարողական վարույթը: Միջազգային պրակտիկայում նշված վարույթները մորատորիումի գործողության ժամանակահատվածում, սովորաբար, չեն կասեցվում, ինչը պայմանավորված է օրենսդրական այնպիսի նպատակներով, ինչպիսիք են փողերի լվացման կանխումը և փողերի լվացման արդյունքում ստացված կամ դրան առնչվող գույքի բռնագրավման ապահովումը,

[77] Տե՛ս 'Restructuring and Insolvency in Germany: Overview' (n 10):

[78] Տե՛ս 'Bloomsbury Collections - Insolvency and Restructuring Manual' 12 <https://www-bloomsburycollections-com.uoelibrary.idm.oclc.org/monograph?docid=b-9781526521477> accessed 5 October 2023.

և, վերջապես, հանրային շահը[79]: Հետաքրքրական է ՎԴ արտահայտած իրավական դիրքորոշումը, ըստ որի. ««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության»[80]:

334. Հարկ է նշել նաև, որ ՓՄՁ-ների նկատմամբ մորատորիումը պետք է կիրառվի խիստ սահմանափակումներով՝ ընթացակարգի չարաշահումից խուսափելու նպատակով, օրինակ՝ մորատորիումի կիրառման պարբերականության խիստ սահմանափակման նախատեսումով, եթե դրա նկատմամբ արդեն իսկ ենթակա է սնանկացման ֆորմալ ընթացակարգի կիրառումը կամ նախորդող 12 ամիսների ընթացքում մորատորիում կիրառվել է, սակայն այն չի հանգեցրել առողջացման ծրագրի մշակմանը կամ առողջացման ծրագիրը վաղաժամ դադարեցվել է:

Պարտապան իրավաբանական անձի գործունեությունը սնանկության վարույթի ընթացքում

335. Երբ իրավաբանական անձի նկատմամբ հարուցվում է սնանկության վարույթ, վճռորոշ է դառնում վերակազմավորել նրա կառավարումը ֆինանսական դժվարությունների հետևանքով առաջացած մարտահրավերները լուծելու համար: Նպատակը հաճախ անվճարունակության գործընթացում արդյունավետ գործելն է, շահագրգիռ կողմերի շահերը պաշտպանելը և հաջող լուծման հնարավորությունները առավելագույնի հասցնելը: Սնանկության մասին օրենքները տարբեր մոտեցումներ են ընդունում սնանկության վարույթում պարտապան իրավաբանական անձի գործունեության և դրա ընթացքում պարտապանի ղեկավարի դերի վերաբերյալ: Պարտապան իրավաբանական անձի գործունեությունը սնանկության վարույթի ընթացքում կարող է տարբերվել կախված թե ինչ փուլում է վարույթը՝ ֆինանսական առողջացում, թե լուծարում: Այն դեպքում, երբ պարտապան իրավաբանական անձի գործունեությունը սնանկության վարույթի ընթացքում շարունակելը բխում է պարտապանի ֆինանսական առողջացման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունից, ավելի մեծ անհրաժեշտություն է առաջանում պարտապանին գործունեության կառավարմանը որոշակի ձևով ներգրավելու համար: Որոշ դեպքերում պարտապանի համար սահմանվում են լրացուցիչ

[79]Տե՛ս Herman I. L., Groschadl P. S. and others, "Property of the estate and the automatic stay", 2013, p. 46:

[80]Տե՛ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով 26.12.2013 թվականի որոշումը:

իրավունքներ կամ պարտականություններ, ինչպես օրինակ, վարույթի ընթացքում լսվելու, տեղեկատվություն ստանալու և սեփականությունը պահպանելու:

336. Հաշվի առնելով այն, որ սնանկության վարույթը (հատկապես լուծարման դեպքում) սկսելուց հետո պարտապանի գույքի պահպանումը պահանջում է համալիր միջոցառումներ՝ գույքը պաշտպանելու համար ոչ միայն պարտատերերի գործողություններից, այլև պարտապանից, այդ իսկ պատճառով սնանկության մասին շատ օրենքներ զրկում են պարտապանին ակտիվները վերահսկելու և բիզնեսը կառավարելու ու ղեկավարելու բոլոր իրավունքներից և նշանակում են անվճարունակության ներկայացուցիչ/կառավարիչ: Որոշ օրենքներ նախատեսում են, որ սնանկության կառավարիչը պետք է կառավարի և ունենա ընդհանուր վերահսկողություն բիզնեսի վրա՝ միաժամանակ թույլ տալով պարտապանին իրականացնել անմիջական ղեկավարումը[81]:

337. Միաժամանակ հարկ է նշել, որ ֆինանսական առողջացման վարույթի դեպքում հարցի վերաբերյալ չկա ընդհանուր մոտեցում: Պարտապանին բիզնեսը կառավարելու լիազորության վերապահումը կարող է մեծապես կախված լինել տեղական մշակույթից, պարտատերերի դերից, պարտապանի բարեխիղճ գործելաձևից, երբեմն նաև նրանից, թե ում դիմումի հիման վրա է հարուցվել վարույթը՝ պարտապան, թե պարտատերեր: Բացի այդ, մեծ ազդեցություն ունեն նաև կորպորատիվ կառավարման ռեժիմների առկայությունը և դրանց արդյունավետությունը, դատարանների դերը և վերահսկողության մակարդակը[82]:

338. Հարկ է նշել նաև, որ ֆինանսական առողջացման վարույթի դեպքում պարտապանի նկատմամբ, ընդհանուր առմամբ, առաջարկվում է վերահսկողության չորս այլընտրանքային մոտեցում, որոնք առավել մանրամասն բացահայտված են ֆինանսական առողջացման բաժնում:

339. Իրավաբանական անձ պարտապանի գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից պարտապանի ղեկավարի ներգրավվածությունը կարող է ունենալ մի շարք առավելություններ, քանի որ պարտապանի՝ իր բիզնեսի վերաբերյալ ունեցած գիտելիքները, անմիջական և մտերիմ կապերը առնչվող անձանց հետ, կարող է դրական ազդեցություն ունենալ և դյուրացնել ընկերության շարունակական գործունեությունը: Բացի այդ, այն կարող է նաև օգնել անվճարունակության ներկայացուցչին պատշաճ կատարել իր գործառույթները՝ ավելի անմիջական և ամբողջական պատկերացում ունենալու համար պարտապանի բիզնեսի գործունեության մասին: Նմանատիպ պատճառներով պարտապանի հեռացումը, հատկապես ֆինանսական առողջացման դեպքում, գործունեության կառավարումից կարող է խոչընդոտել

[81] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություններ 2-3:

[82] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 4:

պարտապանի վճարունակության վերականգման գործընթացին և պարտատերերի պահանջների առավելագույն բավարարման հնարավորությանը: Այնուամենայնիվ, պարտապանին թույլ տալը շարունակել կառավարել բիզնեսը՝ իր լիազորությունների նկատմամբ անբավարար վերահսկողությամբ, կարող է ոչ միայն խորացնել վստահության անկումը, այլև մեծացնել հակասությունները պարտատերերի կողմից:

340. Եթե չկա արդյունավետ կառավարման ռեժիմ, պարտատերերը կարող են նախընտրել սնանկության ներկայացուցչին՝ իրավաբանական անձի գործունեության կառավարման կամ պարտապանի նկատմամբ զգալի վերահսկողական լիազորություններ ունենալու համար: Ավելին, այն համակարգերում, որտեղ ավելի մեծ լիազորություններ են վերապահվում պարտապանին, կարող են լինել դեպքեր, երբ նման մոտեցումը կարող է հանգեցնել պարտատերերի անտարբերությանը վարույթի նկատմամբ, ինչն իր հերթին կարող է հանգեցնել պարտապանի գործունեության նկատմամբ վերահսկողության բացակայությանը: Ընդ որում, պարտապանը կարող է ունենալ իր օրակարգը, որը կարող է հակասել անվճարունակության ռեժիմի նպատակներին և, մասնավորապես, պարտատերերի համար եկամտաբերության առավելագույն արդյունք ապահովելուն: Պարտապանի հիմնական նպատակը, օրինակ, կարող է լինել բիզնեսի նկատմամբ վերահսկողության պահպանումը, այլ ոչ թե ի շահ պարտատերերի եկամտաբերության վերականգնումը[83]:

341. Միջանկյալ մոտեցումները պարտապանի և անվճարունակության ներկայացուցչի միջև վերահսկողության տարբեր մակարդակներ են սահմանում: Դրանք սովորաբար ներառում են սնանկության ներկայացուցչի կողմից պարտապանի նկատմամբ վերահսկողության որոշակի մակարդակ, օրինակ, երբ վերջինս վերահսկում է պարտապանի գործունեությունը և հաստատում էական գործարքները, մինչդեռ պարտապանը շարունակում է կառավարել բիզնեսը և որոշումներ կայացնել սովորական հարցերի շուրջ: Այս մոտեցումը կարող է արդյունավետ գործել, եթե սնանկության ներկայացուցչի և պարտապանի միջև պատասխանատվության բաշխումը հստակ է, և կա որոշակի ծրագիր, պարտապանի գործունեության շարունակման ուղղությունների վերաբերյալ:

342. Պարտատերերը ևս կարող են դերակատարում ունենալ պարտապանի գործունեության կառավարման վերահսկողության և արդյունավետ իրականացման գործում: Այնուամենայնիվ, օրինակ, որոշումների ընդունման համար անհրաժեշտ կլինի սահմանել ձայների այնպիսի մեծամասնություն, որը թույլ կտա ապահովել բավարար հավասարակշռություն և խուսափել հնարավոր ռիսկերից:

[83]Տե՛ս նույն տեղում, պարբերություններ 5-7:

343. Մեկ այլ մոտեցում է, երբ օրենքում հստակ չի սահմանվում յուրաքանչյուր կողմի պատասխանատվության աստիճանը կամ լիազորությունները, այլ այդ հարցերը և պարտապանի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը որոշվում են վարույթի ընթացքում դատարանի կամ անվճարունակության ներկայացուցչի կողմից՝ համապատասխան իրավական ակտերի ձևով: Որոշակի ճկունություն թույլ տալով հանդերձ, այս մոտեցումը կարող է հետ պահել պարտապաններին սնանկության վարույթ սկսելուց, քանի որ գործունեության մեկնարկի ազդեցությունը բիզնեսի կառավարման և վերահսկման վրա պարզ չի լինի նրանց համար[84]:

344. Պարտապանի շարունակական դերի հարցում մյուս մոտեցումն այն է, որը պարտապանին հնարավորություն է տալիս լիարժեք վերահսկողություն պահպանել իրավաբանական անձի գործունեության վրա: Այն դեպքերում, երբ սնանկության մասին օրենքը թույլ է տալիս պարտապանին շարունակել վերահսկել բիզնեսը, ցանկալի է, որ սահմանվեն պարտապանի հստակ գործառույթները: Այնուամենայնիվ, այս մոտեցման թերությունները կարող են լինել, օրինակ, պարտապանի ղեկավարի կողմից իր գործառույթների ոչ պատշաճ կատարումը, պարտապանի գույքի այնպիսի օգտագործումը, որի արդյունքում կնվազի դրա արժեքը, ֆինանսական առողջացման ծրագրի պատշաճ իրականացման խոչընդոտումը: Որպես այս տարբերակի համար վերահսկողության արդյունավետ տարբերակ կարող է դիտարկվել պարտապանի կողմից պարբերական հաշվետվությունների ներկայացումը դատարանին, ինչը թույլ կտա դատարանին գնահատել ընթացիկ գործունեության վիճակը, սնանկության կառավարիչ նշանակելու անհրաժեշտությունը՝ պարտապանի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, պարտատերերին որոշակի վերահսկողական գործառույթներով օժտելը կամ լուծարման վարույթի անցնելու անհրաժեշտությունը:

345. Հարկ է նշել, որ նշված մոտեցումը բնութագրվում է որպես բարդ, քանի որ այն, ըստ էության, ազդում է անվճարունակության ռեժիմի մի շարք այլ դրույթների իրագործման վրա (օրինակ՝ ֆինանսական առողջացման ծրագրի պատրաստում, պայմանագրերի կարգավորում, նոր ֆինանսավորումներ և այլն)[85]:

346. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված սնանկության վարույթի պարտապան կարող է լինել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ (...): Պարտապան իրավաբանական անձի վերաբերյալ հատուկ կարգավորումներ առկա են միայն Օրենքի՝ «Իրավաբանական անձի լուծարման և պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթները» վերտառությամբ Օրենքի 9-րդ գլխով:

[84]Տե՛ս նույն տեղում, պարբերություն 15:
[85]Տե՛ս նույն տեղում, պարբերություն 18:

347. Ընդ որում, չնայած գույքի տնօրինման առնչությամբ գործող սահմանափակումներին, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պարտապանի գործունեության կասեցումը ընկած ժամանակահատվածում ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ շարունակում է ներկայացնել պարտապանի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը և կրում է դրանք չներկայացնելու կամ ոչ պատշաճ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը

348. Մի շարք երկրներում իրավաբանական անձանց սնանկության վարույթը կարգավորվում է առանձին ընթացակարգով: Օրինակ՝ Լատվիայի «Սնանկության մասին» օրենքի «Իրավաբանական անձի սնանկության վարույթի ընդհանուր դրույթները» վերտառությամբ 9-րդ գլուխը, «Իրավաբանական անձի սնանկության վարույթ հարուցելու մասին դիմում» վերտառությամբ 10-րդ գլուխը և «Իրավաբանական անձին սնանկ ճանաչելու հետևանքները» վերտառությամբ 11-րդ գլուխը նախատեսում են կարգավորումներ իրավաբանական անձ պարտապանի վերաբերյալ կարևոր հարցերի առնչությամբ: Այդ հարցերի թվին են դասվում՝ իրավաբանական անձանց անվճարունակության գործով վարույթի սուբյեկտների կազմը, վարույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ սնանկ ճանաչվելու նախապայմանները, և վարույթի հրապարակայնությունը: Նշված շրջանակում կարևորվում է նաև իրավաբանական անձի սնանկության վարույթի շրջանակում իրավաբանական անձի կառավարման հարցը: Մասնավորապես, նշված օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ իրավաբանական անձի նկատմամբ սնանկության վարույթ հայտարարելուց հետո.

1) պարտապանը կորցնում է իր, ինչպես նաև երրորդ անձանց պատկանող և իր տիրապետության տակ գտնվող գույքը տնօրինելու իրավունքը, և կառավարիչը ձեռք է բերում այդ իրավունքները.
2) պարտապանի կառավարման մարմինների գործունեությունը կասեցվում է, իսկ պարտապանի կառավարումն իրականացնում է կառավարիչը (...):

349. Նշված օրենքով հստակ սահմանվում է նաև պարտապան իրավաբանական անձի սնանկության վարույթի շրջանակում նշանակված սնանկության կառավարչի իրավունքների և պարտականությունների շրջանակը:

350. Որոշ երկրներում , ինչպես օրինակ Անգլիայում և Ուելսում գործում է նաև ինքնուրույն մորատորիում (Standalone moratorium), որը կապված չէ սնանկության որևէ այլ ընթացակարգի հետ՝ առողջացման և լուծարման վարույթներից դուրս, որպես առողջացման մորատորիումի այլընտրանք: Այս մորատորիումը կիրառվում է այն պահից, երբ կառավարիչ նշանակելու մտադրության մասին ծանուցումը ներկայացվում է դատարան: Այս մորատորիումը նախատեսված է որպես «պարտապանի տիրապետման» ընթացակարգ, որտեղ ընկերությունը

շարունակում է կառավարվել իր գործող տնօրենների կողմից, այլ ոչ թե փոխարինվելլ սնանկության կառավարչի կողմից, ինչպես դա կլիներ ֆինանսական առողջացման փուլում: Այնուամենայնիվ, տնօրենները դեռևս կենթարկվեն կառավարչի հսկողությանը: Ընկերությունների որոշ տեսակների համար չի թույլատրվում ինքնուրույն մորատորիումի կիրառումը, և այն չի կարող օգտագործվել ֆինանսական պարտատերերի կողմից իրենց պարտքերը վերականգնելու համար:

351. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **սահմանել մորատորիումի հասկացությունը և բովանդակությունը, մորատորիումն ընդգրկող գործողությունները և դրանից բացառությունները՝ ապահովելով վերաբերելի կարգավորումների բավարար ճկունություն.**
2) **հստակեցնել անձանց շրջանակը, ովքեր կարող են դիմել մորատորիումի կիրառման, երկարաձգման կամ դադարեցման համար, ինչպես նաև նրանց, ում վրա կտարածվի մորատորիումի գործողությունը.**
3) **սահմանել մորատորիումի գործողության հստակ ժամկետը, ինչպես նաև մորատորիումի գործողության մեկնարկի արդյունավետ ժամկետը՝ հաշվի առնելով մի շարք էական հանգամանքներ, այդ թվում՝ տնտեսական ցուցանիշների մանրամասն ուսումնասիրությունը: Կարող է դիտարկվել «սպասման» ժամկետի սահմանման հնարավորությունը, որի դեպքում վարույթ հարուցվելուց հետո որոշակի ժամանակահատված կարգելվի պարտապանի գույքի նկատմամբ ցանկացած տեսակի գործողության իրականացումը՝ ներառյալ ապահովված պարտատերերի կողմից, այնուհետև դատարանի թույլտվությամբ հնարավոր կլինի դադարեցնել կամ երկարաձգել մորատորիումի գործողությունը.**
4) **այն դեպքում, երբ հիմք կընդունվի սնանկության ողջ վարույթի ընթացքում մորատորիումի կիրառման տարբերակը (ինչպես գործող կարգավորմամբ), ապա անհրաժեշտ կլինի նախատեսել մորատորիումից ազատելու հնարավորությունը՝ դադարեցնելով, չեղյալ հայտարարելով կամ փոփոխելով այն, ինչը հնարավորություն կստեղծի արդյունավետ կառավարել և տնօրինել սնանկության գույքը,**
5) **նախատեսել մորատորիումի կիրառման ժամկետի երկարաձգման, վաղաժամկետ դադարեցման կամ կասեցման հնարավորություն.**

6) դիտարկել ապահովված պարտատերերին լրացուցիչ պաշտպանության միջոցներ տրամադրելու նպատակահարմարությունը, որի դեպքում ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ ևս հնարավոր կլինի սնանկության վարույթի որոշակի փուլում կամ ամբողջ ընթացքում կիրառել մորատորիում (կամ մասնակի մորատորիում).
7) քրեական արդարադատության առանձնահատկություններով պայմանավորված՝ անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կառուցակարգեր, որը թույլ կտա որոշակի էական հանգամանքների բացակայությամբ դատարանի համապատասխան որոշման հիման վրա մորատորիումի գործողությունը տարածել նաև քրեական վարույթի ընթացքում կիրառված արգելանքների կամ հարուցված կատարողական վարույթների նկատմամբ.
8) սնանկության վարույթի անխոչընդոտ և արդյունավետ ընթացքն ապահովելու նպատակով նախատեսել պատասխանատվության միջոցներ կողմերի համար, որոնք կչարաշահեն իրենց իրավունքների իրականացումը մորատորիումի կիրառման հարցում, մորատորիումի կիրառումը կօգտագործեն այլ բիզնես նպատակներով՝ որոնք կապված չեն լինի սնանկության վարույթի հետ և այլն.
9) դիտարկել իրավաբանական անձ պարտապանի գործունեության կառավարման վերաբերյալ Օրենքով նախատեսված մոտեցումները զարգացնելու հնարավորությունը՝ միաժամանակ հստակեցնելով վերաբերելի կարգավորումները.
10) տարբերակել նաև սնանկության տարբեր փուլերում սնանկության կառավարչի և պարտապանի ղեկավարիդերն ու նշանակությունը, որոշել վերահսկողության մակարդակը և մեխանիզմը: Որպես այլընտրանքային լուծումներ կարող են լինել (1) ֆինանսական առողջացումը պարտապանի տնօրինության շարունակականության ապահովմամբ և միայն որոշակի հիմքերի առկայության դեպքում նրա լիազորությունները լուծարային կառավարչին փոխանցելու հնարավորություն, կամ (2) սնանկության վարույթի ինչպես առողջացման, այնպես էլ լուծարման փուլերում կառավարչի նշանակում և վարույթները համապատասխան կառավարչի վերահսկողությամբ իրականացում, իսկ սնանկության վարույթից դուրս վարույթներում՝ (ա) ինքնուրույն մորատորիումի (standalone moratorium) և (բ) ֆինանսական առողջացման վարույթներում ընկերության տնօրինության կառավարման շարունակականություն:

6) Պարտատերերի ժողովը և խորհուրդը

352. Պարտատերերի իրավունքների ու շահերի ապահովման համար ձևավորվում են պարտատերերի ժողովներ և խորհուրդներ, որոնք հանդես են գալիս որպես պարտատերերի տեսակետները արտահայտելու արդյունավետ միջոց: Նշված մարմինների ձևավորումը նպաստում է նաև պարտատերերի միջև հակասությունների հարթմանը և որոշումների ընդունման գործուն կառուցակարգերի ներդրմանը: Ընդ որում, հաշվի առնելով սնանկության վարույթի բնույթը, պետք է նշել, որ պարտատերի ժողովի կամ խորհրդի ձևավորումը կարևոր նշանակություն ունի ողջ գործընթացի վրա:

353. Անդրադառնալով պարտատերերի խորհրդի ու ժողովի քաղաքացիաիրավական կարգավիճակին՝ հարկ է նշել, որ վերջիններս քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ չեն հանդիսանում, որի արդյունքում չեն կարող ճանաչվել որպես իրավահարաբերության սուբյեկտներ: Այնուամենայնիվ, պարտատերերի ժողովը և խորհուրդը օժտված են որոշակի լիազորություններով և իրենցից ներկայացնում են պարտատերերի իրավունքների իրացման և շահերի պաշտպանության հավաքական ձևեր: Ընդ որում, կարելի է արձանագրել, որ այն դեպքերում, երբ օրենսդրությամբ ուղղակի կանոնակարգումները բացակայում են, ապա սնանկության վարույթում առաջացող բոլոր հարցերը, որոնք որևէ կերպ առնչվում են վարույթի մասնակիցների շահերին, կարող են քննարկվել և լուծվել պարտատերերի ժողովում:

354. Գործող Օրենքը ևս նախատեսում է սնանկության վարույթում պարտատերերի շահերի ներկայացման մարմինների՝ պարտատերերի ժողովի և խորհրդի ստեղծումը:

355. Օրենքով պարտատերերի ժողովի բացառիկ իրավասությանն են վերապահվել ֆինանսական առողջացման ծրագրին հավանություն տալը և ծրագրի իրականացման ժամկետի երկարաձգման մասին դատարանին առաջարկություն ներկայացնելը, պարտատերերի խորհրդի կազմի հաստատումը և խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, իր կանոնակարգի ընդունումը և Օրենքով ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված այլ որոշումների ընդունումը: Ընդ որում, ժողովի նշանակումը պայմանավորվել է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ, քանի որ պարտատերերի առաջին ժողովի անցկացումը ուղղակիորեն կապված է հաստատված պահանջներով պարտատերերի առկայության հետ: Ըստ այդմ՝ ժողովի ձայների 100 տոկոսը պատկանում է առաջին ժողովին ներկայացած պարտատերերին, իսկ բաշխումը կատարվում է ժողովին ներկայացած պարտատերերի հաստատված պահանջների հանրագումարի մեջ յուրաքանչյուր պարտատիրոջ հաստատված պահանջի տեսակարար կշռին համապատասխան:

356. Հարկ է նշել, որ ներկայումս բավարար կարգավորված չեն ժողովի էլեկտրոնային կարգով իրականացման մեխանիզմները, ինչը սակայն փորձ է արվել կանոնակարգել Օրենքի փոփոխությունների միջոցով՝ նախատեսելով նաև ժողովի հեռակա կարգով՝ տեսակապի կամ էլեկտրոնային այլ միջոցների օգտագործմամբ անցկացումը[86]:
357. Ինչ վերաբերում է պարտատերերի խորհրդին, ապա այն ներկայացնում է պարտատերերի շահերը և Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում կառավարչի գործունեության նկատմամբ: Ընդ որում, հաստատված պահանջներով պարտատերերի թիվը 10-ից պակաս լինելու դեպքում պարտատերերի խորհուրդ չի ձևավորվում և խորհրդի լիազորություններն իրականացնում է պարտատերերի ժողովը:
358. Պարտատերերի ժողովի կողմից որոշումների ընդունման հարցը քննարկելիս նախևառաջ կարևոր նշանակություն ունի ժողովի իրավազորության՝ քվորումի հարցը: Պարտատերերի առաջին ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցման դեպքում ժողովն իրավազոր է՝ անկախ դրանում ներկայացված պարտատերերի ձայների քանակից, իսկ հետագա ժողովներն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են քվեարկության իրավունք տվող ձայների պարզ մեծամասնություն ունեցող պարտատերերը: Պարտատերերի ժողովի իրավազորության ապահովման առումով էական է այն հարցը, թե պարտատերերից յուրաքանչյուրը որքան ձայն ունի: Օրենքի համաձայն՝ քվեարկությունների անցկացման և կազմակերպման կարգը որոշվում է ժողովի կանոնակարգով՝ սահմանելով նաև քվեաթերթիկին ներկայացվող պահանջները: Որոշումների ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակի առումով Օրենքը սահմանում է, որ ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին ներկայացած, քվեարկության ձայնի իրավունք ունեցող պարտատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:
359. Օրենքը նաև հնարավորություն է տալիս կառավարչին, պարտատերերին ու պարտապանին եռօրյա ժամկետում բողոքարկելու ժողովի որոշումները սնանկության գործը վարող դատարանին: Բողոքը կարող է բավարարվել միայն այն դեպքում, երբ խախտվել են օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված դիմողի իրավունքները: Սույն հարցի կարգավորման ժամանակ

[86] «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է Օրենքում լրացնել նոր գլուխ՝ «Սնանկության վարույթում էլեկտրոնային եղանակով դատավարական և սնանկության վարույթին առնչվող այլ գործողությունների իրականացման առանձնահատկությունները», ինչը հնարավորություն կտա ստեղծել այնպիսի իրավիճակ, որ էլեկտրոնային համակարգի միջոցով, պատշաճ կերպով և համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով կատարված ցանկացած գործողություն ունենա նույն դատավարական հետևանքները, որը կունենար ավանդական եղանակով կատարված համանման գործողությունը, հստակեցվել են ժողովների անցկացման եղանակները՝ առկա, հեռավար, ինչպես նաև գրավոր հարցումների միջոցով, և այդ եղանակների առանձնահատկություններով պայմանավորված սահմանվել են ժողովի մասին ծանուցմանը և քվեաթերթիկի բովանդակությանը առնչվող դրույթները:

օրենսդիրը դատարանին հնարավորություն է տվել ուժի մեջ թողնելու ժողովի որոշումը, եթե բողոքաբեր պարտատիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, և թույլ տրված խախտումներն էական չեն:

360. Պարտատերերի խորհրդի դեպքում, ի տարբերություն պարտատերերի ժողովի, որտեղ պարտատերն ունի իր պարտավորության չափին համապատասխան ձայնի իրավունք, խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, և խորհրդի որոշումն ընդունված է համարվում, եթե դրա օգտին քվեարկել է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Խորհրդի գործունեության կազմակերպման մի շարք հարցեր Օրենքով սահմանված չեն, այդուհանդերձ ենթադրվում է, որ այդ հարաբերությունների հետ կապված պետք է առաջնորդվել պարտատերերի ժողովի վերաբերյալ Օրենքի կանոնակարգումներով: Կառավարիչը, պարտապանը և պարտատերերը ունեն խորհրդի որոշումները եռօրյա ժամկետում սնանկության գործը վարող դատարանին բողոքարկելու իրավունք, որի դեպքում դատարանն իրավունք ունի բավարարել բողոքը, եթե խախտվել են օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված դիմողի իրավունքները:

361. Այնուամենայնիվ, նման կառուցակարգի սահմանումը որոշակի խնդիրներ է առաջացնում պրակտիկ կիրառության ընթացքում պարտատերերի ժողովում քվեարկության և որոշումների կայացման, պարտատերերի (ապահովված պարտատերերի) ներգրավվածության հետ կապված և այլն:

362. Հարկ է նշել, որ արձանագրված խնդիրների մի մասին անդրադարձ է կատարվել դատական պրակտիկայում՝ փորձելով լուծել առկա բացերը: Մասնավորապես.

1) ՍԴ-ն, անդրադառնալով սնանկության վարույթի ընթացքում դատական ակտերի բողոքարկմանը, արձանագրել է, որ իրավաչափ մոտեցում է ցուցաբերված օրենսդրի կողմից, երբ բողոքարկելի են համարվում սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը, քանի որ հակառակ մոտեցումը, երբ սկզբունքորեն բողոքարկելի կարող են դիտարկվել սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող առանց բացառության բոլոր միջանկյալ դատական ակտերը, այդ թվում՝ նաև ժողովի որոշումները և կառավարչի գործողությունները վիճարկելու վարույթով կայացված որոշումները, կարող է վտանգել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության արդյունավետ իրականացումը՝ զերծ պահելով այն անհարկի ձգձգումներից[87]:

[87] Տե՛ս ՍԴ 2011 թվականի հունվարի 11-ի թիվ ՍԴՈ-932 որոշումը

2) ՎԴ-ն թիվ ԵՇԴ/0111/04/16 սնանկության գործով 2019 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ արձանագրել է, որ կառավարչի մոտ ողջամտորեն կարող է ձևավորվել համոզմունք այն մասին, որ պարտատերերի ժողովների հետաձգման արդյունքում պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը չի հաստատվելու, որպիսի պայմաններում կառավարիչն իրավասու էր գույքի վաճառքի ծրագիրը ներկայացնել Դատարանի հաստատմանը՝ առանց պարտատերերի ժողովի հաստատման: Նման եզրահանգման համար ՎԴ հիմք է ընդունել այն, որ մոտ չորս ամսվա ընթացքում ժողովները հետաձգվել են չորս անգամ՝ այդպես էլ պարտատերերի կողմից ընդհանուր համաձայնության չգալով պարտապանի գույքի վաճառքի ծրագրի վերաբերյալ: Նկատի ունենալով, որ կառավարիչը պարտավոր է սնանկության վարույթում հաշվի առնել ինչպես բոլոր պարտատերերի, այնպես էլ պարտապանի շահերը, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարել կառավարչի կողմից առանց պարտատերերի ժողովի հաստատման գույքի վաճառքի ծրագիրը դատարան ներկայացնելու լիազորության կիրառումը:

3) ՎԴ-ն հստակեցրել է ապահովված պարտատերերի՝ սնանկության գործով պարտատերերի ժողովին քվեարկության ձայնի իրավունքով մասնակցելու դեպքերը: ՎԴ-ն թիվ ՍՆԴ/0163/04/19 սնանկության գործով 2022 թվականի մայիսի 13-ին կայացված որոշմամբ գտել է, որ ապահովված պարտատերը քվեարկության ձայնի իրավունք (ապահովված իրավունքի առարկայի արժեքի նվազած չափով) կարող է ձեռք բերել, եթե ապահովված իրավունքի առարկայի արժեքը (մեկնարկային գինը) հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հափշտակության) կամ վնասելու արդյունքում նվազում է ապահովված պահանջի չափից: Այլ կերպ՝ ապահովված պարտատերը քվեարկության ձայնի իրավունք կարող է ձեռք բերել միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված պայմանների առկայության դեպքում: Պարտատերերի խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ քվեարկության ձայնի իրավունք կարող են ձեռք բերել պարտատերերի առաջին ժողովին մասնակցած՝ առավել խոշոր հինգ չապահովված պահանջներ ունեցող պարտատերերը:

363. Ներկայացված խնդիրների հնարավոր լուծման եղանակները բացահայտելու համար միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից հատկապես կարևոր է ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցը:

364. Ուղեցույցում նշվում է, որ մի շարք պատճառներով, սնանկության մասին շատ օրենքներ նպաստում են վարույթում պարտատերերի անմիջական մասնակցությանը: Պետք է նկատի ունենալ, որ պարտատերերը կարող են կորցնել վստահությունը այն վարույթների նկատմամբ, երբ առանցքային որոշումները կայացվում են առանց նրանց հետ խորհրդակցելու: Պարտատերերի մասնակցության բարձր մակարդակի դյուրացման ցանկությունը պետք է հիմնված լինի արդյունավետության (այդ թվում ծախսերի տեսանկյունից) սկզբունքի վրա՝ խուսափելով պարտատերերի ներգրավումից այնպիսի հարցերում, որոնք չեն ազդի իրենց շահերի վրա:
365. Սնանկության վարույթում որոշումների կայացման գործում պարտատերերի հնարավոր ներգրավվածության տարբեր աստիճաններ կան՝ ելնելով պարտատերերի համար նախատեսված գործառույթների շրջանակից: Ընդհանուր առմամբ, որոշումը, թե որ գործառույթները պետք է տրվեն պարտատերերին, ներառում է սնանկության մասին օրենքի ընդհանուր կառուցվածքի և դատարանի, անվճարունակության ներկայացուցչի, պարտապանի և պարտատերերի դերերի միջև հավասարակշռության դիտարկումը, ինչպես օրինակ վերահսկողական գործառույթը:
366. Ընդհանրապես հայտնի են պարտատերերի սնանկության վարույթին մասնակցության տարբեր մոտեցումներ:
    1) Առաջինը պարտատերերին թույլ է տալիս միայն ցածր մասնակցություն՝ հիմնական դերակատարությունը վերապահելով սնանկության կառավարչին: Այս մոդելում պարտատերերի մասնակցության ցածր մակարդակը հավասարակշռվում է սնանկության կառավարչի պարտականության սահմանմամբ՝ սնանկության գույքի արժեքի և պարտատերերի շահերի պաշտպանությունը: Սակայն, նման մոտեցումը կարող է արդյունավետ լինել, երբ որպես սնանկության կառավարիչ նշանակվում կամ ընտրվում է փորձառու ներկայացուցիչ:
    2) Մյուս մոտեցումը պարտատերերին ավելի մեծ մասնակցություն է տալիս վարույթին: Նման մասնակցությունը կարող է վերաբերել ժողովներին, տարբեր որոշումների քննարկմանն ու ընդունմանը, խորհրդատվական գործառույթի իրականացմանը, սնանկության կառավարչի նշանակմանը, փոփոխությանը և այլն:
    3) Երրորդ մոտեցման համաձայն՝ պարտատերերը կարող են ունենալ սնանկության վարույթի հատուկ գործառույթներ, ինչպես համագործակցությունը և համակարգման աշխատանքները սնանկության կառավարչի հետ, որի դեպքում սնանկության կառավարիչը պարտավորվում է որոշակի հարցերի շուրջ խորհրդակցել պարտատերերի հետ՝ նախքան որոշումը կայացնելը, կամ, որպես

այլընտրանք, որոշում կայացնելու իրավասությունը կարող է վերապահվել պարտատերերին: Պարտատերերի հատուկ գործառույթների շարքում առանձնանում են նաև սնանկության կառավարչի գործողությունների և որոշումների նկատմամբ վերահսկողությունը՝ հաշվի առնելով, որ դրանք շոշափում են պարտատերերի շահերը:

367. Սնանկության մասին շատ օրենքներ նախատեսում են, որ պարտատերերին վերապահված գործառույթները պետք է իրականացվեն պարտատերերի ընդհանուր ժողովներում: Պարտատերերը պետք է տեղեկացվեն սնանկության վարույթի մեկնարկի, պարտատերերի նախնական ժողովի մանրամասների վերաբերյալ: Ընդ որում, համաձայն սնանկության մասին մի շարք օրենքների՝ սկզբնական/նախնական/առաջին ժողովը բոլոր պարտատերերի մասնակցությամբ տեղի ունեցող միակ ժողովն է: Միաժամանակ նշվում է, որ նման ժողովների անցկացման դեպքում ցանկալի է, որ սնանկության մասին օրենքը հստակեցնի այդ ժողովներում քննարկվելիք և լուծվող հարցերի շրջանակը:

368. Եթե սնանկության մասին օրենսդրությունը նախատեսում է պարտատերերի այլ ժողովների անցկացման հնարավորություն, ապա կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ: Որոշ օրենքների համաձայն՝ այդ ժողովները պետք է գումարվեն դատարանի կամ սնանկության կառավարչի կողմից՝ հատուկ նպատակներով, մինչդեռ այլ օրենքներ նախատեսում են, որ պարտատերերը կամ սնանկության կառավարիչը, իսկ որոշ դեպքերում՝ պարտապանը կարող են ըստ պահանջի հրավիրել ժողով: Այն դեպքում, երբ սնանկության մասին օրենքը թույլ է տալիս պարտատերերին ժողով գումարել, օրենքը կարող է ներառել որոշակի սահմանափակումներ այն մասին, թե երբ կարող է ժողով հրավիրվել կամ այն պայմանները, որոնք պետք է կատարվեն ժողով հրավիրելուց առաջ: Որոշ օրենքներ նաև նախատեսում են, որ ժողով հրավիրելու իրավունք ունեն միայն ընդհանուր պահանջների որոշակի տոկոս ունեցող պարտատերերը: Մյուս տարբերակը շահագրգիռ կողմերին իրավունք է տալիս դիմել դատարան՝ պարտատերերի ժողով հրավիրելու համար: Այնուամենայնիվ, անկախ ընտրված մոտեցումից՝ կարևոր է, որ ապահովվի հավասարակշռություն մի կողմից պարտատերերի մասնակցության և պարտատերերի շահերի պաշտպանության դյուրացման, մյուս կողմից՝ առանց անհարկի ձգձգումների վարույթի արդյունավետ իրականացման միջև:

369. Այս կապակցությամբ քննարկման առարկա է այն, որ բոլոր պարտատերերն լսված լինելու իրավունք ունենան պարտատերերի ժողովում քննարկվելիք հարցերի վերաբերյալ, օրենքով սահմանվի քվեարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը և քվեարկության մեխանիզմներն ու կարգը: Որոշակի

տեսակի պարտատերերի համար կարող են պահանջվել հատուկ կանոններ՝ հեշտացնելու նրանց մասնակցությունը վարույթին: Անձամբ մասնակցության և քվեարկության պահանջները կարող են զգալիորեն բարդացնել սնանկության վարույթը: Պարտատերերը պետք է հնարավորություն ունենան սահմանելու ժողովի անցկացման ու քվեարկության ընթացակարգերը: Նույնը վերաբերում է նաև պարտատերերի կոմիտեին/խորհրդին և նրա նիստերի անցկացմանը:

370. Սնանկության մասին օրենսդրությունը պետք է նախատեսի այն հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ պահանջվում է պարտատերերի քվեարկություն՝ միաժամանակ սահմանելով քվեարկությանը ներկայացվող պահանջները: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ վարույթի ընթացքում ձեռնարկվելիք գործողությունները էական ազդեցություն կունենան պարտատերերի վրա, ապա ցանկալի է, որ բոլոր պարտատերերն իրավունք ունենան ծանուցվելու և քվեարկելու այդ գործողությունների վերաբերյալ: Այդպիսի գործողությունները կարող են ներառել սնանկության կառավարչի ընտրության քվեարկությունը, ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը, պարտապանին սնանկ ճանաչվելուց հետո ֆինանսավորման հաստատումը, զգալի ակտիվների վաճառքը և այլ նշանակալից իրադարձություններ:

371. Ինչ վերաբերում է բուն քվեարկության ընթացակարգին, ապա որոշ օրենքներ նախատեսում են, որ քվեարկությունը պետք է իրականացվի անձամբ՝ պարտատերերի ժողովում, մինչդեռ այլ օրենքներ նախատեսում են, որ եթե ներգրավված են մեծ թվով պարտատերեր կամ պարտատերերը տարածքային առումով բաժանված են, ապա քվեարկությունը կարող է տեղի ունենալ փոստով կամ վստահված անձի միջոցով: Ավելի ցանկալի կլինի թույլատրել քվեարկությունն իրականացնել էլեկտրոնային միջոցների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի և ինտերնետի միջոցով՝ համապատասխան անվտանգության միջոցների պահպանմամբ: Քվորումին և ձայների բաշխվածությանը վերաբերող կարգավորումները ևս տարբերվում են և կիրառվում են տարբեր մոտեցումներ: Որոշ օրենքների համաձայն, ավելի կարևոր որոշումների համար, ինչպիսին է ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը, սնանկության կառավարչի ընտրությունը կամ հեռացումը, կարող է պահանջվել որակյալ մեծամասնության առկայություն: Այլ օրենքներ նախատեսում են, որ վերոնշյալ հարցերի քվեարկության դեպքում բավարար է պարզ մեծամասնությունը: Որոշ օրենքներ նաև տարբերակում են այն հարցերը, որոնք պահանջում են ինչպես ապահովված, այնպես էլ չապահովված պարտատերերի աջակցությունը, օրինակ՝ նախատեսելով, որ ապահովված պարտատերերը մասնակցում են այնպիսի հարցերի քվեարկությանը, ինչպիսիք են սնանկության կառավարչի ընտրությունը և ապահովված պարտատերերի շահերին ազդող հարցերը:

372. Օրենքի գործող կարգավորումների և ներկայացված փորձի ուսումնասիրության և համեմատության արդյունքում կարող ենք արձանագրել, որ Օրենքի կարգավորումները հիմնականում համապատասխանում են ընդունված մոտեցումներին: Այնուամենայնիվ, գործող կարգավորումները որոշ դեպքերում ունեն վերանայման կարիք, ինչպես օրինակ պարտատերերի ժողովում ապահովված պարտատերերի մասնակցության կամ ձայնի իրավունքի վերապահման, ինչպես նաև քվեարկությանը վերաբերող դրույթների մասով: Վերոգրյալին համապատասխան՝ անհրաժեշտ է դիտարկել պարտատերերի ժողովներին ապահովված պարտատերերի մասնակցության հարցը, ինչպես նաև տարբեր հարցերի շուրջ հրավիրվող ժողովների ընթացքում որոշումների ընդունման համար անհրաժեշտ ձայների մեծամասնության սահմանման հնարավորությունը:

373. Ցանկալի է, որ սնանկության մասին օրենքում ներառվեն դրույթներ պարտատերերի խորհրդի ձևավորման մանրամասների, նրա պարտականությունների շրջանակի, կառավարման և գործունեության, նիստերի անցկացման կարգի, քվորումի և քվեարկության, անդամների փոխարինման վերաբերյալ: Այլ հարցեր կարող են լուծվել խորհրդի կողմից ընդունված ընթացակարգային կանոններով, ներառյալ՝ նիստերի ընթացակարգի, նախագահի ընտրության և վեճերի լուծման կանոնները: Եթե պարտատերերի ժողովի մասով գործող օրենքը պարունակում է որոշ կանոնակարգումներ, ապա գրեթե կանոնակարգված չէ խորհրդի ստեղծման գործընթացը: Սահմանված չեն դեպքերը, երբ խորհրդի ստեղծումը պարտադիր է, սահմանված չէ խորհրդի նիստերի հրավիրման և անցկացման կարգը, խորհրդի գործունեությանն առնչվող այլ մանրամասներ, խորհրդի որոշումների բողոքարկման կարգը և այլն:

374. Էական է նաև հետևյալ հարցադրումը. արդյո՞ք անհրաժեշտություն է, որ պարտատերերի առաջին ժողովը հրավիրվի առկա եղանակով, և քվեարկելու ձայնի իրավունք ստանան միայն այն պարտատերերը, ովքեր ներկայացել են առաջին ժողովին, թե առաջին ժողովը կարող է անցկացվել նաև հեռավար եղանակով: Առկա ժողովների կայացումը հաճախ խոչընդոտվում է անպարտաճանաչ պարտատերերի չներկայանալու պատճառով, ինչի արդյունքում երկարաձգվում է սնանկության վարույթը:

375. Եվս մեկ հարցադրում. արդյոք ժողովի ներկայիս լիազորությունները բավարար են սնանկության վարույթը արդյունավետ իրականացնելու համար, թե անհրաժեշտություն կա ընդլայնել ժողովի իրավասությունները: Նշված հարցի պատասխանը կարծես թե ուրվագծվում է վերը մեջբերված միջազգային ու օտարերկրյա համապատասխան կարգավորումների համեմատական վերլուծությունից:

376. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **սահմանել պարտատերերի և խորհրդի ժողովների կազմակերպման և անցկացման ինչպես առկա, այնպես էլ հեռակա, այդ թվում՝ գրավոր քվեարկությամբ, եղանակների կիրառման հնարավորությունը: Ըստ այդմ, կանոնակարգման է ենթակա էլեկտրոնային սնանկության համակարգի միջոցով ժողովների անցկացման կարգը, ժողովների յուրաքանչյուր ձևի հրավիրման, անցկացման, արդյունքների ամփոփման, ժողովի որոշումների բողոքարկման ընթացակարգերը.**
2) **կանոնակարգել առաջին և հետագա ժողովներում ձայների բաշխման սկզբունքները, այդ առումով պարտատերերի յուրաքանչյուր խմբի իրավունքների շրջանակը՝ հստակ կարգավորելով նաև ապահովված պարտատերերի քվեարկության իրավունք ձեռք բերելու հարցը.**
3) **դիտարկել սնանկության վարույթի տարբեր փուլերի կամ հարցերի վերաբերյալ պարտատերերի ժողովներում ձայների տարբեր մեծամասնությունների կիրառման հնարավորությունը, որի դեպքում առաջարկվում է սահմանել «պարտադիր մեծամասնություն» տերմինը, որը կնշանակի պարտատերերի մեծամասնությունը թե՛ քանակական, թե՛ որակական արժեքով՝ կարգավորելով նաև ներկայացուցչի, այդ թվում՝ փաստաբանի միջոցով մասնակցության առանձնահատկությունները (օրինակ՝ արդյոք լիազորագրում պետք է հատուկ նշվի քվերակելու իրավունքը).**
4) **քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե պարտապանի ակտիվների կառավարմանն առնչվող որ հարցերի վերաբերյալ պետք է ժողովը ունենա որոշում կայացնելու իրավասություն՝ բոլոր հարցերի, թե միայն որոշների (օրինակ՝ օտարման).**
5) **սահմանել պարտատերերի ժողովի կողմից պարտատերերի խորհրդի հետկանչման (գործունեության դադարեցման), նոր խորհրդի ձևավորման ընթացակարգեր.**
6) **զարգացնել ժողովի կողմից սնանկության վարույթի և կառավարչի գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, համագործակցության, ինչպես նաև հանձնարարություններ տալու, այդ թվում՝ դրա ֆինանսական բեռը ստանձնելու հարցերը:**

7) Ապահովված պահանջները

377. Պարտատերերի պահանջների շրջանակում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ապահովված պահանջները, քանի որ պարտատերերը, նախքան սնանկության վարույթի հարուցումը, ձեռնամուխ են եղել համապատասխան

կառուցակարգերի միջոցով ստեղծել իրենց պահանջների բավարարման երաշխիքներ և նվազեցնել ֆինանսական ռիսկերը:

378. Համաշխարհային բանկի «Արդյունավետ սնանկության և պարտատեր/պարտապան համակարգերի վերաբերյալ սկզբունքներում» (The world bank, Principles for effective insolvency and creditor/ debtor regimes, 2021) արձանագրվում է, որ ապահովված պարտատերերը պետք է վստահ լինեն, որ իրենց առևտրային իրավունքները կպահպանվեն և կապահովվի թափանցիկություն, այն դեպքում, երբ պարտապանը դառնա անվճարունակ: Ապահովված կողմը պետք է վստահ լինի, որ սնանկության սցենարում իրենց հանդեպ վերաբերմունքը կարտացոլի իրենց գործարքը, որը կնքվել է պարտապանի հետ մինչև սնանկության մեկնարկը:

379. Միաժամանակ նշվում է, որ անվճարունակության արդյունավետ ռեժիմը պետք է ներառի ապահովված պարտքի վերականգնման արդյունավետ, թափանցիկ և հուսալի մեթոդներ, ներառյալ՝

1) վստահելի և մատչելի միջոցների տրամադրում վարկը պաշտպանելու և դեֆոլտի ռիսկերը նվազագույնի հասցնելու, ներառյալ տարբեր ակտիվների ապահովում,
2) վստահելի ընթացակարգերի սահմանում, որոնք հնարավորություն են տալիս վարկատուներին և ներդրողներին գնահատել, կառավարել և լուծել դեֆոլտի ռիսկը և արագ արձագանքել գործարքի մյուս կողմի ֆինանսական դժվարություններին. և
3) վարկային պահանջների կիրառման մատչելի, թափանցիկ և կանխատեսելի մեխանիզմների խթանում՝ լինի դա անհատական քայլերի, թե հավաքական գործողությունների միջոցով:

380. ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցում նշվում է, որ սնանկության մասին որոշ օրենքների համաձայն, սնանկության վարույթի հարուցումը չի ազդում ապահովված պարտատերերի իրավունքների վրա, և նրանք կարող են շարունակել իրականացնել իրենց իրավունքները՝ չխոչընդոտելով սնանկության վարույթի ընթացքին: Սնանկության մասին բազմաթիվ օրենքներով, սակայն, ապահովված պարտատերերի իրավունքները տուժում են, օրինակ՝ մորատորիումի կիրառման արդյունքում՝ ընդդեմ ապահովված իրավունքի առարկայի իրացման, ֆինանսական առողջացման ծրագրի և այլնի:

381. Ուղեցույցը կարևորում է տարբեր շահերի հավասարակշռման անհրաժեշտությունը: Չնայած սահմանվում է, որ մորատորիումի գործողությունից բացառությունները հնարավորինս պետք է կրճատվեն, այնուամենայնիվ ապահովված պարտատերերը չեն կարող զրկված լինել իրենց իրավունքը իրացնելու հնարավորությունից: Ավելին, ցանկացած միջոցի ներդրումը, որը

կնվազեցնի ապահովված պարտատիրոջ՝ պարտքը վերադարձնելու ունակության վստահությունը կամ արժեզրկելու ապահովված իրավունքի արժեքը, անհրաժեշտ է մանրամասն քննարկել: Նման միջոցը, ի վերջո, կարող է խաթարել ոչ միայն կողմերի ինքնավարությունը իրենց առևտրային գործարքներում, այլև կարող է ազդել նոր վարկերի տրամադրման հնարավորության վրա, քանի որ այդ դեպքում պարտատերերի շահագրգռվածությունը կբացակայի: Այդ նպատակով առաջարկվում է դիտարկել նաև պարտապանի և պարտատերերի միջև նախնական բանակցությունների խրախուսումը՝ համաձայնության հասնելու համար:

382. Միաժամանակ Ուղեցույցը նախատեսում է, որ նախընտրելի է ֆինանսական առողջացման գործընթացում ապահովված պարտատերերի նկատմամբ կիրառել ժամանակավոր մորատորիում, ինչը հնարավորություն կտա այդ գործընթացում օգտագործել պարտապանի ամբողջ գույքը: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է հստակ ժամկետների նախատեսումը:

383. Լատվիայի «Անվճարունակության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ապահովված պարտատերը այն պարտատերն է, որի իրավունքը պարտապանի կամ երրորդ անձի նկատմամբ ապահովված է առևտրային գրավով, հողային ռեգիստրում կամ ռեգիստրում գրանցված պարտապանի գույքի հիփոթեքով: Ապահովված պարտատերը համարվում է չապահովված պարտատեր պահանջի չապահովված մասի սահմաններում, եթե երաշխիքը երրորդ անձի պարտավորությունն է: Ապահովված պարտատերն իրավունք ունի դատավարության ցանկացած փուլում ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել պահանջի իրավունքների ապահովությունից՝ համապատասխան փոփոխություններ կատարելով հանրային ռեգիստրներում:

384. Գերմանիայի «Անվճարունակության մասին» օրենքի 44ա հոդվածը նախատեսում է ապահովված վարկերը, ըստ որի՝ ընկերության ակտիվների առնչությամբ անվճարունակության վարույթ հարուցելու դեպքում պարտատերը կարող է, 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան, միայն պահանջել անվճարունակության գույքակազմի հիման վրա վարկը վերադարձնելու վերաբերյալ պահանջի կամ միևնույն առաջնահերթությամբ բավարարվող այն պահանջի համաչափ բավարարում, որի համար գործընկերը տրամադրել է ապահովման միջոց, կամ որի համար նա պատասխանատու է որպես երաշխավոր, եթե նա այլևս չի կարող հետ պահանջել ապահովման միջոցը կամ որպես երաշխավոր կրում է պատասխանատվություն:

385. Նույն օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ այն պարտատերերը, որոնք ունեն պայմանագրով ամրագրված գրավ, արգելանքի տակ վերցված գրավ կամ անվճարունակության գույքակազմում ներառված օբյեկտի նկատմամբ գրավի իրավունք, իրավունք ունեն հիմնական պահանջի, տոկոսի և ծախսի համար

գրավի առարկայից ստանալու առաջնային բավարարում՝ 166-173-րդ հոդվածների համաձայն: Միաժամանակ սահմանվում է, որ անվճարունակության վարույթում վարձատուի կամ վարձակալի գրավի իրավունքի նկատմամբ պահանջ չի կարող ներկայացվել վարձակալության կամ լիզինգի վճարների համար, որն ընդգրկում է անվճարունակության վարույթի հարուցմանը նախորդող վերջին տասներկու ամսից ավելի վաղ ժամանակահատված, ինչպես նաև անվճարունակության կառավարչի կողմից այդ լիզինգի պայմանագրի գործողության դադարեցման հետևանքով վճարման ենթակա ցանկացած վնասի համար: Գյուղատնտեսական հողի նկատմամբ վարձակալի գրավի իրավունքը ենթակա չէ լիզինգի վճարի նկատմամբ սահմանված այդպիսի սահմանափակման:

386. Պետք է նշել, որ նույն օրենքի 51-րդ հոդվածը առաջնային բավարարման ենթակա պահանջ ունեցող այլ պարտատերերի շարքում առաջնահերթություն է սահմանել և հավասարեցրել 50-րդ հոդվածով նախատեսված պահանջինայն պարտատերերին, որոնց պահանջն ապահովելու նպատակով պարտապանը նրանց է փոխանցել շարժական գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները:

387. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովված են համարվում ապահովված իրավունքով ծանրաբեռնված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված իրավունք ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

388. Այս առումով առանձնացվում են գրավով, երաշխավորությամբ և երաշխիքով ապահովված պահանջները:

389. Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ հարկ է նշել, որ առաջատար դիրք է գրավում **գրավի**ինստիտուտը, որը թույլ է տալիս գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջը գրավի առարկայի արժեքից մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով ստանալու իր պահանջի բավարարում:

390. Ասվածի մասին է վկայում այս ոլորտում իրականացվող հետևողական բարեփոխումների շղթան, որոնցից վերջինը «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ընդունումն էր: Մասնավորապես, Օրենքի փոփոխություններով, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել ինստիտուտի մի շարք հարցերի:

391. Օրենքը ապահովված պահանջների և դրանց բավարարման վերաբերյալ հարցերի ընդհանրական կարգավորմանն է նվիրել «Ապահովված պահանջները և դրանց բավարարումը» վերտառությամբ 43-րդ հոդվածը, որի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված մի շարք դրույթների, այդ թվում՝ Օրենքի 39.1-39.3-րդ հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ առկա է գրավով ապահովված պահանջների բավարարման երկու եղանակ՝

սնանկության վարույթի շրջանակներում և սնանկության վարույթից դուրս: Հասկանալի է, որ այս եղանակներից որևէ մեկի ընտրությունը կախված է գրավով ապահովված պարտատիրոջ կամահայտնությունից, որը պետք է իրականացվի Օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, ինչպես բխում է Օրենքի ընդհանուր տրամաբանությունից, սնանկության վարույթից դուրս ապահովված պահանջի բավարարման ցանկության մասին պարտատիրոջ կողմից դիմում չներկայացվելու դեպքում նրա պահանջները ենթակա են բավարարման սնանկության վարույթում: Բացի այդ, Օրենքի 15 -ֆ-ի հոդվածի համաձայն՝ Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ պարտատերերի պահանջների բավարարումը սառեցվում է (մորատորիում), որը չի տարածվում ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը Օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումն արտադատական կարգով: Միաժամանակ, Օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ Մորատորիումի գործողությունը չի տարածվում՝ ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումը արտադատական կարգով: Ապահովված իրավունքի առարկայի արտադատական կարգով իրացման կարգը սահմանված է օրենքի 39.1-ին և 39.2-րդ հոդվածներով:

392. Ողջ վերոգրյալի համատեքստում առաջարկում ենք պահպանել գրավի ինստիտուտի վերաբերյալ առկա մոտեցումները, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքով նախատեսվում են ապահովված իրավունքի առարկայի արտադատական կարգով իրացման հնարավորություն նաև առողջացման փուլում, միևնույն ժամանակ այն հանգամանքը, որ սույն հայեցակարգով առաջարկվում է դիտարկել ապահովված պարտատերերի կամքից անկախ դատական կարգով առողջացման ծրագրի հաստատման հնարավորությունը, հետևաբար անհրաժեշտ է սահմանել նաև կարգավորումներ, որոնք ուղղված են այս երկու կառուցակարգերի հարմոնիզացմանը:

393. Պահանջների բավարարումը ապահովող գործող մեխանիզմների շրջանակում առանձնահատուկ կարգավիճակ ունեն նաև **երաշխիքը կամ երաշխավորությունը**, որոնք պարտատիրոջը հնարավորություն են տալիս պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պահանջի բավարարում ստանալ երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին:

394. Ապահովված պահանջների և դրանց բավարարման վերաբերյալ հարցերի ընդհանուր կարգավորումներին նվիրված Օրենքի 43-րդ, ինչպես նաև 39-րդ հոդվածների վերաբերելի դրույթների վերլուծությունից կարող ենք եզրակացնել,

որ երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատերը կարող է իր պահանջն ուղղակիորեն ներկայացնել երաշխավորին սնանկության վարույթից առանձին, իսկ նման պահանջ չներկայացնելու կամ պահանջը լրիվ չբավարարվելու դեպքում՝ այդ պահանջը ներկայացնել սնանկության վարույթում: Ընդ որում, ՎԴ-ն թեև փաստել է, որ Օրենքը չի նախատեսում երաշխավորի գույքի իրացման ընթացակարգ, ինչպես օրինակ՝ գրավադրված գույքի դեպքում, այնուամենայնիվ գտել է, որ օրենսդիրը չի բացառում, որ երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել երաշխավորի գույքի իրացման արդյունքում:

395. Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ինչպես նաև երաշխիքով (երաշխավորությամբ) ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը (բացառությամբ այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարների) համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով: Մինչդեռ օրենսդրությամբ ըստ էության սահմանված չէ նշված բավարարման ժամանակահատվածը:

396. ՎԴ-ն, անդրադառնալով սնանկության վարույթում երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու դեպքին, արձանագրել է, որ երբ երաշխավորությամբ ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջն ուղղակիորեն ներկայացնում է սնանկության վարույթում՝ ընդգրկվելով պարտատերերի ցուցակում, ապա այդ դեպքում պարտատերը համարվում է ապահովված պարտատեր և նման դեպքում պարտատիրոջ պահանջները՝ որպես ապահովված պահանջ, սնանկության վարույթի շրջանակներում կարող են բավարարվել երաշխավորի միջոցների հաշվին: Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ սնանկության գործով կառավարիչը՝ որպես սնանկության վարույթում պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող հիմնական անձ, երաշխավորության հիմքով ապահովված պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար կարող է հայցով դիմել դատարան երաշխավորի դեմ՝ ստացված գումարն ուղղելով ապահովված պահանջատիրոջ պահանջների բավարարմանը (տե՛ս ՎԴ թիվ ԵԱՔԴ/0067/04/16 քաղաքացիական գործով 20. 07. 2017թ. որոշումը):

397. Նման պայմաններում հասկանալի չէ կառավարչի՝ պարտատիրոջ անունից մյուս պարտապանների դեմ հայցով դիմելու հարցը:
398. Ավելին, երաշխավորի պատասխանատվության մասին խոսելիս, կարող ենք փաստել, որ այն կարող է վրա հասնել այն դեպքում հիմնական պարտապանը չի կարող կատարել իր պարտավորությունները: Վերջինը հնարավոր է հասկանալ միայն սնանկության ավարտի դեպքում: Մյուս կողմից էլ սնանկության վարույթի ավարտի պայմաններում կդադարի փաստացի հիմնական պարտավորությունը, քանի որ սնանկության գործի ավարտը հանգեցնում է պարտավորության կատարումից ազատելուն, ինչպես նաև պարտապանը լուծարվում է:
399. Մեկ այլ, թիվ ԵԴ/21272/02/19 գործով 22.07.2022թ. -ին կայացված որոշմամբ ՎԴ-ն գտել է, որ ապահովված պարտատերը կարող է երաշխավորությամբ ապահովված իր պահանջն ուղղակիորեն ներկայացնել երաշխավորին սնանկության վարույթից առանձին, իսկ նման պահանջ չներկայացնելու կամ պահանջը լրիվ չբավարարվելու դեպքում այդ պահանջը ներկայացնել սնանկության վարույթում: ՎԴ հստակեցրել է սնանկության վարույթից դուրս երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ՝ իր պահանջն ուղղակիորեն երաշխավորին ներկայացնելու հնարավորությունը (տես նաև թիվ ԿԴ1/1081/02/17 04.06.2021թ.-ի որոշումը):
400. Ողջ վերոգրյալը հանգեցնում է նրան, որ երաշխավորը ևս պետք է ազատվի պատասխանատվությունից, մյուս կողմից, եթե ընդունելի է դատական գործի հարուցումը, ապա նման պայմաններում անհարկի կծանրաբեռնվի դատական գործընթացը:
401. Նշված գործնական խնդրի կարգավորման համատեքստում առաջարկվում է քննարկման առարկա դարձել հետևյալ այլընտրանքային լուծումները.
    1) երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չպետք է դիտարկել որպես ապահովված պահանջ և պետք է բացառվի սնանկության վարույթում սնանկության գործով կառավարչի կողմից երաշխավորին պահանջ ներկայացնելու հնարավորությունը.
    2) երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը դիտարկվի որպես ապահովված պահանջ և գրանցված ապահովված պահանջի դեպքում համապատասխան պահանջի չափով երաշխավորի գույքին տրվի հասանելիություն առանց լրացուցիչ դատական ակտի.
    3) սնանկության կառավարիչը հնարավորություն ունենա իր անունից վերոնշյալ հայցերը հարուցելու կամ արտադատական կարգով պահանջների բավարարում ստանալուն:
402. ՔԴՕ 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած

պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

403. Հաշվի առնելով այն, որ երաշխիքը տրվում է հիմնականում ֆինանսական կազմակերպության կողմից և որպես այդպիսին իմաստազրկվում է բռնագանձման հայցը, քննարկման առարկա է սնանկության կառավարչի գործունեության հստակեցումը՝ նախատեսելով արտադատական կարգ պահանջների բավարարման, իսկ դրա անհնարինության դեպքում նոր միայն դատական կարգով պահանջների բավարարում ստանալու հնարավորության նախատեսում: Նշվածի համատեքստում անհրաժեշտ է նաև նախատեսել վարձատրություն սնանկության կառավարիչների համար:

404. Քննարկման առարկա է նաև վարչական և դատական մարմինների կողմից ապահովման կարգով արգելադրված գույքերի մասով պահանջի ապահովումը, սակայն հարկ է նկատել, որ այս մոտեցումը չի ամրապնդվում միջազգային փորձով:

405. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **պահպանել գրավի ինստիտուտի վերաբերյալ օրենսդրությամբ առկա մոտեցումները՝ հաշվի առնելով սույն հայեցակարգով ներկայացված դիտարկումները.**
2) **վերանայել երաշխավորությամբ ապահովված պարտավորության դեպքը և ընտրել հետևյալ մոտեցումներից մեկը.**
   - **երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չպետք է դիտարկել որպես ապահովված պահանջ և պետք է բացառվի սնանկության վարույթում սնանկության գործով կառավարչի կողմից երաշխավորին պահանջ ներկայացնելու հնարավորությունը.**
   - **երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը դիտարկվի որպես ապահովված պահանջ և գրանցված ապահովված պահանջի դեպքում համապատասխան պահանջի չափով երաշխավորի գույքին տրվի հասանելիություն.**
   - **սնանկության կառավարիչը հնարավորություն ունենա իր անունից վերոնշյալ հայցերը հարուցելու կամ արտադատական կարգով պահանջների բավարարում ստանալուն:**
3) **երաշխիքով ապահովված պահանջի դեպքում նախատեսել սնանկության կառավարչի ակտիվ դերակատարում արտադատական, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դատական կարգով պահանջի բավարարում ստանալու համար:**

8) Պարտապանի գույքը

406. Սնանկության վարույթի հիմնարար և անխուսափելի փուլերից է պարտապանի ակտիվների բացահայտումը, հավաքագրումը, պահպանումը և տնօրինումը:

Սնանկության շատ համակարգեր այս ակտիվները նախատեսում են հատուկ ռեժիմի ներքո՝ դրանք հավաքական առումով սահմանելով որպես սնանկության գույք, որի նկատմամբ սնանկության կառավարիչը հիմնականում ունենում է որոշակի լիազորություններ: Ինչ վերաբերում է սնանկության կամ պարտապանի գույքի բովանդակության բացահայտմանը, ապա գոյություն ունեն տարբեր բնորոշումներ: ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցի իմաստով, օրինակ, պարտապանի գույքը ներառում է պարտապանի ակտիվները, որոնք վերահսկվում են սնանկության կառավարչի կողմից և ենթակա են անվճարունակության վարույթի (առավել մանրամասն սահմանում տրվում է 4-րդ պարբերությունում)[88]:ԱՄՀ կողմից սահմանվում է, որ որպես ընդհանուր կանոն, ակտիվները պետք է ներառեն պարտապանի գույքը սնանկության վարույթի սկսվելու օրվա դրությամբ՝ գումարած այդ ամսաթվից հետո լուծարային կառավարչի կողմից ձեռք բերված ակտիվները[89]:

407. Առավել մանրամասն շրջանակ է նախատեսում Օրենքը, որի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը որպես պարտապանի գույք սահմանում է պարտապանի կապիտալ և ֆինանսական ներդրումները, հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները և նշված կազմին չպատկանող այլ միջոցները, իսկ 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում ներառվում են պարտապանին պատկանող ցանկացած գույքը, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաները: Ապահովված իրավունքի այն առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող), որի վերաբերյալ դատարանը Օրենքի 39.2-րդ հոդվածով սահմանված կարգով ընդունել է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու մասին որոշում, չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում ընդգրկվում են Օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում: Ավելին, Օրենքը և Հարկային օրենսգիրքը ունեն գույքի բովանդակության բացահայտման իրենց սահմանումը:

408. Հակասություններից խուսափելու նպատակով նախընտրելի է պարտապանի կամ սնանկության գույքի համապարփակ բացահայտումը և սահմանումը, ինչը կհեշտացնի նաև գույքի հետ կապված սնանկության վարույթի մի շարք փուլերի անխոչընդոտ իրականացումը: Այն թույլ կտա սնանկության վարույթի բոլոր մասնակիցներին և շահագրգիռ անձանց հստակ պատկերացում կազմել

---

[88] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 2:

[89] Տե՛ս Orderly & Effective Insolvency Procedures, Key Issues, Legal Department, International Monetary Fund, 1999, Consequences of Commencement: Establishing and Protecting the Estate - Assets of the Estate:

պարտապանի գույքի վերաբերյալ և կանխորոշել սեփական գործողությունները: Այդ իսկ պատճառով, պարտապանի գույքի գույքագրման, գնահատման, իրացման կամ այլ կերպ օգտագործման վերաբերյալ հարցերը քննարկելու համար նախ անհրաժեշտ կլինի բացահայտել պարտապանի գույքի հասկացությունը: Միաժամանակ, պետք է հաշվի առնել ապահովված պարտատերերի կամ համասեփականատերերի իրավունքները: Սա նշանակում է, որ որոշ ակտիվներ կարող են նախ բավարարել որոշակի պահանջներ, նախքան ընդհանուր պարտատերերին վճարելու համար դրանք օգտագործելը:

409. Պարտապանի գույքի սահմանման հարցում էական նշանակություն ունի այն հարցադրումը, թե երբ է ձևավորվում պարտապանի գույքը, ինչը նաև կարևոր է պարտապանի և պարտատերերի համար որոշակիություն ապահովելու տեսանկյունից: Սնանկության մասին որոշ օրենքներ գույքի ձևավորման սկզբի ժամկետի սահմանումը կապում են վարույթը սկսելու/հարուցելու կամ սնանկ ճանաչելու ամսաթվի հետ, իսկ մյուսները՝ դիմումի ներկայացման ամսաթվի կամ դիմումի համար հիմք հանդիսացող հանգամանքների/փաստի առաջացման հետ:

410. Չնայած ներկայումս գույքի հասկացության ոչ համապարփակ սահմանումը վարույթի պատշաճ իրականացման էական խնդիրներ չի առաջացնում, այնուամենայնիվ նման խնդիրներ ի հայտ են գալիս այլ գործընթացների կապակցությամբ, ինչպես օրինակ՝ գույքագրում, գնահատում, իրացում և այլն:

411. Որպես կանոն անվճարունակության պայմաններում կառավարվող ակտիվների կառավարման գծով սկզբում կառավարիչը պետք է նույնականացնի պարտապանին պատկանող ամբողջ գույքը, ներառյալ վարույթը սկսելուց հետո ձեռք բերված գույքը: Կառավարիչը պետք է որոշի, թե որ գույքն է «սնանկության միավորի սեփականությունը» և իր հսկողության տակ: Ակտիվների նկատմամբ այլ իրավունքների խնդիրներ են առաջանում հատկապես ոչ նյութական իրավունքների հետ կապված, որոնց պահպանումը կարող է վճռորոշ լինել ընկերության՝ երրորդ անձի կողմից գնելու դեպքում: Ընդհանուր առմամբ, ցանկացած շահ, որն ունեցել է պարտապանը, որը կարող է վաճառվել կամ փոխանակվել, կարող է համարվել վաճառվող գույքի մաս և կառավարչի կողմից տնօրինվող[90]:

412. Գույքի նկատմամբ պարտապանի իրավունքները պարզելուց հետո գույքը պետք է հավաքագրվի: Ընդ որում, հարկ է նշել, որ որոշ մարմինների, ինչպես օրինակ պարտապանի (պարտապանի ղեկավարի) համար նշված գործընթացին մասնակցելը կամ օժանդակելը (կառավարչին) պարտադիր է, հակառակ դեպքում կարող է ենթարկվել օրենքով սահմանված պատասխանատվության: Օրինակ, Հոնկոնգում պարտապանի (ղեկավարի) կողմից ֆինանսական մատյանների

[90] Տե՛ս Jay Lawrence Westbrook, 'A Global View of Business Insolvency Systems', A Global View of Business Insolvency Systems (Brill Nijhoff 2009) 69, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://brill.com/display/title/17909:

չներկայացումը, հաշիվների և թերի մատյանների ներկայացումը օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման հիմք է: Կարևոր է նաև ապահովել պարտապանի գույքի պահպանումը, որը կարող է պահանջել, օրինակ, ապահովագրություն, կամ կարող են լինել դեպքեր, երբ գույքի արժեքի նվազում թույլ չտալու համար անհրաժեշտ կլինի արագ փչացող գույքի վաճառքն իրականացնել[91]:

413. Օրենքը, ըստ էության, նախատեսում է պարտապանի գույքակազմի վերաբերյալ տեղեկատվության երկու հիմնական աղբյուր՝ պարտապանը և երրորդ անձինք: Օրենքով պարտապանի համար սահմանված է տեղեկատվության տրամադրման և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Երրորդ անձանցից պարտապանի գույքի մասին տեղեկատվության ստացումը իրականացվում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը դատարանի կողմից մի շարք մարմիններ ուղարկելու միջոցով, որոնք կրում են պարտապանի գույքի վերաբերյալ իրենց տիրապետման տակ գտնվող տեղեկատվությունը ներկայացնել դատարան: Պարտապանի գույքակազմի բացահայտմանն է ծառայում նաև սնանկության կառավարչի կողմից գույքագրումը, որը դրսևորվում է նաև այդ նպատակով պետական մարմիններին հարցումներ ուղարկելու եղանակով:

414. Այնուամենայնիվ գույքագրումը գործող կարգավորումների դեպքում արդյունավետ չի կիրառվում, քանի որ խոչընդոտվում է պարտապանի կողմից, որը կարող է դրսևորվել հակաօրինական արարքների, անգործության կամ որոշումների բողոքարկման միջոցով, ինչը ազդում է վարույթի ընթացքի, կարճ ժամկետներում դրա ավարտի, գույքի վիճակի վրա:

415. Օրենքը պարտապանի գույքի գնահատման վերաբերյալ ծավալուն կանոնակարգումներ չի սահմանել: Սահմանվում է, որ գույքի գնահատումը կատարում է կառավարիչը, իսկ առկա միակ պահանջը փորձագետ հրավիրելու անհրաժեշտության դեպքում այդ մասին խորհրդին կամ 5 խոշոր պարտատերերին տեղեկացնելն է: Հստակեցված չեն գնահատման ժամկետները, կառավարչի կողմից դրա իրականացման կարգը, մեխանիզմները, մեթոդները և այլն:

416. Չնայած ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցը միայն առանձին բաժնով անդրադառնում է ծանրաբեռնված (ապահովված) ակտիվների գնահատման կարգավորումներին, այնուամենայնիվ նշվածը հնարավորություն է տալիս ընդհանուր պատկերացում կազմել գույքի գնահատման ընդունված մոտեցումների վերաբերյալ: Մասնավորապես, սահմանվում է, որ որոշ դեպքերում կողմերը կարող են գնահատել ակտիվները նախքան վարույթը սկսելը, և այդ գնահատումը կարող է դեռ ուժի մեջ լինել վարույթի սկզբում:

[91] Տե՛ս նույն տեղում, 84.

Սակայն կարող է անհրաժեշտ լինել պարտապանի գույքի ընդհանուր գնահատում նաև վարույթը սկսելուց անմիջապես հետո, որպեսզի անվճարունակության ներկայացուցիչը որոշակի պատկերացում ունենա գույքի արժեքի մասին: Այս առումով քննարկման ենթակա է նաև գնահատման արժեքը և այն կողմը, որը պետք է կրի այդ ծախսերը[92]:

417. Նշվում է, որ մոտեցումներից մեկն այն է, որ գնահատումը, գոնե սկզբնական փուլում, պետք է որոշվի կողմերի համաձայնությամբ: Այլ օրենքներ նախատեսում են դատարանի վրա հիմնված տարբեր մոտեցումներ: Օրինակ, գնահատումն ինքն իրականացնելու փոխարեն դատարանը կարող է սահմանել արժեքը որոշելու եղանակ, որը կարող է իրականացվել համապատասխան փորձագետների կողմից: Դրան կարելի է նպաստել սնանկության մասին օրենքում հստակ սկզբունքներ նշելով՝ որպես գնահատման հիմք: Այլընտրանքային մոտեցում է, երբ դատարանը կարող է սնանկության ներկայացուցչի կողմից որոշված նախնական գնահատումից հետո այն վերանայել՝ որոշակի ապացույցների հիման վրա: Որոշ օրենքներ պահանջում են ակտիվի շուկայական գնահատում վաճառքի միջոցով, որի արդյունքում ակտիվի համար շուկայում առկա ամենաբարձր գինը ձեռք է բերվում մրցույթի կամ աճուրդի միջոցով[93]:

418. Գույքի վաճառքի շուրջ գործընթացների հետ կապված քննարկումները ցույց են տվել, որ առկա է թափանցիկության և համապատասխան կարգավորումների բացակայության խնդիր, հատկապես գնի և մեթոդաբանության առումով:

419. Գույքի վաճառքի կանոնակարգումների վերանայմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է հստակեցնել նաև վաճառքի արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների, դրանց ճիշտ հաշվարկման և բավարարման հետ կապված հարցերը՝ միաժամանակ ապահովելով, որ դրա արդյունքում չխախտվեն նաև մյուս պարտատերերի շահերը:

420. Ըստ այդմ, գույքի վաճառքի հետ կապված կարող են դիտարկվել երկու այլընտրանքային մոտեցումներ.

1) առաջինը՝ գնահատման և աճուրդի գործընթացի վերաբերյալ մանրամասն կանոնակարգերի ներդրումն է, որպեսզի գործնականում նախագծվեն նվազագույն չափորոշիչներ, որոնք պետք է պահպանվեն և այդ կերպ բարելավեն հաշվետվողականությունը, ինչպես նաև թափանցիկությունը,

2) հակառակ դեպքում՝ հարցը կարող է թողնվել սնանկության կառավարչին (պարտապանի անունից վաճառելիս) կամ գրավով

[92] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 66:

[93] Տե՛ս նույն տեղում, պրաբերություն 67:

ապահովված պարտքի պարտատիրոջը (գրավադրված ակտիվների առնչությամբ) պարտապանի գույքի վաճառքն իրականացնելիս պահպանել ընդհանուր, այլ ոչ թե հատուկ ստանդարտներ և պարտավորություններ: Այս դեպքում սնանկության կառավարիչը պետք է ցուցաբերի հոգատարություն և ջանասիրություն, գործի ազնիվ և բարեխղճորեն և խուսափի ոչ պատշաճ կերպով օգտագործել իր դիրքը՝ իրենց կամ մեկ ուրիշի համար առավելություններ ձեռք բերելու համար: Ապահովված պարտատերերի դեպքում, որոնք վաճառում են գրավի առարկա ակտիվները, օրենքում կարող է ներառվել լրացուցիչ պարտավորություն, որը պարտավորեցնում է նրանց ցուցաբերել համապատասխան վարքագիծ՝ ապահովելու, որ եթե ակտիվն ունի շուկայական գին, ապա այդ ակտիվը վաճառվի շուկայական գնով, իսկ եթե շուկայական գին չկա, ապահովվի, որ համապատասխան քայլեր ձեռնարկվեն տվյալ հանգամանքներում ողջամիտ գնով այն իրացնելու համար:

421. Ուղեցույցը, անդրադառնալով գույքի վաճառքին, նշում է, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ եղանակով է իրականացվելու գույքի վաճառքը, այն պետք է առավելագույնի հասցնի գույքի արժեքը, ինչպես նաև պարտատերերը պետք է պատշաճ ծանուցվեն գործընթացի վերաբերյալ (կամ պարտատերերի կոմիտեն): Սնանկության մասին շատ օրենքներ պահանջում են, որ ակտիվները վաճառվեն աճուրդով, որոշները նախատեսում են, որ պարտատերերի կոմիտեն կամ անվճարունակության ներկայացուցիչը կարող են վաճառքը իրականացնել այլ եղանակով, եթե դա ավելի շահավետ կլինի[94]: Միաժամանակ նշվում է, որ այն դեպքերում, երբ սնանկության ներկայացուցիչը որպես իրացման եղանակ ընտրում է գույքի ուղղակի վաճառքը, այլ ոչ՝ հրապարակային աճուրդը, օրենքը կարող է դատարանից պահանջել վերահսկել վաճառքի գործընթացը կամ այն թույլատրվի միայն պարտատերերի կողմից հաստատվելուց հետո: Սնանկության մասին այլ օրենքներ նախատեսում են, որ դատարանը պետք է էական դերակատարում ունենա ակտիվների իրացման գործընթացում սահմանելով վաճառքի ժամանակը, ձևը և պայմանները, իսկ սնանկության ներկայացուցիչը պետք է աջակցի այդ գործընթացին: Սնանկության մասին որոշ օրենքներ նաև անդրադառնում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են գույքի վաճառքը պարտատիրոջը՝ այդ պարտատիրոջ պահանջը փոխհատուցելու և երրորդ կողմի մոտ գտնվող պարտապանի ցանկացած ակտիվի վաճառքը այդ երրորդ կողմին ողջամիտ շուկայական գնով[95]:

---

[94] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, պարբերություն 79:

[95] Տե՛ս նույն տեղում, պարբերություն 80:

422. Որպես ամփոփում, առաջարկվում է օրենքում գույքի իրացման ընթացակարգերին վերաբերող կարգավորումները համապատասխանեցնել թափանցիկության սկզբունքին, պատշաճ կազմակերպել գույքի գնահատման գործընթացը՝ որակավորված մասնագետների կողմից, կանոնակարգել նաև աճուրդների կազմակերպման գործընթացը՝ կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար:

423. Ինչ վերաբերում է ապահովված իրավունքի առարկայի իրացմանը, ապա նշվում է, որ սնանկության մասին օրենքը պետք է անդրադառնա ապահովված իրավունքի առարկայի օգտագործման կամ օտարման հարցին՝ պատասխանելով նաև հարցին, թե այդպիսի գույքի իրացումն ում կողմից կարող է իրականացվել: Որդեգրված մոտեցումը մեծապես կախված է նրանից, թե արդյոք ապահովված իրավունքի առարկան ներառվում է սնանկության գույքի կազմում. եթե ոչ, ապա ապահովված պարտատերը պետք է հնարավորություն ունենա իրացնել այդ գույքը: Սնանկության մասին որոշ օրենքներ, օրինակ, նախատեսում են, որ միայն անվճարունակության ներկայացուցիչը կարող է տնօրինել ապահովված իրավունքի առարկան ինչպես լուծարման, այնպես էլ ֆինանսական առողջացման գործընթացներում: Այլ օրենքներ տարբերակում են լուծարումը և վերակազմավորումը. սնանկության ներկայացուցիչը կարող է տնօրինել ակտիվները վերակազմակերպման ժամանակ, սակայն լուծարման դեպքում այդ հնարավորությունը ժամանակավոր է: Որոշ դեպքերում էլ ապահովված պարտատիրոջ կողմից իր իրավունքների իրացումը թույլատրվում է անվճարունակության ներկայացուցչի բացառիկ ժամկետը լրանալուց հետո: Ինչ մոտեցում էլ որդեգրվի, անվճարունակության մասին օրենքը պետք է պահանջի, որ ապահովված պարտատերերը տեղեկացվեն ցանկացած առաջարկվող իրացման մասին և առարկելու հնարավորություն ունենան: Այն դեպքում, երբ ապահովված պահանջը գերազանցում է ակտիվի արժեքը կամ ակտիվը չի պահանջվում վարույթի պատշաճ իրականացման համար, անվճարունակության ներկայացուցչին կարող է թույլատրվել առանց ծանուցման ապահովված իրավունքի առարկան փոխանցել ապահովված պարտատիրոջը:

424. Բացի այդ, Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը մեկնաբանվում է այնպես, որ անշարժ գույքի նկատմամբ կիրառված բոլոր, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կիրառված արգելանքները, մորատորումի գործողության արդյունքում վերացվում են, այն հիմնավորմամբ, որ եթե անգամ քրեական գործերի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերով պարտապանին առաջադրվեն գույքային պարտավորություններ(գույքի հնարավոր բռնագրավում, դատական ծախսեր կամ քաղաքացիական հայցի բավարարում), միևնույն է, այդ պարտավորություններից բխող պահանջները

պետք է ընդգրկվեն և կատարվեն բացառապես սնանկության գործի շրջանակներում: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գույքը, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, ազատվում է կալանքից, եթե քաղաքացիական հայցը հետ վերցվելու, կասկածյալին կամ մեղադրյալին վերագրվող արարքի որակումը փոխվելու հետևանքով կամ այլ պատճառներով վերացել է գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը: Իսկ նույն օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը, ի թիվս այլ հարցերի, որոշում է վերացվելու է արդյոք հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցումը կամ գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար գույքի վրա դրված կալանքը: Այսպիսով, վերոգրյալից ակնհայտ է, որ անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կիրառված արգելանքը սնանկության գործով վերացնելու կապակցությամբ առկա են տարբեր կարգավորումներ, ինչը հանգեցնում է դրանց տարբեր մեկնաբանություններով կիրառման:

425. Պարտապանի ակտիվների տնօրինման մասով Սնանկության օրենսգիրքը պետք է նախատեսի մեխանիզմ, որով շահերի բախմամբ պահանջների առարկա հանդիսացող ակտիվների իրացումը՝ սեփականության, վարձակալության կամ գրավի վաճառքը կարող է շարունակվել՝ չսպասելով այդ պահանջների վերջնական լուծմանը: Անհրաժեշտության դեպքում ակտիվները կարող են վաճառվել դեռևս կցված իրավունքներով, բայց ստացված գները շատ ցածր կլինեն: Որոշ երկրներ առաջարկում են շատ ավելի լավ մոտեցում, այն է՝ վաճառել պարտապանի ակտիվները «ազատ և մաքուր» բոլոր այլ արգելանքներից կամ շահերից՝ թողնելով պահանջատերերին վիճարկել վաճառքից ստացված եկամուտները: Քանի որ օրենքը վերացնում է վաճառված գույքի բոլոր հակասական շահերը, այն գնորդների կողմից կբերի հնարավոր լավագույն գին: Շատ կարևոր է ապահովել, որ լուծարման կամ վերակազմակերպման դեպքում ակտիվները վաճառվեն ողջամիտ գումարով: Ակտիվների վաճառքը սնանկության համակարգում հնարավոր կոռուպցիայի կամ ինսայդերական գործարքների հիմնական աղբյուրն է: Լուծարման ժամանակ ակտիվները որպես կանոն օտարվում են ավելի ցածր վաճառքի գնով, քան սովորական շուկայական պայմաններում վաճառվող նմանատիպ ակտիվները: Այնուամենայնիվ, ընթացակարգային տարբեր պաշտպանություններ կարող են իրականացվել՝ ապահովելու գործընթացի արդարությունը և առավելագույնի հասցնելու իրացման գինը: Ժամանակակից համակարգերում հայտնաբերված պաշտպանության տեսակները ներառում են.

- անկախ և անաչառ գնահատողի կողմից կազված գնահատման ակտերի ստացում (հատկապես կարևոր է անշարժ գույքի և մասնագիտացված արդյունաբերական սեփականության հետ կապված).
- պատշաճ ծանուցում պարտատերերին և ապագա գնորդներին՝թույլ տալով դժգոհ պարտատերերին իրավական փոխհատուցում փնտրել, եթե նրանք ունեն մտահոգություններ կամ առարկություններ գործընթացի հետ կապված.
- որոշ դեպքերում՝ պահանջելով նվազագույն մասնակցության վճարներ, կանխել և պատժել հայտերի կեղծումը (այսինքն՝ հայտատուների միջև անօրինական համաձայնությունները):

426. Միացյալ Թագավորությունում սնանկության վարույթում պարտապանի ակտիվների հավաքագրման ու գնահատման մասով «Անվճարունակության մասին» ակտի 234-րդ բաժինը սահմանում է ընկերության գույքի ապահովման մասով կարգավորումներ և տարածվում է կառավարման վարույթ սկսելու դեպքում, լուծարման գործընթաց սկսելու դեպքում, ժամանակավոր լուծարային կառավարչի նշանակման դեպքում: Դատարանը կարող է հանձնարարել ցանկացած սուբյեկտի ով տիրապետում կամ վերահսկում է որևէ ակտիվ, փաստաթուղթ, որը պատկանում է ընկերությանը, անհապաղ կամ որոշակի ժամկետում դրանք հանձնել համապատասխանաբար կառավարչին, պաշտոնական ստացողին, լուծարային կառավարչին: Եթե վերջինս սխալմամբ ընդունում կամ վաճառում է գույք, որը չի պատկանում ընկերությանը, տվյալ գործողության իրականացման պահին համարելով դա ընկերության գույք (դատարանի որոշման կամ այլ օրինական պատճառի հիման վրա), ապա՝

1) նա պատասխանատվություն չի կրում այս գործողության հետևանքով պատճառված որևէ կորուստի կամ վնասի համար, եթե դա չի եղել իր իսկ անփութության հետևանքով:
2) նա իրավունք ունի պահելու գույքը կամ դրանց վաճառքից ստացված ցանկացած հասույթ՝ այդ գույքի սխալ բռնագանձման կամ վաճառքի պատճառով առաջացած ծախսերը փոխհատուցելու համար[96]: Դատարանն իրավասու է հրավիրել ընկերության ցանկացած պաշտոնյայի, որը հայտնի է կամ կասկածվում է, որ իր տիրապետության տակ ունի ընկերության որևէ գույք կամ ենթադրաբար պարտք է ընկերությանը, ինչպես նաև որևէ այլ անձի, ում դատարանը գտնում է, որ կարող է տեղեկատվություն տրամադրել

[96] Տե՛ ս Participation (n 59) 234:

ընկերության ստեղծման, բիզնեսի, գործարքների, գործերի կամ սեփականության վերաբերյալ[97]:

427. Կարևոր է, որ մեխանիզմները լինեն և՛ ճկուն, և՛ թափանցիկ: Նույնիսկ այն երկրներում, որտեղ օրենքները հստակ չեն՝ կան ընթացակարգեր, որոնք թույլ չեն տալիս փոխկապակցված անձանց կամ գործընկերներին հետ գնել կորպորատիվ ակտիվները «հարմար» գներով: Մեկ այլ միջոց, որը սկսել է առավել հաճախ օգտագործվել՝գործող բիզնեսները վաճառելն է: Սնանկության կառավարիչը պայմանական վաճառք է կազմակերպում շահագրգիռ կողմի սահմանված գնով, սակայն պայմանագրում նշվում է, որ այն կարող է չեղարկվել (խզվել), եթե սահմանված ժամկետում ստացվի ավելի բարձր հայտ: Այն դեպքում, երբ առաջին հայտատուի հետ պայմանագիրը կչեղարկվի, ապա նրան կվճարվի զգալի չափով «խզման» վճար, եթե ավելի բարձր հայտը փոխարինի նրա պայմանագիրը: Այս մեխանիզմը բարդ է և երբեմն հակասական, բայց վերջերս կարևոր է դարձել[98]:

428. Ուղեցույցը ևս ընդունում է պարտապանի բիզնեսի՝ որպես ամբողջության վաճառքի հնարավորությունը, ավելին՝ որոշ դեպքերում խրախուսելով այդպիսի վաճառքի իրականացումը: Հատկապես կարևորվում է այդպիսի վաճառքը, երբ բիզնեսը վարույթը սկսելուց հետո դեռևս գործունակ է, և հնարավորություն կա այն շարունակելու, ինչպես օրինակ, ֆինանսական առողջացման դեպքում:

429. Մեկ այլ՝ Ղազախստանի «Առողջացման և սնանկության մասին» օրենքի99-1-ին հոդվածով կարգավորվում է սնանկացած ընկերության վաճառքը: Մասնավորապես սահմանվում է, որտվյալ օրենքի իմաստով սնանկ ձեռնարկություն է այն գույքային համալիրը, որն օգտագործվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար և ներառում է բոլոր տեսակի գույքը, ներառյալ՝ շենքերը, շինությունները, սարքավորումները, արտադրանքը, հողամասի նկատմամբ իրավունքները, պահանջները: Ուշադրության է արժանի այն, որ առանձին բիզնեսի վաճառքը կարող է իրականացվել միայն ուղղակի վաճառքի միջոցով:

430. Սույն ուղղության շրջանակում հարկ է նկատել նաև, որ գործող օրենսդրությամբ հստակեցված չէ դրամական պահանջների գանձման ընթացակարգերը կամ նման պահանջները աճուրդով իրացնելու հարցը:

431. Ինչ վերաբերում է աճուրդների կազմակերպման ընթացակարգերին, ապա հարկ է նշել, որ պրակտիկայում որևէ սահմանափակում կամ պահանջ չի սահմանվում՝ կառուցակարգերը սահմանելու նախապատվությունը վերապահելով պետություններին: Այսպես, եթե գույքի ուղղակի վաճառքի դեպքում որպես պահանջ նախատեսվում է դրա հաստատումը դատարանի կամ պարտատերերի կողմից, ապա գույքի հրապարակային սակարկությունների դեպքում նման

[97] Տե՛ ս Participation (n 65) s 236 (1), (2):

[98] Տե՛ս նույն տեղում, 93:

պահանջը բացակայում է: Որպես այդպիսին, հիմնական մոտեցումը այն է, որ գույքի իրացման ցանկացած եղանակի դեպքում ապահովվի պարտատերերի պատշաճ ծանուցումը գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև այնպիսի մեխանիզմների ներդրումը, որոնք կչեզոքացնեն իրացման գործընթացում կոռուպցիոն դրսևորումների հավանականությունը:

432. Ընդ որում, գործող կարգավորումների պարագայում էլ հիմնական խնդիրները վերաբերում են գույքի վաճառքի գնին, դրա փուլերին, ճկուն համակարգերի ներդրմանը, որոնց պրակտիկ կիրառումը կարող է չարաշահումներ թույլ տալու ռիսկեր պարունակել:

433. Այս առումով հատկապես կարևոր է աճուրդների էլեկտրոնային համակարգերի ներդրումը և զարգացումը, ինչը հնարավորություն կտա ունենալ ավելի ճկուն և կոռուպցիոն ռիսկերից զուրկ համակարգ: Միաժամանակ պետք է հետամուտ լինել էլեկտրոնային համակարգի զարգացմանը և խրախուսել դրա օգտագործումը՝ դասական եղանակով աճուրդների անցկացումը թույլատրելով միայն առանձնահատուկ դեպքերում:

434. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **սահմանել սնանկության գույքի կազմը, այդ թվում՝ բացառությունները, դրա բացահայտմանն ու հավաքագրմանն ուղղված միջոցառումները՝ միաժամանակ նախատեսելով պարտապանի (ղեկավարի) պատասխանատվությունը գույքագրման աշխատանքներին խոչընդոտելու դեպքում.**
2) **բարելավել գույքի իրացմանը՝ ուղղակի վաճառքով կամ աճուրդի միջոցով, վերաբերող կարգավորումները՝ հատուկ ուշադրություն դարձնելով պարտատերերի և շահագրգիռ անձանց ծանուցմանը, կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանը և աճուրդները էլեկտրոնային եղանակով կազմակերպելուն, ինչպես նաև աճուրդի արդյունքում գույք ձեռք բերած անձանց շահերի պաշտպանությանը՝ բարձրացնելով սնանկության աճուրդների նկատմամբ հանրային վստահությունը.**
3) **սահմանել բիզնեսը որպես ամբողջություն իրացնելու դեպքերը և խթանել նման իրացման հնարավորությունը.**
4) **հստակեցնել դրամական պահանջների գանձման ընթացակարգերը կամ նման պահանջները աճուրդով իրացնելու հարցը.**
5) **նախատեսել գույքի գնահատման վերաբերյալ ընդհանուր սկզբունքներ, որոնք հիմք կհանդիսանան ենթաօրենսդրական մակարդակում մանրամասն ընթացակարգերի սահմանման համար, ինչպես նաև դիտարկել անշարժ գույքի դեպքում մոտարկված**

շուկայական կադաստրային արժեքը որպես աճուրդային գնի որոշման ելակետ ընդունելու հարցը.

6) **կանոնակարգել սնանկության վարույթում դրված արգելանքների՝ որպես աճուրդների իրականացման խոչընդոտների վերացման ընթացակարգերը:**

9) Սնանկության վարույթում թույլատրելի ծախսերի շրջանակը

435. Անհնար է պատկերացնել սնանկության վարույթի իրականացումը առանց սնանկության վարույթում տարաբնույթ ծախսերի իրականացման: Սնանկության վարույթի ծախսերը ներառում են վարույթի իրականացման հետ կապված մի շարք ծախսեր, այդ թվում՝ պարտատերերի ժողովների կազմակերպման և անցկացման, ծանուցումների իրականացման, գույքագրման, գույքի գնահատման, պահպանության, գույքի վաճառքի, մասնագետների ներգրավման և մի շարք այլ ծախսեր, որոնք օրենքը հավաքական դիտարկում է որպես վարչական ծախսեր: Սնանկության վարույթի ծախսերը պայմանականորեն կարելի է բաժանել են երկու մասի.
    1) ծախսեր, որոնք անկախ որևէ հանգամանքից պետք է կատարվեն (դրանք պարտապանի սնանկության մասին հայտարարության հրապարակման, պարտապանի գույքի հայտնաբերման, վարույթի մասնակիցներին ուղարկվող ծանուցումների, պարտատերերի առաջին ժողովի հրավիրման մասին հայտարարության, պարտատերերի նախնական ցուցակի և այլ ծանուցումների ծախսերն են) և
    2) ծախսեր, որոնք կախված են կոնկրետ սնանկության վարույթի առանձնահատկություններից, օրինակ՝ գույքի քանակից, գտնվելու աշխարհագրությունից և այլն:
436. Այս տեսանկյունից կարելի է արձանագրել, որ մինչև սնանկության վարույթ նախաձեռնելը առաջին խմբին պատկանող ծախսերը հաշվելի են՝ բոլոր գործերի համար գրեթե նույնն են, իսկ երկրորդ խմբի ծախսերը տարբեր են՝ դրանց մեծությունը կախված է յուրաքանչյուր գործի առանձնահատկությունից: Ընդ որում, եթե պարտապանի մոտ ակտիվների բացակայության դեպքում առաջին խմբի ծախսերը փոխհատուցելու աղբյուր չի լինում, ապա երկրորդ խմբին պատկանող ծախսերը հիմնականում առաջանում են այն դեպքում, երբ պարտապանը ունի ակտիվներ, իրականացնում է որոշակի գործառույթներ, հետևաբար հենց այդ ակտիվների հաշվին էլ փոխհատուցվում են ծախսերը:
437. Ուստի վարչական ծախսերը, հատկապես եթե խոսքը գնում է երկրորդ խումբ ծախսերի մասին, կարող են էական ազդեցություն ունենալ սնանկության վարույթում ներգրավված գույքի արժեքի վրա, հետևաբար անհրաժեշտ կլինի

դիտարկել այն հարցը, թե ինչպես կարելի է նվազագույնի հասցնել այդ ազդեցությունը[99]:

438. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման գնահատման անցկացման համար կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ: Օրինակ, կարող է պահանջվել դատարանի թույլտվությունը նախքան ծախսերի իրականացումը կամ պահանջվի դատարանի թույլտվությունը բոլոր այն ծախսերի համար, որոնք դուրս են սովորական բիզնես գործունեության շրջանակներից: Մեկ այլ մոտեցում կարող է լինել պարտատերերի կողմից վերոնշյալ գնահատումը իրականացնելը, որպեսզի ապահովվի գործընթացների թափանցիկությունը, պայմանով, որ հնարավոր լինի պարտատերերի գնահատումը վիճարկել դատական կարգով[100]:

439. Այս առումով հարցը մանրամասն կարգավորման է ենթարկել ՌԴ սնանկության մասին օրենքը: Մասնավորապես, օրենքի հոդված 20.7-ը[101] սահմանում է կառավարչի կողմից վարույթում ներգրավված անձանց, մասնագետներին վճարվելիք ծախսերի առավելագույն չափերը՝ ելնելով պարտապանի գույքի հաշվեկշռային արժեքից՝ նախատեսելով նաև դատարանի լիազորությունը այդ ծախսերը համարելու չհիմնավորված, իսկ այդ ծախսերը գերազանցելու անհրաժեշտության դեպքում միայն դատարանի որոշմամբ նման անձանց ներգրավելու մեխանիզմը: Օրենքը նաև սահմանել է, որ եթե այդ անձինք ներգրավվում են պարտատերերի ժողովի որոշմամբ, ապա ծախսերի հատուցումը կատարվում է պարտատերերի հաշվին՝ նրանց պահանջներին համամասնորեն:

440. Անդրադառնալով գործող օրենսդրությանը՝ հարկ է նշել, որ գործող Օրենքը սահմանում է «վարչական ծախսեր» եզրույթը, իսկ Օրենքի 82-րդ հոդվածում սահմանված են այն ծախսերը, որոնք կարող են համարվել վարչական ծախս. գույքի պահպանման և տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը (սնանկության դիմումը ներկայացնելու օրվանից մինչև ֆինանսական առողջացման ծրագրի նախագծի հաստատումն ընկած ժամանակահատվածում ֆինանսավորումները), վարչական աշխատողների աշխատավարձը, եկամտային հարկի վճարումները և պարտադիր սոցիալական վճարները, վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերը, պարտադիր սոցիալական վճարները, աշխատավարձի, եկամտային հարկի և պարտադիր սոցիալական վճարների վերաբերյալ փաստաթղթերի արխիվացման ծախսերը:

441. Առկա կարգավորումը, սակայն, չի պարունակում որոշակիություն, չի սահմանում, թե որ ծախսը ինչ սահմաններում պետք է կատարվի, որոնք են ծախսերը ողջամիտ համարելու չափորոշիչները: Ճիշտ է, Օրենքը որպես կառավարչի

[99] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, էջ 261:
[100] Տե՛ս նույն տեղում, էջ 262:
[101] Տե՛ս https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39331/3051bd963a1c02a7e19142f6062e0ea67f07b259/:

վարքագծի կանոն սահմանում է իր լիազորությունները ողջամիտ և նվազ ծախսատարության սկզբունքով իրականացնելու պահանջ, սակայն մեխանիզմներ չի նախատեսում ոչ ողջամիտ ծախսերի իրականացումը զսպելու առումով:

442. Նման կարգավորումների բացակայությունը մի կողմից առիթ է հանդիսանում վեճերի առաջացման համար, մյուս կողմից կարող է կառավարչի կողմից գերածախսեր կատարելու կամ չարաշահումների պատճառ հանդիսանալ:

443. Օրենքը չի կարգավորում նաև՝ որ տեսակի ծախսերը ինչ աղբյուրներից կարող են փոխհատուցվել:

444. Այս առումով Սնանկության մասին նոր օրենսգրքով կարող են նախատեսվել ծախսերի ողջամտությունը գնահատելու և թույլատրելու ճկուն չափանիշներ՝ հիմնվելով այդ ծախսերի օգտակարության վրա, մասնավորապես.

1) արդյոք դրանք իրականացվել են պարտատերերի պահանջների բավարարվածության մակարդակը բարձրացնելու կամ պարտապանի գույքի արժեքը բարձրացնելու համար.
2) արդյոք դրանք արվել են ի շահ վարույթի բոլոր շահագրգիռ մասնակիցների.
3) արդյոք դրանք իրականացվել են՝ ելնելով սնանկության վարույթի հիմնական նպատակներից.
4) ինչպես են այդ ծախսերը ազդել սնանկության վարույթի վրա.
5) արդյոք եղել են այլընտրանքային, մատչելի տարբերակներ և այլն[102]:

445. Ըստ այդմ՝ սնանկության վարույթում իրականացվող ծախսերը պետք է լինեն.

1) անհրաժեշտ, այսինքն՝ դրանց իրականացումը պայմանավորված է սնանկության վարույթում որոշակի գործողություն կատարելու կամ արդյունքի հասնելու օբյեկտիվ անհրաժեշտությամբ, և առանց այդ ծախսերն իրականացնելու այդ գործողությունը անհրաժեշտ ձևով չի կարող իրականացվել կամ չի կարող սպասվող արդյունք տալ,
2) ողջամիտ, այսինքն՝ այլ հավասար պայմաններում համանման արդյունք ստանալու համար պահանջվող ծախսերին համարժեք,
3) հիմնավոր, այսինքն՝ ծախսերի անհրաժեշտությունը, ողջամտությունը և կատարված լինելը որևէ անկախ դիտորդի մոտ կասկած չեն հարուցի:

446. Բացի այդ, կարող են սահմանվել նաև ծախսային ուղղություններ և դրանց սահմանաչափերը, որոնց պարագայում ծախսի իրականացման հարցը պետք է քննարկման արժանանա պարտատերերի ժողովի կողմից, իսկ ծախսերը թույլատրելու կամ չթույլատրելու որոշումը լինի դատական վիճարկման ենթակա:

447. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

[102] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, էջ 262:

1) **սահմանել սնանկության վարույթում իրականացման ենթակա ծախսերի հնարավորինս սպառիչ ցանկը, իսկ դրանից դուրս ծախսերի իրականացման թույլտվությունը տալու լիազորությունը վերապահել պարտատերերի ժողովին՝ դրանց անհրաժեշտության ողջամտության և սահմաններում.**
2) **ծախսային ուղղությունների համար հնարավորության դեպքում սահմանել անհրաժեշտության և ողջամտության որոշման չափորոշիչներ,**
3) **տարանջատել առանց որևէ համաձայնության իրականացվող ծախսերը և դրանց սահմանաչափերը այն ծախսերից ու սահմանաչափերից, որոնք կարող են իրականացվել նախապես ստացված համաձայնությունների, օրինակ՝ պարտատերերի ժողովի համաձայնության) առկայության դեպքում,**
4) **սահմանել ծախսերի հաշվարկման և հաշվառման, ինչպես նաև վերահսկման գործուն ընթացակարգեր՝ բացառելով բողոքարկումների միջոցով սնանկության վարույթը ձգձգելու դեպքերը:**

10) Ֆիզիկական անձանց սնանկությունը

448. Ֆիզիկական անձանց սնանկության մասին կարգավորումները շատ ընդհանրություններ ունեն սնանկության մասին ընդհանուր կարգավորումների հետ, որոնք նախատեսված են հիմնականում բիզնես պարտապանների համար, սակայն առաջինները տարբերվում են պարտապանի վերականգնման և սոցիալական բարօրության նկատմամբ իրենց առավել ընդգծված շահագրգռվածությամբ: Կախված համապատասխան երկրի իրավական մշակույթից և ավանդույթներից, ընդգծվում են կամ համակարգված նմանությունը կամ տարբերությունները բիզնեսի սնանկության և ֆիզիկական անձի սնանկության միջև: Այս տարբեր մոտեցումները որոշ չափով արտացոլվում են նրանում, թե ինչպիսի ընտրություն է կատարվում ֆիզիկական անձանց սնանկության մասին կարգավորումները կամ ընդհանուր (բիզնեսի) սնանկության մասին օրենքում (Սնանկության կամ անվճարունակության մասին օրենսգիրք) կամ առանձին օրենսդրության մեջ ներառելու միջև[103]:
449. Պատմականորեն, ֆիզիկական անձանց սնանկությունը զարգացել է որպես սնանկության մասին ընդհանուր օրենսդրության մաս, հատկապես անգլոամերիկյան համակարգերում: Դեռևս այսօր, շատ երկրներ ֆիզիկական անձանց սնանկության ընթացակարգերը ներառել են իրենց ընդհանուր

[103] Տե՛ս https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/1780a7a6-1e04-53bd-99c8-dde06425bf3e/content, էջ 51:

սնանկության օրենքներում: Նույնիսկ եթե ֆիզիկական անձանց սնանկությունը ներառված է սնանկության օրենքում, դա սովորաբար ամփոփ և բավականին պարզ դատական գործընթաց է, որը տարբերվում է բիզնես գործերում կիրառվող ավելի բարդ ընթացակարգերից[104]: Այս կառուցակարգը, որը գործում է նաև ներկայումս ՀՀ սնանկության համակարգում, ունի իր առավելությունները: Եթե ֆիզիկական անձի սնանկությունը կարգավորվում է սնանկության մասին ընդհանուր օրենքի համատեքստում, ապա հնարավոր է կիրառել սնանկության իրավունքի հատուկ ինստիտուտներին, ինչպիսիք են մորատորիումը, մորատորիումից բացառությունները, վարույթի հարուցման այլ հետևանքները, երրորդ անձանց փոխանցումների հետ ստացումը և սնանկության իրավունքի ընդհանուր սկզբունքները: Քանի որ ֆիզիկական անձանց սնանկության գործերի մեծ մասը անձնական բիզնեսի ձախողման հետևանք են լինում, որոշ դեպքերում անհրաժեշտ է սահուն անցում կատարել բիզնես սնանկությունից ֆիզիկական անձանց սնանկության: Ֆիզիկական անձանց սնանկության մասին ընդհանուր սնանկության մասին օրենքում տեղաբաշխումը հեշտացնում է այս գործը[105]:

450. Ուստի շատ երկրներ ֆիզիկական անձ պարտապաններին, որոնք ներգրավված են տնտեսական գործունեության մեջ, ներառում են իրենց բիզնես սնանկության մասին օրենքների շրջանակում: Այլ պետությունների փորձը ցույց է տալիս, որ թեև ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության մաս է կազմում, այդ դեպքերը հաճախ լավագույնս կարգավորվում են ֆիզիկական անձանց սնանկության ռեժիմի ներքո, քանի որ, ի վերջո, անձնական բիզնեսի սեփականատերն իր գործունեությունը իրականացնում է այնպիսի մեխանիզմի միջոցով, որը չի օգտվում պատասխանատվության որևէ սահմանափակումից՝ նրանց թողնելով բիզնեսի պարտքերի դիմաց անձնական պատասխանատվության առջև՝ առանց սահմանափակման: Սա հանգեցնում է նաև պարտքի մարման հետ կապված խնդիրների, ներառյալ երկար ժամանակահատվածը, որը պահանջվում է մինչև պարտքի ամբողջական մարումը, և այն պարտավորությունները, որոնցից ազատվում է ֆիզիկական անձը[106]:

451. Այս համատեքստում լավագույն լուծումը կարող է լինել պարզեցված ընթացակարգի շրջանակներում ֆիզիկական անձի սնանկության հարցերին անդրադառնալը՝ որպես հատուկ ընթացակարգ՝ պահպանելով գործող օրենքի ընդհանուր մոդելը:

---

[104] Տե՛ս նույն տեղում, էջ 52:

[105] Տե՛ս նույն տեղում, էջ 53:

[106] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, 39:

452. Այնուամենայնիվ, առկա են մի շարք խնդիրներ, որոնց անհրաժեշտ է անդրադարձ կատարել ֆիզիկական անձի սնանկության վարույթի կարգավորումների վերանայման ընթացքում:
453. Առաջնային խնդիրներից մեկը, որին անհրաժեշտ է անդրադառնալ, սնանկության վարույթին ֆիզիկական անձանց հասանելիության աստիճանն է:
454. Համաշխարհային բանկը նշում է, որ կարող են սահմանվել մի շարք իրավական և գործնական պայմաններ պարտապանների՝ սնանկության ընթացակարգերին հասանելիության համար: Օրինակ՝ պարտքի նվազագույն չափ, «մշտական անվճարունակության» չափանիշի առկայություն, բարեխղճություն, պայման, որ ժամկետանց պարտավորությունները ծագած լինեն պարտապանի վերահսկողությունից դուրս օբյեկտիվ պատճառներից ելնելով, ինչպիսիք են օրինակ հիվանդությունը կամ գործազրկությունը: Կամ օրինակ կարող է պահանջվել, որ պարտապանը ապացուցի, որ նա խորհրդակցել է մասնագետների, միջնորդների հետ, ստացել է խորհրդատվություն կամ փորձել է բանակցություններ վարել՝ նախքան սնանկության մասին դիմում ներկայացնելը[107]:
455. Հայաստանյան իրականությունում վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2019-2022 թվականներին աճել են պարտապան ֆիզիկական անձանց կողմից սնանկության դիմում ներկայացնելու դեպքերը: Մասնավորապես 2019 թվականին ներկայացվել է 987, 2020 թվականին՝ 1747, 2021 թվականին՝ 1961 դիմում, իսկ 2022 թվականին՝ 2800 դիմում[108]: Այսպիսով, շատ դեպքերում կամավոր սնանկության դիմում ներկայացնելը դարձել է պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց: Ուստի անհրաժեշտ է օրենքով սահմանել մեխանիզմներ, որոնք կկանխեն նման չարաշահումները և սնանկության վարույթը կծառայեցնեն իր նպատակին:
456. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է այն փաստաթղթերի ցանկը, որոնց ներկայացման դեպքում միայն դատարանը կարող է դիմումն ընդունել վարույթ: Հարկ է նկատել, որ այս նորմի կարգավորումներին արդեն իսկ անդրադարձ կատարվել է սույն հայեցակարգի շրջանակում:
457. Մյուս հարցը վերաբերում է պարտքերից ազատմանը: Երկրները տարբեր մոտեցումներ են որդեգրել այս հարցում[109]: Որոշ երկրներում անվճարունակ պարտապանը չի կարող ազատվել պարտքերից, քանի դեռ նրա բոլոր պարտքերը չեն վճարվել: Այլ դեպքերում՝ պարտապանը շարունակում է պատասխանատվություն կրել չբավարարված պահանջների համար՝ որոշակի

[107] Տե՛ս https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/1780a7a6-1e04-53bd-99c8-dde06425bf3e/content, էջ 72:
[108] Տե՛ս https://court.am/hy/statistic:
[109] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf , էջ 282:

սահմանափակ ժամկետի ընթացքում (որը որոշ դեպքերում կարող է բավականին երկար լինել, օրինակ՝ 10 տարի), և դրանից հետո նոր կարող է ազատվել պարտավորություններից: Այդ օրենքներից որոշները կարող են նաև պարտապանին պարտադրել մի շարք պայմաններ և սահմանափակումներ՝ կապված մասնագիտական, առևտրային և անձնական գործունեության հետ, օրինակ՝ արգելելով հանդես գալ որպես ընկերության տնօրեն:

458. Կան երկրներ, որոնք նախատեսում են բարեխիղճ պարտապանի ամբողջական ազատում պարտքերից գույքի լուծարման արդյունքում տեղի ունեցած միջոցների բաշխումից անմիջապես հետո: Այս մոտեցումը ընդգծում է «նոր սկզբի» (fresh start) գաղափարը, որը նախատեսված է խթանելու ձեռնարկատիրական գործունեության զարգացումը: Սրանով նաև ընդգծվում է, որ գերպարտքի առկայությունը ներկայիս տնտեսական իրողություններում նորմալ երևույթ է և պետք է լուծվի սնանկության միջոցով:

459. Որոշ երկրների սնանկության օրենսդրության հայեցակարգերում նախատեսվում է նաև «վաստակած սկիզբ» (earned start) եզրույթը, ինչը ենթադրում է գույքի բռնագանձման հնարավորություն անգամ սնանկության ճանաչումից հետո[110]:

460. Երրորդ մոտեցումը փոխզիջումային տարբերակն է. պարտքերից ազատումը տրվում է միջոցների բաշխմանը հաջորդող որոշակի ժամանակահատվածից հետո, և դրա ընթացքում ակնկալվում է, որ պարտապանը բարեխիղճ ջանքեր կգործադրի իր չմարված պարտավորությունները բավարարելու համար:

461. Անկախ որդեգրված մոտեցումից, որոշ դեպքերում բոլոր երկրներում էլ կան սահմանափակումներ պարտքերից ազատվելու առումով: Այս հանգամանքները կարող են ներառել այն դեպքերը, երբ պարտապանը խարդախությամբ է գործել, զբաղվել է հանցավոր գործունեությամբ, խախտվել է աշխատանքային կամ բնապահպանական օրենքները, բարեխղճորեն չի մասնակցել սնանկության վարույթին կամ չի համագործակցել սնանկության կառավարչի հետ, չի տրամադրել կամ թաքցրել է գույքի վերաբերյալ տեղեկությունները, թաքցրել կամ ոչնչացրել է գույքը, շարունակել է տնտեսական գործունեությունը անվճարունակությունից հետո, վերցրել է պարտքեր՝ առանց դրանք վճարելու ողջամիտ ակնկալիքի առկայության և այլն:

462. Պարտապան ֆիզիկական անձի նկատմամբ կարող են սահմանվել նաև տարբեր սահմանափակումներ՝ որպես պարտքից ազատելու պայման: Դրանք կարող են ներառել նոր վարկ ստանալու սահմանափակումներ, երկիրը լքելու արգելք, որոշակի ժամանակահատվածով բիզնեսով կամ որոշակի մասնագիտությամբ զբաղվելու արգելք:

---

[110] Տե՛ս https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2016/12/31/Republic-of-Lithuania-Technical-Assistance-Report-on-Proposals-for-Reforming-the-Insolvency-25340:

463. Ըստ այդմ՝ նոր օրենսդրությամբ հարկ կլինի անդրադառնալ նաև ֆիզիկական անձ պարտապանի պարտավորություններից ազատվելու հարցին: Առաջարկվում է առաջնորդվել երրորդ մոտեցմամբ՝ միաժամանակ ապահովելով, որ պարտապանի ընթացիկ եկամուտները, աշխատավարձը որոշակի ժամանակատվածում ուղղվեն պարտատերերի պահանջների բավարարմանը: Անհրաժեշտ կլինի օրենքով սահմանել որոշակի ժամանակահատված, որի ընթացքում պետք է շարունակվեն բռնագանձումները: Ընդ որում, պետք է հաշվի առնվի նաև բռնագանձվող գումարի չափի և պարտատերերի պահանջների չափի հարաբերակցությունը՝ որոշելու համար բռնագանձման ժամանակահատվածի ողջամտությունը կամ ընդհանրապես նման բռնագանձում իրականացնելու անհրաժեշտությունը: Այս հարցերի որոշումը առաջարկվում է թողնել դատարանի վրա՝ կառավարչի միջնորդությամբ: Միաժամանակ օրենսդրությամբ անհրաժեշտ կլինի սահմանել նաև նման բռնագանձումների տարածման կարգը:

464. Հարկ է հատուկ անդրադառնալ նաև ֆիզիկական անձի առողջացման հարցերին պարտատերերի մասնակցությանը: Ֆիզիկական անձանց սնանկության ընթացակարգերում պարտատերերը սովորաբար քիչ դեր են խաղում կամ ընդհանրապես բացակայում են: Նույնիսկ այն դեպքում, երբ պարտատերերը հրավիրվում են մասնակցելու վարույթին, նրանց մասնակցությունը ֆիզիկական անձի անվճարունակության գործերին ինքնին չի ենթադրվում: Պարտատերերը կմասնակցեն, երբ կհամարեն, որ դա իրենց շահերից է բխում, և նրանք չեն ցանկանա մասնակցել, երբ կարծում են, որ իրենց մասնակցությունը դժվար թե մեծացնի իրենց պահանջների բավարարումը: Այսպիսով, ֆիզիկական անձանց սնանկության դեպքերի զգալի մասում, որտեղ պարտատերերը պահանջների քիչ բավարարում են ակնկալվում կամ ընդհանրապես չեն ակնկալում, նրանց պասիվությունը կարող է լինել ռացիոնալ ընտրություն: Հետևաբար, այսօր աշխարհում ֆիզիկական անձանց մասնակցությամբ անվճարունակության գործերի ճնշող մեծամասնությունում պարտատերերի ակտիվ մասնակցությունը բացառիկ դրսևորում է: Որոշ երկրներ այս հարցով նվազեցրել են պարտատերերի ժողովների քվորումը (նույնիսկ մինչև մեկ պարտատեր), այլ դեպքերում գտել են պարտատերերի մասնակցությունը պարզեցնելու կամ նվազեցնելու ուղիներ և վերջապես, կան երկրներ, որ պարտատերերի մասնակցության մեխանիզմներ սահմանում են միայն այն դեպքերում, երբ ակնկալվում է պահանջների նշանակալի բավարարում: Վերջին տարիներին շատ երկրների օրենսդիրներ եկել են այն եզրակացության, որ վարչական ծախսերը և պարտատերերի ժողովների պատճառով գործի ձգձգումները զգալիորեն գերազանցում են այն չնչին օգուտները, որ պարտատերերը կարող են ստանալ ֆիզիկական անձանց սնանկության վարույթին մասնակցելուց: Արդյունքում, նկատելի միտում է ձևավորվել պարտատերերի ժողովները վերացնելու և պահանջների

ներկայացման ու ստուգման և պարտատերերի մասնակցության այլ ձևերի պարզեցման ուղղությամբ գնալու՝ հաշվի առնելով, որ միայն քիչ դեպքերում է, երբ ակնկալվում է զգալի գումար բաշխել պարտատերերին[111]: Պարտատերերի մասնակցությունը հատկապես ֆիզիկական անձի առողջացման ծրագրի ընդունման հարցում գրեթե զրոյացնում է պարտապանի առողջացման հնարավորությունը, քանի որ գործող օրենսդրությամբ անհրաժեշտ է ապահովված պարտատիրոջ համաձայնությունը՝ առողջացման ծրագրի ընդունման հարցում:

465. Երբեմն կարևոր պարտատերերը, ինչպիսիք են հարկային մարմինները, խոշոր բանկերը կամ պարտքերի հավաքագրման գործակալությունները, որոնք գնել են մեծ թվով պահանջներ, որոշում են հակազդելու ֆիզիկական անձանց սնանկությանը: Մի քանի երկրներ այս խնդրին լուծում են մշակել՝ չբացառելով պարտատերերին առողջացման ծրագրի հաստատման գործընթացին մասնակցելուց. պարտատերերը հրավիրվում են քվեարկելու ծրագրի վերաբերյալ, սակայն պարտատիրոջ պասիվությունը մեկնաբանվում է որպես ծրագրի կողմ քվեարկություն: Բացի այդ, պարտատերերը կարող են լավ տեղեկացված չլինել պարտապանի մասին: Շատ հաճախ պարտատերերը շահագրգռվածություն չունեն, և նրանք չեն մասնակցում ժողովներին և չեն պահանջում փաստաթղթեր պարտապանի վերաբերյալ: Այնինչ դատարանը կամ կառավարիչը հավաքում է անհրաժեշտ տեղեկատվությունը և պարտավոր է ուսումնասիրել այն և անհրաժեշտության դեպքում լսել պարտապանին: Այսպիսով, դատարանը կամ կառավարիչը ավելի լավ տեղեկացված լինելով՝ ավելի հիմնավոր որոշում կայացնելու հնարավորություն ունեն: Պարտատերերը կարող են նաև հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ այլ դրդապատճառներ կարող են ազդել պարտապանի սնանկության վարույթի հետևանքների վերաբերյալ ռացիոնալ դատողություն անելու նրանց ունակության վրա: Այս հանգամանքներում պարտատերերին կարող է տրվել լսված լինելու հնարավորություն, սակայն հակասական շահերը կարող են խանգարել նրանց գործի հետևանքների մասին ճիշտ դատողություններ անելու համար[112]:

466. Այս համատեքստում նոր օրենսդրությամբ կարող է դիտարկվել պարտապան-ֆիզիկական անձի առողջացման մեխանիզմի վերանայումը՝ պարտատերերի փոխարեն դրա հաստատման լիազորությունը վերապահելով բացառապես դատարանին և հստակեցնելով այն եղանակները, որոնք համապատասխանում են ֆիզիկական անձի առողջացմանը, օրինակ՝ պարտքի ժամանակացույցի վերանայում, երկարաձգում և այլն: Օրինակ, կարող է կիրառվել այն մեխանիզմը,

---

[111] Տե՛ս https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/1780a7a6-1e04-53bd-99c8-dde06425bf3e/content, էջ 70:

[112] Տե՛ս նույն տեղում, էջ 73:

որով ավելի փոքր վճարումներ արվելու դեպքում առողջացման ծրագիրը երկարում է, հետևաբար նաև պարտքից ազատումը՝ հետաձգվում, իսկ մեծ վճարումներ արվելու դեպքում որպես խրախուսանք՝ կրճատվում[113]:

467. Ֆիզիկական անձանց սնանկության վարույթի մասին խոսելիս, անհրաժեշտ է Սնանկության նոր օրենսգրքով հստակ ամրագրել նաև աշխատավարձի բռնագանձելիության ապահովումը:

468. Նոր օրենսգրքի շրջանակներում անհրաժեշտ է կանոնակարգել նաև պարտապան ֆիզիկական անձի սնանկության վարույթի հարցերը նրա մահվան դեպքում: Սնանկության մասին օրենսդրությունը չի կարգավորում նաև պարտապանի մահվան դեպքում սնանկության վարույթի հետագա ընթացքի, ժառանգության ընդունման և սնանկության վարույթի վրա պարտապանի մահվան հետևանքների հետ կապված հարցերը: Այստեղ ուշադրության են արժանի նաև պարտապանի մահվան դեպքում ժառանգման և վերջինիս սնանկության հարաբերակցության խնդիրները, հատկապես երբ խոսքը վերաբերում է պարտապանի գույքակազմին: Ընդ որում, խնդրահարույց է նաև այն, որ պրակտիկայում հաճախ ժառանգները չեն ձևակերպում ժառանգությունը՝ խոչընդոտելով սնանկության վարույթի ընթացքին:

469. Այս առումով «Անվճարունակության մասին» ՌԴ օրենքը մանրամասն սահմանում է, թե ինչ է տեղի ունենում պարտապան ֆիզիկական անձի մահվան դեպքում[114]: Քաղաքացու սնանկության դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները քաղաքացու մահվան կամ նրա մահացած ճանաչվելու դեպքում ժառանգություն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո իրականացնում են քաղաքացու ժառանգները: Մինչև ժառանգության ընդունման համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը ժառանգության բացման վայրում նոտարը քաղաքացու սնանկության գործընթացին մասնակցող անձ է համարվում և իրականացնում է տարբեր լիազորություններ (հիմնականում՝ տեղեկատվության և փաստաթղթերի փոխանցում): Եթե քաղաքացու նկատմամբ սնանկության գործով վարույթ հարուցելուց հետո նա մահացել է կամ ճանաչվել է մահացած, ապա կառավարիչը քաղաքացու մահվան մասին տեղեկանալու կամ մահացած ճանաչվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է այս մասին ժառանգության բացման վայրի նոտարին, ինչպես նաև քաղաքացու սնանկության գործը քննող դատարան է ներկայացնում միջնորդություն մահացած քաղաքացու գույքի վաճառքի փուլին անցում կատարելու մասին: Սնանկության գույքակազմում ներառում է քաղաքացու ժառանգական զանգվածը:

---

[113] Տե՛ս https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/1780a7a6-1e04-53bd-99c8-dde06425bf3e/content, 89:

[114] Տե՛ս https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39331/4ccb43448127c1d47ea65305608ef8958bd4de16/:

Գույքի իրացումից առաջնահերթ բավարարվում են հուղարկավորության, ժառանգական զանգվածի պահպանության և նոտարական ծախսերը: Եթե քաղաքացու սնանկության վարույթն ավարտվել է մինչև ժառանգության ընդունման ժամկետի ավարտը, կառավարիչը չիրացված գույքի մասին տեղեկատվությունը փոխանցում է նոտարին:

470. Էստոնիայում կարգավորված է պարտքի վերակառուցման (ֆինանսական առողջացման) ծրագրի գործողության ընթացքում պարտապանի մահվան դեպքը[115]: Եթե պարտապանը մահանում է ծրագրի գործողության ժամկետի ընթացքում, դատարանը դադարեցնում է պարտքի վերակառուցման վարույթը և ծրագրով նախատեսված իրավական հետևանքները տարածվում են պարտապանի իրավահաջորդների վրա: Եթե պարտքի վերակազմակերպման վարույթը հարուցվել է ամուսինների սնանկության համատեղ դիմումի հիման վրա, ապա վարույթը կարող է շարունակվել ողջ մնացած ամուսնու նկատմամբ: Եթե պարտապանին սնանկության վարույթում չկատարված պարտավորություններից ազատելու վարույթում պարտապանը մահանում է, ապա դատարանը որոշում է կայացնում պարտապանին սնանկության վարույթում չկատարած պարտավորություններից ազատելու մասին: Դատարանը կարող է պարտապանին ազատել սնանկության վարույթի ընթացքում չկատարված պարտավորություններից՝ նրա մահվան դեպքում, եթե վարույթն սկսելուց անցել է ոչ պակաս, քան երկու տարի:

471. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **սահմանել ֆիզիկական անձի անվճարունակության հավաստման գործուն մեխանիզմներ կամավոր սնանկության դիմելիս, այդ թվում՝ գույքի հայտարարագրման և դատարանի կողմից պարտապանի անվճարունակության վերաբերյալ հարցերը պարզելու գործիքակազմ ներդնելով.**
2) **«նոր սկիզբ»-ը փոխարինել «վաստակած սկիզբ» մոտեցմամբ, ինչը կենթադրի նաև սնանկության ճանաչումից հետո ձեռքբերված գույքի, այդ թվում՝ աշխատավարձի օրենքով կանխորոշված ժամանակահատվածում բռնագանձելու հնարավորություն.**
3) **նվազեցնել պարտատերերի մասնակցությունը ֆիզիկական անձի առողջացման ծրագրերի հաստատման հարցերում՝ դրանք վերապահելով դատարանին.**
4) **կարգավորել ֆիզիկական անձի մահվան դեպքում սնանկության վարույթի շարունակման հարցը՝ կառավարչին վերապահելով ակտիվ դերակատարում պարտապանի մահից հետո գույքի վաճառքի, պարտատերերի պահանջների բավարարման և**

[115] Տե՛ս https://www.riigiteataja.ee/en/eli/511012023002/consolide:

ժառանգների հետ կապված հարաբերությունները կարգավորելու հարցում:

11) Այլ սուբյեկտների սնանկությունը

472. Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ հատուկ անդրադարձ է կատարվում սնանկության վարույթում հատուկ ընթացակարգերի ներդրմանը՝ պայմանավորված առանձին սուբյեկտների սնանկության առանձնահատկություններով: Այս առումով քննարկման արժանի է հետևյալ սուբյեկտների սնանկության վերաբերյալ հատուկ ընթացակարգերի ներդրման նպատակահարմարության հետ կապված հարցերը.
    1) հատուկ կարևորության կազմակերպություններ.
    2) գյուղատնտեսական կազմակերպություններ.
    3) ՓՄՁ-ներ:

Հատուկ կարևորության կազմակերպությունների կապակցությամբ.

473. Մի շարք երկրներում օրենսդրական մակարդակով կարգավորված է պետության համար հատուկ կարևորություն ունեցող կազմակերպությունների[116] սնանկության վարույթը որպես հատուկ վարույթ:

474. Այսպես Ուզբեկստանի «Սնանկության մասին» օրենքի 9-րդ գլխով նախատեսված է առանձին կատեգորիայի իրավաբանական անձանց սնանկության առանձին ընթացակարգերը, որոնց շրջանակներում հատուկ շեշտադրված են քաղաքաստեղծ կազմակերպությունների սնանկության առանձնահատկությունները: Օրենքի 159-րդ հոդվածով մանրամասն կարգավորվում է քաղաքաստեղծ կազմակերպությունների վաճառքի պայմանները, այդ թվում, օրինակ՝ աշխատողների առնվազն 70 տոկոսի աշխատատեղերի պահպանում:

475. Ղազախստանի «Առողջացման և սնանկության մասին» օրենքի 8-րդ գլխով նախատեսվում են կարգավորումներ քաղաքաստեղծ կազմակերպությունների սնանկության վարույթի վերաբերյալ, որը ներառում է այս վարույթի իրականացման կարգի և դրանց շրջանակում հաստատված պահանջները պետական բյուջեի հաշվին մարելու մասին դրույթներ: Մասնավորապես, օրենքի 121-րդ հոդվածով սահմանվում է, որ Ղազախստանի Հանրապետությունը՝ վարչատարածքային միավորը, իրավունք ունի ցանկացած ժամանակ, մինչև դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելը, իրականացնել գրավով ապահովված բոլոր պարտատերերի և քաղաքացիական

[116] Որոշ երկրներում կիրառվում է «քաղաքաստեղծ կազմակերպություն» եզրույթը և դրա հիմքում դրվում է տարբեր չափանիշներ, օրինակ՝ կազմակերպությունը բնական մենաշնորհի սուբյեկտ է, կազմակերպության աշխատողների թիվը առնվազն երեք հազար մարդ է, կազմակերպության աշխատողների թիվը, ներառյալ նրանց ընտանիքի անդամները, կազմում է համապատասխան բնակավայրի բնակչության առնվազն կեսը և այլն:

պարտավորությունների ներքո պարտատերերի պահանջների միաժամանակյա մարումը:

476. Նշված կարգավորումներն իրականում բխում են ԱՊՀ «Անվճարունակության (սնանկության) մասին» մոդելային օրենքից: Մասնավորապես, 7-րդ գլխի շրջանակում կարգավորվում է առանձին սուբյեկտների սնանկության առանձնահատկությունները:

477. Մոդելային օրենքի 123-129-րդ հոդվածները կարգավորում են քաղաքաստեղծ կազմակերպությունների սնանկության վարույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ սուբյեկտների շրջանակը, ներքին կառավարման և գույքի իրացման առանձնահատկությունները:

478. Ամփոփելով՝ հարկ է նշել, որ հատուկ կարևորության կազմակերպությունների սնանկության վարույթի վերաբերյալ առանձնահատկությունների կարգավորումը կարող է վերաբերելի լինել Հայաստանի Հանրապետության սնանկության համակարգի համար:

479. Հաշվի առնելով տվյալ կազմակերպությունների դերը երկրի տնտեսության համար՝ քննարկման առարկա է պետության կողմից հատուկ կառավարիչ նշանակելու հարցը, ընդ որում վերջինս կարող է լինել սնանկության կառավարիչների շրջանակից դուրս:

480. Քննարկման առարկա է նաև պետության կողմից տվյալ սուբյեկտների պարտատերերի պահանջների բավարարման ժամկետով չսահմանափակված հնարավորության նախատեսումը, ինչպես նաև նման կազմակերպությունների գույքի վաճառքի պայմանների առանձնահատկությունները կարգավորելու հարցը, օրինակ՝ աշխատողների աշխատատեղերի պահպանման վերաբերյալ:

481. Առաջարկվում է նաև օրենքով սահմանել հատուկ կարևորության կազմակերպություն համարվելու չափանիշները կամ նման սահմանումը Կառավարությանը վերապահելու հնարավորությունը:

Գյուղատնտեսական կազմակերպությունների կապակցությամբ.

482. Հատուկ սուբյեկտների վերաբերյալ առանձնահատկությունների կարգավորման շրջանակում հարկ է առանձնացնել նաև գյուղատնտեսական կազմակերպությունների[117] վերաբերյալ միջազգային փորձի մոտեցումները: Այսպես, Ուզբեկստանի «Սնանկության մասին» օրենքի 9-րդ գլխի շրջանակում հատուկ շեշտադրման են ենթակա գյուղատնտեսական ձեռնարկությունների սնանկության առանձնահատկությունների նախատեսումը: Մասնավորապես, Ուզբեկստանի «Սնանկության մասին» օրենքի 161-րդ հոդվածի համաձայն՝ մինչ գյուղատնտեսական կազմակերպությունների նկատմամբ սնանկության վարույթ սկսելը նրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել

[117] Վերաբերում է գյուղատնտեսական արտադրանքի իրացմամբ կամ ձեռքբերմամբ զբաղված խոշոր կազմակերպություններին:

արտադատական ֆինանսական առողջացում (...): Գյուղատնտեսական կազմակերպության սնանկության գործը քննարկելիս գործին կարող են մասնակից լինել նաև տեղական ինքնակառավարման մարմինները:

483. Հաշվի առնելով գյուղատնտեսական գործունեության առանձնահատկությունները՝ Ուզբեկստանի «Սնանկության մասին» օրենքի 162-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատական ֆինանսական առողջացման կամ արտաքին կառավարման ժամանակաշրջանում տեղի է ունեցել արտադրության անկում և գյուղատնտեսական կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացում բնական աղետների և այլ ֆորսմաժորային հանգամանքների պատճառով, դատական ֆինանսական առողջացման կամ արտաքին կառավարման ժամկետը կարող է երկարաձգվել տասներկու ամսով (...):

484. Ղազախստանի «Առողջացման և սնանկության մասին» օրենքի 9-րդ գլխով կարգավորվում է գյուղատնտեսական կազմակերպությունների սնանկության վարույթը:

485. Ղազախստանի «Առողջացման և սնանկության մասին» օրենքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների սնանկությունը հաստատելիս հաշվի են առնվում այնպարտավորությունները, որոնք մարվել են նախորդ տարվանից ոչ շուտ: Տվյալ դեպքում հաշվի չի առնվում սնանկության վարույթ հարուցելուն նախորդող տարին, որի ընթացքում առաջացել են բնական և տեխնածին բնույթի կամ առանձնապես անբարենպաստ կլիմայական պայմանները, որոնք պատճառ են հանդիսացել պարտավորությունների ժամանակին չկատարելու համար: Օրենքի 123-րդ հոդվածով սահմանվում են այն փաստաթղթերի ցանկը, որոնք, ի լրումն ընդհանուր եղանակով փաստաթղթեր ներկայացման, պետք է կցվեն, այդ թվում՝ հողերի կադաստրային բնութագրերը:

486. Հաշվի առնելով գյուղատնտեսական գործունեության առանձնահատկությունները՝ Ղազախստանի «Առողջացման և սնանկության մասին» օրենքի 126-րդ հոդվածով արդեն կարգավորվում է նման ձեռնարկությունների գույքի իրացման առանձնահատկությունները:

487. ԱՊՀ «Անվճարունակության (սնանկության) մասին» մոդելային օրենքի 130-րդ և 131-րդ հոդվածները նախատեսում են գյուղատնտեսական ձեռնարկությունների սնանկության առանձնահատկությունները, օրինակ՝ ի թիվս այնի սահմանվում է, որ գյուղատնտեսական կազմակերպության ֆինանսական վիճակը վերլուծելիս պետք է հաշվի առնել արտադրության սեզոնայնությունը և դրա կախվածությունը բնական և կլիմայական պայմաններից, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը այն եկամուտներից, որոնք կարող են լինել գյուղատնտեսական կազմակերպության կողմից ստացված

գյուղատնտեսական աշխատանքների համապատասխան ժամանակահատվածի վերջում:

488. Ամփոփելով՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ևս գյուղատնտեսական ձեռնարկությունների սնանկության վարույթի վերաբերյալ առանձնահատկությունների կարգավորումը կարող է վերաբերելի լինել՝ հաշվի առնելով գյուղատնտեսական կոոպերատիվների մեծ քանակը:

489. Առաջարկվում է Սնանկության օրենսգրքով նախատեսել անհրաժեշտ իրավական հիմքեր նման կազմակերպությունների սնանկության առանձնահատկությունների համար, օրինակ այս դեպքում ևս նախատեսելով պետության կողմից հատուկ կառավարիչ նշանակելու հարցը, գյուղատնտեսական կազմակերպությունների դեպքում կետանցի ժամկետի երկարաձգման հարցը՝ հաշվի առնելով համապատասխան ապրանքի սեզոնայնությունը:

490. Քննարկման առարկա է նաև պետության կողմից տվյալ սուբյեկտների պարտատերերի պահանջների բավարարման ժամկետով չսահմանափակված հնարավորության նախատեսումը, ինչպես նաև նման կազմակերպությունների գույքի վաճառքի պայմանների առանձնահատկությունները կարգավորելու հարցը:

491. Առաջարկվում է նաև օրենսդրությամբ սահմանել գյուղատնտեսական այն ապրանքները, որոնք իրենց ոլորտով (օրինակ՝ խաղող, ծիրան, լոլիկ և այլն) կամ իրացման ծավալով ունեն հատուկ նշանակություն ՀՀ տնտեսության համար:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունների կապակցությամբ.

492. Միկրո, փոքր և միջին ձեռնարկատերերը, հատկապես զարգացող տնտեսություններում, կազմում են ընդհանուր բիզնեսի մեծամասնությունը, և զբաղվածության, տնտեսական աճի և զարգացման շարժիչ ուժերն են: Ընդհանուր առմամբ ՓՄՁ-ները կազմում են բիզնեսի 90%-ը[118], ապահովում են մասնավոր ոլորտի զբաղվածության 60%-ը[119], և մասնավոր հատվածի ավելացված արժեք վճարողների 52%-ն են[120]:

493. ՓՄՁ-ներն իրենց փոքր չափի պատճառով միշտ ունեն ավելի քիչ կապիտալ, վարկեր ստանալու ավելի մեծ դժվարություններ և ֆինանսական մարտահրավերները լուծելու ավելի քիչ ունակություն[121]: Նրանց գործունեության

---

[118] Տե՛ս Global Partnership for Financial Inclusion, "G20 Action Plan on SME Financing - Joint Action Plan of G20 GDFI SME Finance Sub-Group and IIWG", 2016, էջ 3. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.gpfi.org/sites/gpfi/files/documents/G20%20Action%20Plan%20on%20SME%20Financing%20Implementation%20Framework.pdf:

[119] Տե՛ս Edinburgh Group, "Growing the global economy through SME", 2013, էջ 7 հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.edinburgh-group.org/media/2776/edinburgh_group_research_-_growing_the_global_economy_through_smes.pdf:

[120] Տե՛ս նույն տեղում, էջ 7:

[121] Տե՛ս Khrystyna Kushnir, Melina Laura Mirmulstein and Rita Ramalho, The World Bank / IFC, "Micro, Small and Medium Enterprises Around the World: How Many Are There and What Affects the Count?" 2010, էջ 6

ուղղությունները չունեն բազմազանություն և, հետևաբար, նրանք ավելի խոցելի են ֆինանսական ցնցումների համար[122]:

494. 2017 թվականի մայիսի 4-ին Համաշխարհային բանկը հրապարակեց ՓՄՁ-ների առողջացման վերաբերյալ իր զեկույցը, որում շեշտվում է այս ոլորտի վերաբերյալ ծագող խնդիրների լուծման կարևորությունը. «Մարտահրավերների համադրությունը, որոնց սովորաբար բախվում են ՓՄՁ-ները, դժվարացնում է ՓՄՁ-ների կողմից սնանկության ընթացակարգերի համար սովորաբար պահանջվող բարդությունների կառավարումը: Թերևս զարմանալի չէ, որ ՓՄՁ-ներն առավել հաճախ են անցնում սնանկության վարույթ: Առաջնային է ունենալ արդյունավետ, արագ սնանկության համակարգ, որը ունակ է առողջացնելու ՓՄՁ-ներին կամ արագորեն վերաբաշխելու նրանց արտադրական ակտիվներն առավել արդյունավետ գործունեության համար[123]»:

495. Միջազգային փորձում առկա են ՓՄՁ սնանկության առնչությամբ հետևյալ մոդելները.

1) Շատ իրավական համակարգերում ՓՄՁ-ների նկատմամբ կիրառվում է նույն սնանկության ռեժիմը, որը կիրառելի է այլ առևտրային ձեռնարկությունների նկատմամբ:

2) Մյուս մոդելը, որն առկա է Հնդկաստանում, Գերմանիայում և Հունաստանում՝ փոքր ձեռնարկությունների համար պարզեցված ընթացակարգ ապահովելն է: Նման դեպքերում ՓՄՁ-ները ընդգրկվում են ընդհանուր օրենսդրության շրջանակներում, սակայն որոշ ընթացակարգերի և պայմանների փոփոխմամբ և (կամ) պարզեցմամբ: Ձևափոխումները կարող են ներառել.

- Որոշակի վճարների չեղարկում կամ նվազեցում
- Փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների կրճատում կամ վերացում
- Գործընթացի առավել արագ ընթացքի ապահովում, ժամկետների կրճատում և այլն:

3) Իսկ երրորդ մոդելը ՓՄՁ սնանկության հատուկ ռեժիմն է, որը գործող ռեժիմի ձևափոխման այլընտրանքային տարբերակն է, որը հատուկ նախատեսված է պարտապան ՓՄՁ-ների համար: Վերջին տարիներին որոշ իրավական համակարգերում, ներառյալ՝ Կորեայում, Թաիլանդում, Ճապոնիայում, Ավստրալիայում և Սինգապուրում, ընդունվեցին սնանկության համակարգային ռեժիմներ, որոնք հատուկ

---

https://www.mfw4a.org/sites/default/files/resources/Micro%20Small%20and%20Medium%20Enterprises%20Around%20the%20World%20How%20Many%20Are%20There%20and%20What%20Affects%20the%20Count.pdf:

[122] Տե՛ս Organisation for Economic Co-operation and Development (**OECD**), "The Impact of the Global Crisis on SME and Entrepreneurship Financing and Policy Responses", 2009, էջ 6 http://www.oecd.org/cfe/smes/43183090.pdf:

[123] Տե՛ս Համաշխարհային բանկ, «Հաշվետվություն ՓՄՁ սնանկության վերաբերյալ», 2017, էջ 1-2:

համապատասխանեցված էին ՓՄՁ-ի համար: Նշված ռեժիմների հիմնական բնորոշ գծերն են պարտապան ՓՄՁ համար սնանկության վարույթի շրջանակում լուծարման կամ առողջացման վարույթ սկսելու համար արագացված ընթացակարգի նախատեսումը, վարույթի շրջանակում պարզեցված դրույթների և պահանջների սահմանումը, նշանակված կառավարչի կամ դատարանի միջոցով արտաքին աջակցության և վերահսկողության հատուկ ռեժիմի ապահովումը[124]:

496. Ինչպես նշում է Համաշխարհային բանկը՝ Արդյունավետ անվճարունակության և պարտատեր/պարտապան ռեժիմների վերաբերյալ սկզբունքներում[125], օրենքը պետք է սահմանի ՓՄՁ-ների առողջացման և լուծարման պարզեցված վարույթ, որը պետք է ներառի հետևյալ հիմնական հատկանիշները.

1) Սնանկության պարզեցված վարույթը պետք է կիրառվի ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք դասակարգված են որպես ՓՄՁ հստակ և պարզ չափանիշների համաձայն: Ֆիզիկական անձի բոլոր անձնական և բիզնես պարտավորությունները պետք է ներառվեն սնանկության պարզեցված վարույթում:
2) Օրենքը պետք է նախատեսի հատուկ դեպքեր, որոնք հնարավորություն են տալիս վերափոխել պարզեցված սնանկության վարույթը սովորական անվճարունակության վարույթի և հակառակը, ինչպես նաև պարզեցված առողջացման վարույթը պարզեցված լուծարման և հակառակը:
3) Սնանկության պարզեցված վարույթը պետք է պահանջի ավելի քիչ և պակաս բարդ ընթացակարգային պահանջներ և ավելի կարճ ժամկետներ, քան նախատեսվում է սովորական սնանկության վարույթում: Մասնավորապես, պետք է հանվեն կամ պարզեցվեն ծանուցումների, հրապարակումների, պարտատերերի ժողովների, պահանջների ներկայացման և լուծման, պարտապանի ակտիվների վաճառքի և պահանջների բավարարման բարդ և ծախսատար կանոնները:
4) պարտապանին կամ նրա ղեկավարությանը բիզնեսի կառավարումից հեռացնելը պետք է լինի բացառիկ և հիմնված լինի օրենքով հստակ սահմանված սահմանափակ հիմքերի վրա: Պարտապանը պետք է համագործակցի, աջակցի և տրամադրի իր բիզնեսին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև պետք է պահպանի և

[124] Տե՛ս նույն տեղում, էջ 36:

[125] Տե՛ս https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/3824fe8e-edb3-5f9b-aa28-f5afc759e562/content:

պաշտպանի գույքի ակտիվները: Այն դեպքերում, երբ վերահսկողություն է անհրաժեշտ՝ երաշխավորելու, որ գործընթացը չարաշահման չի ենթարկվում չէ և սնանկության գույքը պաշտպանված է, անկախ կառավարիչը պետք է վերահսկի պարտապանի կառավարումը:

5) Պարզեցված լուծարման վարույթում կարող են սահմանվել բացառիկ դեպքեր, երբ անհրաժեշտություն չի լինի նշանակվելու սնանկության կառավարիչ:

6) Առողջացման ծրագրերի դեպքում օրենքը պետք է սահմանի քվեարկության պարզեցված պահանջներ: Պարտատերերի լռությունը կամ բացասական քվեարկության բացակայությունը պետք է համարվի որպես ծրագրի ընդունում և համարվի որպես դրական քվե:

7) Օրենքը պետք է նախատեսի մեխանիզմներ՝ սնանկության պարզեցված վարույթների իրականացման հետ կապված ծախսերը հոգալու համար, երբ պարտապանի ակտիվները և եկամուտների աղբյուրները բավարար չեն:

497. Ամեն դեպքում, նման քաղաքականություն որդեգրելու համար ամենակարևոր հանգամանքը, որ պետք է սահմանվի սնանկության մասին օրենսդրությամբ, այն է, թե որոնք պետք է դիտարկվեն որպես ՓՄՁ-ներ օրենքի իմաստով:

498. ՓՄՁ-ների հասկացությունը պետք է հնարավորինս ճկուն լինի, քանի որ «ՓՄՁ» տարբեր սահմանումներ են կիրառվում ամբողջ աշխարհում[126]: Որպես ելակետ՝ պետք է ուշադրություն դարձնել ՓՄՁ-ի սնանկության դեպքերում ծագող կոնկրետ խնդիրների լուծմանը՝ գործող սնանկության վարույթի շրջանակներում հատուկ դրույթների նախատեսման, այլ ոչ թե առանձին սնանկության ռեժիմ սահմանելու միջոցով[127]:

499. «Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ» (ՓՄՁ) տերմինն ունի տարբեր սահմանումներ՝ կախված այն համատեքստից և գտնվելու վայրից, որտեղ այն օգտագործվում է: Աշխատակիցների թվի չափանիշը ՓՄՁ-ներին խոշոր ձեռնարկություններից տարբերելու ամենատարածված մեթոդն է: Այս չափանիշը հաճախ զուգորդվում է այլ չափանիշների հետ, ինչպիսիք են առևտրաշրջանառության կամ պարտավորության չափը: Համաշխարհային բանկի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 68 երկրներից 50-ում օգտագործվում է աշխատողների թվի չափանիշը, և նրանցից 29-ում կիրառվում է աշխատողների թվի և մյուս երկու չափանիշների համադրությունը:

---

[126] Տե՛ս https://documents1.worldbank.org/curated/en/973331494264489956/pdf/114823-REVISED-PUBLIC-MSME-Insolvency-report-low-res-final.pdf, 8:

[127] Տե՛ս նույն տեղում:

Առևտրաշրջանառության չափանիշը կիրառվել է 68 երկրներից 41-ում, իսկ պարտքի չափը՝ 68 երկրներից 15-ում[128]:

500. Ինչ վերաբերում է աշխատողների թվի չափանիշին, 122 երկրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ միջին ձեռնարկատիրության ամենաշատ աշխատողների շրջանակը տատանվում է 19-ից (Ամերիկյան Սամոա) մինչև 3000 (Չինաստան). ամենատարածվածը մինչև 249 աշխատողն է: Աշխատողների նվազագույն շեմի պարագայում 110 երկրներից 83-ում դիտարկվում է մեկ աշխատողի շեմը, իսկ 27-ի դեպքում՝ նաև մեկից պակաս աշխատողի շեմը, այսինքն՝ անհատ ձեռնարկատերերը[129]:Այսպես, օրինակ Արգենտինայում կիրառվում է պարտատերերի և աշխատողների թիվը, Գերմանիայում՝ պարտատերերի թիվը, Հունաստանում՝ պարքի չափը, Հնդկաստանում՝ պարտատերեր թիվը, եկամտի չափը, ակտիվների չափը, պարտքի չափը, Աֆրիկական երկրներում՝ աշխատողների թիվը, շրջանառությունը, ԱՄՆ-ում՝ պարտքի չափը:

501. Անդրադառնալով ՀՀ օրենսդրությամբ ՓՄՁ հասկացությանը՝ հարկ է նշել, որ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը՝ հաշվի առնելով աշխատողների թիվը՝ նախորդ տարվա գործունեության արդյունքների և ձեռնարկության հաշվեկշռային արժեքի հետ միասին:

502. Սնանկության նոր օրենսգրքի շրջանակում քննարկման առարկա է արդյոք անհրաժեշտ է ՓՄՁ սուբյեկտների համար սահմանել հատուկ կարգավորումներ, թե պահպանել գործող մոդելը:

503. Այսպես, Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝

1) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.
2) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի

[128]Տե՛ս նույն տեղում, 13:

[129] Տե՛ս նույն տեղում:

դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.

3) միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

504. Հարկ է նշել, որ ՀՀ տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք հիմնականում հանդիսանում են գործող օրենսդրության իմաստով գերփոքր, փոքր կամ միջին սուբյեկտներ, որպիսի պայմաններում նպատակահարմար չի թվում հատուկ կարգավորում նախատեսել տնտեսության առավել մեծ մաս կազմող սուբյեկտների համար՝ դուրս թողնելով շատ փոքր քանակ կազմող խոշոր սուբյեկտների:

505. Մեկ այլ մոտեցում կարող է դիտարկվել Սնանկության օրենսգրքով ՀՀ օրենսդրությունից տարբերվող ՓՄՁ հասկացություն սահմանելու հարցը, որի դեպքում կարող են քննարկման առարկա դարձվել որոշակի արտոնությունների սահմանման, օրինակ՝ որոշակի ընթացակարգերի պարզեցման և առավել ծախսարդյունավետ դարձնելու հարցը՝ ազատելով որոշակի պետական տուրքերից:

506. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է**

1) դիտարկել հատուկ կարևորության կազմակերպությունների սնանկության վարույթի վերաբերյալ առանձնահատկություններ սահմանելու հնարավորությունը, այդ թվում՝ քննարկման առարկա դարձնելով հատուկ կարևորության կազմակերպությունների չափանիշները, հատուկ դրույթները պետության կողմից հատուկ կառավարչի նշանակման, գույքիվաճառքի պայմանների առանձնահատկությունների, օրինակ՝ աշխատողների աշխատատեղերի պահպանման և պարտատերերի պահանջների բավարարման ժամկետով չսահմանափակված հնարավորության վերաբերյալ.

2) դիտարկել գյուղատնտեսական կազմակերպությունների սնանկության վարույթի վերաբերյալ առանձնահատկություններ սահմանել հնարավորությունը, այդ թվում՝ քննարկման առարկա դարձնելով կոնկրետ գյուղատնտեսական արտադրանքների ցանկը, հատուկ դրույթները պետության կողմից հատուկ կառավարչի նշանակման, սեզոնայնությամբ պայմանավորված կետանցի ժամկետի երկարաձգման և պետության կողմից

պարտատերերի պահանջների բավարարման ժամկետով չսահմանափակված հնարավորության վերաբերյալ.

3) **դիտարկել սնանկության օրենսդրության շրջանակում ՀՀ օրենսդրությունից տարբերվող և ավելի ցածր շեմ ունեցող ՓՄՁ ինքնաբավ հասկացություն սահմանելու հարցը՝ նախատեսելով որոշակի արտոնություններ, օրինակ՝ որոշակի ընթացակարգերի պարզեցման և առավել ծախսարդյունավետ դարձնելու միջոցով:**

12) Սնանկության կառավարիչները

507. Սնանկության վարույթի իրականացումը անհնար է պատկերացնել առանց այնպիսի կարևոր սուբյեկտի մասնակցության, ինչպիսին է սնանկության կառավարիչը, ում գործառույթների մեջ է մտնում պարտապանի ակտիվների և գործունեության ընդհանուր կառավարումը[130] և պարտապանի և պարտատերերի շահերի միջև հավասարակշռության ապահովումը[131]:

508. Արժույթի միջազգային հիմնադրամի «Անվճարունակության կանոնավոր և արդյունավետ ընթացակարգեր» վերտառությամբ զեկույցն ընդգծում է, որ հաշվի առնելով անվճարունակության վարույթների բարդ բնույթը, սնանկության ցանկացած մոդելի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ են դատավորներ և սնանկության կառավարիչներ, որոնք առևտրային, ֆինանսական հարցերում, ինչպես նաև անվճարունակության վարույթներին առնչվող իրավական հարցերում համարժեք վերապատրաստված են[132]:

509. Սնանկության կառավարիչներին վերաբերող առկա են մի քանի հարցեր, որոնք ենթակա են առանձին քննարկման:

Սնանկության կառավարչի որակավորման կապակցությամբ.

510. Սնանկության կառավարիչները ցանկացած սնանկության ռեժիմի գործողության ընթացքում օժտված են էական դերով: ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցը «սնանկության կառավարչի» որակավորման վերաբերյալ նշում է, որ սնանկության կառավարչի նշանակման նպատակով որակավորման որոշման հարցին անդրադառնալիս ցանկալի է հավասարակշռության հասնել բարձր որակավորում ունեցող անձի նշանակմանը հանգեցնող, սակայն անհրաժեշտ որակավորում ունեցող նշանակման ենթակա անձանց շրջանակը սահմանափակող ու դատական ծախսերն ավելացնող, և պահանջվող ծառայության որակի երաշխավորման համար չափազանց ցածր պահանջների միջև»:

---

[130] Տե՛ս Council regulation (EC) No 1346/2000 of 29 May 2000 on insolvency proceedings, Article 2(b):

[131] Տե՛ս ՎԴ թիվ ԵԱԴԴ/0100/04/17 սնանկության գործով 25.02.2020թ. որոշումը:

[132] Տե՛ս International Monetary Fund, «Orderly and Effective Insolvency Procedures», Orderly and Effective Insolvency Procedures (International Monetary Fund 1999), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.elibrary.imf.org/display/book/9781557758200/9781557758200.xml:

511. ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցով սահմանվում է, որ սնանկության կառավարիչը պետք է պատշաճ որակավորում ունենա, օժտված լինի սնանկության, ինչպես նաև առևտրային, ֆինանսական և գործարարական հարցերի վերաբերյալ օրենսդրության իմացությամբ, ներառյալ՝ հաշվապահությունը:
512. ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցում նաև ընդգծվում է, որ սնանկության կառավարիչը պետք է օժտված լինի այնպիսի անձնային հատկանիշներով, ինչպիսիք են «ազնվությունը, անկողմնակալությունը, անկախությունը և կառավարչական լավ հմտությունները»[133]:
513. Անվիճելի է, որ սնանկության համակարգի պատշաճ գործունեությունը, սնանկության վարույթի արդյունավետությունը մեծապես կախված է սնանկության կառավարիչների պրոֆեսիոնալիզմից՝ որպես սնանկության վարույթի կենտրոնական դերակատարներից մեկի: Հնարավոր չէ պատկերացնել որևէ սնանկության վարույթ առանց կառավարչի ներգրավման՝ որպես դատարանի, պարտատերերի և պարտապանի միջև կապող օղակի[134]:
514. Օրենքի փոփոխություններով էականորեն բարելավվեցին սնանկության կառավարիչների մասնագիտության իրավական կարգավորման դաշտը՝ նպատակ ունենալով բարեփոխել նաև ոլորտի պրակտիկ դրսևորումներն այդ առումով: Ինչպես նշվում է Օրենքի փոփոխությունների հիմնավորման մեջ[135], Օրենքով սնանկության կառավարիչներին ներկայացվող պարտադիր պահանջները բավարար չեն իրեն վերապահված գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար, իսկ կառավարչի ստաժավորումը հանդիսանում է ոչ պարտադիր և հետապնդվող նպատակի ապահովման համատեքստում խնդրահարույց է թվում:
515. Արդյունքում Օրենքի փոփոխություններով ոչ միայն հստակեցվեցին կառավարչին ներկայացվող պահանջները, այլ նաև վերանայվեց կառավարիչների որակավորման կարգը:
516. Այսպես, Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ որպես կառավարիչ կարող է որակավորվել այն ֆիզիկական անձը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ բոլոր պահանջները.
    1) 63 տարին լրացած չէ.
    2) ունի բարձրագույն կրթություն.
    3) որակավորման համար դիմելու օրվան նախորդած վերջին հինգ տարվա ընթացքում ունի իրավաբանական, հաշվապահական կամ այլ

[133] Առավել մանրամասն տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf:
[134] Տե՛ս EBRD Assessment of Insolvency Office Holders. Review of the Profession in the EBRD Region, էջ 32 հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.insol-europe.org/ download/documents/844:
[135] Տե՛ս http://www.parliament.am/draft_docs7/K-188_ himnavorum.pdf:

տնտեսագիտական գործունեության ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

4) ՀՀ արդարադատության նախարարի սահմանած կարգով անցել է համապատասխան ուսուցում.
5) հանրային ծառայող չէ.
6) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը մարված կամ վերացված չէ.
7) դիմելու օրվան նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում ճանաչվել է սնանկ.
8) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

517. Հարկ է նշել, որ սնանկության կառավարիչների որակավորումն իրականացնում է ՀՀ ԱՆ-ն՝ որակավորման ստուգման միջոցով, որը Նախարարի 2020թ. մարտի 3-ի N 112-Ն հրամանով[136] սահմանված կարգով անցկացնում է Նախարարին կից խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողովը:

518. Հանձնաժողովում ընդգրկվում են ներկայացուցիչներ Արդարադատության, Էկոնոմիկայի, Ֆինանսների նախարարություններից, Պետական եկամուտների կոմիտեից, Սնանկության դատարանից, ԻԿԿ-(ներ)ից, ինչպես նաև իրավաբան և տնտեսագետ գիտնականներ: Որակավորման ստուգումն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում ու խնդրի լուծում և հարցազրույց:

519. Որակավորման բոլոր փուլերը հաղթահարած մասնակիցների ցանկը հանձնաժողովը ներկայացնում է Նախարարին՝ առաջարկելով ցանկում նշված մասնակիցներին շնորհել սնանկության գործով կառավարչի որակավորում:

520. Հանձնաժողովի առաջարկության հիման վրա նախարարը շնորհում է սնանկության գործով կառավարչի որակավորում կամ մերժում է որակավորման շնորհումը: Որակավորում շնորհելու մասին որոշում կայացվելու դեպքում համապատասխան անձին տրվում է անժամկետ գործողությամբ որակավորման վկայական:

521. Հարկ է նշել, որ նշված ընթացակարգն արդեն հիմնավորել է իր արդյունավետությունը, որպիսի պայմաններում առաջարկվում է պահպանել այն:

Իրավաբանական անձ սնանկության կառավարչի որակավորման հնարավորության նախատեսման կապակցությամբ.

522. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում որպես սնանկության կառավարիչ կարող է որակավորվել միայն ֆիզիկական անձինք, մինչդեռ շատ երկրներում ընդունված է, որ որպես սնանկության կառավարիչ կարող է հանդես գալ թե ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձը (Բելառուս, Լատվիա, Վրաստան, Իսպանիա, Հունգարիա, Անգլիա):

[136] Ուժի մեջ է մտել 15. 04. 2020թ. : Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.74:

523. Այսպես, Վրաստանի Հանրապետության «Սնանկության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սնանկության գործով կառավարիչը կարող է լինել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձ: Սնանկության գործով կառավարիչը պետք է լինի անկախ, անկողմնակալ և ազնիվ անձ (կամ իրավաբանական անձի, գործարար բարձր համբավ ունեցող անձի դեպքում)[137]:
524. Իսպանիայում սնանկության կառավարիչ պետք է լինի իրավաբան կամ տնտեսագետ, ավելի քան հինգ տարվա փորձով և սնանկության վարույթում հավատարմագրված գիտելիքներով, իսկ իրավաբանական անձը կարող է նշանակվել, պայմանով, որ այն ունենա առնվազն և՛ իրավաբան, և՛ տնտեսագետ: Սնանկության խոշոր գործերի համար սովորաբար ընդունվում են նաև աուդիտորներ, խորհրդատվական ընկերություններ կամ իրավաբանական ընկերություններ (Deloitte՝ Պեսկանովայի գործի համար, Forest Partners, նախկին KPMG, La Seda գործի համար, Mazars՝ HUSA գործի համար, PwC և KPMG՝ Fagor գործը, Deloitte-ը Cacaolat գործի համար, PwC-ի համար)[138]:
525. Այս առումով ուշագրավ է նաև Հունգարիայի փորձը, որտեղ կառավարիչներ կարող են լինել նաև իրավաբանական անձինք[139]:
526. Հունգարիայում ակտիվների կառավարիչը կամ լուծարային մարմինը, դատարանի կողմից էլեկտրոնային համակարգի օգտագործմամբ պատահականության սկզբունքով նշանակված ընկերություն է, որից պահանջվում է ունենալ առնվազն երկու մասնագետ, որոնք որակավորված են որպես լուծարային և ակտիվների կառավարիչ, երկու տնտեսագետ, երկու լիցենզավորված աուդիտոր և երկու որակավորված փաստաբան, որը ղեկավարում է սնանկության վարույթը: Նա իրավունք ունի պարտապանից պահանջել որոշակի տեղեկությունների տրամադրում, պարտապանի անունից դատական քննություն նախաձեռնել և պարտապանի գույքը հսկողության տակ վերցնել (լուծարման դեպքում) և կառավարել այն: Այս մարմնի գործունեությունը վերահսկվում է դատարանի և պարտատերերի կոմիտեի կողմից: Հունգարիայում սնանկության կառավարիչները պետք է ունենան համապատասխան լիցենզիա (պարտավոր են մասնակցել կառավարության կողմից յուրաքանչյուր յոթ տարին մեկ անցկացվող գնումների ընթացակարգին համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով)[140]:

---

[137] Տե՛ս https://matsne.gov.ge/en/document/download/23572/19/en/pdf:

[138] Տե՛ս https://restructuring.bakermckenzie.com/wp-content/uploads/sites/23/2017/01/Global-Restructuring-Insolvency-Guide-New-Logo-Spain.pdf:

[139] Տե՛ս Prof. Marta FLORES (Universidad Autónoma de Madrid), Drs. Emmanuelle INACIO (Université Lille-Nord-de-France), Drs. Emmanuelle INACIO (Université Lille-Nord-de-France), Report on the regulation of the insolvency office holders, էջ 5-7:

[140] Տե՛ս https://www.google.com/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&ved=2ahUKEwjy497O0ayCAxXOcvEDHQ6aAMgQF

527. Այս ուղղությամբ որոշակի փորձ արվեց 2017 թվականին նախաձեռնված Օրենքի բարեփոխման շրջանակում[141]: Մասնավորապես, ներկայացվել էր առաջարկ սահմանելու, որ խոշոր հարկ վճարող համարվող, իսկ պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելուց հետո պարտատերերի 2/3-ի առաջարկությամբ իրավաբանական այլ անձանց սնանկության, ինչպես նաև սնանկության վտանգի վերաբերյալ գործերով կառավարիչ է նշանակվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից որպես սնանկության կառավարիչ հաշվառված աուդիտորական կազմակերպությունը:

528. Կարծում ենք՝ այս ոլորտում որոշակի փորձ ունեցող իրավաբանական անձանց մուտքն այս գործընթաց, հատկապես առավել խնդրահարույց գործերի դեպքում, երբ օրինակ ներգրավված է խոշոր հարկատու համարվող պարտապան, դրան կարող է հաղորդել նոր որակ և արդյունավետություն:

529. Նման պայմաններում բացի ֆիզիկական անձանցից առաջարկվում է նաև մասնագիտացված կազմակերպությունների՝ որպես սնանկության կառավարիչ հանդես գալու իրավական հնարավորության նախատեսումը:

Օտարերկրյա սնանկության կառավարիչների ներուժի ներգրավման կապակցությամբ.

530. Սնանկության օրենսգրքի մշակման շրջանակում առանձնակի ուշադրության արժանի է զարգացած ավանդույթներ ունեցող օտարերկրյա սնանկության կառավարիչների ներգրավման հնարավորությունը: Ակնհայտ է, որ վերջիններիս ներգրավումը որակապես նոր հիմքերի վրա կարող է դնել սնանկության վարույթի իրականացումը:

531. Նշվածի առնչությամբ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել համապատասխան ընթացակարգերի սահմանման հարցը, որոնք անցնելոց հետո օտարերկրյա սնանկության կառավարիչները կներգրավվեն ներպետական սնանկության վարույթներում:

532. Նման օրինակ է «Փաստաբանության մասին» օրենքի օրինակը, որը նախատեսում է հնարավորություն ապահովել օտարերկրյա պետությունում որակավորման աստիճան ստացած փաստաբանի որակավորման աստիճանի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում:

Սնանկության կառավարիչների նշանակման կապակցությամբ.

533. Սնանկության կառավարիչների նշանակման գործընթացը ներառում է կառավարչի թեկնածության ընտրությունը և հաստատումը դատարանի կողմից:

---

noECBQQAQ&url=https%3A%2F%2Fwww.ebrd.com%2Fdocuments%2Fogc%2Finsolvency-profile-hungary.pdf&usg=AOvVaw373jQSXAxoyR8fTShJsDgD&opi=89978449:

[141] Տե՛ս https://www.e-draft.am/projects/442:

Այս առումով միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա չէ միասնական մոտեցում: Օրինակ՝ որոշ երկրներ պարտատերերին թույլատրում են կառավարչի նշանակման հարցում ունենալ վճռորոշ դերակատարում, երկրների մյուս խումբը այս հարցում կարևոր դերը վերապահում է դատարանին[142]:

534. Պետք է նկատել, որ սնանկության կառավարչի թեկնածուի ընտրության առումով օրենսդիրը որդեգրել է մի քանի լուծումների միախառնված տարբերակը: Այսպես, Օրենքը նախատեսում է կառավարչի, այդ թվում՝ ժամանակավոր կառավարչի թեկնածուի ընտրության երկու եղանակ.
    1) սնանկության դիմում ներկայացրած անձի կողմից.
    2) հատուկ համակարգչային ծրագրի միջոցով:

535. Առաջին եղանակի դեպքում սնանկության կառավարչի թեկնածու առաջարկում է պարտապանը՝ կամավոր սնանկության դեպքում, իսկ հարկադրված սնանկության դեպքում պարտատերը (մի քանի պարտատերերի պարագայում՝ բոլոր պարտատերերը):

536. Սնանկության դիմում ներկայացրած անձի կողմից սնանկության կառավարչի թեկնածու չառաջարկելու կամ առաջարկված թեկնածուի՝ Օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում թեկնածուի ընտրությունը կատարվում է երկրորդ եղանակով, այսինքն՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, որը իրականացվում է դատարանի կողմից ՀՀ ԱՆ ներկայացված պահանջագրի հիման վրա: ՀՀ ԱՆ-ն, դատարանից ստանալով կառավարչի թեկնածու ներկայացնելու վերաբերյալ պահանջագիր, համակարգչային ծրագրում մուտքագրում է դրա տվյալները: Մուտքագրված պահանջագրերի հիման վրա մինչև հաջորդ աշխատանքային օրը ծրագրի միջոցով ինքնաշխատ եղանակով անցկացվում է վիճակահանություն՝ առանց նախարարության միջամտության: Վիճակահանությունը իրականացվում է պատահականության սկզբունքով՝ հիմք ընդունելով երկու հիմնական չափանիշ.
    1) որ տարածքում է գործունեություն ծավալում կառավարիչը (Երևան, մարզեր, ՀՀ ողջ տարածք),
    2) որքան է կազմում տվյալ կառավարչի ծանրաբեռնվածությունը:

537. Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սնանկության կառավարիչների գործունեության չափանիշներից է, ի թիվս այլնի, անկախությունը և ինքնուրույնությունը: Հարկ է նկատել, որ Օրենքի վերջին բարեփոխումներով վերանայվեց սնանկության կառավարիչների նշանակման ընթացակարգը և ներմուծվեց հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վիճակահանությամբ

[142] Տե՛ս ASSESSMENT OF INSOLVENCY OFFICE HOLDERS Review of the profession in the EBRD region, էջ 16 (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395277239633&pagename=EBRD%2FContent%2FDownloadDocument):

սնանկության կառավարիչների նշանակման ընթացակարգը, որն իր հերթին ապահովում է վերոնշյալ անկախությունը:

538. Այնուամենայնիվ, շարունակվում է պարտատիրոջ կողմից սնանկության կառավարչի առաջարկի հնարավորությունը, որն ակնհայտ ռիսկեր է պարունակում պարտատիրոջից կախվածություն ստեղծելու:

539. Այս տեսանկյունից սնանկության կառավարիչների որակավորման պահանջների և վերապատրաստմանը զուգահեռ առաջարկում ենք դիտարկել բացառապես հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վիճակահանությամբ սնանկության կառավարիչների նշանակման ընթացակարգը:

540. Միաժամանակ, նկատի ունենալով, որ սնանկության վարույթի շրջանակում քննարկվող բոլոր գործերը չունեն նույն բարդությունը, առաջարկում ենք նաև քննարկման առարկա դարձնել որոշակի օբյեկտիվ հիմքերով սնանկության կառավարիչների վարկանիշավորման հարցը, օրինակ՝ ֆինանսական առողջացման դեպքերի քանակ, կարգապահական վարույթների բացակայություն և այլն:

Սնանկության կառավարիչների վարձատրության կապակցությամբ.

541. Առանձնացված պետությունների օրենսդրական կարգավորումներում սնանկության կառավարչի վարձատրության վերաբերյալ առկա են երեք հիմնական մոտեցումներ.

1) **առողջացման/գործի բարդության վրա հիմնված մոտեցում** (Չեխիայի Հանրապետություն, Ռուսաստան, Ֆրանսիա, Հունգարիա, Սերբիա և Սլովենիա), որով սնանկության կառավարչի վարձատրությունը որոշվում է աղյուսակներում նախատեսված վճարներով՝ հստակ սահմանված չափերով և ձեռք բերված ֆինանսական առողջացման կամ վերակազմակերպման գործերով բարդության հիման վրա.
2) **ժամանակի և ցուցաբերած ջանքերի մոտեցում** (Նիդերլանդներ, Բելգիա, Իռլանդիա, Նորվեգիա), որը հիմնված է ծախսված իրական ժամանակի վրա՝ սահմանելով ժամավճարով հատուցում և
3) **դատական/հայեցողական մոտեցում** (Ռումինիա, Լեհաստան, Դանիա, Շվեդիա), որտեղ վարձատրության վճարը հիմնված է գործի բարդության տարբեր ասպեկտների և դատարանների հայեցողական որոշումների վրա:

542. Առանձնացված պետություններում այս տարբեր մոտեցումները պայմանավորված են նաև տարբեր մշակութային և պատմական հենքերով և այդ երկրներում անվճարունակության օրենսդրության զարգացման առանձնահատկություններով: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ դժվար է ընտրել այս հարցում լավագույն և միակ ճիշտ մոտեցումը, քանի որ մոտեցումներից մեկը կարող է

արդյունավետ գործել այս երկրներից որևէ մեկում, սակայն մեկ այլ երկրում լինել ոչ արդյունավետ:

543. Յուրաքանչյուր մոտեցում ունի իր դրական և բացասական կողմերը:

1) առողջացման/գործի բարդության վրա հիմնված մոտեցումն ապահովում է հստակ ուղեցույց, և եթե պատշաճ ձևով կարգավորվի, կարող է խրախուսել սնանկության կառավարիչներին առավելագույնի հասցնելու պարտատերերի պահանջների բավարարումը: Մի կողմից, կարելի է պնդել, որ այս մոտեցումը նվազ խոցելի է այն չարաշահելու տեսանկյունից, և չնայած մեծ ծախսերին կարող է հանգեցնել պահանջների առավելագույն բավարարման: Մինչդեռ, մյուս կողմից այն թույլ չի տալիս բարդ և մեծ արժեք ունեցող գործերի դեպքում կատարելու վարձատրության փոփոխություններ, հետևաբար, թերի կարգավորման դեպքում, տվյալ դեպքերի համար այն կարող է դառնալ ոչ գայթակղիչ կամ նույնիսկ հանգեցնի սնանկության կառավարիչների կոռուպցիոն վարքագծի և ի վերջո նվազեցնի պահանջների բավարարումը,

2) ժամանակի և ցուցաբերած ջանքերի մոտեցումը թույլ է տալիս սնանկության կառավարչին իրականացնելու սնանկության վարույթի ընթացքում պահանջվող գործողությունները և ապահովելու իր պարտականությունների պատշաճ կատարումը: Մյուս կողմից, այն կարող է չարաշահվել սնանկության կառավարչի կողմից, քանի որ վերահսկողությունը կարող է դժվարանալ և հանգեցնել առավելագույն ծախսերով պահանջների նվազագույն բավարարման: Պետք է նկատել, որ այս մոտեցումը որդեգրվել է միայն այն երկրներում, որոնք ունեն անվճարունակության առնչությամբ զարգացած օրենսդրություն:

3) Դատական/հայեցողական մոտեցումը կարող է կիրառվել բարդ գործերով սնանկության կառավարչի վարձատրության չափը որոշելու համար, ինչպես նաև վերացնելու ծավալուն, սակայն հեշտ գործերով բարձր վճարները: Մյուս կողմից, եթե սնանկության կառավարչի վարձատրության չափը որոշելու հայեցողությունը վերապահված է դատարանին, այն կարող է օգտագործվել որպես սնանկության կառավարիչներին ճնշելու եղանակ:

544. Սնանկության կառավարիչների վարձատրության վերաբերյալ եղած մոտեցումների միջև ընտրություն կատարելիս որոշ հանգամանքներ պետք է հաշվի առնվեն: Մասնավորապես, ինչպե՞ս է ընտրված ընթացակարգը խրախուսելու սնանկության կառավարիչներին իրականացնելու պարտատերերի պահանջների առավելագույնս բավարարում սեղմ ժամկետներում: Արդյո՞ք ընտրված եղանակն ապահովում է սնանկության բոլոր կառավարիչների

վարձատրության պարզ, թափանցիկ և արդարացի համակարգ: Արդյո՞ք գործի բարդությունը հաշվի է առնվում: Արդյո՞ք այն սահմանում է սնանկության կառավարիչների պատշաճ խրախուսման մեխանիզմներ, և կանխում է նրանց ոչ պատշաճ և կոռուպցիոն վարքագիծը: Արդյո՞ք այդ համակարգը սնանկության կառավարիչների մասնագիտությունը դարձնում է գրավիչ լավագույն մասնագետների համար:

545. Ինչպես նշվեց վերևում, սնանկության կառավարիչների վարձատրության համապատասխան մոտեցումը պետք է հաշվի առնի նաև երկրի մշակութային և պատմական հիմքերը[143]:

546. Սնանկության կառավարիչների վարձատրության չափը որոշվում է հաշվի առնելով պահանջների բավարարման չափը, սակայն Օրենքը սահմանել է հստակ բացառություն՝ պահանջների բավարարման չափի մեջ չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը:

547. Սնանկության կառավարիչների վարձատրության չափը որոշվում է հաշվի առնելով պահանջների բավարարման չափը, սակայն Օրենքը սահմանել է հստակ բացառություն՝ պահանջների բավարարման չափի մեջ չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը:

548. Օրենքը սահմանում է նաև կառավարչի պարգևավճար ստանալու հնարավորությունը: Մասնավորապես, եթե սնանկության գործն ավարտվում է պարտատերերի պահանջների բավարարմամբ, և կառավարչի կողմից հավաքվել են պարտատերերի պահանջների չափը գերազանցող ակտիվներ, ապա կառավարիչն ստանում է նաև պարգևավճար հավաքված ակտիվների՝ պարտատերերի գրանցված պահանջների չափը գերազանցող մասի 5 տոկոսի չափով:

549. Հարկ է նշել, որ սնանկության կառավարիչների վարձատրության պայմանների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները ևս գործնականում հիմնավորել են իրենց արդյունավետությունը, ինչով պայմանավորված առաջարկվում է պահպանել այս մոտեցումը:

Սնանկության կառավարիչների լիազորությունների ծավալի կապակցությամբ.

550. Առանձնացվում են սնանկության կառավարիչների վերաբերյալ երկու հիմնական մեխանիզմներ.

1) Սնանկության կառավարիչներ, որոնք նշանակվում են որոշակի վերահսկողական գործառույթներ իրականացնելու նպատակով, իսկ կազմակերպության տնօրենը շարունակում է կազմակերպության ընթացիկ կառավարման լիազորությունը: Այս դեպքում սնանկության

[143] Տե՛ս Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր, ֆինանսավորված Միացյալ Թագավորության Լավ Կառավարման Հիմնադրամի կողմից, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/storage/uploads/123Road_Map_with_Action_Plan_ARM.pdf:

կառավարիչները չունեն կորպորատիվ կառավարման էական լիազորություններ, քանի որ չունեն նաև կազմակերպության կառավարման լիազորություն,

2) Սնանկության կառավարիչներ, որոնք նշանակվում են որպես լուծարողներ կամ վարչական կառավարիչներ՝ օժտվելով կորպորատիվ կառավարման լայն լիազորություններով, ինչպես նաև ստանձնելով կազմակերպության կառավարումն ընդհանուր առմամբ: Կազմակերպության տնօրենն ունի հայեցողական լիազորություններ քանի դեռ կազմակերպությունը լուծարման կամ սնանկության փուլում չէ, սակայն այդ գործընթացներից որևէ մեկը սկսվելուց հետո տնօրենի բոլոր լիազորությունները փոխանցվում են սնանկության կառավարչին[144]:

551. Մոտեցումները տարբեր երկրներում տարբեր են, օրինակ ԱՄՆ-ում սնանկության վարույթի ֆինանսական առողջացման փուլում գործում է վերոնշյալ 1-ին մեխանիզմը[145] իսկ լուծարման փուլում՝ 2-րդ[146], մինչդեռ Միացյալ Թագավորությունում Սնանկության երկու՝ և՛ ֆինանսական առողջացման, և՛ լուծարման փուլերում էլ գործում է վերոնշյալ երկրորդ մեխանիզմը[147], իսկ 1-ին մեխանիզմը գործում է նախքան սնանկության վարույթն սկսելն իրականացվող կամավոր գործընթացների (Companies Voluntary Arrangements) ընթացքում:

552. Հայաստանում ներկայումս նախատեսված են կարգավորումներ ժամանակավոր կառավարչի նշանակման մասով, ում լիազորությունները դադարում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, երբ դատարանը՝ անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն:

553. Մինչդեռ սնանկության վերաբերյալ տարբեր օրենսդրությունների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ սնանկության վարույթի տարբեր փուլերում (ֆինանսական առողջացում, լուծարում, ՓՄՁ սնանկություն) սնանկության կառավարիչները հանդես գալով տարբեր անուններով լուծարային կառավարիչ, ՓՄՁ առողջացման խորհրդատու, հոգաբարձու, ունեն լիազորությունների տարբեր ծավալներ:

554. Բացի այդ Օրենքի վերլուծությունից պարզ է դառնում, որ սնանկության կառավարիչը հանդես է գալիս պարտապանի անունից, մինչդեռ առկա են

---

[144] Տե՛ս Andrew Keay, Peter Walton and Joseph Curl, *Corporate Governance and Insolvency: Accountability and Transparency* (Edward Elgar Publishing 2022) 203, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.elgaronline.com/view/9781788979337.xml:

[145] Տե՛ս '11 U.S. Code § 1107 - Rights, Powers, and Duties of Debtor in Possession' (n 8):

[146] Տե՛ս '11 U.S. Code § 704 - Duties of Trustee' (*LII / Legal Information Institute*) հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.law.cornell.edu/uscode/text/11/704:

[147] Տե՛ս Expert Participation, 'Insolvency Act 1986' ss 165–170 հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legislation.gov.uk/ukpga/1986/45/section/165:

դեպքեր, երբ սնանկության վարույթի ընթացքում սնանկության կառավարիչը հանդես է գալիս նաև իր կամ պարտատիրոջ անունից, օրինակ՝ երաշխավորից գումարի բռնագանձման կամ պարտապանի ընդհանուր գույքից բաժին առանձնացնելու դեպքերը:

555. Այս առումով առաջարկում ենք Սնանկության օրենսգրքի մշակման շրջանակում, ըստ փուլերի տարանջատման, յուրաքանչյուր դեպքում սահմանել սնանկության կառավարիչների լիազորությունների ծավալի առանձնահատկությունները:

556. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **պահպանել սնանկության կառավարիչների որակավորման գործող կառուցակարգը.**
2) **նախատեսել իրավաբանական անձանց որպես սնանկության կառավարիչ որակավորելու հնարավորություն, ինչպես նաև սահմանել օտարերկրյա սնանկության կառավարիչների որակավորման ճանաչման հնարավորություն.**
3) **սնանկության կառավարիչների նշանակման ընթացակարգը սահմանել բացառապես վիճակահանությամբ՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով՝ նախատեսելով որոշակի օբյեկտիվ հիմքերով (օրինակ՝ հաջող ֆինանսական առողջացման վարույթների քանակը) վարկանիշավորման հնարավորություն.**
4) **պահպանել սնանկության կառավարիչների վարձատրության գործող օրենսդրությամբ առկա մոտեցումները.**
5) **վերանայել և հստակեցնել սնանկության կառավարիչների լիազորությունների ծավալը՝ կախված սնանկության վարույթի փուլից՝ ֆինանսական առողջացում, լուծարում և այլն:**

13) Սնանկության վարույթի մասնակիցների շրջանակը և դատավարական ընթացակարգերը

557. Օրենքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սնանկության վարույթը միմյանց հաջորդող բազմափուլ համակարգ է, որի կառուցվածքային տարր հանդիսացող յուրաքանչյուր փուլի առջև օրենսդիրը դրել է կոնկրետ խնդիրներ (սնանկության դիմումի ընդունելիության փուլում՝ ստուգել դիմումի ձևին, բովանդակությանը, դատարան ներկայացվող փաստաթղթերին առաջադրված օրենսդրական պահանջներին համապատասխանությունը, սնանկ ճանաչելու հարցի լուծման փուլում՝ սնանկության հիմքերի և հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը և այլն), որը բխում է սնանկության վարույթի համընդհանուր նպատակից, այն է՝ ապահովել պարտատերերի պահանջների բավարարումը՝ երաշխավորելով պարտատերերի և պարտապանի իրավունքների պաշտպանության ողջամիտ հավասարակշռությունը:

558. Սնանկության վարույթի փուլային շարունակականությունը պայմանավորված է սնանկության գործերի առանձնահատկություններով, ընդ որում՝ յուրաքանչյուր փուլին տրամաբանորեն հաջորդում է մյուս փուլը, ուստի և կոնկրետ փուլի առջև դրված խնդիրների ողջամիտ ժամկետներում քննությունն ու լուծումը դառնում է առավել քան հրատապ[148]:

559. Անդրադառնալով «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտմանը՝ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հունվարի 11-ի ՍԴՈ-932 որոշմամբ նշել է, որ նշված հասկացությունը չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով, և ներառում է այն բոլոր վեճերի լուծմանն ուղղված դատական վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում, կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին: Այլ կերպ՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված դատական գործը, որպես սնանկության գործ, ի տարբերություն այլ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող գործերի, չի ավարտվում տվյալ վարույթով կայացված դատական ակտով և կարող է բաղկացած լինել մի քանի առանձին վարույթներից, որոնք, սակայն, չեն հանդիսանում առանձին գործեր, այլ ներառվում են տվյալ իրավասուբյեկտի սնանկության վերաբերյալ միասնական դատական գործում:

560. Այսպիսով, սնանկության վարույթը, ի տարբերություն այլ դատական վարույթների, չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով և ներառում է այն բոլոր հարցերի լուծմանն ուղղված վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին: Ընդ որում, սնանկության վարույթն առաջին հերթին ուղղված է պարտապանի ֆինանսական առողջացմանը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պարտապանի լուծարման վարույթի շրջանակներում նրա գույքի իրացման արդյունքով պարտատերերի պահանջների բավարարմանը:

561. Վերոգրյալով պայմանավորված՝ Օրենքը նախատեսում է ինքնուրույն, իրար հաջորդող կամ զուգահեռ ընթացող մի շարք ընթացակարգեր, որոնցից են.

1) Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության վարույթը, որը հարուցվում է պարտատիրոջ կամ պարտապանի դիմումի հիման վրա, քննվում է դատական նիստում կամ առանց դրա և ավարտվում է սնանկ ճանաչելու մասին կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճռով:

[148] Տե՛ս 23.09.2021թ. թիվ ՍԴՈ 1610 ՍԴ որոշումը:

2) Սնանկության վտանգի վարույթը, որը հաշվեկշռային անվճարունակությունը կանխելու և ֆինանսապես առողջանալու նպատակով հարուցվում է պարտապանի դիմումի հիման վրա, քննվում է դատական նիստում և ավարտվում է պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու կամ դիմումը մերժելու մասին վճռով:
3) Պահանջների գրանցման վարույթը, որի շրջանակներում պարտապանին սնանկ ճանաչելու մասին ի գիտություն հասարակության տրված հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում պարտատերերը, այդ թվում՝ ապահովված պարտատերերը, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք դուրս են եկել սնանկության վարույթից, դատարան են ներկայացնում իրենց պահանջները, որի հիման վրա դատարանը կայացնում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշում՝ դրանում ներառելով պարտատիրոջը, նրա պահանջի չափը և բավարարման հերթը:
4) Սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու վարույթը, որը հարուցվում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին ի գիտություն հասարակության տրված հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում ապահովված պարտատիրոջ կողմից դատարան ներկայացված դիմումի հիման վրա, քննվում է դատական նիստում կամ առանց դրա և ավարտվում է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու կամ դիմումը մերժելու մասին որոշմամբ:
5) Պարտապանի ֆինանսական առողջացման վարույթը:
6) Պարտապանի լուծարման վարույթը, որը սկսվում է որևէ պատճառով ֆինանսական առողջացման վարույթ չսկսվելու կամ այն հաջողությամբ չավարտվելու դեպքում, ենթադրում է պարտապանի ակտիվների հավաքագրում և վաճառք, որի արդյունքում վճիռ է կայացվում սնանկության գործն ավարտելու մասին, եթե բոլոր պահանջները բավարարվել են, կամ պարտապանի լուծարման հետևանքով սնանկության գործը ավարտելու մասին:
7) Ֆիզիկական անձի սնանկության վարույթը, որի շրջանակներում կիրառելի են վերոշարադրյալ ընթացակարգերը, եթե օրենքով բացառություն սահմանված չէ:
8) Պարզեցված ընթացակարգերը, որոնք իրականացվում են կամավոր լուծարման վիճակում գտնվող իրավաբանական անձի, բացակայող

պարտապանի և սնանկության գործով կառավարչի գործը գույքի անբավարարության հիմքով վաղաժամկետ ավարտելու միջնորդության դեպքում:

562. Խոսելով սնանկության գործի դատավարական ընթացակարգերի մասին՝ հարկ է արձանագրել, որ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և Օրենքով սահմանված կարգով: Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե Օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով:

563. Հարկ է նկատել, որ նույնաբովանդակ նորմ առկա է նաև ՔԴՕ-ում: Այսպես, ՔԴՕ 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՔԴՕ սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով:

564. Այսինքն ՔԴՕ-ն ունի սուբսիդիար կիրառություն այն հարաբերությունների նկատմամբ, որոնք կարգավորված չեն Օրենքով:

565. Մի շարք երկրներ այս առումով ընտրել են խնդրի լուծման այլ տարբերակ, օրինակ՝ Ճապոնիա, Ֆինլանդիա և այլն, որի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում կիրառվում է mutate mutandis սկզբունքը, այսինքն ՔԴՕ նորմերը տարածվում են սնանկության ինստիտուտի նկատմամբ այնքանով, որքանով չեն հակասում դրանց էությանը:

566. Մինչդեռ թե՛ ներպետական մոտեցումը, թե՛ վկայակոչված այլընտրանքային տարբերակը բավարար գնահատվել չեն կարող, քանի որ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը ոչ միշտ է համապատասխանում իրավահարաբերության բնույթին կամ առհասարակ չի ունենում լուծումներ այնպիսի իրավիճակների համար, ինչպիսիք են.

1) ծանուցումների իրականացումը, այդ թվում՝ դատավարական փաստաթղթերի հանձնումը.
2) ապացուցման կանոնները.
3) նախնական դատական նիստի իրականացումը.
4) սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի դասակարգումը և բողոքարկման առանձնահատկությունները.
5) սնանկության կառավարիչների կողմից դատական կարգով լուծում պահանջող հարցերի քննության կարգը:

567. Նման պայմաններում ակնհայտ է Սնանկության օրենսգրքով սնանկության գործի բոլոր դատավարական առանձնահատկությունները կարգավորելու անհրաժեշտությունը՝ հընթացս անդրադառնալով նաև հետևյալ ասպեկտներին.

Սնանկության վարույթի մասնակիցների շրջանակի կապակցությամբ.

568. Հարկ է նկատել, որցանկացած վարույթի արդյունավետությունը պայմանավորված է մասնակիցների շրջանակի հստակեցմամբ, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի իրավունքների և պարտականությունների նախատեսմամբ:

569. Ի տարբերություն քաղաքացիադատավարական ընթացակարգերի՝ սնանկության վարույթն, ինչպես արդեն քննարկվեց, բաղկացած է միմյանցից տարբերվող մի շարք փուլերից, որոնց առանձնահատկություններից է նաև մասնակիցների բազմաթվությունը: Ընդ որում, նույն մասնակցի դերը վարույթի տարբեր փուլերում կարող է տարբերվել և վերջինս կարող է ունենալ իրավունքների այլ ծավալ:Օրինակ՝ պարտատերը կամ պարտապանը սնանկության դիմումի ներկայացման, գործի քննության, սնանկ ճանաչվելուց կամ պահանջները գրանցվելուց հետո կարող են ունենալ իրավունքների լրիվ այլ ծավալ:

570. Իրենց հերթին մի շարք մասնակիցներ էլ ունեն սնանկության վարույթում հատվածական ներգրավում, օրինակ՝ ՊԵԿ-ը, որը կարող է ներգրավել ստուգում իրականացնելու դիմում ներկայացնելու գործընթացում:

571. Մի շարք երկրներում տարբերվում են պարտապանի իրավունքների ծավալը: Այսպես, Լեհաստանի Հանրապետության կարգավորումների համաձայն՝ Սնանկության վարույթում (պարտապանի ակտիվների լուծարմանն ուղղված վարույթ) պարտապանը զրկվում է իր ակտիվները տնօրինելու իրավունքից: Ակտիվների (սնանկության գույքի) կառավարումն իր վրա է վերցնում ստացողը (syndyk): Ստացողը ստանձնում է նաև պարտապանի ձեռնարկության գործունեության հետ կապված այլ պարտականություններ՝ ընկերության կառավարում, հաշվետվական պարտավորությունների կատարում և այլն:

572. Պարտապանը մնում է սնանկության վարույթի մասնակից և կարող է վիճարկել այդ վարույթի ընթացքում դատարանի կողմից կայացված միայն որոշ որոշումներ, այն է՝ սնանկության գույքից ակտիվները բացառելու և ստացողի վարձատրության վերաբերյալ որոշումները[149]:

573. Մեկ այլ դեպքում՝ Չեխիայի Հանրապետությունում սնանկության վարույթում պարտապանները կորցնում են իրենց գույքը տնօրինելու, գույքի հետ կապված այլ իրավունքներ իրականացնելու և պարտավորությունները կատարելու իրավունքը: Այս իրավասություններն անցնում են սնանկության կառավարչին:

574. Ֆինանսական առողջացման վարույթում պարտապանը շարունակում է տիրապետել գույքը՝ սահմանափակումներով: Անվճարունակության գույքի

[149] Տե՛ս https://e-justice.europa.eu/447/EN/insolvencybankruptcy?POLAND&member=1:

տնօրինման և կառավարման համար հիմնարար նշանակություն ունեցող իրավական ակտերը պարտապանի կողմից կատարվում է միայն պարտատերերի ժողովի համաձայնությամբ: Պարտապանը, ով խախտում է այս պարտավորությունը, պատասխանատու է պարտատերերին կամ երրորդ անձանց պատճառված վնասի կամ որևէ այլ վնասի համար:

575. Պարտապանի հսկողությունն իրականացվում է ՍՆԴ, սնանկության կառավարչի և պարտատերերի կողմից[150]:

576. Ավստրիայի Հանրապետությունում պարտապանն իրավունք ունի դիմել սնանկության և բողոքարկել սնանկության վարույթ սկսելու դեմ, կորցնում է գույքի նկատմամբ տնօրինման իրավունքը, երբ սնանկության վարույթ է սկսվել, իրավունք ունի մասնակցել պարտատերերի ժողովին և պարտատերերի կոմիտեին և իրավասու է դիմում ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագրի եզրակացության համար[151]:

577. Լիտվայի Հանրապետությունում սնանկության վարույթի ընթացքում սնանկության մեջ գտնվող ֆիզիկական անձը իրավունք ունի տեղեկատվություն ստանալ սնանկության կառավարչից, մասնակցել պարտատերերի ժողովներին և վիճարկել դրանց ապօրինի որոշումները, պահանջել սնանկության կառավարչի փոխարինում և փոխհատուցում պահանջել գործով կառավարչի կողմից վնասի համար իր գործառույթները պատշաճ կերպով չկատարելու համար[152]:

578. Այսպիսով, հիմնականում պարտապանները զրկվում են սեփականության տնօրինման հնարավորությունից, իսկ որոշ դեպքերում կարողանում են տիրապետել իրենց գույքը սնանկության կառավարչի, պարտապանի և ՍՆԴ հսկողությամբ: Ինչ վերաբերում է բողոքարկման իրավունքին, ապա հարկ է նկատել, որ դա տարբերվում է ըստ իրավական համակարգերի, որպիսի պայմաններում քննարկման առարկա է ներպետական օրենսդրությամբ, ըստ առանձնահատկությունների, համապատասխան կարգավորումներ նախատեսելու հարցը:

579. Ողջ վերոգրյալով պայմանավորված՝ կարևոր է սնանկության վարույթի բոլոր մասնակիցների հստակ շրջանակի և նրանց կարգավիճակի ամրագրումը՝ ըստ սնանկության վարույթի յուրաքանչյուր փուլի և դատավարական ընթացակարգի: Նման մանրամասն կարգավորումները առավել որոշակի և կանխատեսելի են դարձնում սնանկության մասին օրենսդրությունը և կարևոր են միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովման համատեքստում:

Սնանկության վարույթում դատարանի դերի հստակեցման կապակցությամբ.

---

[150] Տե՛ս https://e-justice.europa.eu/447/EN/insolvencybankruptcy?CZECHIA&member=1:

[151] Տե՛ս https://e-justice.europa.eu/447/EN/insolvencybankruptcy?AUSTRIA&member=1:

[152] Տե՛ս https://e-justice.europa.eu/447/EN/insolvencybankruptcy?LITHUANIA&member=1:

580. Սնանկության վերաբերյալ օրենսդրությունն ընդհանուր առևտրային իրավունքի համակարգի մասն է և դրա պատշաճ կիրառումն էապես կախված է ոչ միայն լավ զարգացած առևտրային իրավական համակարգից, այլև օրենքի կիրառման համար լավ զարգացած ինստիտուցիոնալ հիմքի առկայությունից:

581. Իրավական համակարգերի մեծ մասում սնանկության վարույթն իրականացվում է դատական մարմնի կողմից՝ հաճախ տնտեսական կամ ընդհանուր իրավասության դատարանների, իսկ որոշ դեպքերում՝ սնանկության գործերով մասնագիտացված դատարանների կողմից: Երբեմն դատավորները տիրապետում են հատուկ գիտելիքների և պատասխանատու են միայն սնանկության գործերի համար, մինչդեռ մեկ ալ տարբերակում սնանկության գործերը դատավորի լայն պարտականությունների մի մասն է կազմում ընդամենը: Որոշ իրավական համակարգերում ոչ դատական կամ քվազի դատական մարմինների կողմից իրականացվում են այնպարտականությունները, որոնք այլ իրավական համակարգերում ապահովվում են դատարանների կողմից[153]:

582. Պետք է նշել նաև որ որոշ երկրներում, ինչպես օրինակ Անգլիայում, սնանկության որոշակի գործընթացներ կարող են իրականացվել առանց դատարանի մասնակցության կամ դատարանի չնչին մասնակցությամբ: Օրինակ՝ Անգլիայում սնանության կառավարման փուլ կարող է սկսվել հատուկ կատեգորիայի ապահովված պարտատերերի (Qualified Floating Charges Holders) որակյալ մեծամասնությամբ կայացված որոշմամբ:

583. Այսպիսով դատական համակարգը կարևոր դեր ունի ցանկացած երկրի անվճարունակության համակարգի հաջողության գործում և Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ:

584. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանն ունի կարևոր վերահսկողական իրավասություն հետևյալ դեպքերում.

1) եթե սնանկության վարույթում առկա է վեճ, այդ վեճը լուծելու համար կարող է սկսվել դատական վարույթ.

2) եթե շահագրգիռ կողմը տուժում է սնանկության կառավարչի որոշմամբ, շահագրգիռ կողմը կարող է իրավունք ունենալ վիճարկել որոշումը դատարանում.

3) ցանկացած շահագրգիռ կողմ կարող է վիճարկել սնանկության վարույթից որևէ մեկը, եթե դրանք չարաշահվեն, օրինակ՝ պարտատերերի ժողովի ձայների հաշվարկը:

585. Հիշյալ մոտեցման որդեգրումը նախ դատարանին կդիտարկի իր կարգավիճակին համարժեք՝ որպես վեճ լուծող սուբյեկտի, կխթանի սնանկության

[153] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf, էջ 33:

կառավարիչների պատասխանատվությունը և որպես ընդհանուր ազդեցություն կնպաստի դատարանների բեռնաթափմանը՝ նպաստելով առանձին գործերի քննության որակի բարձրացմանը:

Առանձին դատավարական հարցերի կապակցությամբ.

586. Հարկ է նկատել, որ Սնանկության օրենսգրքով անհրաժեշտ է հատուկ կարգավորումներ նախատեսել Հայեցակարգի սույն ուղղության 10-րդ կետով նախատեսված բոլոր դատավարական ընթացակարգերի համար:

587. Ինչպես արդեն քննարկվեց, դատական ակտերի ՔԴՕ դասակարգումը վերաբերելի չէ սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի նկատմամբ: Հաշվի առնելով այն, որ սնանկության յուրաքանչյուր վարույթ ունի եզրափակում, հետևաբար յուրաքանչյուր փուլի ավարտին կայացվող ակտը պետք է դիտարկվի եզրափակող և ըստ այդմ լինի բողոքարկելի:

588. Այդպիսով անհրաժեշտ է վերանայել սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի ցանկը՝ սահմանելով միջանկյալ և եզրափակիչ ակտերի ցանկը:

589. Օպերատիվությունը հաշվի առնելով՝ առաջարկվում է դիտարկել միջանկյալ դատական ակտերի՝ միայն վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորության նախատեսման հարցը:

590. Այս կապակցությամբ ՍԴ-ն իր 27.01.2021թ. թիվ ՍԴՈ-1573 որոշմամբ, անդրադառնալով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանը, արձանագրել է, որ, հաշվի առնելով միջանկյալ դատական ակտերի, վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերի վերաբերյալ իրավանորմերի կարգավորման առարկան, գտնում է, որ դրանցով վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակի սահմանված չլինելը սահմանադրականության առումով խնդրահարույց չէ: Հետևաբար, այդ իրավադրույթները Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցի տեսանկյունից սահմանադրականության խնդիր չեն հարուցում, քանի որ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի շրջանակի սահմանումը դրանց կարգավորման առարկայում չի ներառվում:

Սնանկության կառավարիչների աջակցման վարույթի կապակցությամբ.

591. Գործնականում առկա են իրավիճակներ, երբ սնանկության կառավարիչները դիմում են դատարան դատական կարգով լուծում պահանջող հարցերի համար, այդ թվում՝ տեղեկատվության պահանջի, քրեական վարույթով դրված արգելանքի վերացման և նմանատիպ բազմաբնույթ այլ հարցերով: Սրա հաշվառմամբ՝ որպես ինքնուրույն ընթացակարգ պետք է նախատեսել սնանկության կառավարիչների աջակցման վարույթը, որը կվերաբերի սնանկության վարույթի

բնականոն ընթացքում դատական ակտով լուծում պահանջող հարցերով դատական ակտերի կայացմանը:

Առանձին քաղաքացիական գործերի կապակցությամբ.

592. Սնանկության գործերից բացի Օրենքը ՍնԴ ենթակայությանն է վերապահել նաև որոշ քաղաքացիական գործեր:

593. Համեմատության համար պետք է նշել, որ սնանկության վարույթին առնչվող քաղաքացիական գործերի կենտրոնացման դրսևորումներ հանդիպում են արտասահմանյան որոշ երկրների օրենսդրություններում: Օրինակ՝ Իսպանիայում սնանկության վարույթին պետք է միացվեն նաև իրավաբանական անձի պահանջներով հայցերը՝ ընդդեմ տնօրենների, լուծարային կառավարիչների և աուդիտորների, որոնց քննությունը պետք է շարունակվի սնանկության վարույթի շրջանակներում, իսկ քաղաքացիական և աշխատանքային դատարանները չեն կարող վարույթ ընդունել այնպիսի գործեր, որոնք պետք է քննվեն ՍնԴ-ում, հատկապես այն գործերը, որոնք կապված են պարտապանի գույքի հետ: Եթե նման գործերը սխալմամբ ընդունվել են վարույթ, ապա դրանց քննությունը պետք է դադարեցվի և արդեն կատարված գործողությունները համարվեն անվավեր: Առևտրային դատարանները ևս չպետք է վարույթ ընդունեն և քննեն այնպիսի գործեր, որոնք կապված են սնանկության վարույթով պարտապանի հետ:

594. Ֆրանսիայում ՍԿ-ն կարող է դիմել սնանկության գործը քննող դատարանին՝ պայմանագիրը լուծված համարելու պահանջով, եթե դա անհրաժեշտ է պարտապանի ֆինանսական առողջացման համար և եթե լուծումը էականորեն չի վնասի կոնտրագենտի շահերը: Այս գործերը քննվում են սնանկության վարույթի շրջանակներում, իսկ Գերմանիայում պարտապանի դեմ ներկայացվող պահանջները սնանկության վարույթը սկսելուց հետո պետք է ներկայացվեն միայն սնանկության վարույթում, եթե հայցը սնանկության վարույթին առնչվող գույքին է վերաբերում: Պարտատիրոջ կամ ՍԿ-ի կողմից պահանջը սնանկության վարույթի շրջանակներում ներառելուն առարկելու դեպքում այն կարող է քննվել ընդհատված հայցի քննության շրջանակներում[154]:

595. Ընդ որում օրենսդրական բարեփոխումներով առանձին քաղաքացիական գործերի ցանկն ընդլայնվել է, իսկ գործնականում քննության ենթակա առանձին քաղաքացիական գործերի քանակը էականորեն նվազել է:

596. Այդուհանդերձ, դեռևս առանձին քաղաքացիական գործերը քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննելու պայմաններում, օրինակ՝ սնանկության վարույթի մեկնարկին պարտապանի անվճարունակության

---

[154] Տե՛ս «Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում» գիտագործնական ձեռնարկ, էջեր 53-54, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://aoj.am/storage/library/academy-publications/qugDe3iw2QjvLx9Iau303LFHEAPXBXmBziVO0kis.pdf?fbclid=IwAR2LXhduxdA0EncM0JLwtRJI6aIPHkt_7IP-obJ0udb032S_6KV-IdBRrOw)

հիմքում ընկած պարտավորությունը և դրա անվիճելի լինելը կասկածի տակ դնելու կամ սնանկության վարույթի շրջանակում աճուրդի արդյունքների վիճարկման դեպքերը արհեստականորեն ազդում են սնանկության գործի քննության վրա:

597. Այս պայմաններում հարկ է քննարկման առարկա դարձնել առանձին քաղաքացիական գործերի, այդ թվում՝ սնանկության կառավարչի կողմից հարուցվող հայցերը ՍՆԴ կողմից քննության առնելու հարցը:

598. Քննարկման առարկա հաջորդ կարևոր հարցը առանձին քաղաքացիական գործերի և սնանկության վարույթի գործերի կապի հստակեցումն է՝ մրցակցության և տնօրինչականության սկզբունքների հաշվառմամբ:

599. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **Սնանկության օրենսգրքով կարգավորել բոլոր դատավարական հարաբերությունները, այդ թվում՝ ծանուցման, ժամկետների, ապացուցման, նախնական դատական նիստի կիրառելիության և այլ հարցերով.**
2) **հստակեցնել սնանկության վարույթի մասնակիցների շրջանակը և նրանց կարգավիճակն՝ ըստ սնանկության յուրաքանչյուր փուլի.**
3) **դատարաններին վերապահել առավելապեսվեճերի լուծման և սնանկության վարույթում առկա բարդ հարցերի քննարկման իրավասություն.**
4) **կիրառել սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի դասակարգման ինքնուրույն մեթոդաբանություն՝ միջանկյալ համարելով սնանկության կոնկրետ փուլը չեզրափակող բոլոր ակտերը, իսկ այն եզրափակողը՝ եզրափակիչ:**
5) **Բողոքարկելի համարել բոլոր եզրափակիչ դատական ակտերը, իսկ միջանկյալ դատական ակտերի դեպքում միայն նրանք, որոնց համարժեքը ՔԴՕ-ում բողոքարկելի է՝ սահմանելով նաև միայն մեկ ատյան բողոքարկման հնարավորություն.**
6) **ներդնել սնանկության կառավարիչների աջակցման վարույթը.**
7) **ընդլայնել առանձին քաղաքացիական գործերի շրջանակը՝ ի թիվս այլնի, ներառելով նաև սնանկության կառավարչի կողմից հարուցվող հայցերը,**
8) **հստակեցնելսնանկության գործի և առանձին քաղաքացիական գործի նյութերի, ինչպես նաև առանձին քաղաքացիական գործերի նյութերի կապը և ապացուցողական նշանակությունը:**

14) Իրավունքի չարաշահման անթույլատրելիության սկզբունքի երաշխավորումը

600. ՍԴ-ն 2021թ. փետրվարի 12-ի ՍԴՈ 1576 որոշմամբ, հողում կատարելով իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահման, այսպես կոչված, համընդհանուր

բնորոշման վրա, արձանագրել է, որ իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը.

1) անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը.
2) իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան.
3) անձի՝ առերևույթ իրավաչափ գործողությունները հանգեցնում են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձն ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին.
4) իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար՝ պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին»:

601. Վերոգրյալի հաշվառմամբ՝ ստորև ներկայացվում են սնանկության վարույթի շրջանակում արձանագրված չարաշահումների դրսևորումների ընդհանրացումները.

1) անվիճելի պարտավորությունների անհիմն վիճարկումը.
2) առանձին քաղաքացիական գործերով ակնհայտ անհիմն հայցերի ներկայացումը.
3) սնանկության կառավարիչների վարքագծի անհարկի վիճարկումը.
4) սնանկության վարույթի շրջանակում կայացված դատական ակտերի անհարկի բողոքարկումը.
5) աճուրդի արդյունքում կնքված գործարքների վիճարկումը.
6) պարտատերերի ժողովին չմասնակցելը կամ անհիմն դեմ քվեարկելը, այդ թվում՝ ֆինանսական առողջացման հարցում.
7) մորատորիումի միջոցով չարաշահումների իրականացում և այլն:

602. Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՔԴՕ 14-րդ հոդվածով սահմանվում է դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը, մասնավորապես սահմանվում է, որ դատավարության մասնակիցները պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

603. Մյուս կողմից «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական սանկցիա կարող է կիրառել, երբ անձը՝

1) չարաշահում է իր դատավարական իրավունքները կամ չարամտորեն չի կատարում իր դատավարական պարտականությունները.

2) չի ենթարկվում դատարանի կարգադրություններին կամ որևէ այլ կերպ խախտում է դատական նիստի կարգը.
3) դատական նիստի դահլիճում անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի նկատմամբ:

604. Այնուամենայնիվ հարկ է նշել, որ թե՛ ՔԴՕ սկզբունքը և թե՛ դատական սանկցիաների ինստիտուտը չունեն լայն տարածում և որոշ դեպքերում էլ ինքնին արդյունավետ չեն:

605. Այնինչ վերոնշյալ չարաշահումները կարող են լուծվել մի քանի տարբերակներով: Այսպես, մի մասը պայմանավորված է հստակ արգելքի օրենսդրական բացով կամ ոչ հստակ կարգավորումներով, մյուս մասն առաջացել է գործնական կիրառության արդյունքում:

606. Ակնհայտ է նաև, որ օրենսդրությամբ հնարավոր չէ կարգավորել և կանխարգելել իրավունքի չարաշահման բոլոր դրսևորումները, դրա համար անհրաժեշտ է նաև դիտարկել ունիվերսալ կարգավորումների անհրաժեշտության հարցը:

607. Ավելին, ուշագրավ է, որ սնանկության օրենսդրությամբ սահմանված չէ նաև բարեխիղճ իրավունքներից օգտվելու և պարտականությունները կատարելու ուղիղ պայման:

608. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**
1) որպես ուղենիշային մոտեցում սահմանել իրավունքներից բարեխղճորեն օգտվելու և դատավարական պարտականությունները բարեխղճորեն կատարելու պահանջ.
2) օրենսդրորեն սահմանափակել իրավունքների չարաշահման հնարավորություն ընձեռող դեպքերը, օրինակ՝ սահմանափակելով աճուրդի արդյունքները պարտապանի կողմից բողոքարկելու հնարավորությունը.
3) ամրագրել իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը՝ դրա բովանդակության մեջ ներառելով ունիվերսալ լուծում, այն է՝ դատարանի հնարավորությունը սահմանափակելու չարաշահմամբ իրավունքների իրականացումը:

15) Օտարերկրյա տարրի մասնակցությամբ վարույթը

609. Ներկայումս գործնականում հաճախ են հանդիպում իրավիճակներ, որ սնանկության վարույթ է հարուցվում ՀՀ տարածքում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունեցող օտարերկրյա իրավաբանական անձի նկատմամբ:

610. Ներկայումս Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ սնանկության վարույթի պարտապան կարող է լինել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ՝ առանձնացնելով պետական մարմինների և ֆինանսական կազմակերպությունների օգտին որոշակի բացառություններ, որոնց մեծ մասի

սնանկության վարույթը կարգավորվում է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքով: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ որպես պարտապան՝ օտարերկրյա կամ քաղաքացիություն չունեցող անձի մասնակցությամբ անվճարունակության (սնանկության) հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Օրենքի դրույթները, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

611. Ստացվում է, որ Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Օրենքը տարածվում է նաև օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող պարտապանների վրա:

612. Նման պայմաններում առաջանում է այս կազմակերպությունների սնանկության վարույթների անցկացման վերաբերյալ ներպետական դատարանների իրավազորության հարցը:

613. Ողջ վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ օտարերկրյա տարրի տեսանկյունից որևէ կարգավորում ներկայումս առկա չէ սնանկության վերաբերյալ օրենսդրությամբ:

614. Միաժամանակ, հարկ է նկատել, որ ՔԴՕ 59-րդ հոդվածով սահմանվում է օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ ՔԴՕ 431-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավունք ունեն նաև քննելու օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե՝

1) այդ մասին առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ իրավաբանական անձի և օտարերկրյա անձի միջև համաձայնություն.
2) գույքային վեճով պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք.
3) ամուսնալուծության վերաբերյալ գործով՝ ամուսիններից թեկուզև մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է.
4) առողջությանը, պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին և կերակրողի մահվամբ պատճառված վնասի վերաբերյալ գործով վնասը պատճառվել է Հայաստանի Հանրապետության տարածքում.
5) գույքին պատճառված վնասը հատուցելու գործով վնասի հատուցման պահանջը ներկայացնելու համար հիմք ծառայած գործողությունը կամ այլ հանգամանքը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում.
6) օտարերկրյա անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում.

7) հայցը բխում է պայմանագրից, որով կատարումը տեղի է ունեցել կամ պետք է տեղի ունենա Հայաստանի Հանրապետության տարածքում.
8) հայցը բխում է Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած անհիմն հարստացումից.
9) գործին մասնակցող անձանցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, և գործին մասնակցող օտարերկրյա անձն ընդունում է Հայաստանի Հանրապետության դատարանի իրավազորությունը՝ այդ մասին հայտարարելով կամ իրավազորության իրականացմանն ուղղված համապատասխան միջնորդություններ ներկայացնելով:

615. Ավելին, այս կապակցությամբ, ՎԴ-ն 29.01.2021թ. թիվ ԵԴ/0930/04/18 գործով որոշմամբ սահմանել է, որ ՀՀ դատարանները կարող են քննել այն սնանկության գործերը, որոնցով պարտապան հանդիսացող օտարերկրյա իրավաբանական անձը ՀՀ տարածքում ունի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն:

616. Մեկ այլ՝ 30.04.2020թ. թիվ ԵԿԴ/0287/04/15 գործով որոշմամբ ՎԴ-ն արձանագրել է, որ օտարերկրյա իրավաբանական անձի մասնակցությամբ սնանկության գործը Հայաստանի Հանրապետության դատարաններում քննելու համար անհրաժեշտ է, որ ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում ունենա գրանցված մասնաճյուղ, ինչը նշանակում է, որ ընկերության մասնակցությամբ սնանկության գործը ենթակա է Հայաստանի Հանրապետության դատարանների քննությանը:

617. Այսպիսով, Սնանկության օրենսգրքով հստակեցման ենթակա են այն դեպքերը, երբ ներպետական դատարաններին ընդդատյա են օտարերկրյա տարրի մասնակցությամբ սնանկության դեպքերը:

618. Նման պայմաններում օրենսդրության մեջ անվճարունակության միջազգային ասպեկտներին վերաբերող արդյունավետ և համագործակցային գործընթացների բացակայության պայմաններում, գործընթացը դառնում է դժվար, ծախսատար և ոչ արդյունավետ:

619. Մյուս կողմից միջազգային առևտուրը զարգացման պայմաններում պահանջում է, որպեսզի անվճարունակության գործընթացները արդյունավետ իրականացվեն նաև այն դեպքում, երբ սնանկության վարույթը տարածվում է որևէ երկրի սահմաններից դուրս, օրինակ՝ երբ ֆինանսական վատ դրությունը հանգեցնում է անդրազգային ներկայացվածություն ունեցող առևտրի մասնակիցներից մեկի անվճարունակությանը:

620. Համաձայն միջազգային մի շարք փաստաթղթերի[155]՝ հաշվի առնելով, որ սնանկության վարույթը կարող է ունենալ միջազգային ասպեկտներ՝

[155] Տե՛ս ՄԱԿ ՄԱԻՀ անդրսահմանային անվճարունակության Մոդելային օրենքը, ԵՄ անվճարունակության վարույթի մասին որոշումը (Council regulation (EC) No 1346/2000 of 29 May 2000 on insolvency proceedings), NAFTA-ի Անդրազգային անվճարունակության իրավունքի ամերիկյան ինստիտուտի նախագիծը և իրավաբանների միջազգային ասոցիացիայի անդրսահմանային անվճարունակության մասին Կոնկորդատը:

ներպետական իրավական համակարգը պետք է սահմանի հստակ կանոններ՝ կապված իրավազորության, օտարերկրյա դատարանների վճիռների ճանաչման, տարբեր երկրների դատարանների միջև համագործակցության և օրենքի ընտրության հետ:

621. Անդրազգային հարցերի արդյունավետ լուծման հիմնական գործոնները սովորաբար ներառում են՝
    1) սնանկության օտարերկրյա վարույթի արագ և հստակ ճանաչում,
    2) սնանկության օտարերկրյա վարույթի ճանաչման հարցում դատական աջակցության տրամադրում,
    3) օտարերկրյա սնանկության կառավարչի կողմից դատարաններին և այլ իրավասու մարմիններին դիմելու հնարավորության ապահովում,
    4) սնանկության օտարերկրյա վարույթի ընթացքում դատարանի և սնանկության կառավարչի միջև համագործակցության ապահովում, և
    5) ներպետական և օտարերկրյա պարտատերերի միջև խտրականության բացառում[156]:

622. Այս առումով ՄԱԿ ՄԱԻՀ-ը ընդունել է Մոդելային օրենքը՝ ուղղված անդրսահմանային սնանկության կարգավորմանը, որը մինչ օրս ընդունվել է աշխարհի 51 իրավազորությունների կողմից: Մոդելային օրենքի նպատակն է ապահովել սնանկության գործերով կառավարիչների և տուժած երկրների դատարանների միջև միջազգային համագործակցության արդյունավետությունը:

623. Նկատի ունենալով Հայաստանում գործող ներպետական կանոնների և այլ երկրներում կիրառվող կանոնների միջև հնարավոր հակասությունը, ուշադրություն է դարձվում միջազգային փաստաթղթերին, որոնք կարող են օգտագործվել անդրսահմանային սնանկության դեպքում: Դրանցից գլխավորը Մոդելային օրենքն է, որը կարող է օգտակար լինել՝ հաշվի առնելով, որ շատ երկրներ, որոնք տեքստը ներառել են իրենց ներքին իրավական համակարգերում, դա արել են «բաց» ռեժիմի հիման վրա՝ այդպիսով հնարավորություն տալով այդ երկրներին օգնության համար հարցումներ ստանալ: Ընդ որում, այն պետություններում, որտեղ մոդելային օրենքն ընդունվել է ներպետական սնանկության օրենքներում, ընդունված է, որ այն արդյունավետ եղանակ է նշված նպատակների իրականացման համար:

624. ՄԱԿ ՄԱԻՀ Մոդելային օրենքը իրավական հիմք է ապահովում անդրսահմանային անվճարունակության վարույթը համակարգելու համար՝ բոլոր շահագրգիռ կողմերի շահերը պաշտպանելու համար: Մոդելային օրենքը այդ նպատակին հասնելու ճանապարհին նախ սահմանում է դատական

[156] Տե՛ս Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Պարտատերերի իրավունքների սնանկության չափանիշը՝ հիմնված Համաշխարհային բանկի արդյունավետ սնանկության սկզբունքները և պարտատերերի/պարտապանների ռեժիմները և ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրության մասին ուղեցույց, 2011, էջ 46:

համագործակցություն, երկրորդ՝ անվճարունակության գործով օտարերկրյա կառավարչին կամ նմանատիպ ներկայացուցչին տալիս է լիազորություն տեղական վարույթների շրջանակում և, վերջապես, ապահովում է հավասար ռեժիմ օտարերկրյա և տեղական պահանջների համար: Մոդելային օրենքը կիրառվում է այն դեպքերում, երբ օտարերկրյա պարտատերը ձգտում է տեղական դատարանում անվճարունակության վարույթ հարուցել, կամ երբ տեղական դատարանը օգնություն է խնդրում օտարերկրյա դատարանից կամ օտարերկրյա ներկայացուցչից, և, վերջապես, այն իրավիճակներում, երբ տարբեր իրավասություններում զուգահեռ վարույթներ են իրականացվում նույն պարտապան ընկերության անվճարունակության վերաբերյալ: Այնուամենայնիվ, Մոդելային օրենքը չի խաթարում առանձին պետությունների անկախությունը անվճարունակության վերաբերյալ իրենց սեփական կանոններն ընդունելու հարցում: Այս գործընթացում էական ինքնավարությունը երաշխավորված է:

625. Մոդելային օրենքի հիմնական ուղղություններն են՝
    1) օտարերկրյա ներկայացուցիչների համար դատարան ուղղակի հասանելիության ապահովումը,
    2) ճանաչման սկզբունքները և ընթացակարգերը, օգնության և աջակցության ցուցաբերումը,
    3) դատարանների փոխգործակցության իրավական շրջանակները,
    4) զուգահեռ ընթացող վարույթների փոխհարաբերակցությունը,
    5) հարգել միջազգային ծագումը, աջակցել միասնականությանը և բարեխղճությանը:

626. Այսպիսով, Մոդելային օրենքի՝ ներպետական օրենսդրության մեջ իմպլեմենտացնելու հիմնական նպատակն է լինելու աջակցել՝
    1) դատարանների և օտարերկրյա ներկայացուցիչների միջև համագործակցությանը,
    2) առևտրի և ներդրումների համար իրավական որոշակիության ապահովմանը
    3) անդրազգային սնանկության արդար և արդյունավետ կառավարմանը,
    4) պարտապանի ակտիվների արժեքի մեծացմանը և պաշտպանությանը,
    5) խնդրահարույց ձեռնարկությունների առողջացմանը:

627. Ընդ որում նման կարգավորումներ առկա են տարբեր երկրների օրենսդրությունում, որոնքնախատեսում ենկարգավորումներ անվճարունակության մասին միջազգային օրենսդրության առնչությամբ:

628. Այսպիսով, քննարկման առարկա է Սնանկության օրենսգրքում Մոդելային օրենքի առանձին ինստիտուտներ ներդնելու հարցը, որը իրավական որոշակիության համատեքստում, ի թիվս այլնի, կդառնա երկրում օտարերկրյա ներդրումների գրավիչ մաս:

629. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է.**

1) **հստակեցնել օտարերկրյա տարրի մասնակցությամբ սնանկության վարույթի նկատմամբ ներպետական դատարանների իրավազորության հիմքերը.**
2) **կարգավորել անդրազգային սնանկությանն առնչվող դատարանների փոխգործակցության, օտարերկրյա վարույթների ճանաչման և փոխօգնության, զուգահեռ ընթացող վարույթների փոխհարաբերակցության, դատական ակտերի ճանաչման հետ կապված դրույթները:**

16) Սնանկության ինստիտուտով ապահովման ենթակա շահերի քրեաիրավական պաշտպանությունը

630. Մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացվում է տարբեր եղանակներով, սակայն հարկ է նկատել, որ դրանցից առավել խիստ մեխանիզմներով պաշտպանությունն ապահովում է քրեաիրավական համատեքստում, քանի որ այն, ըստ էության, ապահովում է մարդու իրավունքների ապահովման առավել գործուն երաշխիքներ:
631. Ինչպես արդեն քննարկվել է, սնանկության վարույթն անդրադառնում է տարբեր շահերի, ինչով պայմանավորված՝ այս գործընթացում տեղ գտած մտահոգիչ դրսևորումները, որոնք խոչընդոտում են վարույթի իրականացման ընթացքը, ազդում են մի խումբ շահերի:
632. ՀՀ քրեական օրենսգրքով, ըստ էության սնանկության վարույթում հետապնդվող շահերի պաշտպանության համատեքստում նախատեսվում է հետևյալ երկու հանցակազմերը.
633. անօրինական գործունեությունը սնանկության ընթացքում.
634. կանխամտածված սնանկությունը:
635. Ուշագրավ է մի շարք երկրների փորձն այս կապակցությամբ: Այսպես, Շվեդիայիում քրեականացված է պարտատերերի դեմ հանցագործությունները: Միացյալ Թագավորությունում քրեականացվում է պաշտոնական դիրքի չարաշահումը լուծարումից առաջ և դրա ընթացքում, այդ թվում՝ պարտատերերին խաբելու գործարքները[157]:
636. Այս առումով ուշագրավ է նաև Միացյալ Նահանգների փորձը. ԱՄՆ 18-րդ օրենսգրքի § 157-ը քրեականացնում է սնանկության խարդախությունը՝ ուղղված նրանց, ովքեր փորձում են խաբել սնանկության գործընթացի միջոցով: Այն վերաբերում է այնպիսի գործողությունների, ինչպիսիք են սնանկության մասին կեղծ միջնորդությունները, կեղծ փաստաթղթեր ներկայացնելը կամ սնանկության

[157] Տե՛ս https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2016/12/31/Republic-of-Lithuania-Technical-Assistance-Report-on-Proposals-for-Reforming-the-Insolvency-25340:

դեպքերի հետ կապված խարդախ հայտարարություններ անելը: Խախտողներին կարող են սպառնալ տուգանքներ, մինչև հինգ տարվա ազատազրկում կամ երկուսն էլ[158]:

637. ԱՄՆ նշված օրենսգրքի § 152-րդ մասը[159] նախատեսում է սնանկության վարույթի հետ կապված խարդախության տարբեր ձևեր, մասնավորապես ըստ այդ մասի անօրինական է՝

1) ակտիվները թաքցնելը,

2) սնանկության գործով կեղծ հաշիվներ ստեղծելը,

3) սնանկության գործով կեղծ հայտարարություններ անելը,

4) պարտապանի գույքի նկատմամբ կեղծ պահանջներ ներկայացնելը կամ այդպիսի պահանջներ օգտագործելը,

5) սնանկության գործի հարուցումից հետո պարտապանից գույք ստանալը՝ սնանկության մասին օրենքը խախտելու նպատակով,

6) սնանկության գործով գործողության կամ անգործության համար կաշառք կամ այլ վճարումներ առաջարկելը կամ ստանալը,

7) սնանկության գործի քննության կամ սնանկության մասին օրենքը խախտելու համար ակտիվները փոխանցելը կամ թաքցնելը,

8) պարտապանի գույքին կամ ֆինանսական գործերին վերաբերող ցանկացած փաստաթղթեր կեղծելը, թաքցնելը, ոչնչացնելը, կամ դրանցում կեղծ գրառում կատարելը,

9) պարտապանի գույքին կամ ֆինանսական գործերին առնչվող փաստաթղթերը դատարանի աշխատակիցներից կամ ԱՄՆ հոգաբարձուից պահելը՝ սնանկության դիմում ներկայացնելուց հետո:

638. Ինչպես արդեն քննարկվեց նախորդ ուղղությունների շրջանակում՝ բացի վերոնշյալ երկու հանցակազմից, ի թիվս այլնի Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է նախատեսել քրեական պատասխանատվություն կեղծ սնանկության համար, որը ենթադրում է պարտատերերին մոլորեցում, նրանց պահանջների բավարարման հետաձգում, տարաժամկետում, նվազեցում, սառեցում կամ մորատորիում ստանալը, և պարտքերի չվճարելը:

639. Առաջարկվում է նաև ֆիզիկական անձ պարտապանի կամավոր սնանկության դիմում ներկայացնելու դեպքում սահմանել քրեական պատասխանատվություն կեղծ կամ ոչ ամբողջական հայտարարություն ներկայացնելու համար:

640. Քննարկման առարկա է նաև սնանկության կառավարչի, որպես սնանկության վարույթի իրականացման կենտրոնական սուբյեկտի մի շարք իրավունքների

---

[158] Տե՛ս 18 U.S. Code § 157 - Bankruptcy Fraud' (LII / Legal Information Institute) <https://www.law.cornell.edu/uscode/text/18/157> accessed 7 November 2023.

[159] Տե՛ս 18 U.S. Code § 152 - Bankruptcy Fraud' (LII / Legal Information Institute) <https://www.law.cornell.edu/uscode/text/18/157> accessed 7 November 2023.

քրեաիրավական պաշտպանության հարցը: Այսպես, գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ սնանկության կառավարչի գործունեության առնչությամբ տեղ են գտնում սպառնալիքներ, բռնության դեպքեր և այլն:

641. Հաջորդ խումբ խնդիրը սնանկության վարույթի շրջանակում սնանկության կառավարչին ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տվյալների տրամադրման կամ ընդհանրապես չտրամադրման դեպքերն են, որոնք խոչընդոտում են վերջինս բնականոն գործունեությունը: Կարծում ենք՝ սնանկության կառավարչի շահերը պաշտպանելու տեսանկյունից կարևոր է այսպիսի դեպքերի՝ քրեաիրավական պաշտպանությունը, ինչպիսիք են՝ սնանկության կառավարչի նկատմամբ սպառնալիքը կամ վնասելը կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը, ինչպես նաև սնանկության կառավարչին ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տվյալների տրամադրումը:

642. **Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ առաջարկվում է նախատեսել համապարփակ քրեաիրավական կարգավորումներ սնանկության ինստիտուտով ապահովման ենթակա շահերի համար, ի թիվս այլնի քրեականացնելով կեղծ սնանկությունը, սնանկության կառավարչի նկատմամբ սպառնալիքը կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը, սնանկության կառավարչին ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տվյալների տրամադրումը, ինչպես նաև ֆիզիկական անձ պարտապանի կամավոր սնանկության դեպքում կեղծ կամ ոչ ամբողջական հայտարարություն ներկայացնելը:**

7. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

643. Հայեցակարգի հիման վրա նախատեսվում է ընդունել ոլորտը համակարգային կարգավորող նորմատիվ իրավական ակտ՝ Սնանկության օրենսգիրք: Հաշվի առնելով այն, որ սնանկության համակարգը բաղկացած է բազմաշերտ իրավահարաբերություններից, իսկ դրանց առնչությամբ կարգավորումները ծավալուն են, իսկ շատ դեպքերում նախատեսվում է ներդնել ամբողջությամբ նոր ինստիտուտներ և կարգավորումներ, անհրաժեշտ է սահմանել անցումային ժամանակահատված, որը չպետք է պակաս լինի քան մեկ տարին:

644. Նոր օրենսգրքի կիրարկման նպատակով անհրաժեշտ է իրականացնել իրավական, կազմակեպչական, տեխնիկական և կրթական միջոցառումներ, մասնավորապես.

1) Իրավական միջոցառումների շարքին են դասվում նոր օրենսգրքի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի ընդունումը: Ընդ որում նշված ակտերն անհրաժեշտ է ընդունել մինչև բուն օրենսգրքի ուժի մեջ մտնելը, հետևաբար նշված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել 6-ամսյա ժամկետում:
2) Կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների շարքին են դասվում այնպիսի միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են՝ էլեկտրոնային հարթակի համապատասխանեցումը նոր կարգավորումներին, սնանկության վարույթի շրջանակում կիրառվող համապատասխան տիպային ձևերի մշակումը և այլն: Նշված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել օրենսգրքի ընդունումից հետո 9-ամսյա ժամկետում:
3) Կրթական միջոցառումների շարքին են դասվում Սնանկության նոր օրենսգրքի վերաբերյալ շահագրգիռների ուսուցման և վերապատրաստման իրականացումը: Անհրաժեշտ է իրականացնել նաև նոր կարգավորումների վերաբերյալ իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

645. Հարկ է նկատել, որ Սնանկության նոր օրենսգրքի կիրարկմանն ուղղված միջոցառումների ցանկը ներկայացված է Հայեցակարգի Հավելվածում:

8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

646. Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ սնանկության բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները մեկ միասնական իրավական ակտով կարգավորելուն ուղղված օրենսդրական բարեփոխումների Հայեցակարգի մշակման և քննարկման, ինչպես նաև Հայեցակարգի հիման վրա վեր հանված կարիքների և ուրվագծված խնդիրների համատեքստում սնանկության մասին օրենսդրության մեկ միասնական իրավական ակտի նախագծի մշակման և քննարկման համար որպես ֆինանսավորման աղբյուր սահմանված է վարկային կամ դրամաշնորհային միջոցները, իսկ որպես ֆինանսավորման չափ՝ շուրջ 227 մլն ՀՀ դրամը:

9. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

647. Սույն հայեցակարգի շրջանակում քննարկված ուղղությունները և առաջարկվող լուծումները ներառել են սնանկության ինստիտուտի հատկապես կարևոր հարցերի շրջանակը, որոնց պետք է ուշադրություն դարձնել Սնանկության օրենսգիրքը մշակելիս: Նշվածը սակայն չի բացառում օրենսգիրքը մշակելիս որոշ նոր հարցերի բարելավման անհրաժեշտությունը:
648. Հայեցակարգում չքննարկված հարցերի առնչությամբ անհրաժեշտ է որդեգրել առկա լուծումները պահպանելու մոտեցումը, որը, սակայն, չի բացառում դրանց առնչությամբ առանձին հարցերի կարգավորման բարելավման հնարավորությունը:
649. Սնանկության օրենսգրքի սահուն կիրարկումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է սահմանել ընդունումից հետո առնվազն մեկ տարի ժամկետ, որի ընթացքում կիրականացվեն նաև անհրաժեշտ իրավական, կազմակեպչական, տեխնիկական և կրթական միջոցառումները:

ՀԱՎԵԼՎԱԾ
Սնանկության նոր օրենսգրքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
	Սնանկության օրենսգրքից բխող Կառավարության որոշումների և ենթաօրենսդրական այլ ակտերի նախագծերի ներկայացում Կառավարության աշխատակազմ	Օրենսգրքից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում	Արդարադատության նախարարություն, շահագրգիռ մարմիններ (համաձայնությամբ)	Օրենսգրքի ընդունումից հետո վեց ամսվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
	Սնանկության օրենսգրքից բխող՝ սնանկության վարույթում կիրառվող փաստաթղթերի տիպային ձևերի մշակում	Սնանկության վարույթի իրականացման պարզեցում	Արդարադատության նախարարություն ԻԿԿ (համաձայնությամբ)	Օրենսգրքի ընդունումից հետո ինն ամսվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
	Շահագրգիռների, այդ թվում՝ ՍՆԴ դատավորների և նրանց աշխատակազմի, սնանկության կառավարիչների վերապատրաստում	Շահագրգիռների մասնագիտական կարողությունների կատարելագործում, օրենսգրքի կիրառման նպատակով հմտությունների ձեռքբերում	Արդարադատության նախարարություն	Օրենսգրքի ընդունումից հետո՝ մինչև դրա ուժի մեջ մտնելը (շարունակական)	Օրենքով չարգելված աղբյուրներ
	Սնանկության ոլորտին առնչվող ՎԴ նախադեպային որոշումների համար պարբերաբար թարմացվող հարթակի ստեղծում	Հանրային իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացում	Արդարադատության նախարարություն	Օրենսգրքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	Ֆինանսավարում չի պահանջվում
	Ուղեցույցների, ձեռնարկների,	Օրենսգրքի կիրարկման		Օրենսգրքի ընդունումից	Օրենքով չարգելված

	գիտագործնական մեկնաբանությունների, ուսումնական նյութերի մշակում	նպատակով անհրաժեշտ նյութերի ապահովում		հետո՝ մեկ տարվա ընթացքում (շարունակական)	աղբյուրներ
	Սնանկության ինստիտուտի լուսաբանմանն ուղղված տեսանյութերի, հեռուստահաղորդումների, իրազեկող այլ միջոցառումների կազմակերպում	Հանրային իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացում	Արդարադատության նախարարություն	Օրենսգրքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում (շարունակական)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
	Սնանկության գործով կառավարիչների թեկնածուների կրթության և որակավորման քննությունների ծրագրերի կազմում	Սնանկության գործով կառավարիչների թվակազմի ավելացում	Արդարադատության նախարարություն	Օրենսգրքի ընդունումից հետո ինն ամսվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում